ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ
ԹԱՄԱՐ ՁԱՔԱՐՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

МИГРАН ГАЛСТЯН
РУБЕН ОГАНДЖАНЯН
ТАМАР ЗАКАРЯН
ГАЯНЕ АКОПЯН

СОВРЕМЕННАЯ АРМЯНСКАЯ СЕМЬЯ В ТРАНСФОРМИРУЮЩЕМСЯ ОБЩЕСТВЕ

NATIONAL ACADEMY OF SCIENCES REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

MIHRAN GALSTYAN
RUBEN OHANJANYAN
TAMAR ZAQARYAN
GAYANE HAKOBYAN

CONTEMPORARY ARMENIAN FAMILY IN THE TRANSFORMING SOCIETY

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
ЕРЕВАН 2017

“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
YEREVAN 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ
ԹԱՄԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2017

ՀՏԴ 316.36
ԳՄԴ 60.56
Ա 858

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ №15T–6F230 գիտական թեմայի շրջանակներում

Նախագծի ղեկավար՝ պ.գ.դ. Մ.Վ. Գալստյան

Պատասխանատու խմբագիր՝ պ.գ.դ. Լ.Մ. Վարդանյան
Գրախոսներ՝ պ.գ.դ. Ս.Ս. Մկրտչյան, պ.գ.դ. Ռ.Ս. Կարապետյան

Ա 858 Գալստյան Մ.Վ., Օհանջանյան Ռ.Ս., Ջաքարյան Թ.Ջ., Հակոբյան Գ.Լ.
Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում/ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ.–Եր.: «Գիտություն» հրատ., 2017, 328 էջ

Գրքում քննարկվում են ավանդական և արդի հայ ընտանիքի կառուցվածքում, ներընտանեկան հարաբերություններում, կանանց և տղամարդկանց կարգավիճակներում և դերերում, ընտանիքի և ամուսնության մասին պատկերացումներում, սերունդների միջև արժեքային համակարգում տեղի ունեցած փոփոխությունները և առկա հիմնախնդիրները: Վերլուծվել է աշխատանքային միգրացիայի ազդեցությունն ընտանիքի զարգացման կենսափուլերի և մոդելի փոխակերպումների հարցում: Համեմատվել են հայաստանյան և այլէթնիկ միջավայրից Հայաստան տեղափոխված սիրիահայ ընտանիքների էթնոմշակութային առանձնահատկությունները: Գիրքը նախատեսված է ազգագրագետների, մշակութաբանների, սոցիոլոգների, հոգեբանների, պատմաբանների, այդ հիմնախնդրով զբաղվող պետական մարմինների աշխատողների, ՀԿ-ների և ուսանողների համար:

ՀՏԴ 316.36
ԳՄԴ 60.56

ISBN 978-5-8080-1309-4

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2017թ.
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2017թ.

ՆԱԽԱԲԱՆ

Դարեր շարունակ ընտանիքը կատարել է մշակութային արժեքների պահպանման և սերունդներին փոխանցման, տնտեսական, ազգաբնակչության վերարտադրության և սերնդափոխության, նրանց սոցիալականացման՝ ծնողների կենսափորձի փոխանակման և դաստիարակության, սոցիալական օժանդակության և պաշտպանության, սոցիալական ինքնորոշման և այլ կարևոր գործառույթներ: Սակայն արդի շրջանում Հայաստանում ստեղծված անկայուն սոցիալ-տնտեսական իրավիճակը, հանրապետությունից բնակչության զանգվածային արտագաղթը, համաշխարհայնացման գործընթացները և նոր տեղեկատվական հոսքերի ներթափանցումն իրենց ազդեցությունն են թողնում ընտանիքի վրա, որի հետևանքով նրա առջև ծառացել են մի շարք լուրջ հիմնախնդիրներ: Մասնավորապես, ընտանիքի վերաբերյալ վիճակագրական տվյալները և կատարված գիտական ուսումնասիրությունները փաստում են, որ վերջին տարիներին Հայաստանի բնակչության շրջանում առկա են ծնելիության նվազում, ամուսնալուծվող ընտանիքների քանակի և չգրանցված ամուսնություններից ծնված երեխաների աճ, ամուսնացողների միջին տարիքի բարձրացում, համատեղ ապրող պաշտոնապես չգրանցված զույգերի, պայմանագրային ամուսնությունների թվի ավելացում և այլ կարևոր հիմնախնդիրներ: Այդ առումով գրքում կատարվել է հայ ընտանիքի առջև ծառացած ներկա հիմնախնդիրների և դրա հետևանքների խոր և համակողմանի վերլուծություն, որի շնորհիվ առաջարկվել են այդ ինստիտուտի կայունությանն ուղղված նոր մոտեցումներ: Այդ հարցերը քննարկվել և լուսաբանվել են հայոց մշակույթում առկա ավանդույթների, արժեքների և վարքականոնների համատեքս-

տում: Մասնավորապես, ուսումնասիրվել և վերլուծվել են հետևյալ հիմնախնդիրները.

1) ազգային-մշակութային գործոնի դերը ընտանիքի էթնոժողովրդագրական վարքագծի ձևավորման, ավանդական և արդի ընտանիքի կազմում և կառուցվածքում, ներընտանեկան հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունները, ամուսնությունների առանձնահատկությունները և ամուսնալուծությունների պատճառները,
2) ավանդական և արդի ընտանիքում կանանց և տղամարդկանց կարգավիճակներում և դերերում տեղի ունեցած էթնոմշակութային փոխակերպումները,
3) արդի ընտանիքի ամրության գործում սերունդների միջև արժեքային համակարգի տարբերությունները,
4) աշխատանքային միգրացիայի ազդեցությունը ընտանիքի զարգացման կենսափուլերի և մոդելի փոխակերպումների հարցում,
5) միջէթնիկ ամուսնությունների նկատմամբ դիրքորոշումները,
6) համեմատվել են հայաստանյան և այլէթնիկ միջավայրից Հայաստան տեղափոխված սիրիահայ ընտանիքների էթնոմշակութային առանձնահատկությունները:

Այդ հիմնախնդիրների բացահայտման նպատակով 2016–2017 թթ. Երևան քաղաքում և Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Արմավիրի, Արագածոտնի մարզերի վեց քաղաքային և քսան գյուղական բնակավայրերի 384 ընտանիքներում (այդ թվում՝ նաև սիրիահայերի) իրականացվեցին էթնոսոցիոլոգիական հարցումներ: Համեմատական նյութեր ստանալու նպատակով պահպանվել է 1980 թվականին Հայաստանում իրականացված հետազոտության ընտրանքը:

Հետազոտության գլխավոր համախմբության համար հիմք են հանդիսացել 2011 թվականի ՀՀ մարդահամարի տվյալները: Ընտ-

րանքային համախմբության ծավալը որոշվել է վիճակագրական բանաձևի միջոցով (ճշգրտությունը՝ 95%, վստահելիության միջակայքը՝ 5%)։ Հաջորդ քայլով ընտրանքային համախմբության ծավալը բնակչության թվի համամասնությամբ բաժանվել է ՀՀ վեց մարզերի և Երևան քաղաքի միջև։ Բնակավայրերն ընտրվել են ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների ցուցակից՝ պատահականության սկզբունքով։ Հետազոտության ընթացքում կատարվել են նաև ընտանիքին առնչվող պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթերի վերլուծություն, դիտարկումներ, խորացված հարցազրույցներ, փորձագիտական և ֆոկուս խմբային հարցումներ։

Գրքում օգտագործվել են նաև 2014–2015 թթ. սիրիահայերի շրջանում անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները։ Այդ հետազոտության շրջանակներում հարցազրույցներն անցկացվել են 2011 թվականից հետո Հայաստան տեղափոխված սիրիահայերի հետ (184 կիսաստանդարտացված և 36 խորացված հարցազրույցներ)՝ Երևանում և մարզերում, մասնավորապես Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի մարզերում։ Ելնելով հետազոտական օբյեկտի յուրահատկությունից (բնակության վայրի վերաբերյալ սուղ տեղեկատվություն, Հայաստան տեղափոխվելուց հետո տարածական ցրված ձևով ապրել և այլ հանգամանքներ)՝ սիրիահայ ընտանիքների հետ կապ հաստատելու համար կիրառվել է «ձնակույտի» մեթոդը։

Հեղինակային խումբն ունի հետազոտական հարուստ փորձ. խմբի մի մասը դեռ խորհրդային տարիներին ՀՀ հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի վարիչ, վաստակաշատ գիտնական-ազգագրագետ Էմմա Տիգրանի Կարապետյանի ղեկավարությամբ, որն իր մեծ ներդրումն ունի նաև այդ ոլորտի ուսումնասիրությունների հարցում, մասնակցել է 1976 թվականին Երևանում, 1980 թվականին՝ Հայաստանի պատմաազգագրական հինգ մարզերում (Այրարատ, Գեղարքունիք, Շիրակ, Լոռի-Տավուշ, Սյունիք), 1992–1994 թթ.՝ Հայաստանի քաղաքային բնակավայրերում իրականացված հետազոտություններին։ Հայաստանում

տեղի ունեցող սոցիալ-մշակութային գործընթացների համատեքստում ընտանիքի վերաբերյալ հետազոտություններ են իրականացվել նաև Երևանում (1999–2000 թթ.), Տավուշում և Սյունիքում (2007–2010 թթ.), Լոռիում (2011–2012թթ.) և Կոտայքում (2013–2014թթ.): Արդի շրջանում և նշված տարիներին իրականացված էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքների համեմատական վերլուծությունը հնարավորություն տվեց բացահայտելու հայ ընտանիքում կատարված փոփոխությունները:

Հետազոտական խմբի անդամների անմիջական մասնակցությամբ 2001 թվականին կազմակերպվել է հանրապետական գիտաժողով՝ նվիրված Էմմա Կարապետյանի հիշատակին, և հրատարակվել է «Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները» հոդվածների ժողովածուն, իսկ 2002 թվականին՝ «Ընտանեկան բռնությունները Հայաստանում» աշխատությունը:

Փոխակերպվող հասարակությունում հայ ընտանիքին նվիրված այս գիրքը բաղկացած է չորս բաժիններից՝ «Ընտանիք և ամուսնություն» (Թ. Ջաքարյան), «Ընտանեկան արժեհամակարգը» (պ.գ.թ. Ռ. Օհանջանյան), «Փոփոխությունները աշխատանքային միգրանտների ընտանիքի մոդելում» (պ.գ.դ. Մ. Գալստյան), «Հայաստանում բնակվող սիրիահայ ընտանիքների էթնոմշակութային առանձնահատկությունները» (Գ. Հակոբյան):

Գրքում առաջ քաշված տեսակետները կարող են նպաստել ընտանիքի հետագա զարգացման հարցում նոր քաղաքականության մշակմանը:

Գրքի հեղինակներն իրենց շնորհակալությունն են հայտնում մարզերի և համայնքների ղեկավարներին՝ հետազոտությանն աջակցելու, տվյալների տրամադրման և ազգաբնակչությանը՝ հարցմանը մասնակցելու, արժեքավոր տեղեկություններ տրամադրելու համար:

ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԸՆՏԱՆԻՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Ընտանիքի զարգացման առանձնահատկությունները հայոց մեջ

Ընտանիքը ամուսնությամբ կամ ազգակցական կապով միավորված մարդկանց սոցիալական փոքր խումբ է, որն ունի ձևավորված կառուցվածք, անդամների կենցաղավարության ընդհանրություն՝ փոխադարձ օգնությամբ ու բարոյական պատասխանատվությամբ: Ընտանիքը սերնդի վերարտադրության հիմնական բջիջն է: Ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, ենթարկվում է որոշակի նորմերի, վարքի կանոնների, ունի իրավունքների և պարտականությունների շրջանակ, որոնցով կարգավորվում են ամուսինների, ծնողների, զավակների և այլ ազգականների միջև եղած հարաբերությունները: Ընտանիքի անդամները ապրում են նույն «տանիքի» տակ և վարում են ընդհանուր տնտեսություն: Ընտանիքը ոչ միայն տնտեսական, այլև մշակութային, արժեքային գործոններ կրող համակարգ է: Տարբեր ժամանակաշրջանների հասարակարգերի փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն են թողել ընտանիքի սոցիալ-մշակութային արժեքային համակարգի վրա:

Ընտանիքը նաև ամուսնության փաստի պաշտոնական գրանցման հիման վրա ստեղծված սոցիալական փոքր խումբ է: Ընտանիքը կազմված է սերունդներից, դրանք են՝ ծնողները, զավակները, պապիկները, տատիկները, քույրերը, եղբայրները և այլ ազգականներ: Թե՛ երեխաների, թե՛ տարեցների բարոյահոգեբանական պահանջմունքների բավարարումը հիմնականում կատարվում է ըն-

տանեկան միջավայրում: Ընտանիքն իր անդամների համար այն սոցիալական խումբն է, որտեղ ընդունված վարքի արգելքներն ու նորմերը արժևորվում և մեծամասամբ ընդունվում են ծնողների և երեխաների կողմից:

Հայոց մեջ դարերի ընթացքում մշակված կանոնագրքերն ու դատաստանագրքերը եկեղեցու անմիջական մասնակցությամբ ընդունված օրենքներով փորձել են կանոնակարգել ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները, ամուսնության և ամուսնալուծության հետ կապված խնդիրները: Մխիթար Գոշի Դատաստանագրքի տարբեր հոդվածներով փորձել են կարգավորել սերնդահի (գլուխ ՃԻԴ), ամուսնության (գլուխներ ՄԺԲ, ՃՂԲ), որդեգրության ու խնամակալության (գլուխ Թ), կնոջ իրավական վիճակի (գլուխ Է, ՃԿԸ), ժառանգության հարցերի (գլուխներ ՃԱ, ՃԲ, ՃԳ, ՃԴ) երեխաների դաստիարակության (գլուխ ՃՆԴ/գործառույթները[1]:

Եկեղեցական կանոններով արգելվել է ազգականների ամուսնությունը միմյանց հետ և ազատների ամուսնությունը (ազնվականների)՝անազատների հետ: Կաթողիկոս Ներսես 1-ին Մեծի նախաձեռնությամբ կայացած հայկական առաջին կանոնադիր ժողովն (365 թ. Տարոնի գավառի Արտիշատ գյուղ) արգելել է մերձավոր ազգակիցների ամուսնությունը և բազմակնությունը: Քանի որ ավանդական ընտանիքում ամուսնալուծությունները եզակի էին, դրանք թույլատրվում էին եզակի դեպքերում: Առանձին հոդվածներ են նվիրված երեխաների խնամակալությանը և կնոջ գույքային իրավունքների պաշտպանությանը: Կնոջ օժիտը անձեռնամխելի էր, պատկանում է միայն իրեն (գլուխ ՄԺԼ): Նույնիսկ մի հարկի տակ ապրող եղբայրների բաժանության ժամանակ նախ առանձնացնում էին հարսների բաժինքը, ապա միայն յուրաքանչյուր եղբորը հատկացնում էին իր հասանելիքը: Չի անտեսվել նաև մանկահասակ երեխաների (գլուխ ՃՆԴ) և խնամքի կարիք ունեցող ծնողների

1 *Մխիթար Գոշ*, Դատաստանագիրք, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱԱ հրատ., 1975 թ., էջ 38, 101, 84, 111, 124, 39, 72–76, 95:

նկատմամբ ունեցած պարտականությունների կատարման անհրաժեշտությունը (գլուխ ՃԾԵ)[2]:

Արդի շրջանում ամուսնության կնքման պայմանները սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ ընտանեկան օրենսգրքով, ըստ որի՝ ամուսնություն է համարվում տղամարդու և կնոջ ազատ, կամավոր և իրավահավասար, որպես կանոն ցմահ դաշինքը, որը կնքվելով պետության կողմից սահմանված կարգով, ամուսնացողների համար առաջացնում է փոխադարձ իրավունքներ և պարտականություններ: Ամուսնության ակտով ստեղծվում է ընտանիք: Երեխաներ ունենալն ու նրանց դաստիարակությամբ զբաղվելը ամուսնաընտանեկան հարաբերություններին տալիս են սոցիալական նշանակություն:

Ըստ ՀՀ Ընտանեկան օրենսգրքի՝

- ամուսնության կնքման համար անհրաժեշտ են տղամարդու և կնոջ փոխադարձ համաձայնությունը,
- ամուսնության համար թույլատրելի տարիքը՝ 18 տարեկանը, սահմանված է և՛ տղամարդկանց, և՛ կանանց համար:

Ամուսնությունը չի կարելի գրանցել՝

- եթե ամուսնացողներից մեկը օրենքով սահմանված կարգով այլ գրանցված ամուսնության մեջ է գտնվում,
- ամուսնացողների միջև մոտ ազգակցական կապ կա,
- ամուսնացողներից մեկը դատարանի կողմից անգործունակ է ճանաչված,
- արգելվում է ամուսնությունը որդեգրողի և որդեգրվածի միջև[3]:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված են ընտանիքի անդամների՝ ծնողների և զավակների միջև գույքային և ոչ գույքային հարաբերությունները: Օրենքով սահմանված է ամուսնու, կնոջ,

2 *Մխիթար Գոշ*, նույնը, էջ 124, 95, 96:

3 ՀՀ Ընտանեկան օրենսգիրք հոդված 11, Եր. http://www.parliament.am/legislation, 09.11. 2004թ. էջ 89–90:

երեխաների և ծնողների դերը ընտանիքում, նրանց իրավունքները և պարտականությունները: Ընտանիքի անդամների միջև հարաբերությունները կարգավորվում են սովորույթների, վարքի կանոնների, կենսակերպի ընդունված նորմերի միջոցով: Ընտանիքի անդամները կապված են կենցաղի ընդհանրությամբ, ընդհանուր շահերով, փոխադարձ օգնությամբ և բարոյական ու իրավական փոխպատասխանատվությամբ:

Ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, կոչված է իրականացնելու մի շարք գործառույթներ՝

1. Վերարտադրողական, որը ապահովում է սերնդի վերարտադրությունը:
2. Տնտեսական-կենցաղային, երբ ընտանիքը՝ որպես տնտեսական միավոր, վաստակում է կենսական միջոցներ և այն ծախսում է՝ ապահովելով իր նյութական բարեկեցությունը:
3. Սոցիալականացման, որի շնորհիվ երիտասարդ սերունդը ընկալում է նախորդ սերունդների փորձը և հասարակության մեջ ընդունված վարքի նորմերն ու կանոնները: Ընտանեկան սոցիալականացման հիմնական միջոցը երեխաների կողմից ընտանիքի չափահաս անդամների վարքի ընդօրինակումն է: Երեխան ընտանիքում է սովորում խոսել, մտածել, դաստիարակվել՝ համաձայն հասարակությունում ընդունված նորմերի, սովորույթների և արժեքների:
4. Հաղորդակցական-բարոյահոգեբանական, երբ ընտանիքի անդամները շփվում են միմյանց հետ, զգացմունքներ, մտքեր և տեղեկություններ են փոխանակում: Բացի դրանից, դրսից եկող կարծիքները բախվում են ընտանիքի անդամների կարծիքների հետ, և եթե ընտանիքը ունի կայուն արժեքներ, ապա երեխաները ստացած տեղեկությունները գնահատելիս միշտ հաշվի են առնում ընտանիքի անդամների կարծիքը:
5. Ժամանցի կազմակերպման գործառույթ. նպաստում է ազատ ժամանակի ճիշտ կազմակերպմանը (մարզական

կյանք, ընկերների, հարազատների հետ շփում, կինո, թատրոն և այլն), որն աջակցում է ընտանիքի համախմբմանը:

6. Սոցիալական վերահսկողության գործառույթն ուղղված է ընտանիքի անդամների վարքի վերահսկմանը[4]:

Կյանքի տարբեր փուլերում ընտանեկան գործառույթների առաջնությունը փոխվում է. եթե երիտասարդ ընտանիքի համար գլխավորը վերարտադրողական գործառույթն է, ապա տարեցների համար՝ հաղորդակցական, բարոյահոգեբանականը:

Վերջին երկու տասնամյակում Հայաստանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական և արժեքային արմատական փոփոխությունները իրենց կնիքն են դրել արդի հայ ընտանիքի կողմից իրականացվող գործառույթների վրա: Դրանց արդյունքում նկատվում է ամուսնությունների և ծնելիության նվազում, ամուսնալուծությունների թվի աճ: Նվազել է նաև ընտանիքի՝ որպես սոցիալականացման ազգային արժեքների պահպանողի և փոխանցողի դերը:

Ընտանեկան արժեքները դա ընտանիքի այն ժառանգությունն է, որը սովորույթների, ծեսերի, ավանդույթի, նորմերի միջոցով մի սերնդից փոխանցվում է հաջորդ սերունդներին: Միջսերնդային փոխանցման լծակներն են ծնող-զավակներ և պապիկ-տատիկ-թոռներ համագործակցությունը: Եթե երիտասարդ ընտանիքը ծնողներից հեռու է բնակվում, ապա սերնդի դաստիարակության և նրան ազգային, ընտանեկան արժեքների փոխանցման հիմնական պարտականությունը պատկանում է ծնողներին: Այս դեպքում կարևորվում է միջսերնդային հանդիպումների հաճախականությունը: Ծնողների և զավակների միջև սերտ հարաբերությունները պայմաններ են ստեղծում ընտանեկան ավանդույթների փոխանցման համար:

Ավանդական ընտանեկան արժեքներ ասելով հասկացվում է, թե մեր նախնիները իրենց կենսակերպում ինչպիսի բարոյական և

4 *Гурко Т.А.*, Теоретические подходы к изучению семьи, М., Институт социологии РАН, 2016, с.58:

կենցաղային նորմերով են առաջնորդվել: Հայ ընտանիքին բնորոշ են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ընտանեսիրությունը, մանկասիրությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, առողջ ապրելակերպը, հարգանքը տարեցների նկատմամբ և նրանց կենսափորձի կարևորության գնահատումն ու ընդունումը, ինչպես նաև խնամքի կարիք ունեցող ընտանիքի անդամների նկատմամբ հոգածությունը և ծնողների պատասխանատվությունը երեխայի ծնվելու, դաստիարակելու հարցերում: Ընտանեկան և ազգային տոների նշումը ամբողջ ընտանիքով (թե՛ միասին, թե՛ առանձին բնակվող ազգականների հետ), դա օջախը վառ պահելու գրավականն է: Հայ ընտանիքը, իր վրա կրելով տարբեր ժամանակաշրջանների փորձությունը և ազդեցությունը, այսօր էլ մեծամասամբ շարունակում է պահպանել իր ազգային արժեքները:

Հայ իրականության մեջ ընտանիքն ունեցել է պատմական զարգացման առանձնահատկություններ: Վաղ շրջանում հայ ընտանիքը հայտնի էր «ընտանեկան համայնք», գերդաստան, մեծ ընտանիք, տոհմ, ցեղ անուններով: Այն հիմնված է եղել հայրիշխանության ավագության իրավունքի վրա: Դեռևս 19-րդ դարում հայերն ապրել են մեծ ընտանիքներով:

Գերդաստանի ծագումը պատմականորեն պայմանավորված էր տնտեսական նոր ձևերի առաջացմամբ: Այն նախապես ընդգրկել է հայրական կողմից միևնույն նախնուց սերած 4–5, երբեմն էլ ավելի սերունդ: Առանձին գերդաստաններ բաղկացած էին 70-ից մինչև 100 մարդուց: Գերդաստանի մասին տեղեկություններ կան Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի երկերում, Ներսես Շնորհալու կանոններում, Մխիթար Գոշի, Սմբատ սպարապետի դատաստանագրքերում և այլն: Հայ մեծ ընտանիքի և նրա կենցաղի վերաբերյալ ստույգ տեղեկություններ են գրառվել 19–20-րդ դարերում բանահավաքների կողմից: Գերդաստանի ընդհանուր սեփականությունն էին հանդիսանում մշակելի հողերը, այգիները, բնակելի և անասնապահական շենքերը, ջրաղացներն ու ձիթհանքերը (եթե այդպիսիք կային), անասունները, երկրագործական գոր-

ծիքները և այլն: Ընդհանուր սեփականություն էր նաև ընտանիքի յուրաքանչյուր անդամի վաստակած փողը: Բացառություն էին կազմում միայն անձնական օգտագործման իրերը, ինչպես նաև կանանց օժիտը և զարդերը:

Գերդաստանն ուներ կայուն կազմ, կուռ ղեկավարություն, փոխհարաբերությունները կարգավորող կարգ ու կանոն, որոնք դրսևորվում էին սովորութային իրավունքի միջոցով: Հատկապես կարևոր էր գերդաստանի նահապետի և նրա տիկնոջ դերը, որոնք առաջնորդվելով ընդունված նորմերով, կայուն էին պահում ընտանիքի հիմքը: Մինչև 19-րդ դարի վերջ 20-րդ դարի սկիզբ ավանդական հայ ընտանիքում տիրող ներքին կյանքը, վարքն ու բարքը դեռևս խարսխվում էին դարերի խորքից եկող ավանդույթների վրա, որոնք էլ պայմանավորում էին ընտանիքի յուրաքանչյուր անդամի տեղն ու դերը ներընտանեկան կյանքում: Մեծ ընտանիքներում ներընտանեկան փոխհարաբերությունների կարգավորման և կայունության գործում կարևորվում էր ավագության կարգի պահպանումը ու երկու սեռերի պարտականությունների ճիշտ բաշխումը: Ընտանիքի տնտեսական հաջողությունները սերտորեն կապված էին աշխատանքի բաժանումից՝ ըստ սեռի և տարիքի կարգավիճակի, տնտեսության ճյուղերի և աշխատանքի բնույթի: Այստեղ հիմնականում գործում էր «տղամարդը դրսի պատ է, կինը՝ ներսի» կարգախոսը:

Ընտանիքի բոլոր անդամները պարտավորված էին կատարելու ընտանիքում ընդունված սովորույթներն ու արգելքները: Ավագության կարգի ամեն մի խախտում դատապարտվում էր հասարակության կողմից: Խստորեն պահպանվում էին առօրյա կենցաղում ընդունված բոլոր նորմերը: Տղամարդիկ և կանայք ճաշում էին առանձին: Կանայք տղամարդկանց ներկայությամբ երեխաներին կերակրելու և սիրելու իրավունք չունեին: Ամոթ էր, երբ հարսը ընտանիքի մեծահասակ անդամներից շուտ էր գնում քնելու: Հարսների և աղջիկների բարձրաձայն խոսելն ու ծիծաղելը մեծերի ներկայությամբ համարվում էր անվայել արարք, և եթե այդ պահանջները

չէին կատարվում, մեղադրում էին մորը՝ վատ դաստիարակելու համար:

Հայ ավանդական ընտանիքում երեխաների դաստիարակության հարցում խիստ տարբերակում է դրվել հոր և մոր դերերի միջև: Մայրը աղջկա դաստիարակն էր մինչև ամուսնանալը, իսկ տղաներինը մինչև 6–7 տարեկանը: Արդեն 6–7 տարեկանից տղա երեխաները՝ որպես հոր օգնական, մասնակցում էին դաշտային աշխատանքներին, իսկ 10–12 տարեկանից համարվում էին լիարժեք աշխատող: Աղջիկները ավելի վաղ էին սկսում մասնակցել տնային աշխատանքներին: Մինչև 12 տարեկանը նրանք արդեն կարողանում էին մեծերին սպասարկել, փոքր քույրերին և եղբայրներին խնամել, ձեռագործ անել, կարպետ կամ գորգ գործել և տիրապետել առօրյա կենցաղային այն բոլոր աշխատանքներին, որոնց կատարումը մայր դառնալուց հետո անհրաժեշտություն էր: Փաստորեն, աղջիկ երեխաներին մանուկ հասակից նախապատրաստում էին հարսի և մոր պարտականությունների կատարմանը: Տղամարդիկ զբաղվում էին դրսի աշխատանքներով, իսկ կանայք՝ առօրյա կենցաղային գործերով և գյուղատնտեսական ու անասնապահական հումքի մշակմամբ: Ավագ որդին տան գլխավորի հետ միասին ղեկավարում էր երկրագործական և այգեգործական աշխատանքները: Անասնապահական աշխատանքները ղեկավարում էր որդիներից մեկը, բրդի և սնդամթերքի մշակումը բացառապես կանանց գործն էր: Ընտանեկան կենցաղի կարգավորման գործում տան գլխավորի անմիջական օգնականը նրա կինն էր:

Գերդաստանի ղեկավարը (նահապետ, տանտեր, տան գլուխ, տան մեծ և այլն) ավագ տղամարդն է: Նրա ձեռքում էր կենտրոնացված ընտանիքի բյուջեն: Նա միանձնյա կարող էր տնօրինել ինչպես գերդաստանի ողջ ունեցվածքը, այնպես էլ ընտանիքի անդամների ճակատագիրը: Նահապետն էր կազմակերպում ընտանիքի տնտեսական գործունեությունը: Համայնքում ընտանիքի շահերը պաշտպանելու իրավունքը նույնպես նահապետին էր: Նա օժտված էր անսահմանափակ իրավունքներով և իշխանությամբ:

Նահապետի մահվանից հետո ավագության կարգով նրա պարտականությունները անցնում էին ավագ որդուն, իսկ կանացի գործերի ղեկավարումը ավագ հարսին: Մեծ մայրը պահպանում էր իր հսկողական իրավունքները և մինչև մահ մեծ հեղինակություն էր վայելում ընտանիքում: Տանտիկինը կարգավորում էր տնային տնտեսությունը և հետևվում էր հարսների ու աղջիկների աշխատանքային պարտականությունների կատարմանը: Նրա ձեռքին էր սննդամթերքի մառանների բանալիները: Թեև մեծ մոր իշխանությունը տարածվում էր միայն իգական սեռի ներկայացուցիչների և երեխաների վրա, այնուամենայնիվ, նա հարգված էր ընտանիքի բոլոր անդամների կողմից, քանզի ընտանիքի ներքին միասնությունը նա էր ապահովում: Տանտիկնոջ պարտականությունն էր հարսներին և երեխաներին դաստիարակել տոհմի սովորույթներով, մեծերի հանդեպ հարգանքով: Նա զբաղվում էր նաև աշխատանքային դաստիարակությամբ: Նրա անմիջական պարտականությունն էր առօրյա կենցաղային աշխատանքների բաժանումը կանանց և երեխաների միջև ըստ տարիքային ու սեռային առանձնահատկությունների: Աղջիկներին, հարսներին սովորեցնում էր տնային աշխատանքների բոլոր ձևերը, ինչպիսիք էին՝ հաց թխելը, կերակուր պատրաստելը, բնամթերքի մշակումը և այլն: Նահապետի կինը նաև ամուսնու գլխավոր խորհրդատուներից էր[5]:

Հայաստանի որոշ շրջաններում մինչև 19-րդ դարի վերջը և նույնիսկ 20-րդ դարի սկիզբները հատկապես գյուղական բնակավայրերում տիրապետում էին մեծ ընտանիքի կենցաղավարման ավանդույթները:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման առաջին տասնամյակներից սկսած ընտանիքի կառուցվածքի, կենցաղի և ներընտանեկան փոխհարաբերություններում նկատելի փոփոխություններ կատարվեցին: Քաղաքային բնակչության կենցաղը կապված արդյունաբերության և մշակույթի կենտրոնների ստեղծման

5 *Л. Варданян, Т. Закарян*, Род, семья и система родстродства. //Армяне серия «Народы и культуры»//, Москва, Наука, 2012, с. 307–322.

հետ որոշակի փոփոխությունների ենթարկվեցին, իսկ «գյուղացիական կյանքի վերափոխման գործում որոշիչ դեր է կատարել գյուղի կոլեկտիվացումը»[6]: Տնտեսության և մշակույթի աճով զգալիորեն բարելավվեց բնակչության կենսակերպը: Աշխատատեղերի ստեղծումը, բնակարանային և կենցաղային պայմանների բարելավումը, առողջապահության բնագավառի ձեռքբերումները նպաստեցին բնակչության արագ աճին: Այդ տարիներին սկսվեց նաև հայրենադարձության գործընթացը: Նրանց կենցաղի և սովորությունների առանձնահատկությունները (հատկապես Եվրոպական երկրներից եկածների) որոշակի ազդեցություն ունեցան հատկապես քաղաքային բնակչության ապրելակերպի վրա:

Սոցիալ-մշակութային փոփոխություններով պայմանավորված՝ կատարվեցին ընտանիքի կառուցվածքի և թվաքանակի փոփոխություն: Խորհրդային տարիներին բնակարանային պայմանների բարելավմանը զուգընթաց մեծացավ երկսերունդ ընտանիքների թիվը:

Խորհրդային ընտանիքի ձևավորման գործառույթում կարևորվում էր հասարակական կյանքում կնոջ իրավունքների մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Այն պայմանավորված էր խորհրդային միության դեկրետով, որը հայտարարում էր կնոջ հավասարությունը տղամարդու հետ՝ հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային և ընտանեկան կյանքի բոլոր բնագավառներում: «Կնոջ նկատմամբ եղած հայացքի մեջ արմատական բեկում առաջացավ-Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, երբ կանայք գործով ցույց տվեցին, որ նրանք տղամարդկանցից ոչ պակաս կարող են կատարել այսպես կոչված տղամարդկային աշխատանքներ»[7]:

Եթե ավանդական հայ ընտանիքում այլազգիների հետ ամուսնությունները դատապարտվում էին, ապա խորհրդային տարիներին այն որոշակի թիվ էր կազմում:

---

6 *Դ. Վարդումյան, Է. Կարապետյան*, Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1963թ., էջ 15:

7 *Դ. Վարդումյան, Է. Կարապետյան*, նույնը, էջ 72:

Հիմնականում պահպանելով հարսանեկան ծիսակարգում առկա հիմնական տարրերը՝ զգալիորեն կրճատվեց արարողակարգերի շրջանակը: Որոշ ծեսեր, կորցնելով իրենց նախնական իմաստը, մոռացվեցին:

Չնայած վերը նշված փոփոխություններին՝ խորհրդային տարիների հայ ընտանիքը որոշակիորեն պահպանեց կենցաղում և ավանդական ծիսակարգում ընդունված գործառույթները:

1.2. Ընտանիքի կառուցվածք

Ընտանիքը դասակարգվում է ըստ կառուցվածքի: Ընտանիքի հիմնական տեսակներն են նուկլեար և ընդարձակ: Ավելի տարածված տիպը նուկլեար (պարզ) ընտանիքն է, որը բաղկացած է ամուսնական զույգից՝ երեխաներով կամ առանց երեխաների: Նման ընտանիքներն ապրում են մյուս ազգականներից առանձին, իրենք են լուծում իրենց վերաբերվող տնտեսական, մշակութային, դաստիարակչական և այլ խնդիրները: Պարզ ընտանիքը կարող է լինել լրիվ և ոչ լրիվ կազմով: Ընտանիքը դառնում է ոչ լրիվ, ամուսնալուծության, այրիանալու և միայնակ մայրության հետևանքով:

Բարդ կամ ընդլայնված ընտանիք են անվանում այն ընտանիքներին, որոնց կազմում կան երկուսից ավելի սերունդների ներկայացուցիչներ: Նման ընտանիքներում կարող են ապրել նաև հորաքույրեր, քեռիներ և այլն: Ընդլայնված ընտանիքներում անդամների միջև փոխհարաբերությունները մեծամասամբ հիմնված է ավանդական սովորույթների վրա: Այսօր նման ընտանիքների առկայությունը սերտորեն կապված է ոչ միայն ավանդական գործոններից, այլև ֆինանսական, տնտեսական, բնակարանային պայմաններից: Այստեղ երեխաների սոցիալականացումը և դաստիարակությունը կատարվում է ոչ միայն ծնողների, այլ նաև ընտանիքի մյուս անդամների կողմից:

Կա նաև ցեղ, ազգ հասկացությունը, որը իր մեջ ներառում է տարբեր սերնդի ազգականների, որոնք ապրում են տարբեր բնակավայրերում, սակայն միավորված են ընդհանուր նախնիներից սերված լինելու հիշողությամբ, բարոյական կապվածությամբ և փոխօգնությամբ:

Ըստ հետազոտության արդյունքների՝ ընտանիքները իրենց կառուցվածքով բաժանվել են երկու հիմնական խմբերի: Առաջին խմբի մեջ ընդգրկված են միասերունդ և երկսերունդ պարզ կամ փոքր ընտանիքները, որոնք են՝

1. ամուսին, կին, երեխաներ,
2. ամուսին, կին՝ առանց երեխաների,
3. ոչ լրիվ կազմով երկսերունդ ընտանիք (մայր, երեխաներ),
4. միայնակներ:

Երկրորդ խմբի մեջ մտնում են եռասերունդ և եզակի դեպքերում քառասերունդ բարդ ընտանիքները՝

1. ամուսին, կին, երեխաներ, ամուսնու կամ կնոջ ծնողներ,
2. ամուսին, կին, երեխաներ, ծնողներ, չամուսնացած եղբայրներ կամ քույրեր,
3. մեկից ավելի ամուսնացած եղբայրներ իրենց երեխաներով, ծնողներ:

Վերջին շրջանում նկատվում է նաև տնփեսա ունեցող ընտանիքների որոշակի թվի ավելացում: Չնայած այդ սովորույթը մեր հասարակության կողմից ընդունված չէ, սակայն կապված արտագնացության ծավալների աճի հետ, երբ երիտասարդ ընտանիքները ընդմիշտ տեղափոխվեցին արտերկիր, ամուսնացած աղջիկները իրենց ծեր ծնողներին մենակ չթողնելու նպատակով ընտանիքներով տեղափոխվեցին հայրական օջախ[8]:

1980 թ.-ի և 2017 թ.-ի հարցումների համեմատական նյութերի արդյունքները ցույց են տալիս, որ երկու ժամանակահատվածում էլ, չնայած ցուցանիշների տարբերությանը, ըստ կառուցվածքի գերակշռում են երկսերունդ և եռասերունդ ընտանիքները:

Ստորև ներկայացնում ենք այդ ընտանիքների ցուցանիշների տարբերությունը բացահայտող պատճառներն ու շարժառիթները: 1980 թ.-ի համեմատ 2017 թ.-ին երկսերունդ ընտանիքների թիվը

8 *Թ. Ջաքարյան*, ԴԱՆ, Սյունիք, 2016 թ.:

ակնհայտորեն նվազել է: Դրան հակառակ՝ նկատվում է միասերունդ և մեկ անձից բաղկացած ընտանիքների ցուցանիշի կրկնակի բարձրացում: 1980 թ.-ին երկսերունդ ընտանիքները կազմել են հարցվողների 60,7 %-ը, 2017 թ.-ին՝ 42,9 %, իսկ Երևան քաղաքում, համապատասխանաբար, 1980թ՝ 59,2% և 2017թ՝ 49,6%: Նմանատիպ ցուցանիշներ են արձանագրվել նաև հանրապետության այլ քաղաքներում և գյուղական բնակավայրերում (տե՛ս աղյուսակ 1):

1980 թ.-ի համեմատ՝ 2017 թ.-ին երկսերունդ ընտանիքների թվի նվազումը պայմանավորված է նոր բնակարաններ կառուցելու կամ ձեռք բերելու ֆինանսական դժվարություններով: Եթե 1980-ական թթ.-ին երիտասարդ ընտանիքը իր աշխատանքով և ծնողների աջակցությամբ կարողանում էր նոր տնտեսություն ստեղծել և լուծել իր բնակարանային խնդիրները, ապա այժմ նույնիսկ մշտական աշխատանք ունենալու պայմաններում, ստացած եկամուտը հիմնականում ծախսվում է սննդի, կենցաղային առօրյա հոգսերը կամ երեխաների ուսման վարձը հոգալու նպատակներով: Ինչպես նշում է Մ. Գաբրիելյանը «1990-ական թթ.-ից հետո ընտանեկան բյուջեի ձևավորման հիմնական մասնակիցները՝ աշխատունակ կանայք և տղամարդիկ, եռասերունդ ընտանիքներում նաև կենսաթոշակառուները, միանգամից հայտնվեցին գործազուրկի ու կենսաթոշակով նույնիսկ հացի խնդիր լուծել չկարողացողի կարգավիճակում»[9]:

Վերջին 25 տարիների ընթացքում թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերում փոքրաթիվ քանակությամբ բնակարաններ են կառուցվել կամ ձեռք բերվել, որոնց սեփականատերերը հիմնականում մանր ու մեծ բիզնեսով զբաղվողներն են:

2017 թ. միասերունդ և միայնակ ընտանիքների թվի կրկնակի ավելացումը կարելի է բացատրել երկու հանգամանքով: Առաջինը պայմանավորված է սոցիալ-տնտեսական փոփոխություններով՝ պայմանավորված տվյալ ընտանիքներից արտերկիր մշտական կամ երկարատև բնակվող ընտանիքի անդամների բացակայու-

9 *Մ. Գաբրիելյան*, Հայկական ընտանիքը անցումային շրջանում, Եր., 2005 թ., էջ 111:

թյամբ: Երկրորդը՝ գյուղական բնակավայրերի միասերունդ ու մեկ անձից բաղկացած ընտանիքների որոշակի մասն էլ հողի սեփականաշնորհման ժամանակ եռասերունդ ընտանիքներից ձևականորեն բաժանված ծնողներն են[10]: Մեծացել է նաև ոչ լրիվ կազմով երկսերունդ ընտանիքների թվաքանակը: Դրանց գերակշռող մասը երիտասարդ այն ընտանիքներն են, որոնց տղամարդիկ մշտապես արտագնա աշխատանքով են զբաղված: Նման ընտանիքների տնտեսության կառավարումը և երեխաների դաստիարակությունը ամբողջովին կանանց իրավասության տակ է, որը հանգեցնում է ավանդաբար ձևավորված ներընտանեկան արժեքների փոփոխությանը:

Ըստ տարածվածության աստիճանի՝ երկրորդ տեղը զբաղեցնում են եռասերունդ ընտանիքները: 1980 թ. և 2017 թ. էթնոսոցիոլոգիական հետազոտությունների համեմատական նյութը ցույց է տալիս (բացառությամբ Երևան քաղաքից, որտեղ եռասերունդ ընտանիքների թիվը նվազել է 1980 թ.՝ 31,2 %, 2017 թ.՝ 24,0 %), որ մարզային քաղաքներում և գյուղական բնակավայրերում նման ընտանիքների ցուցանիշը բարձրացել է: Եթե 1980 թ.-ին նմանատիպ ընտանիքները գյուղում կազմում էին 30,9 %, ապա 2017 թ.՝ 51,3 % (տե՛ս աղյուսակ 1): Անկասկած. այստեղ իր որոշիչ դերն է ունեցել ոչ միայն գյուղի ավանդապահությունը, այլև նոր բնակարաններ կառուցելու հետ կապված տնտեսական և ֆինանսական դժվարությունները:

1980-ական թվականների համեմատ՝ 2017 թ.-ին բարձրացել է 3 անդամ ունեցող ընտանիքների թիվը և նվազել է 5 անդամ ունեցողներինը: Քանի որ սրանք հիմնականում երկսերունդ ընտանիքներն են, ուստի 2017 թ.-ին նրանց անդամների ցուցանիշների նվազեցումը սերտորեն կապված է ծնելիության մակարդակի անկման հետ: Երեք անդամ ունեցող ընտանիքների ցուցանիշը 1980թ կազմում է 12,2 %, 2017 թ.,՝ 17,4 %, 5 անդամ ունեցող ընտանիքների քանակը, 1980 թ.՝ 28,4 % , 2017 թ.՝ 18,2 (տե՛ս աղյուսակներ 2, 3):

10 *Թ. Ջաքարյան*, Տավուշ, Սոցիալ մշակութային գործընթացներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.,2014 թ., էջ 142:

Աղյուսակ 1

ՀՀ ընտանիքի կառուցվածքը՝
ըստ բնակավայրի տիպի (1980 և 2017 թթ.), %

Ընտանիքի կազմը	Ք. Երևան		Այլ քաղաքներ		Գյուղեր	
	1980 թ.	2017 թ.	1980 թ.	2017 թ.	1980 թ.	2017 թ.
Երկսերունդ	59,2	49,6	61,1	44,0	61,9	36,7
Եռասերունդ	31,2	24,0	25,3	41,4	30,9	51,3
Ամուսին, կին	5,6	17,6	6,2	8,3	4,1	7,3
Միայնակ	3,2	7,2	4,3	6,4	1,0	4,7
Այլ կազմ	0,8	1,6	3,1	0,0	2,1	0,0
Ընդամենը	100	100	100	100	100	100

Աղյուսակ 2

Ընտանիքի անդամների թվաքանակը (1980 և 2017 թթ.), %

Ընտանիքի անդամների թիվը	1980 թ.	2017 թ.
Միայնակ	3,1	6,0
Երկու անդամ	5,5	14,1
Երեք անդամ	12,2	17,4
Չորս անդամ	21,6	23,4
Հինգ անդամ	28,4	18,2
Վեց և ավել անդամ	29,2	20,8
Ընդամենը	100,0	100,0

Ընտանիքի կառուցվածքը սերտորեն կապված է նրա անդամների թվի հետ:

2017 թ.-ին գյուղական բնակավայրերում արձանագրվել են տաս և ավելի անձից բաղկացած ընտանիքներ, որտեղ ծնողների հետ նույն հարկի տակ ապրում և համատեղ տնտեսություն են վարում երկու-երեք ամուսնացած եղբայրներ[11]:

2017 թ.-ին միասերունդ և միայնակ ընտանիքների ցուցանիշների բարձացմանը համապատասխան մեծացել է 1–2 անդամ ունեցող ընտանիքների թիվը (տես աղյուսակ 3):

11 *Թ. Ջաքարյան*, ԴԱՆ, Տավուշ, 2012թ.:

Աղյուսակ 3

Ընտանիքի անդամների թվաքանակը՝
ըստ բնակավայրերի տիպերի (1980 և 2017 թթ.), %

Ընտանիքի անդամների թիվը	Բնակավայրեր					
	ք. Երևան		Այլ քաղաքներ		Գյուղեր	
	1980 թ.	2017 թ.	1980 թ.	2017 թ.	1980 թ.	2017 թ.
Միայնակ	3,2	7,2	4,3	6,4	1,0	4,7
Երկու անդամ	6,4	23,2	4,3	11,0	6,2	8,7
Երեք անդամ	13,6	21,6	11,7	20,2	11,3	12,0
Չորս անդամ	23,2	24,8	22,2	22,0	18,6	23,3
Հինգ անդամ	24,0	13,6	32,1	22,0	27,8	19,
Վեց և ավել անդամ	29,6	9,6	25,3	18,3	35,1	32,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

Այսպիսով, 2017 թ.-ին քաղաքային ու գյուղական բնակավայրերի հետազոտություն արդյունքները ցույց են տալիս, որ ընտանիքի կառուցվածքը, պահպանելով հանդերձ իր ավանդական կառուցվածքը, կապված անկախության տարիների սոցիալ-տնտեսական պայմանների, ծնելիության մակարդակի անկման, արտագաղթի և արտագնա աշխատանքի մեկնողների թվի ավելացման հետ, որոշակի փոխակերպումների է ենթարկվել: Զևափոխվել է ընտանիքի կառուցվածքը և ի հայտ են եկել ընտանեկան արժեքների նոր կողմնորոշումներ:

1.3. Ներընտանեկան հարաբերություններ

Ներընտանեկան հարաբերությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ 1. ամուսինների միջև, 2. ծնողների և զավակների միջև:

Բուն ընտանեկան հարաբերությունից բացի կա նաև հեռու և մոտիկ ազգականների միջև հարաբերություններ:

Ընտանեկան հարաբերությունների փոխակերպումները անմիջականորեն կապված են հասարակության մեջ կատարվող փոփոխություններից: Բնականաբար, անկախության տարիները իրենց կնիքն են դրել նաև ներընտանեկան փոխհարաբերությունների վրա:

Ինչպես վերը նշեցինք, ավանդական մեծ ընտանիքներում ներընտանեկան փոխհարաբերությունների կարգավորման ու դրանց կայունության գործընթացը ապահովելու համար, կարևորվում էր ավագության կարգի պահպանումը և երկու սեռերի պարտականությունների ճիշտ կիրառումը:

Արդի հայ ընտանիքի ներընտանեկան հարաբերությունները որոշակի փոփոխությունների են ենթարկվել: Չնայած դրան այսօր էլ որոշիչ դեր ունեն սերնդեսերունդ փոխանցված ավանդույթներն ու սովորութային նորմերը, որոնք դրսևորվում են առօրյա կենցաղում և տոնածիսական համակարգում: Այսօր բարոյական արժեքների, կենցաղային խնդիրների լուծման, երեխաների դաստիարակման և այլ հարցերի վերաբերյալ վերաբերմունքը և գնահատումը երիտասարդ ու ավագ սերնդի կողմից տարբերվում են: Ներընտանեկան հարաբերությունները անմիջականորեն կապված են ընտանիքի կառուցվածքից, երբ նրա անդամները ապրում են՝

1. ամուսնու ծնողների հետ,
2. կնոջ ծնողների հետ,
3. առանձին է ապրում:

Տան գլխավորը: Ներընտանեկան հարաբերություններում կարևոր է այն հարցը, թե տվյալ ընտանիքում ում են ընդունում որպես տան գլխավոր, և նրա ձայնը որքանով է որոշիչ ընտանեկան կարևոր հարցերը որոշելու խնդրում:

Ավանդական ընտանիքում, ինչպես գիտենք տան ավագ տղամարդը համարվում էր տան գլխավոր: Այն կապված էր մի շարք հանգամանքներից: Դրանք էին՝

1. կնոջ տնտեսական կախվածությունը տղամարդուց,
2. աշխատանքի և ֆունկցիաների հստակ բաժանումը,
3. կարևոր հարցերում ընտանիքի բոլոր անդամների կողմից տղամարդու վերջին խոսքի ընդունումը:

Ըստ հարցումների արդյունքների՝ այսօր թե՛ գյուղական, թե՛ քաղաքային ընտանիքների գերակշռող մասում տան գլխավորը, ընտանեկան կարևոր հարցերը լուծողը համարվում է՝

1. երկսերունդ ընտանիքներում ամուսինը կամ հայրը (չամուսնացածների համար),
2. եռասերունդ ընտանիքներում տան մեծ տղամարդը կամ կինը,
3. տան կերակրողը՝ լինի դա տղամարդ, թե կին:

Այսօր հաճախ սովորութային ուժի շնորհիվ տղամարդու «տան գլխավոր» լինելը ձևական և ցուցադրական բնույթ է կրում: Ընտանիքը «պահող» կինը, մարդկանց ներկայությամբ ամուսնուն է ներկայացնում որպես տան գլխավոր, բայց իրականում ինքն է ղեկավարում ընտանիքը: Շատ դեպքերում հայ տղամարդը, զրկվելով ընտանիքի հիմնական կերակրողի դերից, կորցրել է իր հեղինակությունը և դադարել է օրինակ ծառայել իր երեխաներին:

Ներկա պայմաններում տղամարդու և կնոջ դերային արժեքների որոշակի փոփոխություն է նկատվում հատկապես այն երկսերունդ ընտանիքներում, որտեղ ընտանիքի հիմնական կերակրող է հանդիսանում կինը: Ի տարբերություն եռասերունդ ընտանիքների, որտեղ ավագ սերնդի կողմնորոշումը ավանդական նորմերի նկատմամբ որոշիչ ազդեցություն է ունենում տան անդամների մտածելակերպի վրա, երկսերունդ ընտանիքների հարցվողների կարծիքը կնոջ և տղամարդու դերային արժեքների գնահատման վերաբերյալ բոլորովին այլ է, որը կապված է գործազրկության և կնոջ աշխատանքային ծանրաբեռնվածության հետ:

Որպես կանոն, եռասերունդ ընտանիքների կրտսեր ներկայացուցիչները հարգանքով են վերաբերվում ավագ սերնդին և ընտանեկան կարևոր հարցերը կարգավորելու խնդրում կարևորում է նրանց կարծիքը: Գյուղական բնակավայրերի եռասերունդ ընտանիքների գերակշռող մասը տան ավագ տղամարդուն կամ «մեծին» ընտանիքի գլխավոր են համարում: Նույնիսկ ոչ լրիվ կազմով եռասերունդ ընտանիքներում, երբ ընտանիքը կերակրող տղամարդը բացակայում է, տան գլխավոր է համարվում մայր ծնողը, լինի դա տղամարդ, թե կին: Ըստ 2016 թ.-ի՝ Հայաստանի երիտասարդության շրջանում անցկացրած հետազոտության արդյունքների,

ընտանիքում կարևոր որոշումներ կայացնելիս գյուղաբնակ կանանց 84,5%-ի և քաղաքաբնակ կանանց 77,0%-ի համար ազդեցիկ է ամուսնու դերը[12]:

Ըստ մեր հետազոտության արդյունքների, եթե 1980-ական թթ.-ին ընտանիքի տղամարդուն որպես «տան գլխավոր» է ճանաչել ընդհանուր հարցվողների 50,3%-ը, ապա 2017 թ.-ին այդ ցուցանիշը նվազել է 41,7%-ի: Որպես տան գլխավոր՝ կինը երկրորդ տեղն է զբաղեցնում. «Տան տղամարդու» երկարատև բացակայության կամ գործազրկության հետևանքով կինն իր վրա է վերցրել ոչ միայն օջախի պահպանության, տնտեսության կառավարման, երեխաների խնամքի և դաստիարկության հոգսերը, այլև հանդես է գալիս ընտանիքի կարևոր հարցերը որոշողի դերում: 1980 թ.-ին կնոջը՝ որպես ընտանեկան կարևոր հարցերը լուծելու խնդրում գլխավոր է ճանաչել բնակչության 7,0%-ը, 2017 թ.՝ 13,3% (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Ընտանիքում կարևոր հարցեր որոշողը (1980 և 2017 թթ.), %

Ընտանիքում կարևոր հարցեր որոշողը	1980 թ.	2017 թ.
Ամուսինը/հայրը	50,3	41,7
Կինը/մայրը	7,0	13,3
Ամուսինը և կինը միասին	_	12,5
Ամուսնու կամ կնոջ ծնողները	4,9	2,6
Բոլորը միասին	35,9	29,9
Դժվարանում է պատասխանել	1,8	0,0
Ընդամենը	100,0	100,0

Երկսերունդ ընտանիքների հարցվողների թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց գերակշռող մասը ընդունում է ամուսնու գերիշխանությունը, որը նույնպես ավանդական կողմնորոշման արդյունք է: Ըստ խորացված հարցումների՝ «Ընտանիքը միշտ պետք է ղեկավարի տղամարդը, որովհետև հայ ընտանիքում դա չգրված օրենք

12 Անկախության սերունդ, հետազոտություն երիտասարդության շրջանում, Եր., Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի մասնաճյուղ, 2016 թ., էջ 168:

է (տղամարդ), «Ծնված օրվանից տեսել ենք, որ տան գլխավորը տղամարդն է, էտպես էլ ընդունում ենք» (կին)[13]:

2017 թ տվյալներով եռասերունդ ընտանիքներում 75,8 % ցուցանիշով տան գլխավոր է համարվում ընտանիքի ավագ սերնդի արական սեռի ներկայացուցիչը կամ միակ տղամարդը: Երկրորդ տեղը զբաղեցնում է ավագ սերնդի կինը՝ 11,2 % (տե՛ս գծապատկեր 1): Եռասերունդ ընտանիքներում մեծի կարծիքը միշտ հաշվի են առնում:

Գծապատկեր 1

Ընտանիքի գլխավորի ընկալումը, %



Հարցվող տղամարդկանց մի մասը գտնում է, որ վերջին տարիներին չնայած տղամարդն է համարվում տան գլխավոր և վերջին ձայնի իրավունքը իրենն է, սակայն կարևոր հարցեր որոշելիս կնոջ խորհուրդը միշտ հարցնում է, նրան չի անտեսում:

Ըստ սեռային հատկանիշների՝ հարցվողների 81,8 %-ը տան գլխավոր է ճանաչում արական սեռի ներկայացուցիչներին, 18,2 %-ը՝ իգական սեռին (տե՛ս գծապատկեր 1):

13 *Թ. Ջաքարյան*, ԴԱՆ, Վանաձոր, 2016թ.:

Ըստ բնակավայրի տիպի՝ կանանց, որպես տան գլխավորի համեմատական բարձր ցուցանիշ է արձանագրվել Երևան քաղաքի հարցվողների մոտ 26,4%, տղամարդկանց՝ գյուղական բնակավայրերում 86,7% (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Ընտանիքի գլխավորի սեռը՝
ըստ բնակավայրերի տիպերի (2017 թ.), %

Գլխավորի սեռը	Բնակավայրեր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Արական	73,6	84,4	86,7
Իգական	26,4	15,6	13,3
Ընդամենը	100,0	100,0	100,0

Աղյուսակ 6

Ընտանիքի գլխավորի ընկալումը ըստ բնակավայրերի տիպերի
(2017 թ.), %

Գլխավորի կարգավիճակը ընտանիքում	Բնակավայրեր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
ՏՏ ավագ սերնդի տղամարդը, կամ տան տղամարդը	72,0	73,4	80,7
ՏՏ միջին սերնդի տղամարդը	4,0	11,0	6,7
ՏՏ միայնակ կինը	8,8	6,4	3,3
ՏՏ ավագ սերնդի կինը	15,2	9,2	9,3
Ընդամենը	100,0	100,0	100,0

Այսպիսով, կապված վերջին 20–25 տարիների հանրապետությունում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխությունների հետ՝ նկատվում է տղամարդու և կնոջ դերերի արժեքային համակարգի էական փոփոխություն:

Այսօր տան տղամարդու ընտանիքի գլխավորի ընդունումը կապված է նրա՝ որպես ընտանիքը կերակրողի կարգավիճակից, որը կապված է մի շարք գործոններից՝

1. շատ դեպքերում կանանց աշխատանք գտնելը ավելի հեշտ է, քան տղամարդկանցը,
2. տղամարդը արտագնա աշխատանքի պատճառով երկար բացակայում է բնակության վայրից, այդ դեպքում կինն է որոշում առօրյա կենցաղային խնդիրների հետ կապված հարցերը:

Ծնող – ամուսնացած զավակ փոխհարաբերություններ: Ծնողների և զավակների միմյանց նկատմամբ ունեցած պարտականությունների կատարումը ինչպես ավանդական, այնպես էլ արդի հայ ընտանիքի կայունության հիմքն են: Մխիթար Գոշի դատաստանագրքի որոշ հոդվածներով նզովվում են այն ծնողները, որոնք իրենց զավակներին չեն սնուցում մինչև «ձեռնահաս» դառնալը, և անիծում են այն զավակներին, որոնք չեն խնամում ու մենակ են թողնում իրենց ծեր ծնողներին: Հատուկ հոդված է նվիրված նաև հոր և մոր խրատները չլսող որդիներին[14]:

Ընտանեկան ավանդույթների և սովորույթների պահպանման գործում կարևոր նշանակություն ունեն սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական գործոնները: Այստեղ իր որոշիչ դերն ունի ընտանիքի կառուցվածքի ձևը և ընտանիքի անդամների թիվը: Կարևորվում է հատկապես ընտանեկան ավանդույթների պահպանման նկատմամբ ընտանիքի անդամների կողմնորոշումը: Հայ ընտանիքում մեծամասամբ ընդունված է, որ առանձին բնակվող զավակները սերտ կապեր են պահպանում ծնողների հետ՝ ցուցաբերելով նրանց թե՛ նյութական, թե՛ բարոյահոգեբանական աջակցություն:

Ըստ ընտանիքի կառուցվածքի՝ ընտանեկան ավանդական նորմերը սերունդներին փոխանցող է հանդես գալիս հիմնականում եռասերունդ ընտանիքը: Չնայած այն հանգամանքին, որ եռասերունդ ընտանիքներում առկա է տարբեր սերունդների միջև եղած տարաձայնությունները, այնուամենայնիվ, այն իր որոշիչ ազդեցու-

14 *Մխիթար Գոշ*, նույնը, էջ 348, 362, 364:

թյունն ունի երիտասարդ սերնդին ավանդական արժեքներով դաստիարկելու գործընթացում:

Կրտսեր սերունդը ավագ սերնդից ժառանգում է ոչ միայն ներընտանեկան փոխհարաբերությունների կարգավորման ավանդույթը, այլև միմյանց հետ հաղորդակցվելու կուլտուրան: Ծնողների և զավակների հարաբերությունների կայունությունը ապահովող տարրերի կիրառումը, մեծերի-փոքրերի, ազգականների, հարևանների նկատմամբ ունեցած պարտականությունների և իրավունքների պահպանումը կոնկրետ վարվելակերպով և վարքագծով կրտսեր սերունդը իր գործողություններում ընդօրինակում է ավագ սերնդից:

Ծնողների և զավակների՝ միմյանց նկատմամբ ունեցած պարտավորությունները պարզելու նպատակով ներկայացվել է հարցերի մի խումբ, որոնց կիրառումը ինչպես ավանդական, այնպես էլ արդի հայ ընտանիքի բարոյահոգեբանական կապի կայունության հիմքն է:

Չնայած վերջին երկու տասնամյակում հանրապետությունում կատարված քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխություններին՝ ավանդական ընտանիքում ընդունված հիմնական նորմերը բազմակի փոխակերպումներով սովորութային ուժի շնորհիվ այսօր էլ որոշակիորեն կիրառվում են ընտանեկան, ազգակցական, դրացիական փոխհարաբերությունները կանոնավորելու գործընթացներում:

Ամուսնացած զավակների և ծնողների համատեղ բնակվելու խնդրի շուրջ 2008թ.-ի ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետազոտության արդյունքների համաձայն՝ հարցվողների 87%-ը համատեղ բնակվելու կողմնակիցներն են: Ըստ հարցվողների՝ օգնության կարիք ունեցող առանձին բնակվող ծնողների նկատմամբ հոգ տանելու պարտականությունը զավակները պետք է կրեն (95%): Ինչ վերաբերվում է ծնողների պարտականությանը, ապա ըստ բոլոր տարիքային խմբերի հարցվողների կարծիքի՝ նրանք պետք է հոգ տանեն իրենց թոռնիկների և երեխաների մասին, եթե դրա անհրաժեշտությունը կա (դրական պատասխանները գտնվում են 90%-ի սահմանագծում): Ըստ նրանց՝ ծնող-

ների պարտականությունների մեջ է մտնում նաև ֆինանսական աջակցություն ցույց տալը հասուն երեխաներին, եթե վերջիններս դրա խիստ կարիքը ունեն: Դրական պատասխանները գտնվում են 90%-ի սահմաններում կամ գերազանցում են այն: Հարցմանը մասնակից երիտասարդ ընտանիքների 84,6%-ը նյութական, ինչպես նաև հոգեբանական ծանր իրավիճակների ժամանակ դիմում են ծնողների օգնությանը: Իսկ բնակավայրերում ապրող ծնողների բնամթերային օգնությունը քաղաքաբնակ զավակներին կանոնավոր բնույթ է կրում[15]:

Ըստ մեր հետազոտության արդյունքների՝ ծնողների հետ համատեղ բնակվելու հիմնական պատճառներից են ավանդական սովորույթը (ադաթը), ծեր ծնողների խնամքը, ծնողների օգնությունը երիտասարդ ընտանիքին, փոխադարձ օգնությունը, ծնողների փորձը և խորհուրդները, երեխաների խնամքը և այլն: Եթե համեմատում ենք 1980 և 2017 թթ. պատասխանների արդյունքները, ապա այն էական փոփոխությունների է ենթարկվել, որը պայմանավորված է արդի սոցիալ-տնտեսական պայմաններով և դրանց հետ անմիջականորեն առնչվող բարոյահոգեբանական արժեքների որոշակի ձևափոխմամբ:

Ըստ ավանդական հայ ընտանիքում ընդունված սովորույթի՝ որդիներից մեկը՝ սովորաբար կրտսերը, պետք է բնակվեր ծնողների հետ: Թե՛ խորհրդային, թե՛ հետխորհրդային ժամանակաշրջաններում ծնողների հետ համատեղ բնակվելու կողմնակիցների գերակշռող մասը կարևորում են ադաթը, ծեր ծնողներին մենակ չթողնելու, նրանց խնամելու և բարոյական աջակցություն ցույց տալու հանգամանքը: Դրական պատասխանողների թե՛ ավագ, թե՛ երիտասարդ սերնդի ներկայացուցիչների կարծիքով՝ դա հնուց եկած «ադաթ» է, որ ծնողների հետ մի արու զավակ պետք է ապրի[16]:

15 Բնակչության ներացման վերաբերյալ հետազոտության արդյունքների վերլուծություն: Եր., ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գրասենյակ, 2009 թ., էջ 184–185:

16 *Э. Карапеян*, Армянская семейная община, Ер., Издательство АН Арм. ССР, 1958г., С. 99:

Ծնողների հետ համատեղ բնակվելու հարցում պատասխանների նմանատիպ մոտեցումները պայմանավորված են ավանդական մտածելակերպով և սովորութային նորմերի պահպանման գործառույթներով:

Ծնողների հետ միասին բնակվելու կարևոր հանգամանք է նշվում նաև վերջիններիս օգնությունը երիտասարդ ընտանիքին: Տվյալ խնդրում նրանց կողմնորոշման վրա վճռորոշ ազդեցություն ունեն ներկա սոցիալ-տնտեսական գործընթացները: Շատ երիտասարդ ընտանիքներ նյութական սուղ պայմանների պատճառով չեն կարողանում լուծել իրենց առօրյա կենցաղային հարցերը ու բնակարանային խնդիրները և ստիպված ապրում են ծնողների հետ: Երիտասարդ ընտանիքի առանձին ապրելու ձգտումը արտահայտվում է այն ժամանակ, երբ նա կարողանում է ինքնուրույն հոգալ իր կեցության խնդիրները: Եթե նկատի ունենանք նաև գործազրկությունը և ցածր աշխատավարձը, ապա նրանք տնտեսական կախվածության մեջ են գտնվում ծնողներից, որը հետագայում ներընտանեկան կոնֆլիկտների պատճառ է հանդիսանում: Չնայած այդ հանգամանքին երիտասարդները նշում են, որ բարդ ընտանիքում ապրող երիտասարդ ընտանիքը կյանքի դժվարին պայմաններում միշտ աջակցություն և փոխօգնություն է ստանում տան մեծերից:

Ծնողների օգնությունը կարևորում են հատկապես 18–29 տարիքային խմբի հարցվողները, որոնք, չունենալով տնային տնտեսությունը վարելու փորձ, կենցաղային առօրյա աշխատանքներում, ինչպես նաև երեխաների խնամքի և դաստիարակության խնդիրներում ավագ սերնդի օգնության խիստ կարիքն են զգում: Բացի վերը նշվածներից, հարցվողների մի մասն էլ թե՛ քաղաքային, և թե՛ գյուղական բնակավայրերում ծնողների հետ համատեղ բնակվելու պարագայում կարևորում են փոխադարձ օգնությունը: 2017 թ. դաշտային ազգագրական նյութերը վկայում են, որ այսօր գերդաստանի տնտեսավարման կառուցվածքը որոշակի փոփոխություններով նկատելի է հատկապես գյուղական բնակավայրերի այն եռասերունդ ընտանիքներում, որտեղ ծնողների հետ նույն հարկի տակ

ապրում են երկու-երեք ամուսնացած զավակներ իրենց երեխաներով: Համատեղ բնակվելու հիմնական պատճառը, բացի ավանդույթից, նոր բնակարաններ կառուցելու հետ կապված դժվարություններն են: Նման ընտանիքներում անցկացրած դիտարկումները ցույց են տալիս, որ ինչպես անցյալում, այսօր էլ ներտնտեսային և ներընտանեկան հարաբերությունները կարգավորում է տան մեծ տղամարդը կամ կինը: Հարսների մեջ կենցաղային առօրյա աշխատանքների կազմակերպումը՝ ըստ տարիքային խմբերի, կեսուրի պարտականությունն է:

Ըստ ֆիզիկական կարողության՝ տնային գործերին մասնակցում են նաև անչափահաս երեխաները: Գյուղատնտեսության հետ կապված ծանր աշխատանքները հիմնականում տղամարդկանց գործն է: Մեծ ընտանիքների անդամների միջև բարոյահոգեբանական կապի և հաղորդակցման կուլտուրայի կարգավորումը տան մեծ կնոջ շնորհքն է: Նման ընտանիքներում կա փոխադարձ հարգանք մեկը մյուսի աշխատանքի նկատմամբ և փոխադարձ օգնություն, որը ավելի է մերձեցնում ընտանիքի անդամներին[17]:

Եռասերունդ ընտանիքներում մեծացած երեխաները, որպես օրինաչափություն, ավելի հարգանքով են տրամադրված տարեցների նկատմամբ: Բարդ ընտանիքներում որոշակիորեն պահպանվել և գործածության մեջ են փոխհարաբերությունների սոցիալական ու բարոյական ավանդական ձևերը: Հարցմանը մասնակցած երիտասարդ սերնդի գերակշռող մասը ծնողների հետ համատեղ բնակվելու պատճառ է նշում նաև ծնողների փորձն ու խորհուրդները: Ավագ սերնդի կյանքի փորձի և խորհուրդների անհրաժեշտությունը երիտասարդ ամուսինների փոխհարաբերությունների կարգավորման գործում կարևորում են հատկապես տարեց և կրտսեր տարիքային խմբերի իգական սեռի ներկայացուցիչները: «Տան մեծի» հետ ապրելու կարևոր առավելություն է նշվում այն հանգամանքը, որ նրա ներկայությունը առանձին ապրող ընտանիքի անդամներին և ազգականներին «կապող օղակ է»: Երբ ընտանիքի մեծը

17 *Թ. Ջաքարյան*, ԴԱՆ, Գեղարքունիք, 2016 թ.:

մահանում է, ոչ միայն ազգականների շրջանակն է նեղանում, այլև մոտ բարեկամների (հորեղբայր, հորաքույր, քեռի, մորաքույր և դրանց երեխանները) փոխայցելություններն են պակասում, նրանց հանդիպումները սահմանափակվում են[18]: Առանձին ապրող ընտանիքի անդամները հավաքվում են հայրական օջախ հիմնականում տոների, ծնունդների, իսկ հեռու ազգականները՝ հարսանիքի, թաղումների ժամանակ:

Համեմատած քաղաքաբնակների հետ, գյուղաբնակները ավելի են հակված ծնողների հետ միասին ապրելու ցանկությանը, որը պայմանավորված է ոչ միայն ավանդական նորմերի նկատմամբ գյուղի կողմնորոշմամբ, այլև երբեմն կապված է ներկա սոցիալ-տնտեսական պայմաններից: Այստեղ նոր բնակարաններ կառուցելու հնարավորությունների հետ կապված խնդիրները, տնտեսական կախվածությունը, կենցաղային առօրյա դժվարությունները, մսուրմանկապարտեզների բացակայությունը էլ ավելի է կարևորում ծնողների և ամուսնացած զավակների համատեղ բնակվելու հանգամանքը:

Ըստ 1980 և 2017 թթ.-ի գյուղական և քաղաքային բնակավայրերի կրկնակի հարցումների արդյունքների՝ 1980 թ.-ին հարցվողների 52,5 %-ն է ծնողների հետ համատեղ բնակվելու կողմնակից, 2017 թ.՝ 56,3 %-ը (տե՛ս աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Ամուսնացած զավակների և ծնողների համատեղ բնակվելու նախընտրությունը (1980 և 2017 թթ.), %

Համատեղ բնակվելու նախընտրությունը	1980 թ.	2017 թ.
Այո	52,5	56,3
Ոչ	27,4	41,9
Դժվարանում եմ պատասխանել	20,1	1,8
Ընդամենը	100,0	100,0

18 *Թ. Ջաքարյան*, Տավուշ, Սոցիալ մշակութային գործընթացներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014թ., էջ 148:

Ըստ ընտանիքի կառուցվածքի՝ դրական պատասխանների բարձր ցուցանիշներով առաջին տեղը զբաղեցնում են եռասերունդ ընտանիքի ներկայացուցիչները (46,8%) ցուցանիշների փոքր տարբերությամբ երկրորդը երկսերունդ ընտանիքներն են՝ 40,3% (տե՛ս աղյուսակ 8):

Աղյուսակ 8

Ամուսնացած զավակների և ծնողների համատեղ բնակվելու նախընտրությունը՝ ըստ ընտանիքի կազմի (2017 թ.), %

Ընտանիքի կազմ	Այո	Ոչ
Ամուսին, կին	6,9	16,8
Ամուսին, կին, երեխաներ	33,8	41,0
Ամուսին, կին, երեխաներ, ամուսնու կամ կնոջ ծնողներ	30,1	19,3
Ամուսին, կին, երեխաներ, ամուսնու կամ կնոջ ծնողներ, ամուսնացած/չամուսնացած քույր, եղբայր	13,9	7,5
Ոչ լրիվ կազմով երկսերունդ ընտանիք	6,5	4,3
Ոչ լրիվ կազմով եռասերունդ ընտանիք	2,8	3,7
Միայնակ	5,6	6,8
Այլ կազմ (տատ, թոռ և այլն)	0,5	0,6
Ընդամենը	100,0	100,0

Եթե համադրում ենք 2017–1980 թթ.-ի հարցման արդյունքների դրական և բացասական պատասխանները՝ ըստ ընտանիքի կազմի, ապա համատեղ բնակվելու ցուցանիշները 80-ական թթ.-ի համեմատ բարձրացել է միայնակ և ամուսնական զույգ ունեցող ընտանիքների մոտ (միայնակ 1980 թ.՝ 0,7%, ամուսնական զույգ՝ 2,9%, 2017 թ.՝5,6% և 6,9% (տե՛ս աղյուսակ 8):

Դրանք հիմնականում տարեց ծնողներն են, որոնք կարևորում են ոչ միայն զավակների կողմից ստացված խնամքը և նյութական օգնությունը, այլև նրանց բարոյահոգեբանական աջակցությունը: Կախված կենսաթոշակների չնչին չափից՝ ավագ սերնդի կախվածությունը կրտսեր սերնդից մեծացել է: Բացի ֆինանսական օգնությունից տարեց ծնողները իրենց երջանիկ են համարում, երբ շրջա-

պատված են զավակներով և թոռներով: Ըստ տարիքային խմբերի՝ դրական պատասխանների ամենաբարձր ցուցանիշը երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին է՝ 72,0% (տե՛ս աղյուսակ 9):

Աղյուսակ 9

Ամուսնացած զավակների և ծնողների համատեղ բնակվելու նախընտրությունը՝ ըստ տարիքային խմբերի (2017 և 1980 թթ.), %

Համատեղ բնակվելու նախընտրությունը	18–29		30–49		50 և բարձր	
	1980 թ.	2017 թ.	1980 թ.	2017 թ.	1980 թ.	2017 թ.
Այո	55,9	72,0	50,0	52,2	52,5	51,8
Ոչ	26,5	26,8	23,3	46,3	31,7	45,8
Դ/Պ	17,6	1,2	26,7	1,5	15,8	2,4
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

Դրանք հիմնականում երիտասարդ ամուսիներն են, որոնք, չունենալով կյանքի փորձ, ծնողների աջակցության կարիքն են զգում: Հաճախ ծնողները տնային տնտեսությունը վարելու, նախադպրոցական և դպրոցական երեխաների դաստիարակության գործում փոխարինում են կայուն աշխատանք ունեցող երիտասարդ կանանց: Այս դեպքում նրանք ոչ միայն առօրյա կենցաղային խնդիրներն են լուծում, այլև իրենց վարքագծով կարևոր դեր են կատարում մատաղ սերնդին ավանդական նորմերը փոխանցելու խնդրում: Եթե ծնողները նույնիսկ առանձին տնտեսություն են վարում նույն բնակավայրում ապրող զավակներից, ապա օգնության ու բարոյահոգեբանական կապի հնարավորությունները մեծ են: Այն ընտանիքներում, որտեղ ծնողները և զավակները տարբեր բնակավայրերում են ապրում, անմիջական հաղորդակցման խզման պատճառով որոշակի արգելքներ են ստեղծվել ընտանեկան ավանդական նորմերը նոր սերնդին փոխանցելու խնդրում: Դա հատկապես վերաբերվում է արտերկիր տեղափոխված երիտասարդ ընտանիքներին: Ոչ լրիվ կազմով ընտանիքների թվի ավելացումը նույնպես բացասական ազդեցություն է ունենում ավանդական նորմերի փոխանցման գործառույթների վրա:

Ըստ բնակավայրի տիպի՝ տվյալ խնդրի համեմատական պատկերը հետևյալն է. 1980 թ. – գյուղ՝ 56,7 % և 2017 թ.՝ 68,0 %, 1980 թ. – այլ քաղաքներ՝ 50,0 % և 2017թ. – 62,4 %, Երևան 2017 – 36,8 % (տե՛ս աղյուսակ 10):

Աղյուսակ 10

Ամուսնացած զավակների և ծնողների համատեղ բնակվելու նախընտրությունը՝ ըստ բնակավայրերի տիպերի (1980 և 2017 թթ.), %

Համատեղ բնակվելու նախընտրությունը	ք. Երևան	Այլ քաղաքներ		Գյուղեր	
	2017 թ.	1980 թ.	2017 թ.	1980 թ.	2017 թ.
Այո	36,8	50,0	62,4	56,7	68,0
Ոչ	60,8	25,3	37,6	30,9	29,3
Դ/Պ	2,4	24,7	0,0	12,4	2,7
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Ծնողների հետ բնակվելու առավել կողմնակից են գյուղաբնակները, որը բացատրվում է ոչ միայն գյուղի ավանդապահությամբ, այլև բնակարանային պայմանների բացակայությամբ: Քաղաքային միջավայրում սեփական բնակարանի այլընտրանքը վարձով բնակվելն է, իսկ գյուղերում նման հնարավորությունները սահմանափակ են:

Համեմատած խորհրդային ժամանակաշրջանի հետ՝ 2017թ հարցվողների ցուցանիշներով ավելի բարձր են փոխադարձ օգնության 1980 թ.՝ 12,5 %, 2017 թ.՝ 21,4 % և ծնողների փորձի ու խորհուրդների ընդունման գործառույթներում 1980 թ.՝ 6,6 %, 2017թ՝ 17,0 %, տե՛ս աղյուսակ 11):

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ միասին բնակվելու պատճառների հիմնական մասը պայմանավորված է հայ ընտանիքում ընդունված ավանդույթային սովորույթների պահպանման և կիրառման գործառույթներով, ինչպես նաև ներկա սոցիալ-տնտեսական պայմաններով:

Ծնողների հետ չբնակվելու հիմնական պատճառ է նշվում ինքնուրույն ապրելու հանգամանքը, որի ցուցանիշները 80-ական թթ.-ի

համեմատ բարձրացել է 1980 թ.՝ 19,7% – 2017 թ.՝ 35,2% (տե՛ս աղյուսակ 12):

Աղյուսակ 11

Ծնողների և ամուսնացած զավակների համատեղ բնակվելու պատճառները (1980 և 2017 թթ.), %

Համատեղ բնակվելու պատճառները	1980 թ.	2017 թ.
Ծեր ծնողների խնամքը	19,9	17,0
Երեխաների խնամքը	6,6	10,7
Փոխադարձ օգնությունը	12,5	21,4
Ծնողների օգնությունը երիտասարդ ընտանիքին	5,1	10,7
Ծնողների փորձը և խորհուրդները	19,1	17,6
Միասին ապրելը շատ ուրախ է	18,4	14,6
Հնուց ընդունված սովորույթ է	8,1	5,9
Առանձին տուն չունենալը	–	2,2
Դժվարանում եմ պատասխանել	10,3	0,0
Ընդամենը	100,0	100,0

Աղյուսակ 12

Ծնողների և ամուսնացած զավակների համատեղ չբնակվելու պատճառները, (1980 և 2017 թթ.), %

Համատեղ չբնակվելու պատճառները	1980 թ.	2017 թ.
Ինքնուրույն ապրելու հանգամանքը	19,7	35,2
Ծնողների միջամտությունը երիտասարդ ամուսինների փոխհարաբերություններին	0,0	12,5
Հարս և սկեսուր կոնֆլիկտներից խուսափելը	1,4	12,8
Ընդհանուր կոնֆլիկտներից խուսափելը	21,1	15,0
Ավագ և կրտսեր սերունդների հայացքների տարբերությունները	11,3	16,5
Բնակարանային պայմանները	21,1	8,0
Ընդամենը	100,0	100,0

Միասին չբնակվելու պատճառներից նշվում է նաև ավագ ու կրտսեր սերունդների միջև ծագած հակասություններից խուսափե-

լը: Դրանք են՝ ծնողների միջամտությունը երիտասարդ ամուսինների փոխհարաբերություններին, հարս-սկեսուր անհամաձայնությունները, սերունդների հայացքների տարբերությունները և այլն: Տարաբնույթ ամենօրյա կենցաղային վեճերը ընտանիքում լարված մթնոլորտ են ստեղծում, որը առիթ է հանդիսանում ոչ միայն ծնողների և զավակների փոխհարաբերությունների վատթարացմանը, այլև ազդում է երեխաների հոգեբանության վրա:

Համեմատական բարձր ցուցանիշ է գրանցվել 18–29 տարիքային խմբի մոտ 40,5% (տես աղյուսակ 13): Երիտասարդների կարծիքով՝ առանձին ապրելով զույգը իրենց տան տեր է զգում, և ընտանիքի, երեխաների նկատմամբ պատասխանատվության զգացում է ձեռք բերում:

Աղյուսակ 13

Ծնողների և ամուսնացած զավակների համատեղ չբնակվելու պատճառները՝ ըստ տարիքային խմբերի (1980 և 2017 թթ.), %

Համատեղ չբնակվելու պատճառները	Տարիք					
	18–29		30–49		50 և բարձր	
	1980 թ.	2017 թ.	1980 թ.	2017 թ.	1980 թ.	2017 թ.
Ինքնուրույն ապրելու հանգամանքը	27,8	40,5	28,6	35,2	9,4	33,9
Ծնողների միջամտությունը երիտասարդ ամուսինների փոխհարաբերություններին	0,0	13,5	0,0	12,3	3,1	12,5
Հարս և սկեսուր կոնֆլիկտներից խուսափելը	33,3	13,5	9,5	10,7	21,9	14,3
Ընդհանուր կոնֆլիկտներից խուսափելը	5,6	13,5	9,5	14,8	15,6	15,5
Ավագ և կրտսեր սերունդների հայացքների տարբերությունները	22,2	10,8	23,8	20,5	18,8	14,9
Բնակարանային պայմանները	11,1	8,1	28,6	6,6	31,3	8,9
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

Որոշ փոխակերպումներով այսօր էլ գործածվում է ավագ և կրտսեր սերունդների փոխհարաբերությունների ավանդական ձևը, որը արտահայտվում է ավագ սերնդի խորհուրդները ընդունելու նախապատվության դրսևորումներով:

Ավագ և կրտսեր սերունդների փոխհարաբերությունների ավանդական մտածելակերպը պարզելու համար, հարցվողներին տրվել է հետևյալ հարցը՝ «Ավագ սերնդի խորհուրդներից որոնք են ընդունելի»: Ըստ կարևորության աստիճանի՝ խորհուրդներից ամենաբարձրը ավագ սերնդին հարգելու (95,8%), ավանդական ծեսերը և սովորույթները կրտսեր սերունդներին փոխանցելու փորձի (83,6%), ամուսնական զույգի ընտրության հարցում (75,5%) ցուցանիշներն են (տե՛ս աղյուսակ 14):

Աղյուսակ 14

Ավագ սերնդի խորհուրդները ընդունելու նախընտրությունը (2017 թ.), %

Խորհուրդների ընդունման նախընտրությունը	Ընդունելի չեն	Ընդունելի են	ԴՊ	Ընդամենը
Ամուսնական զույգի ընտրության հարցում	24,5	75,5	0,0	100,0
Մասնագիտության ընտրության հարցում	31,0	69,0	0,0	100,0
Աշխատանքի ընտրության հարցում	38,8	61,2	0,0	100,0
Ընկերների հետ շփման հարցում	37,2	62,8	0,0	100,0
Ամուսնական կյանքի վերաբերյալ	29,7	70,3	0,0	100,0
Ընտանեկան միջոցառումների կազմակերպման հարցում	14,8	85,2	0,0	100,0
Ավագ սերնդին հարգելու հարցում	4,2	95,8	0,0	100,0
Ավանդական ծեսերի և սովորույթների հարցում	16,4	83,6	0,0	100,0
Կրոնական հարցերում	24,0	73,4	2,6	100,0
Քաղաքական հարցերում	47,9	49,0	3,1	100,0

Անկախ բնակավայրից հարցվողների գերակշռող մասը կարևորել է ավագ սերնդի դերը՝ ամուսնական զույգի ընտրության հարցում՝ Երևան՝ 71,2%, այլ քաղաքներ՝ 77, 1%, գյուղ՝ 78,0% (տե՛ս աղյուսակ 15):

Աղյուսակ 15

Ամուսնական զույգի նախընտրությունը ըստ բնակավայրի տիպի (2017 թ.), %

Ամուսնական զույգի նախընտրությունը	Բնակավայրեր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Ընդունելի չեն	28,8	22,9	22,0
Ընդունելի են	71,2	77,1	78,0
Ընդամենը	100,0	100,0	100,0

Կարևորվել է նաև ավանդական ընտանեկան արժեքների փոխանցման նորմերը, որոնք են՝ ավագ սերնդին հարգելու՝ Երևան՝ 96,0% , այլ քաղաքներ՝ 93,6%, գյուղ՝ 97,3% (տե՛ս աղյուսակ 16) և ազգային սովորույթները փոխանցելու գործառույթները՝ Երևան – 78,4%, այլ քաղաքներ՝ 87,2%, գյուղ՝ 85,3% (տե՛ս աղյուսակ 17):

Նման ցուցանիշների առկայությունը վկայում է մեր հասարակության կողմից ավանդական ընտանեկան արժեքների կարևորության գնահատմամ մասին:

Աղյուսակ 16

Ավագ սերնդին հարգելու նախընտրությունը ըստ բնակավայրի տիպի (2017 թ.), %

Ավագ սերնդին հարգելու նախընտրությունը	Բնակավայրեր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Ընդունելի չեն	4,0	6,4	2,7
Ընդունելի են	96,0	93,6	97,3
Ընդամենը	100,0	100,0	100,0

Աղյուսակ 17

Ավանդական ծեսերի և սովորույթների փոխանցման նախընտրությունը ըստ բնակավայրի տիպի (2017թ.), %

Ավանդական ծեսերի և սովորույթների նախընտրությունը	Բնակավայրեր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Ընդունելի չեն	21,6	12,8	14,7
Ընդունելի են	78,4	87,2	85,3
Ընդամենը	100,0	100,0	100,0

Այսպիսով, արդի հայ հասարակությունը հիմնականում ընդունելով ավագ և կրտսեր սերունդների փոխհարաբերությունների ավանդական նորմերը որոշակի փոխակերպումներով կիրառվում են՝ կախված հետևյալ առանցքային գործոններից՝

- ընտանիքի կառուցվածք (երկսերունդ, եռասերունդ և այլն),
- բնակավայրի տիպ (գյուղ, քաղաք),
- ավանդական նորմերի պահպանման նկատմամբ ընտանիքի անդամների կոմնորոշումը:

Ազգակցական հարաբերություններ: Ինչպես վերը նշեցինք, մայր ընտանիքից բացի հայ հասարակական կյանքում առանցքային տեղ են գրավում ազգակցական կապերը: Ինչպես նշում է Ս.Մկրտչյանը, «Տոների կենցաղավարման ամենատարածված ոլորտն ազգակցական միջավայրն է: Դարերի ընթացքում տոները՝ որպես ծիսասովորութային խորհրդանշական չափորոշիչներ, կանոնարկել են ինչպես ներընտանեկան, այնպես էլ ազգակցական փոխհարաբերությունները՝ դրանով իսկ ձևավորելով հարաբերությունների որոշակի արժեհամակարգ»[19]:

Օգնության և փոխօգնության սովորույթային ձևերի կիրառումն ու կատարումը ազգակցական, բարի-դրացիական հարաբերությունների պահպանման գործում պարտադիր նշանակություն

19 *Ս.Մկրտչյան*, Հայոց տոնածիսական մշակույթ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016թ., էջ 209:

են ունեցել: Կողք-կողքի ապրող ազգականների ու հարևանների մեջ ամենօրյա փոխօգնությունը կամավոր էր: Ըստ սովորույթի՝ օգնություն ցույց էին տալիս առանց դիմացինի խնդրանքի: Հեռու ու մոտիկ ազգականների, հարևանների նյութական և բարոյահոգեբանական աջակցությունն առավել նկատելի էր դժբախտ պատահարների և հատկապես թաղման արարողությունների ժամանակ: Թեև խորհրդային ժամանակաշրջանի գյուղի և քաղաքի սոցիալ-տնտեսական փոփոխությունները զգալի ազդեցություն գործեցին կենցաղավարման ու փոխհարաբերությունների գործառույթների վրա, սակայն դարերից եկած ազգակցական-դրացիական օգնության և փոխօգնության ձևերը առօրյա կենցաղում ու տոնածիսական համակարգում հիմնականում պահպանվեցին:

ՀՀ անկախացմամբ հիմք դրվեց քաղաքական և սոցիալ-տնտեսական փոխհարաբերությունների նոր որակական առանձնահատկությունների, որոնք իրենց անմիջական ազդեցությունն ունեցան նաև փոխօգնության արժեքային համակարգի գործառույթների վրա: Նոր շուկայական հարաբերությունները հանրապետությունում ստեղծեցին այնպիսի ճգնաժամային իրավիճակ, որտեղ անհատի և ընտանիքի կենսապահովման, նյութական ու հոգևոր պահանջների մինիմալ բավարարվածության համար որոշիչ գործոն էր ինչպես ազգականների, այնպես էլ հարևանների ու ընկերների համագործակցությունն ու փոխօգնությունը:

Ըստ հարցվողների՝ ազգականների, հարևանների և ընկերների՝ միմյանց նկատմամբ ունեցած հարաբերություններն ու պարտականությունները երբեմն կապված են անհատի կամ ընտանիքի սոցիալական պաշտպանվածության աստիճանից: Այսօր օգնության և փոխօգնության արժեքային համակարգում առաջնայինը օգնող կողմի ունեցվածքային հնարավորություններն են, որով և պայմանավորված է մոտ ու հեռու ազգականների, հարևանների, ընկերների մերձեցման կամ օտարացման գործընթացը: Իսկ երբեմն էլ միևնույն բնակավայրում ապրող ազգականների և հարև-

անների միջև շփման արգելք է հանդիսանում փոխօգնության ավանդական ձևի արմատացած մտածելակերպը, երբ դիմացինի օգնությանը պետք է որևէ կերպ փոխհատուցես:

Եթե քաղաքային բնակավայրերում ազգականների միջև եղած փոխհարաբերություններում կան շեղումներ, ապա գյուղերում դրանք քիչ փոփոխությունների են ենթարկվել, որը բացատրվում է գյուղական բնակչության ավանդապահությամբ: Այսօր օգնության և փոխօգնության ձևերի գործածությունը սահմանափակվում են հիմնականում առանձին ապրող արյունակից հարազատների (ծնողներ, զավակներ, քույրեր, եղբայրներ), մասնակիորեն հայրական ու մայրական կողմից մոտ ազգականների (հորեղբայր, հորաքույր, քեռի, մորաքույր) շրջանակով և հազվադեպ հեռու բարեկամներով ու հարևաններով: Փոխօգնության կարևոր գործոն է ազգականների բնակության վայրի մոտ կամ հեռու գտնվելու հանգամանքը: Այստեղ որոշիչ դեր ունի նաև անհատի կամ ընտանիքի բարոյահոգեբանական հակվածությունը ավանդական սովորույթների պահպանման նկատմամբ: Ինչպես անցյալում, այսօր էլ օգնության և փոխօգնության ամենատարածված ձևը մոտ ապրող ազգականների ու հարևանների միջև կենցաղային առօրյա աշխատանքներին ցուցաբերվող օգնությունն է[20]:

Փոխօգնության երկրորդ կարևոր ձևը գյուղ-քաղաք, քաղաք-գյուղ մոտ ազգականների միջև եղած օգնությունն է, որը արտահայտվում է ֆինանսական, բնամթերային, ինչպես նաև «պարտքով փող տալու» տեսքով:

Մոտ ազգականների օգնության և փոխօգնության աշխուժացում է նկատվում հատկապես հարսանիքների, ծնունդների ու այլ տոների ժամանակ:

Ինչպես ընդունված էր հայ հասարակական կյանքում, այսօր էլ ազգակցա-դրացիական համախմբվածությունը ցայտուն ձևով

20 *Թ. Զաքարյան*, Փոխօգնության ձևերը և բարեգործական ավանդույթները, Արդի հայ իրականության և մարդասիրական գիտակցության զարգացման հարցեր, Եր., «Զանգակ–97» հրատ., 2001թ., էջ 126:

նկատվում է դժբախտության մեջ հայտնված անհատին կամ ընտանիքին օգնություն ցուցաբերելու գործում: Թաղման արարողությունների ժամանակ օգնությունը լինում է դրամական, իսկ գյուղական բնակավայրերում, երբեմն էլ նաև բնամթերային:

Բացի հանրապետության ներսում գործող օգնության ձևերից, բնակչության որոշակի խմբի կենսապահովման միջոց է արտերկրում բնակվող կամ ժամանակավոր աշխատող մոտ ազգականը: Դժբախտության մեջ հայտնված անհատին «դրսից» օգնում են ոչ միայն մոտ ու հեռու ազգականները, այլև հարևանները:

Այսպիսով, ընտանեա-ազգակցական և դրացիական փոխհարաբերությունների ձևերը, որոշակիորեն պահպանելով իրենց ավանդական բնութագիրը, կապված ընտանիքի սոցիալական պաշտպանվածությունից, նոր արժեքային վերափոխումների են ենթարկվել: Պայմանավորված ազգականների և հարևանների տարբեր սոցիալական կարգավիճակներում գտնվելու հանգամանքից նրանց շրջանակը նեղացել է: Փոխօգնության համակարգը սահմանափակվել է հիմնականում մոտ ազգականների, իսկ առօրյա կենցաղային հարցերը լուծելու խնդրում նաև հարևանների միջև:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ՄԵՋ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Ամուսնական զուգընկերոջ ընտրություն

Ավանդական ամուսնության օրինական ձևը եղել է ծնողների պատգամախոսությունը (համաձայնությունը): Ընտրության այս ձևը կանխում էր արյունակիցների ամուսնության դեպքերը: Ամուսնացողների տարիքային և արտաքին անհամապատասխանությունը հաշվի չէին առնում, կարևորը ժառանգականությունն էր, ընտանիքի բարոյական կողմը, իսկ ամենից գլխավորը «օջախն» էր: Սովորաբար հարսնացուի և փեսացուի ընտանիքները միմյանց ճանաչում էին, որը նվազագույնի էր հասցնում հարսանիքից հետո ակնկալվող անախորժությունները:

Ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի՝ արգելվում էին «տղայոց պսակ դնելը», մինչև նրանց չափահաս դառնալը կամ եթե փոքր տարիքով աղջկան ամուսնացնում են իրենից տարիքով շատ մեծ տղամարդու հետ, ինչպես նաև եթե ամուսնացող աղջիկը կամ տղան հոգեկան հիվանդ էին[21]:

«Դեռ վաղ անցյալում ամուսնության ժամանակ ազգականների միջև պարտադիր յոթ պորտ ճանաչելու սովորույթը մեր օրերում արդեն խստորեն չի պահպանվում և ընդունելի է համարվում մինչև չորրորդ պորտը»[22]:

Ըստ փորձագիտական հարցումների՝ բնակչության գերակշռող մասը ամուսնության խնդրում կարևորում են ծնողների պարտադիր համաձայնությունը: Միայն ի տարբերություն անցյալում

21 *Մխիթար Գոշ*, նույնը, էջ 376, 415:

22 *Լ. Վարդանյան*, Տավուշ, Սոցիալ մշակութային գործընթացներ, Եր., 2014թ., էջ 171:

ընդունված ավանդական սովորույթի, երբ ամուսնանում էին միայն ծնողների ընտրությամբ և կամքով, այսօր առանձնահատուկ նշանակություն ունի ծնողի կարծիքը հաշվի առնելու հանգամանքը:

Հարցվողների պատասխանների տարբերությունները որոշակիորեն կապված են այնպիսի գործոններից, ինչպիսիք են սեռը, տարիքը, կրթությունը, բնակավայրի տիպը և ընտանիքի կառուցվածքը: Ավագ և միջին սերնդի ամուսնական կարգավիճակ ունեցող հարցվողների մեծամասնությունը, որոնք ունեն միջնակարգ և ութամյա կրթություն, երիտասարդների ամուսնության գործընթացում կարևորում են ծնողների պարտադիր համաձայնությունը: Ըստ նրանց՝ հայ ընտանիքը չի կարող հրաժարվել պապենական սովորույթներից և օտար մտածողությամբ ամուսնացնել իր զավակներին: Ավագ և միջին սերնդի ներկայացուցիչները այսօր էլ երիտասարդների ամուսնության ընտրության հարցում առանձնահատուկ ուշադրություն են դարձնում «օջախին» և տվյալ ընտանիքի, «ցեղի» բարոյական կերպարին: Հատկապես գյուղական բնակավայրերում ծնողները գերադասում են, որ իրենց զավակների ընտրյալը լինի իր ճանաչաց ընտանիքից[23]:

Ամուսնությունների ժամանակ ծնողների պարտադիր համաձայնության կողմնակիցները նշում են, որ, ճիշտ է, ավագ սերունդը ժամանակակից չէ, ավելի հակված է ավանդական սովորույթներին, սակայն կյանքի հարուստ փորձ ունի, ծանոթ է ամուսնական կյանքի լավ և վատ կողմերին և կարող է ճիշտ խորհուրդ տալ երիտասարդներին: Ըստ նրանց կարծիքի՝ այն ընտանիքները, որոնք կայացել են ծնողների համաձայնությամբ, ավելի կայուն հիմքերի վրա են դրված, իսկ ամուսնալուծությունների հիմնական մասը «ծնողին հաշվի չառնելու արդյունքն է»: Բարձրագույն կրթություն ունեցողների կարծիքները բաժանվում է երկու մասի: Առաջին խումբը «ներկայիս բարքերից ելնելով» համաձայն են ամուսնության ավանդական ձևին և գտնում են, որ ծնողների համաձայնությունը պարտադիր է: Երկրորդ խումբը, կարևորելով ծնողի կարծիքը,

23 *Թ. Ջաքարյան*, ԴԱՆ, Կոտայք, 2014 թ.:

առաջնային է համարում երիտասարդների զգացմունքները՝ «Ծնողները պետք է հարգեն երեխաների զգացմունքներն ու ազատ ընտրելու իրավունքը»[24]: Ըստ նրանց, երբ երիտասարդները ինքնուրույն են ընտրություն կատարում, երիտասարդ ամուսինների հարաբերությունները կարգավորվում են փոխադարձ համաձայնությամբ: Հարցվողների մի մասի կարծիքով էլ, երիտասարդներին ինքնուրույն ընտրության իրավունք տալով, ծնողները իրենց ապահովագրում են նորաստեղծ ընտանիքում ծագած կոնֆլիկտների պատասխանատվությունից:

Ծնողների պարտադիր համաձայնության, նրանց խորհրդի և ինքնուրույն ընտրության հարցերի շուրջ իրենց առանձնահատուկ մոտեցումներն են հայտնել նաև հարցմանը մասնակից չամուսնացած երիտասարդները: Երիտասարդ աղջիկների մի մասի կարծիքով՝ դա դարերից եկած կարգ է և պետք է այն հարգես և ընդունես, մյուսները վկայակոչում են նրանց կյանքի փորձը: Պարտադիր համաձայնության կողնակիցները նշում են նաև այն հանգամանքը, որ եթե չլսեն ծնողներին, ապա հետագայում կզրկվեն թե՛ ծնող-զավակ բարոյահոգեբանական կապից, և թե՛ նյութական աջակցությունից; Չամուսնացած տղաների մեծ մասը՝ հատկապես գյուղական բնակավայրերի, նշում են, որ հայ ընտանիքում, ավանդույթի համաձայն, ծնողի օրհնությունը պարտադիր է: Այստեղ կարևոր դեր ունի գյուղական բնակավայրերում որոշակիորեն պահպանված ավագ և կրտսեր սերունդների փոխհարաբերությունները:

Այսօր էլ գյուղում երիտասարդ սերունդը հարգանքով է վերաբերվում ավագ սերնդի ներկայացուցիչներին և նրանց կարծիքն ու խորհուրդները հաշվի են առնում: Երկրորդ խմբի կարծիքով, քանի որ կինը իր ծնողների հետ է ապրելու նույն հարկի տակ, ապա ամուսնանալով առանց նրանց կարծիքը հարցնելու, այդ դեպքում ընտանիքում հարս-սկեսուր կոնֆլիկտների հավանականությունը կմեծանա և կստեղծվի լարված մթնոլորտ: Ըստ նրանց՝ ծնողի կամքը անտեսելով, առանձին պիտի ապրես, իսկ ներկա պայմաննե-

24 *Թ.Զաքարյան*, ԴՄՆ, Գեղարքունիք, 2017թ.:

րում դա հնարավոր չէ: Դժբախտաբար, այսօրվա գյուղի սոցիալ-տնտեսական ծանր պայմանները թույլ չեն տալիս երիտասարդության մեծամասնությանը ձեռք բերելու տնտեսական ինքնուրույնություն:

Նրանցից շատերը նշում են, որ իրենք պատրաստ չեն ինքնուրույն ապրելու և առանց ծնողի աջակցության՝ բավարարելու կնոջ, երեխաների պահանջմունքները:

Այսպիսով, Հայաստանի տարբեր քաղաքներում և գյուղական բնակավայրերում անցկացրած անհատական հարցումները վկայում են, որ թե՛ ավագ, թե՛ երիտասարդ սերունդների ներկայացուցիչները ամուսնության հարցում կարևորում են ծնողների համաձայնության անհրաժեշտությունը, որը պայմանավորված է ոչ միայն ավանդական մտածելակերպով ու սովորույթների պահպանման գործառույթներով, այլև ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակով[25]:

Եթե ավանդական հայ ընտանիքում աղջկա կամ տղայի փոխարեն ծնողներն էին որոշում, թե երբ և ում հետ ամուսնանա, ապա խորհրդային շրջանում, որոշակի պահպանելով հին ավանդույթը, երիտասարդությունը հնարավորություն ուներ ամուսնանալ իր ընտրյալի հետ, որի հետ ծանոթանում էր աշխատելու, սովորելու ժամանակ, կամ հանդիպել էր սրճարանում, փողոցում և այլուր: Ըստ Լ. Վարդանյանի «եթե նախկինում ամուսնական զույգ ընտրելու ժամանակ հիմնականում ուշադրություն էին դարձնում ընտանիքի բարոյական կերպարին, «ապա մեր օրերում դրա հետ մեկտեղ ոչ պակաս դեր ունի ընտրյալի սոցիալական վիճակը, կայուն եկամուտի առկայությունը, որոնք շատ անհրաժեշտ են նոր ստեղծված ընտանիքի համար»[26]: Ամուսնական զուգընկերոջ ընտրության հարցում ժամանակակից երիտասարդությունը ինքնուրույն ընտրելու ավելի մեծ հնարավորություններ ունի:

Ավանդական նորմերի պահպանմամբ հանդերձ այսօր Հայաստանում ձևավորվել է սոցիալական կայքերի միջոցով ամուսնու-

25 *Թ. Զաքարյան*, ԴԱՆ, Վանաձոր, 2013թ.:

26 *Լ. Վարդանյան*, նույնը, էջ 171:

թյուններ, որը դժվարությամբ է ընդունվում մեր հասարակության կողմից:

Ըստ հարցվողների որոշ մասի կարծիքի՝ ինտերնետային ծանոթությունները ոչնչով չեն տարբերվում գրադարանում, տրանսպորտում, փողոցում ծանոթանալու ձևերից: Երկու դեպքերում էլ կարող են լինել թե՛ դրական, և թե՛ բացասական հետևանքներ:

Դրականն այն է, որ մեծացնում է ծանոթությունների շրջանակը: Այն շատ լավ միջոց է հատկապես այն մարդկանց համար, որոնք ունեն բարդույթներ և հեշտությամբ չեն շփվում մարդկանց հետ: Բացի դրանից, տարիքի հետ անհատը դժվարությամբ է նոր ծանոթություններ ստեղծում: Երկրորդ՝ ինտերնետով, անկախ սոցիալական կարգավիճակի, կարող ես ծանոթանալ յուրաքանչյուրի հետ, որը իրական կյանքում դժվար հասանելի է: Երրորդ՝ վիրտուալ աշխարհում շատերը ավելի անկեղծ են, քան իրական կյանքում:

Տվյալ հարցի վերաբերյալ բացասական տրամադրված անձանց կարծիքով՝ նման ծանոթությունները խաբուսիկ են, հաճախ տղամարդը կամ կինը ինտերնետում իր լուսանկարը չի դնում և իր իրական հետաքրքրությունների շրջանակը չի ներկայացնում և դժվար է ասել, թե ինտերնետային ծանոթը ինչպիսի մտադրություն ունի և ինչ կարգավիճակում է գտնվում:

Ըստ Ռ. Նեմիշյանի և Կ. Վոդենկոյի կարծիքի՝ «վիրտուալ շփման առավելությունն իրական շփումներից նրանումն է, որ մարդը ստեղծում է իր կերպարը, ներկայանում է իր ստեղծած հատկանիշներով, որոնք հնարավոր է, որ իրականում գոյություն չունեն: Մի կողմից, համացանցն ինքնության ազատություն է տալիս, մյուս կողմից, կորցնում է ինքնությունը, գիտակցաբար համացանցում ձևավորվում է փոփոխական ոչ կայուն ինքնություն»[27]:

Ըստ մեր հետազոտության արդյունքների՝ կարծիքները տարբեր տարիքային խմբերի մոտ տարբեր է: Երիտասարդ տղաների 25,3% և աղջիկների 25,0% (տես աղյուսակ 18) բացասաբար չեն վե-

27 *Ռ. Նեմիշյան, Կ. Վոդենկո,* Վիրտուալությունը հասարակական կեցության եղանակ և զարգացման հերթական փուլ, ԵԱ գիտական հոդվածների ժողովածու, Եր., http://ysu.am/ssspub/hy/1435904503. 2015թ., էջ 466:

բաբերվում ինտերնետ ծանոթություններին, ըստ նրանց, եթե անհաջող դեպքեր էլ են լինում, դա ամենևին չի նշանակում, թե հաջողվածները չկան: Ըստ տղաների՝ ինտերնետ ծանոթության առավելությունն այն է, որ դրսում քո հավանած աղջկան չես կարող մոտենալ:

Աղյուսակ 18

Ինտերնետային ամուսնությունների նկատմամբ վերաբերմունքը (2017 թ.), %

Ինտերնետային ամուսնությունների նկատմամբ վերաբերմունք	Արական	Իգական
Դրական	25,3	25,0
Բացասական	70,6	71,1
Դ/Պ	4,2	3,9
Ընդամենը	100,0	100,0

Ըստ բնակավայրի տիպի՝ բացասական արտահայտվողների համեմատական բարձր ցուցանիշ է արձանագրվել գյուղաբնակների մոտ՝ 77,3% (տե՛ս աղյուսակ 19):

Աղյուսակ 19

Ինտերնետային ամուսնությունների նկատմամբ վերաբերմունքը՝ ըստ բնակավայրերի տիպերի (2017 թ.), %

Ինտերնետային ամուսնությունների նկատմամբ վերաբեմունք	Բնակավայրեր					
	ք. Երևան		Այլ քաղաքներ		Գյուղեր	
	Արական	Իգական	Արական	Իգական	Արական	Իգական
Դրական	27,2	28,8	28,4	27,5	21,3	20,0
Բացասական	64,8	63,2	67,9	69,7	77,3	78,7
Դ/Պ	8,0	8,0	3,7	2,8	1,3	1,3
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

Ըստ տարիքային խմբի 18–29 տարեկանների 29,3%-ը համամիտ է տղայի ինտերնետային ծանոթություններին, որը մի փոքր բարձր ցուցանիշ է՝ համեմատած միջին և ավագ սերնդի նեկայացուցիչների ցուցանիշների: Որոշակի տարբերություններով նմանա-

տիպ ցուցանիշներ են գրանցվել նաև երիտասարդ աղջիկների ծանոթությունների վերաբերյալ 25,9% (տե՛ս աղյուսակ 20): Ընդհանրապես, աղյուսակ 20-ի դրական պատասխանների ցուցանիշները վկայում են, որ բոլոր տարիքային խմբերում կան որոշակի քանակությամբ մարդիկ, որոնք կողմնակից են ինտերնետային ամուսնություններին և այն այսօր երիտասարդների ծանոթության հարցում առանձնակի տեղ է գրավում:

Աղյուսակ 20

Ինտերնետային ամուսնությունների նկատմամբ վերաբերմունքը՝ ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Ինտերնետային ամուսնությունների նկատմամբ վերաբերմունք	Տարիք					
	18–29		30–49		50 և բարձր	
	Արական	Իգական	Արական	Իգական	Արական	Իգական
Դրական	29,3	25,6	25,7	26,5	22,9	23,5
Բացասական	70,7	74,4	70,6	69,9	70,5	70,5
Դ/Պ	0,0	0,0	3,7	3,7	6,6	6,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

Ամուսնության տարիք: Ավանդական հայ ընտանիքում ամուսնության տարիք էր ճանաչվում աղջկա համար 10–12 տարեկանը, տղայի համար՝14–15 տարեկանը, իսկ նշանադրությունը կատարվում էր ավելի վաղ հասակում:

Ըստ ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ ամուսնության տարիք է համարվում 18 տարեկանը:

Ըստ հարցման ընդհանուր արդյունքների՝ աղջիկների համար ամուսնության լավագույն տարիք է համարվել 18–22-ը (48,2%) և 23–25-ը (41,4%), տղաների համար՝ 23–25-ը (38,8%) և 26–30-ը(49,2%): Մինչև 18 տարեկան աղջիկների ամուսնությանը հավանություն են տվել հարցվողների ընդամենը 0,5%-ը (տես աղյուսակ 21): 18–22 արական սեռի ամուսնությունների ընդհանուր ցուցանիշը 6,8% է, որը ըստ երևույթին կապված է երիտասարդների աշխատանքի ապահովման, զինվորական ծառայության կատարման, ուսումը շարունակելու հանգամանքներից:

Աղյուսակ 21

Ամուսնության նախընտրելի տարիքը (2017 թ.), %

Ամուսնության նախընտրելի տարիք	Տղա	Աղջիկ
Մինչև 18 տարեկան	0,0	0,5
18–22	6,8	48,2
23–25	38,8	41,4
26–30	49,2	9,6
31–35	5,2	0,3
Ընդամենը	100,0	100,0

Ըստ բնակավայրի տիպի՝ ամուսնության ցանկալի տարիքային խումբ է ճանաչվել գյուղաբնակների մոտ՝ աղջիկների համար 18–22-ը՝ 62,7%, տղաների 23–25-ը՝ 53,3%: Երևանում և մարզային քաղաքներում ՝ աղջիկների համար՝ 23–25 (Երևան՝ 45,6%, այլ քաղաքներ՝49,5%), տղաների համար՝ 26–30 տարիքային խումբը (Երևան՝64,8%, այլ քաղաքներ՝ 51,4% (տե՛ս աղյուսակ 22):

Նշված տարիքային խմբերից ավելի բարձր տարիքի ամուսնության կողմնակիցներից համեմատական բարձր ցուցանիշ է արձանագրվել Երևան քաղաքում՝ 31–35 տարեկանում՝ տղաների համար՝ 11,2%, աղջիկների համար՝ 0,8%, գյուղի արդյունքները երկուսի դեպքում էլ 0,0% է (տե՛ս աղյուսակ 22):

Աղյուսակ 22

Ամուսնության նախընտրելի տարիք՝
ըստ բնակավայրերի տիպերի (2017 թ.), %

Տարիք	ք. Երևան		Այլ քաղաքներ		Գյուղեր	
	Տղայի	Աղջկա	Տղայի	Աղջկա	Տղայի	Աղջկա
Մինչև 18	0,0	0,0	0,0	0,9	0,0	0,7
18–22	1,6	38,4	5,5	39,4	12,0	62,7
23–25	22,4	45,6	37,6	49,5	53,3	32,0
26–30	64,8	15,2	51,4	10,1	34,7	4,7
31–35	11,2	0,8	5,5	0,0	0,0	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

Փաստորեն, գյուղական բնակավայրերի հարցվողների մոտ թե՛ տղաների, և թե՛ աղջիկների ամուսնության ցանկալի տարիքային խմբերը ավելի ցածր է, քան քաղաքային բնակչության շրջանում, որը բացատրվում է ոչ միայն գյուղի ավանդապահությամբ: Մայրաքաղաքից հեռու գտնվող գյուղական բնակավայրերում աղջիկները դպրոցը ավարտելուց հետո զբաղմունք, ուսումը շարունակելու հնարավորությունից զրկված լինելով շուտ են ամուսնանում: Ըստ հարցվողների սեռային պատկանելության ցուցանիշների մեջ էական տարբերություն չի նկատվում:

Ըստ տարիքային խմբերի՝ աղջիկների ավելի վաղ ամուսնությունների կողմնակիցներ են հատկապես 50-ից բարձր տարիք ունեցողները, որը բացատրվում է ընտանեկան նորմերի պահպանման նկատմամբ ավագ սերնդի ավանդապահությամբ:

Եթե կրտսեր և միջին սերնդի ներկայացուցիչները դեմ են մինչև 18 տարեկան աղջիկների ամուսնություններին (0,0%), ապա ավագ սերնդի 1,2%-ը կողմ է: Եվ եթե 18–22 տարիքային խումբը աղջկա ամուսնության նախընտրելի տարիք է համարում 23–25 (48,8%), ապա 50-ից բարձր տարիք ունեցողները՝ 18–22-ը (54,2%, տես աղյուսակ 23):

Աղյուսակ 23

Ամուսնության նախընտրելի տարիք ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Տարիք	18–29		30–49		50 և բարձր	
	Տղայի	Աղջկա	Տղայի	Աղջկա	Տղայի	Աղջկա
Մինչև 18	0,0	0,0	0,0	0,0	0,0	1,2
18–22	8,5	41,5	2,9	44,9	9,0	54,2
23–25	40,2	48,8	36,8	41,9	39,8	37,3
26–30	51,2	9,8	51,5	12,5	46,4	7,2
31–35	0,0	0,0	8,8	0,7	4,8	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

Եթե արական սեռի ներկայացուցիչների համար աղջկա ամուսնության նախընտրելի տարիք է 18–22-ը (61,3%), ապա կանանց համար՝ 23–25 է 46,6% (տես աղյուսակ 24):

Տղամարդ և կին հարցվածների զգալի մասը նախընտրում է, որ երիտասարդ տղաները ամուսնանան այն տարիքում, երբ կունենան մասնագիտական հմտություններ ու կենսակերպը ապահովվող աշխատանք:

Աղյուսակ 24

Ամուսնության նախընտրելի տարիք՝ ըստ սեռի (2017 թ.), %

Տարիք	Արական		Իգական	
	Տղայի	Աղջկա	Տղայի	Աղջկա
Մինչև 18	0,0	0,6	0,0	0,5
18–22	12,3	61,3	2,7	38,5
23–25	44,8	34,4	34,4	46,6
26–30	38,7	3,7	57,0	14,0
31–35	4,3	0,0	5,9	0,5
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0

Այսպիսով, անկախ բնակավայրի տիպից թե՛ տղաների, և թե՛ աղջիկների մոտ բարձրացել է ամուսնական տարիքը:

2.2. Նախահարսանեկան արարողակարգ

Խոսքկապ, նշանդրեք: Հարսանիքն ու դրան նախորդող արարողությունները հարսանեկան ծիսակարգի հիմնական փուլերն են:

Անցյալում աղջկա ծնողների համաձայնությունը ստանալուց հետո աղջկան տալիս էին նշան, մի այնպիսի իր, որը կարող էր ցույց տալ, որ նա արդեն մեկին խոստացված է: Ամուսնությունը ամրագրվել է խոսք առնելու, նշանդրեքի, հարսանիքի և դրանց շուրջ տեղի ունեցող բազմաթիվ ծիսական արարողակարգերի միջոցով: Մինչև հարսանիքը պարտադիր կատարում էին իրար հաջորդող բազմաթիվ ծիսական արարողություններ՝ որոնք էին աղջիկտեսի, խնամախոսության, խոսքկապի, նշանդրեքի, հարսնատեսի, շորձևերքի և այլ գործառույթներ[28]:

28 *Գ. Շագոյան*, Անցումային ծեսեր, Ոչ նյութական մշակութային ժառանգություն, Եր.,2009թ.,«Եգեա» հրատ., 74–94:

Նշանդրեքից հետո հարսնացուի տանից դուրս գալու կամ տոներին մասնակից դառնալու իրավունքը վերապահվում էր միայն ապագա ընտանիքին: Նշանդրեքից մինչև հարսանիքը ընկած ժամանակահատվածը տևում էր մի քանի ամսից մինչև երկու և ավելի տարիներ, որի պատճառներից էին ամուսնացողի փոքր տարիքը, օժիտի պատրաստումը, փեսայի օտարության մեջ գտնվելը և այլն:

Բուն ավանդական հարսանեկան արարողություններից կարևորվել են՝ հարսին հագցնելը, դուռ բռնելը, սեղան դուրս հանելը, կոխ բռնելը, շեմի ծեսերը, հարս նստեցնելու ծեսը, հարսի պարը և այլն:

Չնայած այսօրվա հարսանիքը զգալիորեն վերափոխվել է՝ առաջվա նման յոթ օր հարսանիք չեն անում, սակայն պահպանվել են իրենց իմաստը չկորցրած որոշակի ավանդական տարրեր, որոնց կատարումը հարսանեկան արարողությունների ժամանակ պարտադիր է: Արդի մինչհարսանեկան փուլում հիմնականում պահպանվել է խոսք առնելու և նշանդրեքի արարողակարգերը, որոնք հանդիսանում են ամուսնության անհրաժեշտ նախապայմաններ: Խոսք առնելու արարողակարգը դարձել է այնքան կարևոր գործառույթ, որ սոցիալական պայմաններից ելնելով կարող են դրան հաջորդող նշանդրեքը չնշել: Առանց խոսք առնելու ամուսնությունները բացառիկ երևույթ են հարսանեկան ծիսական համակարգում: Դրանք հիմնականում այն դեպքերն են, երբ երիտասարդները, ծնողների անհամաձայնությանը դեմ գնալով, «փոխադարձ համաձայնությամբ դիմում են աղջիկ փախցնելու հնամենի սովորությանը»[29]: Նշանդրեքի արարողությունը ոչ բոլոր սոցիալական խմբերին է մատչելի: Նշանդրեք կատարելը աղջկա կողմի պարտականությունն է և հաճախ սոցիալապես անապահով ընտանիքները, ավելորդ ծախսերից խուսափելով, այն չեն նշում կամ խոսկապն ու նշանդրեքը միացնում են մի արարողակարգի մեջ: Երբեմն էլ հանդիպում են դեպքեր, երբ սոցիալապես ապահով ընտանիքների կողմից կատարվող նշանդրենքները իրենց ճոխությամբ չեն զիջում բուն հարսանիքին:

29 *Լ. Վարդանյան*, նույնը, էջ 182:

Ըստ հետազոտության արդյունքների՝ խոսքկապի կարևորության անհրաժեշտությունը նշել են ընդհանուր հարցվողների 62,0%-ը, նշանդրեքինը՝80,7%-ը (տե՛ս գծապատկեր 2):

Ըստ բնակավայրի տիպի՝ խոսքկապի համեմատական բարձր ցուցանիշ է նկատվում մարզային քաղաքների ՝ 65,1% և գյուղի հարցվողների մոտ՝ 66,7%, որը վկայում է ավանդական հարսանեկան արարողակարգերի նկատմամբ նրանց հակվածության մասին (տե՛ս աղյուսակ 25):

Գծապատկեր 2

Նախահարսանեկան արարողակարգերի նախընտրությունը, %



Աղյուսակ 25

Խոսքկապ կատարելու նախընտրությունը՝ ըստ բնակավայրերի տիպերի (2017թ.), %

Խոսքկապ կատարելու նախապատվությունը	Բնակավայրեր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Այո	53,6	65,1	66,7
Ոչ	44,8	31,2	30,7
Դ/Պ	1,6	3,7	2,7
Ընդամենը	100,0	100,0	100,0

Ըստ տարիքային խմբի՝ բարձր է 18–22 տարեկանների ցուցանիշը՝ 70,7% է, որը, ըստ ինձ, կապված է հնուց եկած այն սովորույթի

հետ, երբ «նշան դնելով» զույգերը իրենց հարաբերությունները օրինականացնում էին (տե՛ս աղյուսակ 26):

Աղյուսակ 26

Խոսքկապ կատարելու նախապատվությունը՝ ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Խոսքկապ կատարելու նախապատվությունը	Տարիք		
	18–29	30–49	50 և բարձր
Այո	70,7	63,2	56,6
Ոչ	24,4	35,3	41,0
Դ/Պ	4,9	1,5	2,4
Ընդամենը	100,0	100,0	100,0

Ինչպես վերը նշեցինք, նշանդրեքը խոսքկապի հետ միասին ավանդական ամուսնության նախապայմաններից է: Նշանդրեքի նախընտրության կողմնակիցների ցուցանիշները ցույց են տալիս, որ նրա կատարումը ինչպես ավանդականում, այնպես էլ այսօր արդիական է: Նշանդրեքի կատարման անհրաժեշտության բարձր ցուցանիշներ են գրանցվել թե՛ ըստ սեռի՝ արական՝ 83,4%, իգական՝ 78, 7% (տես աղյուսակ 27), թե՛ ըստ տարիքային խմբերի (տե՛ս աղյուսակ 28):

Աղյուսակ 27

Նշանդրեք կատարելու նախընտրությունը՝ ըստ սեռի (2017 թ.), %

Նշանդրեք կատարելու նախընտրությունը	Սեռ	
	Արական	Իգական
Այո	83,4	78,7
Ոչ	15,3	20,4
Դ/Պ	1,2	0,9
Ընդամենը	100,0	100,0

Աղյուսակ 28

Նշանդրեք կատարելու նախընտրությունը՝ ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Նշանդրեք կատարելու նախընտրությունը	Տարիք		
	18–29	30–49	50 և բարձր
Այո	87,8	86,0	72,9
Ոչ	12,2	12,5	25,9
Դ/Պ	0,0	1,5	1,2
Ընդամենը	100,0	100,0%	100,0

Ըստ բնակավայրերի՝ նշանդրեքի բարձր ցուցանիշ է գրանցվել գյուղաբնակների մոտ՝88,7% (տես աղյուսակ 29), որը վկայում է ավանդական սովորույթների պահպանման կայունության մասին:

Աղյուսակ 29

Նշանդրեք կատարելու նախընտրությունը՝ ըստ բնակավայրերի տիպերի (2017 թ.), %

Նշանդրեք կատարելու նախընտրությունը	Բնակավայր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Այո	72,8	78,9	88,7
Ոչ	26,4	19,3	10,7
Դ/Պ	0,8	1,8	0,7
Ընդամենը	100,0	100,0	100,0

2.3. Հարսանիք

Արդի հարսանեկան արարողությունները կատարում են ազգային սովորույթների մասնակի պահպանմամբ և բազմաթիվ եվրոպական նորամուծությունների համադրմամբ: Ըստ սոցիալական կարգավիճակի՝ ամուսնությունը նշում են նաև խնջույքի տեսքով կամ ամուսնական զույգը գնում է հարսանեկան ճանապարհորդության:

Այսօրվա հարսանեկան արարողություններում առանձնահատուկ նշանակություն ունի եկեղեցական պսակադրությունը, որը ՀՀ անկախության հռչակումից հետո սկսեց վերականգնել իր կորցրած իրավունքները: Դրա մասին են վկայում 1980-ական և 2017 թթ. հետազոտությունների համեմատական արդյունքները: Այսպես, եթե 1980-ական թթ.-ի հարցվողների 7,1%-ն է նախընտրել եկեղեցական կանոնակարգով պսակադրվել, ապա 2017թ՝ 88,0%-ը (տե՛ս գծապատկեր 4): Տվյալ թվերը վկայում են, որ անկախությունից հետո բնակչության վերաբերմունքը, համեմատած խորհրդային տարիների հետ, ազգային ծիսական արժեքների նկատմամբ վերափոխվել է: Ինչպես նշում է Լ. Վարդանյանը, «շատ դեպքերում եկեղեցական պսակադրությունը, ինչպես նաև մկրտությունը, կատարվում է ոչ թե կրոնական դրդապատճառներից ելնելով, այլ որպես հարգանքի տուրք ազգային սովորույթներին: Միաժամանակ, եկեղեցում պսակադրվելը դարձել է հեղինակավոր և նորաձև, որոնք էլ նպաստում են դրա տարածմանը»[30]:

Եկեղեցական պսակադրությունն ի տարբերություն ԶԱԳՍ-ում գրանցվելուց կատարվում է հարսանիքի օրը: Եթե խորհրդային տարիներին գյուղաբնակների մոտ եզակի էին եկեղեցական կանոնակարգով ամուսնություններ ցանկացողները, ապա այսօր համեմատած անցյալի հետ, ցուցանիշները անհամեմատ բարձր են՝ 90,0% (տես աղյուսակ 30):

Աղյուսակ 30

Եկեղեցական պսակադրության նախընտրությունը՝ ըստ բնակավայրերի տիպերի (2017 թ.), %

Եկեղեցական պսակադրության նախընտրությունը	Բնակավայրեր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Այո	88,0	85,3	90,0
Ոչ	12,0	14,7	10,0
Ընդամենը	100,0	100,0	100,0

30 *Լ. Վարդանյան*, նույնը, էջ 203:

Հարցվողների գերակշռող մասը, անկախ սեռատարիքային խմբի և բնակավայրի տիպի, եկեղեցական պսակադրության կողմնակիցներ են (տե՛ս աղյուսակներ 31,32):

Աղյուսակ 31

Եկեղեցական պսակադրության նախընտրությունը՝ ըստ սեռի (2017 թ.), %

Եկեղեցական պսակադրության նախընտրությունը	Սեռը	
	Արական	Իգական
Այո	90,2	86,4
Ոչ	9,8	13,6
Ընդամենը	100,0	100,0

Աղյուսակ 32

Եկեղեցական պսակադրության նախընտրությունը՝ ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Եկեղեցական պսակադրության նախընտրությունը	Տարիք		
	18–29	30–49	50 և բարձր
Այո	93,9	90,4	83,1
Ոչ	6,1	9,6	16,9
Ընդամենը	100,0	100,0	100,0

Հայկական հարսանեկան ծիսակարգից վերացել են այնպիսի ծեսեր, ինչպիսիք են հարսնատեսը, ազբանստումը, փեսային սափրելն ու հագցնելը, զարդարած «փեսայի ծառի» պատրաստումը, և շատ ու շատ արարողակարգեր: Եզակի դեպքերում հիմնականում գյուղական բնակավայրերում կարելի է հանդիպել եզ մորթելու, թոնրի գաթա թխելու արարողությանը:

Ինչպես անցյալում, ժամանակակից հարսանիքներում նույնպես հարցվողները կարևորել են քավորի ու քավորակնոջ, հարսնաքույրի ու ազաբբաշիի դերակատարումը բուն հարսանեկան արարողակարգում: Հատկապես կարևորվում է քավորի դերը թե՛ հարսանեկան հանդեսի ընթացքում, թե՛ նորաստեղծ ընտանիքի հե-

տագա կյանքում: Մեծ մասամբ հարսանիքի քավորը հետագայում դառնում էր զույգի երեխաների կնքահայրը: Ի տարբերություն սերնդեսերունդ փոխանցված պապենական քավորի, այսօր շատ դեպքերում քավորի պարտականությունը իր վրա է վերցնում հարազատներից կամ ընկերներից մեկը: Ըստ Գ.Շագոյանի՝ «Ժամանակակից հայ հասարակությունում քավորի ընտրությունը պայմանավորված է մի քանի գործոններով: Նախևառաջ քավորն ընկալվում է որպես ունևոր և ազդեցիկ հովանավորող ձեռք բերելու հնարավորություն: Քավորի ընտրության մեկ այլ մոտեցման համաձայն, որպես կնքահայր նախընտրում են տեսնել փեսայի, երբեմն էլ հոր մտերիմ ընկերոջը»[31]: Քավորի կարևորության, հարսանեկան արարողության ժամանակ նրա գլխավոր դերակատարության մասին են վկայում հարցվողներից ստացված բարձր ցուցանիշները: Ընդհանուր հարցվողների 85,2%-ի (տես գծապատկեր 3) կարծիքով հարսանիքի ժամանակ քավորի ներկայությունը պարտադիր է:

Ըստ սեռի՝ ավելի բարձր ցուցանիշ տղամարդկանց մոտ՝ 90,2% (տես աղյուսակ 33) և 18–22 տարիքային խմբի մոտ՝ 90,2% (տես աղյուսակ 34): Երիտասարդների բարձր ցուցանիշը ըստ ինձ պայմանավորված է նաև նրանով, որ վերջին շրջանում երիտասարդությունը գերադասում է քավորի դերում տեսնել իր հասակակցին:

Աղյուսակ 33

Քավորի ներկայության կարևորությունը արդի հարսանեկան արարողակարգում՝ ըստ սեռի (2017թ.), %

Քավորի նախընտրությունը	Սեռը	
	Արական	Իգական
Այո	90,2	81,4
Ոչ	9,8	18,1
ԴՊ	0,0	0,5
Ընդամենը	100,0	100,0

31 *Գ.Շագոյան*, «Յոթ օր, յոթ գիշեր», Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011թ., էջ 194–195:

Աղյուսակ 34

Քավորի ներկայության կարևորությունը արդի հարսանեկան արարողակարգում՝ ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Քավորի նախընտրությունը	Տարիքը		
	18–29	30–49	50 և բարձր
Այո	90,2	87,5	80,7
Ոչ	9,8	12,5	18,7
ԴՊ	0,0	0,0	0,6
Ընդամենը	100,0	100,0	100,0

Այսօրվա հարսանիքի ավանդական դեմքերից են նաև հարսնաքույրը և ազաբբաշին, որոնց ներկայությունը նույնպես պարտադիր է: Հարսնաքույրի կարևորությունը նշել են հարցվողների 76,3%-ը, ազաբբաշիինը՝ 72,4%-ը (տես գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Հարսանիքում քավորի, ազաբբաշիի, հարսնաքրոջ դերակատարման նախընտրությունը



Ըստ տարիքային խմբի՝ հարսնաքրոջ և ազաբբաշիի համեմատական բարձր ցուցանիշ է նկատվում 18–29 տարեկանների պատասխաններում, հարսնաքույր՝ 90,2% (տես աղյուսակ 35), ազաբբաշի՝ 82,9% (տես աղյուսակ 36):

Աղյուսակ 35

Հարսնաքրոջ ներկայության կարևորությունը արդի հարսանեկան արարողակարգում՝ ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Հարսնաքրոջ նախընտրությունը	Տարիք		
	18–29	30–49	50 և բարձր
Այո	90,2	73,5	71,7
Ոչ	8,5	26,5	27,7
ԴՊ	1,2	0,0	0,6
Ընդամենը	100,0	100,0	100,0

Աղյուսակ 36

Ազաբբաշիի ներկայության կարևորությունը արդի հարսանեկան արարողակարգում՝ ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Ազաբբաշիի նախընտրությունը	Տարիքը		
	18–29	30–49	50 և բարձր
Այո	82,9	69,9	69,3
Ոչ	14,6	29,4	30,7
ԴՊ	2,4	0,7	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0

Երիտասարդների բարձր ցուցանիշը, ըստ երևույթին, կապված է ոչ միայն ավանդական ծեսերը պահպանելու գործառույթով, այլև հարսն ու փեսան իրենց համար այս հիշարժան օրը ցանկանում են շրջապատված լինել իրենց հասակակից հարազատներով և ընկերներով:

Ավանդական հարսանեկան ծեսերից շատերը, կորցնելով իրենց նախկին մոգական իմաստը, այսօր էլ փոփոխված ձևով շարունակվում են կիրառվել հատկապես գյուղական բնակավայրերում: Դրանք են հարսին հագցնելիս կոշիկի թայը գողանալը, հերանց տնից հանելիս եղբոր կողմից դուռ պահելը, տղայի տան շեմին նորապսակների ոտքերի տակ ափսե դնելը, նրանց ուսերին լավաշ գցելը, զույգերի գլխին քաղցրավենիք շաղ տալը , հարսի գիրկը արու զավակ դնելը և այլն:

Բացի հարսանեկան արարողությունից, ինչպես 80-ական թթ.-ին, այսօր էլ, հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների մոտ արդիական է դարձել հարսանեկան խնջույքը, որը իր մեջ ներառում է որոշակի ավանդական տարրեր, որոնք են՝ քավորի առկայությունը, ազգային ուտեստը, կենաց-մաղթանքների ավանդական հերթականությունը և այլն: Սոցիալապես ապահովված երիտասարդ զույգերը նախընտրում են նաև հարսանեկան ճանապարհորդությունը: Խորհրդային տարիների համեմատ 43,0% (տես աղյուսակ 37) հարսանեկան ավանդական տարրերի համադրությամբ արարողություններ ցանկացողների ցուցանիշները բարձրացել է՝ 79,2% (տե՛ս գծապատկեր 4):

Աղյուսակ 37

Հարսանիք կատարելու նախընտրելի ձևերը (1980 թ.), %

Ամուսնության նախընտրելի ձևերը	%
Ազգային սովորույթների լրիվ կամ մասնակի պահպանմամբ	43,0
Խնջույքի ձևով	27,0
Հարսանեկան ճանապարհորդությամբ	22,9
Եկեղեցում պսակադրվելով	7,1
Ընդամենը	100,0

Գծապատկեր 4

Ամուսնության նախընտրելի ձևերը (2017 թ.), %



Ըստ բնակավայրի՝ ավանդական տարրերի պահպանմամբ հարսանիքների կատարման նախընտրությունը համեմատական ցածր է Երևան քաղաքում (68,8%), որտեղ եվրոպական և ամերիկյան հարսանյաց հանդեսների նորամուծությունները ավելի նկատելի են (տե՛ս աղյուսակ 38):

Աղյուսակ 38

Ամուսնության նախընտրելի ձևերը՝ ըստ բնակավայրերի տիպերի (2017 թ.), %

Հարսանիք՝ ավանդական մասնակի տարրերի պահպանմամբ	Բնակավայրեր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Այո	68,8	80,7	86,7
Ոչ	30,4	18,3	12,7
Դ/Պ	0,8	0,9	0,7
Ընդամենը	100,0	100,0	100,0

Հարսանեկան ճանապարհորդության կողմնակիցներից համեմատական բարձր ցուցանիշ է արձանագրվել 18–29 տարիքային խմբերի մոտ՝ 79,8% (տե՛ս աղյուսակ 39): Արդի զույգերի համար կարևոր է ոչ միայն հարսանիքի նշումը, այլև դրանից անմիջապես հետո միասին հետաքրքիր օրերի անցկացումը:

Աղյուսակ 39

Հարսանեկան ճանապարհորդության նախընտրությունը ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Հարսանեկան ճանապարհորդության նախընտրությունը	Տարիք		
	18–29	30–49	50 և բարձր
Այո	79,3	69,1	56,0
Ոչ	19,5	28,7	41,6
Դ/Պ	1,2	2,2	2,4
Ընդամենը	100,0	100,0	100,0

2.4. Հետհարսանեկան արարողակարգ

Հետհարսանեկան հիմնական ծեսերից էին՝ կարմիր խնձորի ծեսը, գլուխլվան, խնամականչը, աղջկա դարձը մոր տուն և այլն:

Հետհարսանեկան ավանդույթներից որոշակի պահպանվել են «կարմիր խնձորի», խնամականչի, տեառնընդառաջի և գլուխլվայի սովորույթները:

Ինպես նշեցինք, հետհարսանեկան կարևոր ավանդույթներից էր «կարմիր խնձորի» ծեսը, որն աղջկա անմեղության վկայությունն էր: Անցյալում աղջկա կույս լինելու հանգամանքը պարզելու նպատակով հավաքվում էին հեռու-մոտիկ ազգականներն ու հարևանները: Հաճախ սկեսուրը առաջին գիշերվա սպիտակեղենը կախում էր պարանին՝ ի ցույց բոլորի: Այնուհետև մոտ կին ազգականները կարմիր խնձորներով զարդարված սկուտեղով ուղևորվում էին հարսի տուն: Այսօր էլ, հատկապես գյուղական բնակավայրերում հարսի ընտանիքին նրա կուսությունը խորհրդանշող «կարմիր խնձոր» ուղարկելու ծեսը դեռևս պահպանվում է:

Ըստ «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի 2011թ.-ին կատարած հետազոտության արդյունքների՝ Հայաստանի բոլոր մարզերի բնակչության 18–35 տարեկան արական սեռի ավելի քան 62,0%-ի, իսկ երևանաբնակ տղամարդկանց 56,0%-ի համար աղջկա կուսությունը պարտադիր է:

Ըստ մեր հետազոտության արդյունքների՝ հարցվողների ընդհանուր թվի կեսից ավելին գտնում է, որ կարմիր խնձորի արարողությունը պետք է կատարվի (64,8%, տե՛ս գծապատկեր 5):

Ավելի բարձր են արական սեռի ներկայացուցիչների՝ 71,8% (տե՛ս աղյուսակ 40) և 18–29 տարիքային խմբի ցուցանիշները 73,2% (տե՛ս աղյուսակ 41): Քանի որ վերջիններս ամուսնության տարիքի հարցվողներն են, ապա այն վկայում է, որ այսօր էլ ինչպես անցյալում, երիտասարդ սերունդը աղջիկ ընտրելիս կարևորում է նրա «անմեղությունը»:

Աղյուսակ 40

«Կարմիր խնձորի» արարողության նախընտրությունը՝ ըստ սեռի (2017 թ.), %

Կարմիր խնձորի արարողության նախընտրությունը	Սեռը	
	Արական	Իգական
Այո	71,8	59,7
Ոչ	26,4	38,0
ԴՊ	1,8	2,3
Ընդամենը	100,0	100,0

Աղյուսակ 41

«Կարմիր խնձորի» արարողության նախընտրությունը՝ ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Կարմիր խնձորի արարողություն նախընտրությունը	Տարիք		
	18–29	30–49	50 և բարձր
Այո	73,2	62,5	62,7
Ոչ	25,6	34,6	35,5
ԴՊ	1,2	2,9	1,8
Ընդամենը	100,0	100,0	100,0

Ըստ բնակավայրի տիպերի մայրաքաղաքի համեմատ (45,6%) բարձր է գյուղական բնակավայրերի (77,3%) և այլ քաղաքների ցուցանիշները (69,7%) (տե՛ս աղյուսակ 42):

Աղյուսակ 42

«Կարմիր խնձորի» արարողության նախընտրությունը՝ ըստ բնակավայրի (2017 թ.), %

Կարմիր խնձորի արարողություն նախընտրությունը	Բնակավայր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Այո	45,6	69,7	77,3
Ոչ	52,8	26,6	21,3
ԴՊ	1,6	3,7	1,3
Ընդամենը	100,0	100,0	100,0

Վերը նշված ցուցանիշները վկայում են, որ ինչպես անցյալում, այսօր էլ հատկապես գյուղաբնակները հարսնացու ընտրելու հարցում կարևորվում են աղջկա անմեղությունը հաստատող «կարմիր խնձորի» առկայությունը:

Հետհարսանեկան ավանդական արարողություններից որոշակի փոխակերպումներով պահպանվել են նաև գլուխլվայի և տեառնընդառաջի սովորույթները: Տեառնընդառաջի կատարման կարևորությունը նշել են հարցվողների 73,4%-ը, գլուխլվայինը՝ 52,3%-ը (տես գծապատկեր 5):

Գծապատկեր 5

Հետհարսանեկան արարողությունների նախընտրությունը (2017 թ.)



Գլուխլվայի կատարման կողմնակիցների ամենացածր ցուցանիշը Երևան քաղաքինն է՝ 32,0%, ամենաբարձրը՝ գյուղական բնակավայրերինը՝ 64,0%, վերջինս բացատրվում գյուղի ավանդապահությամբ (տե՛ս աղյուսակ 43):

Ըստ տարիքային խմբերի՝ բարձր է 50-ից բարձր տարիք ունեցողները՝ 55,4% (տես աղյուսակ 44)

Աղյուսակ 43

Գլուխլվայի արարողության նախընտրությունը ըստ բնակավայրի տիպի (2017 թ.), %

Գլուխլվայի արարողության նախընտրությունը	Բնակավայրեր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Այո	32,0	59,6	64,0
Ոչ	63,2	38,5	32,0
ԴՊ	4,8	1,8	4,0
Ընդամենը	100,0	100,0	100,0

Աղյուսակ 44

Գլուխլվայի արարողության նախընտրությունը՝ ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Գլուխլվայի արարողության նախընտրությունը	Տարիքը		
	18–29	30–49	50 և բարձր
Այո	52,4	48,5	55,4
Ոչ	42,7	47,1	42,2
ԴՊ	4,9	4,4	2,4
Ընդամենը	100,0	100,0	100,0

Եթե նայում ենք Տեառնընդառաջի արարողակարգի կատարման կարևորությանը ըստ տարիքային խմբերի՝ համեմատական բարձր է 18–29 տարեկանների ցուցանիշը (78,0%), որը, ըստ ինձ, կապված է ոչ միայն ավանդապահությամբ, այլև գեղեցիկ շոուի առկայությամբ (տե՛ս աղյուսակ 45):

Աղյուսակ 45

Տեառնընդառաջ կատարելու նախընտրություն՝ ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Կարևոր է, որ կատարվի տեառնընդառաջ	Հարցվողի տարիքը		
	18–29	30–49	50 և բարձր
Այո	78,0	74,3	70,5
Ոչ	19,5	25,0	27,7
ԴՊ	2,4	0,7	1,8
Ընդամենը	100,0	100,0	100,0

Օժիտ: Նախկինում հարսանիքից առաջ աղջկա տանը նախ և առաջ կարգի էին բերում օժիտը, որը բաղկացած էր անկողնուց, գորգից, կարպետից, անձնական իրերից և կենցաղային առարկաներից: Նրա մեջ մտնում էր նաև փեսայի ու նրա ազգականների նվերները, որոնք, որպես տնտեսական օգնություն, տրվում էր ամուսնական զույգին, մեծ ընտանիքում իր անհատական սեփականությունը ապահովելու նպատակով: Օժիտի հանձնումը կատարվել է հարսանիքի օրը, ինչպես փեսայի, այնպես էլ հարսի կողմի ազգականների ներկայությամբ: Օժիտը հարսի ունեցվածքն էր, որը ոչ ոք իրավուք չուներ տնօրինելու[32]: Նայած ընտանիքի ունևորության աստիճանից, օժիտի կազմը փոփոխվում էր:

Մեր օրերում որոշ փոփոխություններով պահպանվել է նաև օժիտ տալու արարողությունը: Օժիտի կարևորությունը գնահատել են հարցվողների 57,0%-ը (տե՛ս գծապատկեր 5):

Ավելի բարձր ցուցանիշ է գրանցվել 18–29 տարիքային խմբերի (64,6%, տե՛ս աղյուսակ 56) և գյուղական բնակավայրերի (62,0%) հարցվողների մոտ (տե՛ս աղյուսակ 46): Երկու խմբերն էլ օժիտը կարևորել են՝ որպես օգնություն նորաստեղծ երիտասարդ ընտանիքներին:

Աղյուսակ 46

Օժիտի կարևորության նախընտրությունը՝ ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Օժիտի նախընտրությունը	Տարիք		
	18–29	30–49	50 և բարձր
Այո	64,6	57,4	53,0
Ոչ	32,9	39,7	44,0
ԴՊ	2,4	2,9	3,0
Ընդամենը	100,0	100,0	100,0

Ըստ բնակավայրի տիպի՝ գյուղաբնակների ցուցանիշը ավելի բարձր է՝62,0%, որը ըստ ինձ պայմանավորված է ոչ միայն նրանց

32 *Է. Կարապետյան,* Օժիտը հայոց մեջ, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1978 թ., էջ 98:

ավանդապահությամբ, այլև գյուղի ներկա սոցիալ տնտեսական պայմաններով (տե՛ս աղյուսակ 47):

Աղյուսակ 47

Օժիտի կարևորության նախընտրությունը՝ ըստ բնակավայրի տիպի (2017 թ.), %

Օժիտի նախընտրությունը	Բնակավայրեր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Այո	48,8	59,6	62,0
Ոչ	48,0	37,6	35,3
ԴՊ	3,2	2,8	2,7
Ընդամենը	100,0	100,0	100,0

2.5. Ամուսնության օրինականացում

Մինչ խորհրդային կարգերի հաստատումը ամուսնության օրինականացումը դրված էր եկեղեցու վրա: Եկեղեցին, առաջնորդվելով կանոնագրքերի և դատաստանագրքերի որոշ հոդվածներով, դարեր շարունակ կարգավորել է թույլատրելի և ոչ թույլատրելի ամուսնությունները: Ամուսնությունը թույլատրվում էր միայն արյունակցական կապը հաշվելուց հետո: «Յոթ պորտը» (սերունդը) ամենաօրինակելի ձևն էր, չնայած բացառություն չեն նաև 4–5 «պորտից» ընտանիք կազմելու դեպքերը: Եկեղեցական օրենքներով արգելված էր ամուսնությունները այն անձանց միջև, որոնք անբուժելի հիվանդությամբ էին տառապում: Եթե տղամարդը կամ կինը ցավագին կամ «ախտուծեն» կամ «արվագետ» է, չի թույլատրվում ամուսնանալ և անարգել պսակն օրհնության»: Նույնը վերաբերվում էր բորոտներին, կույրերին, խուլ ու համրերին: Օրենքով դատապարտվել են նաև այն ամուսնությունները, որտեղ ամուսնացող տղան չէր հասունացել կամ աղջիկը մանկահասակ էր: Նման դեպքերում նորապսակներին եկեղեցին տուգանում էր: Նախաամուսնական հարաբերությունները դատապարտվում էր թե՛ եկեղեցու, թե՛ հասարակության կողմից: Ամուսնացող զույգերի վարքագծերում կարևոր նշանակություն էին տալիս բարոյական նորմերի առկայությանը:

Այսօր էլ բարոյական նորմերի պահպանման կողմնակիցները գերակշռող են: Ըստ հետազոտության արդյունքների՝ հարցվողների 85,2%-ը բացասական վերաբերմունք է արտահայտել այն երիտասարդ զույգերի նկատմամբ, որոնք ամուսնանալու մտադրություն չունենալով համատեղ են բնակվում (տես աղյուսակ 48):

Աղյուսակ 48

Զամուսնացած զույգերի համատեղ բնակվելու նկատմամբ վերաբերմունքը (2017 թ.), %

Զույգերի համատեղ բնակվելու նկատմամբ վերաբերմունքը	%
Այո	13,0
Ոչ	85,2
Դ/Պ	1,8
Ընդամենը	100,0

Մի փոքր բարձր է 18–29 տարիքային խմբի (15,9%, տե՛ս աղյուսակ 49) և Երևան քաղաքի՝ 17,6% (տե՛ս աղյուսակ 50) հարցվողների դրական ցուցանիշները, որը հիմնականում ազատ մտածողության և արևմտյան երկրների բարքերի ընդօրինակման ազդեցությունն է:

Աղյուսակ 49

Զամուսնացած զույգերի համատեղ բնակվելու նկատմամբ վերաբերմունքը ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Զույգերի համատեղ բնակվելու նկատմամբ վերաբերմունքը	Տարիք		
	18–29	30–49	50 և բարձր
Այո	15,9	12,5	12,0
Ոչ	84,1	86,0	84,9
Դ/Պ	0,0	1,5	3,0
Ընդամենը	100,0	100,0	100,0

Աղյուսակ 50

Զամուսնացած զույգերի համատեղ բնակվելու նկատմամբ վերաբերմունքը ըստ բնակավայրերի տիպերի (2017 թ.), %

Զույգերի համատեղ բնակվելու նկատմամբ վերաբերմունքը	Բնակավայրեր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Այո	17,6	12,8	9,3
Ոչ	80,0	84,4	90,0
Դ/Պ	2,4	2,8	0,7
Ընդամենը	100,0	100,0	100,0

Տվյալ հարցի վերաբերյալ արական՝ 84,7% և իգական՝ 85,5% սեռերի ցուցանիշները նմանատիպ են (տե՛ս աղյուսակ 51):

Աղյուսակ 51

Զամուսնացած զույգերի համատեղ բնակվելու նկատմամբ վերաբերմունքը ըստ սեռի (2017 թ.), %

Զույգերի համատեղ բնակվելու նկատմամբ վերաբերմունքը	Սեռը	
	Արական	Իգական
Այո	12,9	13,1
Ոչ	84,7	85,5
Դ/Պ	2,5	1,4
Ընդամենը	100,0	100,0

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո ամուսնությունները օրինականացրել են ԶԱԳՍ-ում և այն կոչվում էր քաղաքացիական (փաստացի) ամուսնություն: Նախկինում քաղաքացիական ամուսնություն ասելով հասկացվում էր պետական մարմիններում գրանցված օրինական ամուսնություն: Այսօր այն իր նախկին իմաստը կորցրել է, և եթե զույգերը ասում են, որ գտնվում են քաղաքացիական ամուսնության մեջ, ապա ենթադրվում է սովորական համատեղ կեցություն, որոնք ապրում են մի տանիքի տակ և վարում են համատեղ կենցաղ: Քաղաքացիական ամուսնությունը ո՛չ պետության և ո՛չ եկեղեցու կողմից օրինական չի ընդունվում:

Չնայած դրան «ոչ օրինական» ամուսնությունների քանակը աշխարհում ավելանում է: Եվրոպական երկրներում և ամերիկայի մայրցամաքի մի շարք պետություններում ամուսնությունները օրինականացնում են 4-ից մեկը, Ռուսաստանում՝ 3-ից մեկը[33]: Եվ եթե եվրոպական մի շարք երկրներում (Շվեցիա, Իսլանդիա, Ֆրանսիա, Շոտլանդիա, Բելգիա և այլն) քաղաքացիական ամուսնությունները որոշակի իրավական հիմքի վրա է դրված, ապա ԽՍՀՄ-ի նախկին պետություններում, այդ թվում նաև Հայաստանում, նմանատիպ ամուսնությունները պետության կողմից չեն ընդունվում:

Նման ամուսնությունների նկատմամբ հասարակության վերաբերմունքը տարբեր է: Քաղաքացիական ամուսնության կողմնակիցները գտնում են, որ երջանիկ լինելու համար պարտադիր չէ համատեղ կեցությունը օրինականացնել: Ըստ նրանց, այն հնարավորություն է տալիս զույգերին միմյանց լավ ճանաչելու, կենցաղային դժվարությունները միասին հաղթահարելու, ինչպես նաև բնավորության գծերին հարմարվելու փորձությունը անցնելու ճանապարհին, իսկ չհարմարվելու ու չհասկանալու դեպքում առանց իրավական քաշքշուկների կարող են բաժանվել:

Քաղաքացիական ամուսնությունը չընդունողները գտնում են, որ զույգերը կարող են երկար տարիներ ապրել միասին, ընդհանուր անշարժ գույք ունենալ, ընդհանուր երեխաներ ունենալ, սակայն ժառանգության ոչ մի իրավունք չունենալ: Նման ամուսնություններից ծնված երեխաները նույնպես ժառանգություն ստանալու իրավունքից զրկված են: Մյուս կողմից, դա անհարգալից վերաբերմունք է իր ազգի, տոհմի նկատմամբ, քանի որ նման ամուսնություններից ծնված երեխաները գրանցվում են մոր ազգանունով: Իսկ ազգանունը այն գործոնն է , որը անհատին կապում է իր ազգին և ընտանիքին: Շատերը, հաշվի առնելով հասարակության բացասական կարծիքը նման ամուսնությունների նկատմամբ, շրջապատին ներկայացնում են , որ իրենք ապրում են ոչ թե կենակցողի, այլ «օրինական» ամուսնու հետ:

33 Гражданский брак современные тенденции. http://lifesecrets.in.ua/ru/family/civil-marriage/83-civil-marriage-modern-trends.html

Արդի շրջանում ամուսնական հարաբերությունների օրինականացման բացակայությունը վկայում է հայ ընտանիքի ավանդական արժեքային ձևերի փոխակերպումների մասին:

Ըստ 2012թ ՄԱԿ-ի զարգացման հայաստանյան գրասենյակի կողմից երիտասարդների շրջանում անցկացրած հետազոտության արդյունքների՝ հարցվողների 53,2% համաձայն չէ նման ամուսնությունների, 46,3%-ը համաձայն է: Ամուսնացած հարցվողների 20,0%-ը նշել է, որ կնոջ հետ համատեղ բնակվում է առանց գրանցվելու[34]: Նույն կազմակերպության կողմից 2015–2016թթ. «Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում» զեկույցի արդյունքների համաձայն հարցված տղամարդկանց 10,8%-ի, և կանանց՝11,2%-ի մոտ ամուսնությունները գրանցված չեն[35]:

Հայաստանում չգրանցված ամուսնությունների մասին վիճակագրական տվյալներն արձանագրվել են միայն 2011թ.-ի մարդահամարի ժամանակ: Ըստ 2011թ.-ի մարդահամարի տվյալների՝ ՀՀ բնակչության ամուսնացածների գերակշռող մասը իրենց ամուսնությունները օրինականացրել են քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում (ՔԿԱԳՄ): Սակայն դրա հետ միասին կան որոշակի թվով ամուսնացածներ, որոնք այն գրանցել են միայն եկեղեցական կանոնագրքով կամ ընդհանրապես չեն գրանցվել:

Անկախ բնակավայրի տիպից և սեռից՝ չգրանցված ամուսնությունների բարձր ցուցանիշ է գրանցվել 15–19 տարիքային խմբերի մոտ: Եթե տվյալ խմբի բարձր ցուցանիշը կարելի է որոշակի չափով հիմնավորել անչափահաս ամուսնությունները պետական մարմիններում չգրանցելու խնդրի հետ, ապա 20–24 և 25–29 տարիքային խմբերի ցուցանիշները որոշակի այլ պատճառներ ունեն: Համեմատած քաղաքի հետ՝ գյուղական բնակչության չգրանցված ամուսնությունների թիվը մի փոքր բարձր է (տե՛ս աղյուսակներ 52, 53):

34 Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները, Եր., ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Հայաստանի գրասենյակ, 2012թ., էջ 27:

35 Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում, Եր., Հայաստանում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ծրագրի շրջանակներում 2015–2016թ., էջ 24:

Աղյուսակ 52

ՀՀ բնակչության ամուսնական կարգավիճակը՝ ըստ 2011թ. մարդահամարի տվյալների (կանայք), %

Տարիքային խմբեր	Ամուսնացած						Ամուսնալուծված				Այրի	
	Գրանցված		Փաստացի (չգրանցված)		Միայն եկեղեցով		Գրանցված		Չգրանցված			
	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ
15–19	60.5	55.3	32.0	40.3	3.7	2.0	1.5	0.4	1.3	1.4	1.0	0.6
20–24	80.8	75.8	14.0	20.1	1.8	1.3	1.3	0.8	1.6	1.6	0.5	0.4
25–29	86.0	83.6	7.8	12.0	1.0	0.6	2.3	1.2	2.2	2.0	0.7	0.6
30–34	84.8	86.9	5.7	7.6	0.6	0.3	4.0	1.6	3.3	2.0	1.6	1.6
35–39	83.0	91.5	3.7	3.0	0.3	0.1	5.7	1.8	3.8	1.9	1.7	1.7
40–44	81.4	90.7	2.0	1.3	0.1	0.03	7.0	1.8	3.3	1.3	6.2	4.8
45–49	80.6	88.1	1.2	0.8	0.1	0.0	5.8	2.0	2.8	1.4	9.4	7.7
50–54	77.8	84.4	1.0	0.6	0.1	0.01	5.1	1.6	2.5	1.4	13.6	11.9
55–59	71.6	77.1	0.7	0.5	0.05	0.02	4.6	1.8	2.2	1.1	20.8	19.5
60–69	59.2	62.1	0.5	0.3	0.05	0.01	3.6	1.1	1.3	0.7	35.3	35.8
70+	32.0	34.2	0.5	0.3	0.05	0.04	1.8	0.5	0.7	0.3	64.0	64.7

Ըստ փորձագիտական հարցումների արդյունքների՝ թե՛ գյուղական, թե՛ քաղաքային բնակչության գերակշռող մասը, կարևորելով ամուսնություն օրինականացնելու կարգը, գտնում է, որ այն պարտադիր է: Ամուսնական կարգավիճակ ունեցող ավագ և միջին սերնդի ներկայացուցիչների մեծամասնությունը՝ անկախ սեռից, կրթության մակարդակից, իրենց ամուսնությունը օրինակացրել է հարսանիքից 1–6 ամիս հետո, մի մասը՝ երեխայի ծնվելուց 1–3 ամիս առաջ, եզակի դեպքերում՝ երեխայի ծնվելուց հետո: Այսօր երիտասարդ սերնդի հարսանիքի և զագսավորման միջև ընկած ժամանա-

Աղյուսակ 53

ՀՀ բնակչության կարգավիճակը՝
ըստ 2011թ. մարդահամարի տվյալների (տղամարդիկ), %

Տարիքային խմբեր	Ամուսնացած						Ամուսնալուծված				Կնոջ մահ	
	Գրանցված		Փաստացի (չգրանցված)		Միայն եկեղեցով		Գրանցված		Չգրանցված			
	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ
15–19	47.4	46.0	39.8	47.6	3.6	1.9	5.2	1.4	1.4	1.2	2.6	1.9
20–24	78.7	70.4	17.6	26.8	2.1	1.5	0.7	0.4	0.6	0.7	0.3	0.2
25–29	86.6	80.0	10.6	17.7	1.6	1.3	0.5	0.3	0.6	0.6	0.1	0.1
30–34	90.7	86.4	6.7	11.2	0.9	0.7	0.8	0.7	0.6	0.8	0.3	0.2
35–39	92.1	90.2	4.8	7.3	0.5	0.4	1.4	0.9	0.9	1.0	0.3	0.2
40–44	93.6	93.8	2.8	3.4	0.3	0.1	1.8	1.1	1.1	1.0	0.4	0.6
45–49	94.5	95.8	1.3	1.5	0.1	0.1	2.0	0.9	0.9	0.8	1.2	0.9
50–54	94.8	96.5	0.7	0.6	0.1	0.0	1.6	0.7	0.8	0.6	2.0	1.6
55–59	94.5	96.0	0.5	0.4	0.0	0.0	1.3	0.4	0.6	0.5	3.1	2.7
60–69	91.1	99.6	0.4	0.3	0.02	0.02	1.2	0.7	0.5	0.6	6.7	5.8
70+	73.0	73.4	0.4	0.3	0.1	0.0	0.8	0.3	0.5	0.2	25.2	25.8

* Ծանոթացում, 52, 53 աղյուսակները կազմվել են 2011թ.-ի մարդահամարի տվյալների հիման վրա:

կաշրջանը տատանվում է մեկ տարուց մինչև մի քանի տարի, երբեմն էլ տարբեր նկատառումներ հաշվի առնելով ընդհանրապես չեն զգասավորվում: Պարզվում է, որ ներկա սերնդի ուշ զգասավորման հիմնական պատճառը կապված է կնոջ՝ որպես սերունդ վերարտադրողի կարողությունից: Ըստ տղամարդկանց «ընտանիքը առանց երեխայի ընտանիք չէ, և այն միշտ կանգնած է քայքայման եզրին»[36]: Բացի դրանից, եթե առաջ շուտ զգասավորման համար

36 *Թ. Ջաքարյան*, ԴԱՆ, Գեղարքունիք, 2017թ.:

զույգերը շահագրգռված էին, որովհետև նորապսակները արտոնություններ ունեին (բնակարանային պայմանների բարելավում, նորապսակների խանութից օգտվելու զեղչեր և այլն), ապա այսօր գյուղական բնակավայրերում զագսի բացակայությունը, մուծվող հարկը անապահով ընտանիքների համար դժվարամատչելի է: Ներկայումս կապված երեխայի ծննդյան վկայականի, հայրությունը ճանաչելու խնդիրների հետ, երիտասարդ սերունդը զագսավորվում է երեխա ունենալուց անմիջապես առաջ կամ երեխայի ծնվելուց հետո:

Երիտասարդ ամուսինները հարսանիքի օրը կամ հարսանիքից անմիջապես հետո իրենց ամուսնությունը օրինականացնում են հիմնականում այն ժամանակ, երբ արարողությունից հետո մեկնում են արտերկիր կամ պետական որևէ կառույցի հետ շտապ գործարք կնքելու համար զագսի վկայական են պահանջում: Տվյալ խնդրում համեմատական բարձր է Երևան քաղաքի ցուցանիշները, որտեղ հարսանիքից առաջ գրանցվել է 16,8%-ը, հարսանիքի օրը 15,8%-ը (տե՛ս աղյուսակ 54):

Աղյուսակ 54

Ամուսնության օրինականացումը ըստ բնակավայրի տիպի (2017 թ.), %

Գրանցման ժամանակը	Բնակավայր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Մինչ հարսանիքը	16,8	6,7	3,3
Հարսանիքի օրը	15,8	2,2	1,6
Հարսանիքից հետո՝ մինչև առաջին երեխայի ծնունդը	46,5	57,3	69,1
Երեխայի/ների ծնվելուց հետո	5,0	15,7	13,8
Չի գրանցվել	15,8	18,0	12,2
Ընդամենը	100,0	100,0	100,0

ՀՀ բնակչության շրջանում, հատկապես սոցիալապես անապահով գյուղաբնակների չզագսավորման հիմնական պատճառը միայնակ մայրերի արտոնություններից, ընտանեկան նպաստներից, հումանիտար օգնություններից օգտվելու հանգամանքն է: Դա է

պատճառը, որ ամուսինները, երկար տարիներ համատեղ ապրելով, ունենալով բազմաթիվ երեխաներ, ամուսնությունը չեն օրինականացնում՝ հետագայում ստիպված լինելով մեծ ֆինանսներ ծախսելով վերականգնել իրենց իրավունքները:

Մարզերում ամուսնության օրինականացման հետ կապված խնդիրները կապված են ոչ միայն օբյեկտիվ, այլ նաև սուբյեկտիվ պատճառների հետ: Օրինակ գյուղական բնակչության ավագ սերնդի ներկայացուցիչները, կարևորելով զագսում գրանցվելու անհրաժեշտությունը, գտնում են, որ ամուսնությունը օրինական ճանաչելու համար առաջնայինը ոչ թե զագսի վկայականն է, այլ հարսանիքը. հարսանիքին հրավիրվածները արդեն տվյալ զույգի ամուսնության վկաներն են: Ամուսնությունը հարսանիքով օրինական ճանաչելու մտածելակերպը հիմնված է դարերից եկած և այսօր էլ ամուսնական ծիսակարգում կիրառվող այն սովորույթի վրա, երբ հարսանիքով ու եկեղեցիով էր օրինականացվում նորապսակների կապը: Ըստ ավագ սերնդի՝ նորապսակ զույգերը հարսանիք հրավիրվածների առջև ավելի պատասխանատու են իրենց հետագա սխալների համար, քան այսօրվա օրենքի առաջ: Երիտասարդությունը կարևորում է նաև միայն եկեղեցական կանոնակարգով պսակվելու անհրաժեշտությունը:

80-ական թթ.-ին երեխայի ծնվելուց առաջ ՔԱԳՍ-ում գրանցվել են 72,3%-ը, ծնվելուց հետո՝22,8%-ը (տե՛ս աղյուսակ 55), 2017թ.-ին երեխայի ծնվելուց առաջ՝ 58,5%-ը, հետո՝11,5% (տե՛ս աղյուսակ 56): 80-ական թթ համեմատ այսօր ամուսնության օրինականացման գործառույթը նվազել է:

Աղյուսակ 55

Ամուսնության օրինականացման գործընթացը (1980թ.), %

Գրանցման ժամանակը	%
Երեխայի ծնվելուց առաջ	72,3
Երեխայի ծնվելուց հետո	22,8
Գրանցված չէ	4,9
Ընդամենը	100,0

Աղյուսակ 56

Ամուսնության օրինականացման գործընթացը (2017 թ.), %

Գրանցման ժամանակը	%
Մինչ հարսանիքը	8,6
Հարսանիքի օրը	6,4
Հարսանիքից հետո՝ մինչև առաջին երեխայի ծնունդը	58,5
Երեխայի/ների ծնվելուց հետո	11,5
Չի գրանցվել	15,0
Ընդամենը	100,0

Ըստ տարիքային խմբերի՝ չգրանցված ամուսնությունների համեմատական բարձր են 18–22՝ 33,3% և 30–49՝ 20,0% տարեկանների ցուցանիշները, որը վկայում է ամուսնության օրինականացման համակարգի նորովի մոտեցումների մասին (տե՛ս աղյուսակ 57): Վերջինիս մասին են վկայում նաև աղյուսակ 58-ի տվյալները, ըստ որի ընդհանուր հարցվողների 36,2%-ը բացասական կարծիք է հայտնել ամուսնության օրինականացման վերաբերյալ (տե՛ս աղյուսակ 58):

Աղյուսակ 57

Ամուսնության օրինականացումը ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Գրանցման ժամանակը	Տարիք		
	18–29	30–49	50 և բարձր
Մինչ հարսանիքը	9,1	4,0	12,3
Հարսանիքի օրը	3,0	7,2	6,5
Հարսանիքից հետո՝ մինչև առաջին երեխայի ծնունդը	45,5	54,4	64,5
Երեխայի/ների ծնվելուց հետո	9,1	14,4	9,7
Չի գրանցվել	33,3	20,0	7,1
Ընդամենը	100,0	100,0	100,0

Աղյուսակ 58

Ամուսնությունը ՔԱԳՍ-ով օրինականացման անհրաժեշտությունը (2017 թ.), %

Գրանցումը	%
Այո	60,4
Ոչ	36,2
Դ/Պ	3,4

Ցանկալի երեխաների քանակ: Երեխաների ցանկալի թիվը, կենսակերպի բոլոր պայմանների առկայության դեպքում, որոշակի թվով երեխաներ ունենալու պատրաստակամությունն է:

Ըստ «քանի երեխա կցանկանայիք ունենալ» հարցի պատասխանների, համեմատական բարձր է 3 երեխա ցանկացողների ցուցանիշները՝ 34,6%: 2 և 4 երեխա ցանկացողների արդյունքները նմանատիպ են, համապատասխանաբար, 27,6% և 27,3%: 1 երեխա ունենալու ցանկություն են հայտնել ընդհանուր հարցվողների ընդամենը 0,8%-ը (տե՛ս աղյուսակ 59):

Աղյուսակ 59

Ընտանիքում ցանկալի երեխաների քանակ (2017 թ.), %

Ցանկալի երեխաների քանակ	%
1 երեխա	0,8
2 երեխա	27,6
3 երեխա	34,6
4 երեխա	27,3
5 և ավելի	9,6
Ընդամենը	100,0

Ըստ տարիքային խմբերի՝ 2 երեխա ունենալու ցանկություն են հայտնել հատկապես 18–22 տարեկանները 41,5%, որոնք սերունդը վերարտադրող հիմնական խմբերն են (տե՛ս աղյուսակ 60):

5-ից ավելի երեխաներ են ցանկացել Երևանի հարցվողների 6,4%-ը, մարզային քաղաքների 7,3%-ը և գյուղական բնակավայրերի 14,0%-ը (տե՛ս աղյուսակ 61):

Աղյուսակ 60

Ընտանիքում ցանկալի երեխաների քանակ ըստ տարիքային խմբերի (2017 թ.), %

Ցանկալի երեխաների քանակ	Տարիքը		
	18–29	30–49	50 և բարձր
1 երեխա	0,0	0,0	1,8
2 երեխա	41,5	31,6	17,5
3 երեխա	40,2	37,5	29,5
4 երեխա	14,6	21,3	38,6
5 և ավելի երեխաներ	3,7	9,6	12,7

Աղյուսակ 61

Ընտանիքում ցանկալի երեխաների քանակ ըստ բնակավայրի (2017 թ.), %

Ցանկալի երեխաների քանակ	Բնակավայրեր		
	ք. Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
1 երեխա	0,0	0,9	1,3
2 երեխա	28,8	33,9	22,0
3 երեխա	36,8	32,1	34,7
4 երեխա	28,0	25,7	28,0
5 և ավել երեխաներ	6,4	7,3	14,0
Ընդամենը	100,0	100,0	100,0

Ըստ ցանկալի երեխաների սեռի՝ հարցվողների 50,6%-ը գերադասել է ունենալ 2 տղա երեխա (տես աղյուսակ 62):

5 և ավելի երեխա ունենալու ցանկություն են հայտնել հատկապես արական սեռի ներկայացուցիչները (տղամարդ՝ 17,2%, կանայք՝4,1%, տե՛ս աղյուսակ 63):

Կանանց ցածր ցուցանիշը պայմանավորված է նրանով, որ երեխաների խնամքի, դաստիարակության, կենցաղային գործերի հիմնական մասը ընկած է նրանց ուսերին: Եթե կանանց 5-ից ավելի տղա ունենալու ցուցանիշը 0,0% է, ապա տղամարդկանցը ՝ 4,3% է (տե՛ս աղյուսակ 64):

Աղյուսակ 62

Ընտանիքում ցանկալի երեխաների քանակ ըստ սեռային պատկանելության (2017 թ.), %

	Տղաներ	Աղջիկներ
Տղա/աղջիկ չլինի	0,5	3,6
1 երեխա	40,4	46,4
2 երեխա	44,5	39,8
3 երեխա	7,3	3,4
4 երեխա	1,6	1,6
5 և ավել երեխաներ	1,8	1,3
Սեռը կարևոր չէ	3,9	3,9
Ընդամենը	100,0	100,0

Աղյուսակ 63

Ընտանիքում ցանկալի երեխաների քանակ՝ ըստ սեռի (2017 թ.), %

Ընտանիքում ցանկալի երեխաների քանակ	Սեռը	
	Արական	Իգական
1 երեխա	0,0	1,4
2 երեխա	25,8	29,0
3 երեխա	35,0	34,4
4 երեխա	22,1	31,2
5 և ավել երեխաներ	17,2	4,1
Ընդամենը	100,0	100,0

Ըստ վերջիններիս՝ ինչքան շատ տղա, այնքան շատ աշխատող, որը հնուց եկած սովորույթի արտահայտություն է:

Հայրական գծով սերնդի վերարտադրությունը, հայ հասարակության գիտակցության մեջ հանգեցրել է արական սեռի գերադասության ամրագրմանը: Աղջիկը ընկալվում է որպես «գնացող» և համարվում է ընտանիքի ժամանակավոր անդամ: «Աղջիկը ուրիշի տան պատն ա», իսկ «տղեն օջախի ծուխը վառ պահողն ա» ժողովրդական ասացվածքները վկայում են, որ տղա երեխային դիտում են որպես տոհմի շարունակող: Հայ ընտանիքում տղա երեխայի առկայությունը պարտադիր է, որպեսզի «տան ծուխը չմարի»

Աղյուսակ 64

Ընտանիքում ցանկալի երեխաների քանակ՝ ըստ սեռի (2017 թ.), %

Ցանկալի երեխաների քանակ	Արական		Իգական	
	Տղա	Աղջիկ	Տղա	Աղջիկ
Տղա/աղջիկ չլինի	1,2	3,7	0,0	3,6
1 երեխա	32,5	49,7	46,2	43,9
2 երեխա	42,9	32,5	45,7	45,2
3 երեխա	12,3	4,3	3,6	2,7
4 երեխա	1,8	1,8	1,4	1,4
5 և ավելի երեխաներ	4,3	3,1	0,0	0,0
Սեռը կարևոր չէ	4,9	4,9	3,2	3,2
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0

և ծնողները մենակ չմնան: Ակնկալվում է, որ ամուսնացած որդիներից մեկը կբնակվի ծնողների հետ և հետագայում հոգ կտանի նրանց մասին: Բացի դրանից տղամարդը՝ որպես ընտանիքը «պահողի», «ապրուստ հայթայթողի «դերը ավելի է արժեքավորվում, քան կնոջ դերը: Տղան աշխատուժ է՝ հայրական տան համար, աղջիկը սկեսրայրենց տան համար[37]:

Ամենաքիչը երկու տղա երեխա ունենալու ցանկություն հայտնած տղամարդկանց թիվը ավելի մեծ է, քան՝ կանանցը: Հարցվողների մեծամասնությունը տղա երեխաների առկայությամբ իրենց ծերության ապահով շրջանն են ապահովում: Մի մասի համար էլ ավելի կարևոր է ազգի (տոհմի) ազգանունը պահելու հանգամանքը: Հանդիպում են դեպքեր, որ տղա զավակ չունեցողները իրենց ազգանունը պահելու միտումով աղջիկ երեխայից ծնված տղա թոռանը որդեգրում են՝ տալով իրենց ազգանունը: Աղջիկներ ունեցող ընտանիքներում տղային արժևորում են նաև որպես քույրերի պաշտպան:

Ցանկալի երեխաների սեռերի նախընտրության կողմնորոշման հարցում բնակության վայրը շատ կարևոր գործոն է: Գյուղա-

37 Գենդերային սոցիալականացման գործընթացի վերլուծություն, ԵՊՀ,, 2015թ., էջ 21: http://www.ysu.am/files/Report_Gargrtsyan_Harutyunyan.pdf

կան ընտանիքներում 3–5 տղա երեխա ունենալու պահանջը ավելի բարձր է, քան քաղաքաբնակների մոտ:

Այսպիսով, Հայաստանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական և արժեքային արմատական փոփոխություններն իրենց կնիքն են դրել արդի հայ ընտանիքի կողմից իրականացվող գործառույթների վրա: Դրանց արդյունքում նկատվում է ամուսնությունների և ծնելիության նվազում, ամուսնալուծությունների թվի աճ: Նվազել է նաև ընտանիքի՝ որպես սոցիալականացման ազգային արժեքների պահպանողի և փոխանցողի դերը:

Ըստ խորհրդային և հետխորհրդային տարիների հետազոտության արդյունքների՝ ընտանիքի կառուցվածքը, պահպանելով հանդերձ իր ավանդական կառուցվածքը, կապված անկախության տարիների սոցիալ-տնտեսական պայմանների, ծնելիության մակարդակի անկման, արտագաղթի և արտագնա աշխատանքի մեկնողների թվի ավելացման հետ, որոշակի փոխակերպումների է ենթարկվել: Դրանք են՝

1. երկսերունդ ընտանիքների թվի նվազում,
2. միասերունդ և միայնակ ընտանիքների թվի կրկնակի ավելացում,
3. ոչ լրիվ կազմով երկսերունդ ընտանիքների թվաքանակի ավելացում,
4. բացառությամբ Երևան քաղաքի՝ եռասերունդ ընտանիքների թվաքանակի ավելացում, բարձրացել է 3 անդամ ունեցող ընտանիքների թիվը և նվազել է 5 անդամ ունեցողներինը: Քանի որ սրանք հիմնականում երկսերունդ ընտանիքներն են, ուստի այսօր նրանց անդամների ցուցանիշների նվազեցումը սերտորեն կապված է ծնելիության մակարդակի անկման հետ:

Նկատվում է տղամարդու և կնոջ դերերի արժեքային համակարգի որոշակի փոփոխություն հատկապես այն երկսերունդ ընտանիքներում, որտեղ ընտանիքի հիմնական կերակրող է հանդիսանում կինը,

Որոշ փոխակերպումներով այսօր էլ գոյատևում է ավագ և կրտսեր սերունդների փոխհարաբերությունների ավանդական

ձևը, որը արտահայտվում է ծնողների և ամուսնացած զավակների համատեղ բնակվելու, տարբեր գործառույթներում ավագ սերնդի խորհուրդները ընդունելու նախապատվության դրսևորումներով :

Այն ընտանիքներում, որտեղ ծնողները և զավակները տարբեր բնակավայրերում են ապրում (գյուղ-քաղաք, արտերկիր), անմիջական հաղորդակցման խզման պատճառով որոշակի արգելքներ են ստեղծվել ընտանեկան ավանդական նորմերը նոր սերնդին փոխանցելու խնդրում:

Բարոյական արժեքների, կենցաղային խնդիրների լուծման, երեխաների դաստիարակման և այլ հարցերի վերաբերյալ վերաբերմունքը և գնահատումը երիտասարդ ու ավագ սերնդի կողմից տարբերվում են: Չնայած այդ հանգամանքին՝ արդի հայ հասարակությունը հիմնականում ընդունում է ավագ և կրտսեր սերունդների փոխհարաբերությունների ավանդական նորմերը, որոնք որոշակի փոխակերպումներով կիրառվում են՝ կապված հետևյալ առանցքային գործոններից՝

- ընտանիքի կառուցվածք (երկսերունդ, եռասերունդ և այլն),
- բնակավայրի տիպ(գյուղ, քաղաք),
- ավանդական նորմերի պահպանման նկատմամբ ընտանիքի անդամների կոմնորոշում,

Թե՛ ավագ, թե՛ երիտասարդ սերունդների ներկայացուցիչները ամուսնության հարցում կարևորում են ծնողների համաձայնության անհրաժեշտությունը, որը պայմանավորված է ոչ միայն ավանդական մտածելակերպով ու սովորույթների պահպանման գործառույթներով, այլև ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակով:

Հետազոտությունների համեմատական նյութը վկայում է, որ երբեմն ազգականների, հարևանների և ընկերների միմյանց նկատմամբ ունեցած հարաբերություններն ու պարտականությունները անմիջականորեն կապված են անհատի կամ ընտանիքի սոցիալական պաշտպանվածության աստիճանից: Այսօր օգնության և փոխօգնության արժեքային համակարգում առաջնայինը օգնող կողմի ունեցվածքային հնարավորություններն են, որով և պայմանավորված է մոտ ու հեռու ազգականների, հարևանների, ընկերների մեր-

ձեցման կամ օտարացման գործընթացը: Միևնույն բնակավայրում ապրող ազգականների և հարևանների միջև շփման արգելք է հանդիսանում նաև փոխօգնության ավանդական ձևի արմատացած մտածելակերպը, երբ դիմացինի օգնությանը պետք է որևէ կերպ փոխհատուցես:

Ամուսնական հարաբերությունների օրինականացման բացակայությունը՝ որպես սոցիալ մշակութային նոր երևույթ հայ իրականության մեջ, վկայում են ընտանիքի ավանդական արժեքային ձևերի փոխակերպումների մասին:

Բուն հարսանեկան արարողությունները կատարվում է ազգային սովորույթների մասնակի պահպանմամբ և բազմաթիվ եվրոպական նորամուծությունների համադրմամբ: Վերափոխված պահպանվել են իրենց իմաստը չկորցրած որոշակի ավանդական տարրեր, որոնք կատարում են հարսանեկան արարողությունների ժամանակ:

Արդիական է դարձել եկեղեցական պսակադրությունը, որը ՀՀ անկախության հռչակումից հետո սկսեց վերականգնել իր կորցրած իրավունքները:

Մինչհարսանեկան փուլում հիմնականում պահպանվել է խոսք առնելու և նշանդրեքի արարողակարգերը, որոնք հանդիսանում են ամուսնության անհրաժեշտ նախապայմաններ:

Հետհարսանեկան արարողակարգերից պահպանվել են «կարմիր խնձորի», գլուխլվայի, օժիտի, տեառնընդառաջի ավանդական ծեսերը:

Թե՛ տղաների, թե՛ աղջիկների մոտ բարձրացել է ամուսնական տարիքը: Հարցվածների զգալի մասը նախընտրում է, որ երիտասարդ տղաները ամուսնանան այն տարիքում, երբ կուսենան մասնագիտական հմտություններ ու կենսակերպը ապահովվող աշխատանք:

Ավանդական նորմերի պահպանմամբ հանդերձ Հայաստանում ձևավորվել է սոցիալական կայքերի միջոցով ամուսնություններ, որը դժվարությամբ է ընդունվում մեր հասարակության կողմից:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1.1.Ընտանիքի դերը բնակչության սոցիալական արժեհամակարգի կառուցվածքում

Ընտանիքի ինստիտուտի վիճակը, փոփոխման միտումները պայմանավորվում են նաև հասարակության արժեքային համակարգով, որը հասարակության կենսագործունեության առանցքային նախապայմաններից է: Արժեքների գործառույթների, դասակարգման հետ առնչվող հարցերի մեկնաբանությունները բավականին բարդությունների հետ են կապված, քանի որ դրանք ուսումնասիրվում են գիտական տարբեր բնագավառներում, որոնք ունեն ուրույն մոտեցումներ: Սույն շարադրանքի սահմաններում հնարավորություն չունենք անդրադառնալու արժեքների մեծաթիվ տեսություններին: Այնուամենայնիվ, անգամ գոյություն ունեցող տարաձայնություններով հանդերձ, մասնագետները համամիտ են նրանում, որ արժեքները կատարում են մարդկանց գործունեության կարգավորիչ գործառույթներ: Սոցիալական արժեքները հանդես են գալիս տարբեր ձևերով՝ որպես հասարակական իդեալ, որն ստեղծվում է հասարակական գիտակցության միջոցով, նյութական, հոգևոր արժեքների կամ վարքի նորմերի ձևով: Սոցիալական արժեքները, բեկվելով անհատական կենսագործունեության միջով, ընդգրկվում են անձի հոգեբանական կառուցվածքում՝ որպես անհատական արժեքներ՝ հանդիսանալով նրա վարքի շարժառիթների աղբյուր[1]:

Սոցիալական արժեքները մարդկության պատմական զարգացման ընթացքում փոփոխվում են: Դրանց մի մասը պահպանում

1 Словарь практического психолога, Минск: «Харвст», 1997, с. 756.

են իրենց համամարդկային բնույթը, սակայն կարող են ունենալ էթնիկական, տարածաշրջանային, սոցիալական և այլ կարգի առանձնահատկություններ, իսկ որոշ արժեքներ կարող են բնորոշ լինել կոնկրետ էթնոսների: Բավականին բարդ է արժեքների արդի փոփոխությունների միտումների ուրվագծումը, քանի որ դրանց վրա ազդում են բազմաթիվ գործոններ՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ, մարդկանց տեղաշարժեր և այլն, որոնց միջոցով տեղի են ունենում մշակութային արժեքների փոխանցման գործընթացներ: Միշտ չէ, որ այդ գործընթացները հարթ են ընթանում: Պատմության ընթացքում հայտնի են բազմաթիվ իրավիճակներ, երբ հասարակական արժեքները ստեղծվում են քաղաքական, ռազմական, կրոնական, սոցիալական և այլ կարգի որոշ շրջանակներում, տարածվում հասարակության շրջանում՝ դառնալով չարիք և՛ սեփական ժողովրդի, և՛ ողջ մարդկության համար:

Որոշ մշակութային արժեքներ, ստեղծվելով բնականորեն կոնկրետ տարածաշրջաններում, ինչ-ինչ ուղիներով ներթափանցում են այլ մշակութային միջավայր, սակայն դրանց մի մասը կարող է ադապտացվել տեղական միջավայրին՝ զարգացնելով տեղական մշակութային համակարգը, իսկ որոշ մասը՝ ունենալ բացասական ազդեցություններ՝ առաջացնելով անգամ, այսպես կոչված, «մշակութային շոկ»:

Այս բոլոր գործընթացներից զերծ չէ նաև Հայաստանի Հանրապետության բնակչությունը: Սույն բաժնում մեր խնդիրն է լինելու՝ վերլուծել «ընդհանուր» արժեհամակարգում ընտանիքի տեղն ու դերը և ընտանեկան արժեհամակարգի կառուցվածքային որոշ տարրերի փոփոխման միտումները: Բավականին արդյունավետ են սոցիալական կապիտալի տեսության շրջանակներում իրականացվող հետազոտությունները, որում ընտանիքը կարևորագույն արժեք է համարվում և մանրամասն վերլուծվում[2]: Արդեն 2000-ական

2 *Թադևոսյան Ա.*, Հայաստանում արժեքային կողմնորոշումների ազդեցությունը հանրային կապիտալի ձևավորման գործընթացին, «21-րդ դար»,

թթ. սկզբներին նշվել է գլոբալիզացիոն գործընթացների հետևանքները հայկական ընտանեկան համակարգի վրա[3],[4]: Առ այսօր, օրակարգային են մնում ներքոշարադրյալ եզրահանգման բազմաթիվ խնդիրներ, ըստ որի՝ «քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային հակասական ու իրարամերժ գործընթացների հորձանուտում հայտնված ընտանիքը կորցրել է այն հիմնական արժեքներն ու կողմնորոշիչները, որոնց օգնությամբ ոչ միայն կազմակերպվում է ամենօրյա գործունեությունը, այլև կենսագործվում են ընտանեկան կյանքի պլանավորման ու վերարտադրության հիմնական սկզբունքները: Ընտանիքը մեծ բարդություններով է հարմարվում նոր իրավիճակին...»[5]: Ընտանիքի ինստիտուտի փոփոխությունները միայն սոցիալ-տնտեսական և քաղաքական ազդեցություններով չեն պայմանավորվում: Արդի գլոբալիզացիոն գործընթացները մեծապես պայմանավորվում են նաև տեղեկատվական դաշտի ընդլայնմամբ տարբեր ձևերով՝ ԶԼՄ-ների, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների, տպագիր արտադրանքի, մարդկանց անմիջական շփումների և բազմաթիվ այլ միջոցներով: Պատահական չէ այն հանգամանքը, որ միջազգային գիտական միտքը լայնածավալ միջպետական հետազոտություններ է իրականացնում սոցիալական արժեհամակարգի փոփոխությունների վերաբերյալ, բացահայտում դրանց պատճառները, տարածման ուղիները, ազդեցությունները և բազմաթիվ այլ հիմնախնդիրներ[6]: Իսկ ՀՀ բնակ-

---

թիվ 2(4), 2004թ., Гугин Э., Чапек В. Феномен социального капитала//Социология: теория, методы, маркетинг, 2001, N 1, с. 49–56. Jorg Blasius, Jurgen Friedrichs, Le competences pratiques font-elles partie du capital culturel?, Revu francaise de sociologie, 44–3, 2003. p. 549–576.

3 Ընտանեկան բռնությունները Հայաստանում; Սոցիոլոգիական հետազոտություն, Եր., «Զանգակ–97» հրատ., 2002, էջ 7–9:

4 *Գաբրիելյան Մ*, Հայկական ընտանիքն անցումային շրջանում (ազգաբանական ուսումնասիրություն), Եր., 2005, էջ 7–17:

5 Նույն տեղում, էջ 8:

6 1978թ-ից իրականացվում է «Եվրոպական արժեքների հետազոտություն» ծրագրով (այսուհետ՝ ԵԱՀ) միջազգային համեմատական հետազոտություններ որի նպատակն է ուսումնասիրել եվրոպական արժեքների փո-

չության սոցիալական արժեքների փոփոխման միտումների ուրվագծման համար արժեքավոր նյութեր են պարունակում էթնոսոցիոլոգիայի բաժնի կողմից 1980 թ. իրականացված հետազոտությունները[7]:

Աղյուսակ 1

Սոցիալական արժեքների կառուցվածքը, %

Արժեքներ	Հաճախականություն
Աշխատանք ունենալը	86,7
Աշխատանքային կարիերան	18,7
Աշխատավարձը	39,3
Ընտանիքը	92,7
Ընկերները	41,7
Հանգստի կազմակերպումը	22,9
Կրոնը	31,0
Առողջությունը	91,1
Կրթությունը	61,2
Քաղաքականությունը	7,5
Ճանապարհորդելը	12,2
Այլ պատասխան	1,6

փոխման միտումները եվրոպական երկրներում: Վերջին տարիներին դրանք իրականացվում են երկու տարին մեկ անգամ: Մասնակից երկրների թվաքանակը երբեմն փոփոխվում է: 2014թ. հետազոտության մեջ ընդգրկվել են 22 եվրոպական երկիր, այդ թվում նաև Իսրայելը: Մեր հետազոտական հարցաթերթում նույնպես տեղադրվել են ԵԱՀ հետազոտություններում տեղ գտած որոշ արժեքներ՝ նպատակ ունենալով ստանալ համեմատական նյութեր: 1999–2000 թթ. այդ հետազոտության ծրագրում սոցիալական արժեհամակարգի վերաբերյալ հարցադրումները հնարավորություն են տալիս որոշ զուգահեռներ անցկացնել մեր իրականության հետ: ԵԱՀ հետագա հետազոտություններում կիրառվել են արժեքների դասակարգման այլ սկզբունքներ, որոնք նույնպես հնարավորություն են ընձեռում որոշ համեմատության եզրեր գտնել

7 1980 թ. հետազոտության հարցաթերթում տեղադրված ձևայնացված հարցն այլ ձևակերպում և պատասխանների տարբերակներ ուներ, որը հնարավորություն է տալիս համեմատություններ իրականացնել 2016 թ. նյութերի սակավաթիվ արժեքների հետ:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ի տվյալները, բնակչության ընդհանուր արժեհամակարգի կառուցվածքում ընտանիքը, առողջությունը և աշխատանք ունենալը առաջնային նշանակություն ունեն: 1980 թ. նույնպես բնակչության արժեհամակարգում ընտանիքը առաջին հորիզոնականում էր, այնուհետև կարևորվել են նյութական ապահովվածությունը և աշխատանքը: Այս փաստը վկայում է այն մասին, որ հայ ժողովրդի համար ընտանիքը մնում է որպես առաջնային արժեք:

Մեր կողմից իրականացրած խորացված հարցազրույցներում գրանցված փաստերը թույլ են տալիս որոշ վարկածային նկատառումներ հայտնել արժեքային համակարգի տարրերի փոխհարաբերությունների վերաբերյալ: Արժեքներն ունեն վարքի կարգավորիչ գործառույթներ, սուբյեկտների և սոցիալական կառուցվածքների ընդգրկման շրջանակներ ու նպատակներ: Գիտական հետազոտություններում արժեքները վերլուծվում են առանձին-առանձին՝ էական ուշադրություն չհատկացնելով դրանց միջև գոյություն ունեցող կապերին, որը կարող է ունենալ կարևոր գիտական և գործնական նշանակություն: Մեր հարցազրույցների ընթացքում հարցվողները նշում էին առօրյա տարածված պատասխաններ. «աշխատում եմ ընտանիքիս համար», «մտածում եմ աշխատավարձի մասին, որպեսզի ընտանիքս ապահով ապրի», «մասնագիտությունը կարևոր է, որ երեխաս լավ ապագա ունենա», «հանգիստը կարևոր է ընտանիքիս, հատկապես՝ երեխաներիս համար», «առողջությունը կարևոր է ընտանիքիս անդամների համար», «առողջությունն անհրաժեշտ է պահպանել, որ կարողանանք աշխատել և ընտանիքը պահել», «առողջություն որ լինի, մնացած հարցերը կլուծենք» և ընտանիքին առնչվող այս կարգի բազմաթիվ պատասխաններ: Նշված փաստերը վկայում են այն մասին, որ բազմաթիվ սոցիալական արժեքներ փոխկապակցված են ծառայում են որոշակի նպատակի և դրանցից մեկը գերակշռող դեր ունի՝ ընդգրկելով իր մեջ մյուսներին՝ իրենց նպատակներով հանդերձ:

Այս երևույթը համընդհանուր բնույթ չի կարող ունենալ: Դրա կրողները կոնկրետ սոցիալական շերտերն են և հնարավոր է՝ իրենց էթնիկ առանձնահատկություններով հանդերձ: Գոյություն

ունեն բազմաթիվ հետազոտություններ, որոնցում ապացուցվում է արժեքների նպատակների «եսակենտրոն» բնույթը: Ավելին, որոշ երկրներում անձնական կարիերայի համար գերադասվում է սահմանափակել երեխաների թվաքանակը, որը նպաստում է մեկ երեխայով ընտանիքների թվաքանակի աճին[8]:

Մեր հարցումների նյութերը վկայում են, որ բոլոր տարիքային խմբերի շրջանում ընտանիքը առաջնային նշանակություն ունի, որը թույլ է տալիս ենթադրել, որ հայ արժեհամակարգում ընտանիքը պահպանում է իր հաստատուն տեղը[9]: Համեմատելով հայ արժեհամակարգը եվրոպական իրականության հետ՝ կարելի է նկատել որոշակի ընդհանրություններ: ԵԱՀ 1999–2000 թթ.-ի նյութերում կարևոր արժեքներ են նշվել ընտանիքը՝ 84%, աշխատանքը՝ 58%, ընկերները, ծանոթները՝ 40%, ազատ ժամանակը՝ 32%, քաղաքականությունը՝ 7%, կրոնը՝ 20%[10]:

Ըստ 2014թ. ԵԱՀ-ի եվրոպական 22 երկրներում քաղաքականությամբ շատ հետաքրքրվողների թիվը տատանվում է 2%-ից՝ Լիտվայում, առավելագույնը՝ 21% Գերմանիայում և Դանիայում: Այդ հետազոտության մեջ կրոնական վարքի վերաբերյալ հարցերից հետաքրքիր է այն, որ իրենց խիստ հավատացյալ են համարում 5%-ը, իսկ ընդհանրապես հավատացյալ չեն համարում՝18%-ը: Սակայն, եկեղեցու հետևորդներ համարողների թվաքանակը տատանվում է 91%-ից՝ Լեհաստանում, մինչև Շվեդիան՝ 30% և Չեխիան՝ 16%[11]: Բերված այս տվյալները հետագա մանրակրկիտ համեմա-

8 Ընտանիքի այս տիպն անվանվում է «կարիերային» և այժմ տարածվում է տարբեր տարածաշրջաններում: *Верещагина А.В., Шахбанова М.М.* Этнокультурная специфика демографического поведения дагестанской семьи// Социологические исследования, 2013, N 6, с. 79.

9 Կարելի է այն պայմանականորեն անվանել «ընտանիքակենտրոն»:

10 *Матрикас А.А.* Семья как ценность: Состояние и перспективы ценностного выбора в странах Европы// Социологические исследования, 2004, N 5, с. 67.

11 Հետազոտության մեջ ընդգրկված երկրների թվում է նաև Իսրայելը, որտեղ իրենց եկեղեցու հետևորդներ են համարել հարցվողների 99%-ը: The ESS-Европейское Социальное Исследование. http://www.ess-ru.ru/. (14.09.2017)

տական ուսումնասիրության կարիք ունեն, սակայն մեր իրականության հետ նկատելի են և՛ ընդհանրություններ, և՛ առանձնահատկություններ: Ըստ 1980 թ.-ի Հայաստանում իրականացված հետազոտությունների՝ իրենց հավատացյալ էին համարում 41,0%-ը, տատանվում էին՝ 20,0%-ը, չէին հավատում՝ 34,0%-ը: Անգամ խորհրդային տարիներին կրոնի նկատմամբ հալածանքների պայմաններում, հարցաթերթում տեղադրված «կրոնի նկատմամբ պետք է պայքարել» պատասխանի տարբերակին դրական են պատասխանել հարցվողների ընդամենը 5,0%-ը[12]: Կրոնական վարքագծի վերաբերյալ էթնոսոցիոլոգիական հետազոտությունների տվյալների համաձայն՝ 2008 – 2009 թթ. Հայաստանի Իջևան և Կապան քաղաքներում հավատում էին համապատասխանաբար՝ 70,0 և 81,6%-ը, որն ընդհանուր առմամբ բնութագրական է ողջ հանրապատետության համար[13]: Բավականին հետաքրքիր են ԵԱՀ-ի ընտանիքին առնչվող հարցերի տվյալները: Շատ է խոսվում Եվրոպայում ընտանիքի ինստիտուտի անցանկալի ձևափոխումների մասին, որոնք անընդունելի են աշխարհի բազմաթիվ ժողովուրդների համար: Ինչ խոսք, փաստերը վկայում են դրա մասին (այդ հարցը կքննարկվի շարադրանքի հաջորդ հատվածում), սակայն դրանց տարածման մասշտաբների մասին ստացված տվյալներն ապացուցում են, որ ընտանիքն այնուամենայնիվ, առաջնային արժեք է հանդիսանում նաև եվրոպական երկրներում: Ըստ ԵԱՀ-ի տվյալների՝ պաշտոնապես ամուսնացածների անգամ ամենացածր տոկոսն ունեցող երկրում՝ Էստոնիայում, այն կազմում է 69%, իսկ ամենաբարձրը՝ Լեհաստանում՝ 92%[14]: Այսպիսով, եթե փորձենք համեմատական եզրեր գտնել հայ և եվրոպական իրականության միջև, ապա կարելի է ասել, որ գոյություն ունեն և՛ ընդհանրություններ, և՛ առանձնա-

12 *Մկրտչյան Ս.*, Հայոց տոնածիսական մշակույթ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 252:

13 Նույն տեղում, էջ 263:

14 The ESS-Европейское Социальное Исследование. http://www.ess-ru.ru/ (14.09.2017).

հատկություններ: Այդ ամենով հանդերձ, երկու դեպքում էլ ընտանիքը մնում է որպես առանցքային սոցիալական արժեք:

1.2. Ընտանիքի և ամուսնության նկատմամբ վերաբերմունքը

Ընտանիքի և ամուսնության հիմնախնդիրների ուսումնասիրությունները հիմնվում են տարբեր տեսական մոտեցումների վրա: Կոնկրետ, էմպիրիկ հետազոտություններում կարևորվում են երեք հիմնականները՝ իրականության սոցիալական կառուցման, հաբիտուալիզացման և գենդերային տեսությունները[15]: Այդ բոլոր տեսությունների հիման վրա ՀՀ-ում նույնպես իրականացվել են արդյունավետ ուսումնասիրություններ[16]: Վերլուծելով ընտանիքի ձևափոխումների միտումների մասին բազմաթիվ տեսություններ՝ Վ. Ստանկաունենեն նշում է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հիմնականում գերիշխել են հետևյալ հատկանիշներն ունեցող ընտանիքները՝ երիտասարդությունը վաղ էր կազմում ընտանիք և բացառապես ամուսնության գրանցման հիման վրա, վաղ էին ծնվում առաջին երեխաները, ընտանիքն ունենում էր միջինը 2–3 երեխա, սակավ էին ծնվում արտամուսնական երեխաներ, համատեղ բնակվող զույգերը (հիմնված ոչ պաշտոնական ընտանեկան կապերի վրա) հազվադեպ էին և հասարակական հավանության չէին արժանանում: 1960-ական թթ. կեսին Հյուսիսային, իսկ փոքր ինչ անց Արևմտյան Եվրոպայի երկրներում սկսվեց ընտանիքի ձևափոխման գործընթացը՝ իջավ ամուսնությունների և ծնունդաբերության քանակը, ավելացավ իրավաբանորեն չգրանցված ամուսնությունների քանակը, ընտանիքներն ավելի բարձր տարիքում էին ստեղծվում և ծնվում առաջին երեխաները, ավելա-

15 *Ильиных С. А.* Представления о семье студентов Минска и Новосибирска //Социологические исследования, 2014, N 3, с. 59

16 Գենդերային հիմնախնդիրները ժամանակակից Հայաստանում. Հետազոտությունից դեպի քաղաքականություն (գիտաժողովի նյութեր), Եր., ԵՊՀ հրատ., 2016, *Գարգրցյան Լ. Հարությունյան Ի.*, Գենդերային սոցիալականացում. Գործընթացն ու արդյունքը, Եր., ԵՊՀ հրատ., 2016:

նում էին արտամուսնական երեխաները: Այնուհետև այդ գործընթացները տեղի ունեցան Հարավային Եվրոպայի երկրներում[17]: Եվրոպական երկրներում միայն 1990–1999 թթ. ընթացքում ամուսնությունը վերապրուկ համարողների թվաքանակը 14%-ից հասել է 20%-ի[18]:

Փաստորեն, եվրոպական երկրներում նկատվում է ընտանիքի ավանդական մոդելի ձևափոխումներ, որոնցում առանձնանում են առանց ամուսնությունը գրանցելու զույգերի համատեղ բնակվելը, առանց պաշտոնապես գրանցված ամուսնանալու երեխաներ ունենալը, առանց ամուսնանալու երեխաներ ունենալը: Մեր հետազոտության հիմնական նպատակների թվում առանձնացրել ենք ավանդական ընտանիքի արդի փոփոխությունների նկատմամբ վերաբերմունքը, որը կարող է ուրվագծել հետագա միտումների պատկերը:

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ մեր իրականության մեջ նույնպես նկատվում են հայ ավանդական ընտանիքի ձևերի փոփոխությունների նկատմամբ որոշ հանդուրժողական վերաբերմունք: Դրա մասին են վկայում այն փաստերը, որ «ամուսնությունն իր դարն ապրել է» հարցին համաձայնել են հարցվողների 9,4%-ը, «կարելի է արդարացնել այն կնոջը, ով ցանկանում է երեխա ունենալ՝ առանց ամուսնանալու» հարցին՝ 27,3%-ը, «ծնողների պարտքն է ամեն ինչ անել երեխաների համար» հարցին բացասական պատասխան են տվել 12,2%-ը: Կարևոր է նաև բացահայտել այդ նորամուծությունները կրող սոցիալական շերտերի նկարագիրը:

Այս հարցերի վերաբերյալ կանանց և տղամարդկանց կարծիքները հիմնականում համընկնում են: Որոշ տարբերություն է նկատվում «ամուսնությունն իր դարն ապրել է» հարցի շուրջ, որին դրական պատասխան է տվել տղամարդկանց 12,9%-ը, իսկ կանանց 6,8%-ը և «կարելի է արդարացնել այն կնոջը, ով ցանկանում է երե-

17 *Станкаунете В.* К современной семьи в Литве (Признаки, факторы, установки) // Социологические исследования, 2004, N 5, с. 55.

18 *Матрикас А. А.* նշվ. աշխ. էջ 70–71:

Աղյուսակ 2

Ընտանիքի և ամուսնության վերաբերյալ կարծիքները, %

	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Դժվ. պատ.	Ընդամենը
Երեխան կարող է նորմալ զարգանալ միայն լրիվ ընտանիքում	93,0	6,5	0,5	100,0
Կնոջ կյանքը լիարժեք է, եթե նա երեխաներ ունի	87,2	11,5	1,3	100,0
Ամուսնությունն իր դարն ապրել է	9,4	89,3	1,3	100,0
Կարելի է արդարացնել այն կնոջը, ով ցանկանում է երեխա ունենալ՝ առանց ամուսնանալու	27,3	71,1	1,6	100,0
Ծնողների պարտքն է ամեն ինչ անել երեխաների համար	88,0	12,2	0,0	100,0
Կարելի է արդարացնել արհեստական ընդհատումը, եթե ամուսինները չեն ցանկանում երեխա ունենալ	32,8	63,3	3,9	100,0

խա ունենալ առանց ամուսնանալու» հարցում, որին դրական են պատասխանել կանանց 33,9%-ը իսկ տղամարդկանց 18,4%: Հետաքրքիր է այն փաստը, որ միևնույն ժամանակ կանանց 91,0%-ը գտնում են որ երեխան կարող է նորմալ զարգանալ միայն լրիվ ընտանիքում, 92,3%-ը համաձայն չէ, որ ամուսնությունն իր դարն ապրել է: Կարծիքների այսպիսի հակասականություն արդեն նկատվել է սոցիոլոգիական պրակտիկայում: Վերլուծելով ԵԱՀ-ի 1999թ. հետազոտության տվյալները, Ա.Ա. Մատրիկասը կազմել է աղյուսակ, որը նույնպես պատկերում է նման իրավիճակ (տես՝աղյուսակ 3)[19]:

19 Նույն տեղում, էջ 71:

Աղյուսակ 3

Ընտանիքի ձևավորման վերաբերյալ կարծիքներն ըստ ԵԱՀ-ի հետազոտության, %

Դատողություններ	%
Երեխան կարող է նորմալ զարգանալ միայն լրիվ ընտանիքում	86
Կնոջ կյանքը լիարժեք է, եթե նա երեխաներ ունի	56
Ամուսնությունն իր դարն ապրել է	19
Կարելի է արդարացնել այն կնոջը, ով ցանկանում է երեխա ունենալ՝ առանց ամուսնանալու	43
Ծնողների պարտքն է ամեն ինչ անել երեխաների համար	68
Կարելի է արդարացնել արհեստական ընդհատումը, եթե ամուսինները չեն ցանկանում երեխա ունենալ	54

Վերլուծելով Մինսկի և Նովոսիբիրսկի ուսանողության դիրքորոշումները ամուսնության ձևերի նկատմամբ՝ Ս.Իլյինիխը նույնպես նմանատիպ հակասություններ է բացահայտել: Այստեղ ամուսնության այլընտրանքային տարբերակները հիմնականում բացասական են գնահատվել, միևնույն ժամանակ, դրանց նկատմամբ, հատկապես աղջիկների շրջանում, դրսևորվել է հանդուրժողական վերաբերմունք: Եվ հեղինակը դա բացատրում է գենդերային գործոնով, ըստ որի՝ գենդերը սահմանափակում է անհատական և սոցիալական սուբյեկտը: Գենդերի ազդեցությանը դիմադրելը ուղեկցվում է մտածողության հակասական տեսանկյունների հայտնվելով, այդ թվում նաև ընտանիքի մասին հակասական (աբբերատիվ) պատկերացումներով[20]: Սակայն այս փաստը կարելի է նաև այլ կերպ բացատրել: Պատասխանների նշված տարբերակները հոգեբանական դիրքորոշումներ են, որոնք կարող են պայմանավորվել տարբեր իրավիճակների և գործոնների ազդեցությամբ: Օրինակ, անձը այն կարծիքն է հայտնում է, որ երեխան կարող է նորմալ զարգանալ միայն լրիվ ընտանիքում, սակայն նկատի ունենալով իրավիճակային բազմաթիվ հանգամանքները՝ նա արդա-

20 *Ильиных С. А.* Նշվ. աշխ. էջ 61–62:

բացնում է այն կնոջը, ով ցանկանում է երեխա ունենալ՝ առանց ամուսնանալու: Փաստորեն առաջին դիրքորոշումը լավագույն տարբերակն է համարվում, սակայն այն չիրականանալու դեպքում թույլատրելի է համարվում նաև երկրորդ տարբերակը: Այս դիրքորոշումները խիստ փոխպայմանավորված չեն, այնուամենայնիվ, ներկայացնում են սոցիալական իրականության և ընտանիքի հնարավոր փոփոխման միտումները:

Առանձնահատկություններ են նկատվում նաև տարբեր տարիքային խմբերի միջև:

Աղյուսակ 4.

Տարիքային խմբերի կարծիքներն ընտանիքի և ամուսնության վերաբերյալ (ներկայացվել է «համաձայն եմ» պատասխանի տարբերակը), %

	18–29 տ.	30–49 տ.	50 և բարձր տ.
Երեխան կարող է նորմալ զարգանալ միայն լրիվ ընտանիքում	92,7	92,6	93,4
Կնոջ կյանքը լիարժեք է, եթե նա երեխաներ ունի	87,8	89,7	84,9
Ամուսնությունն իր դարն ապրել է	14,6	8,1	7,8
Կարելի է արդարացնել այն կնոջը, ով ցանկանում է երեխա ունենալ՝ առանց ամուսնանալու	15,9	29,4	31,3
Ծնողների պարտքն է ամեն ինչ անել երեխաների համար	84,1	90,4	88,0
Կարելի է արդարացնել արհեստական ընդհատումը, եթե ամուսինները չեն ցանկանում երեխա ունենալ	22,0	39,0	33,1

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, երիտասարդներն ավելի են հակված համարելու, որ ամուսնությունն իր դարն ապրել է: Միևնույն ժամանակ նրանց մոտ հակառակ պատկերն է նկատվում հաջորդ երկու հարցերի վերաբերյալ: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ երիտասարդները դեռևս ամուսնու-

թյան տարիքում են, ունեն ակնկալիքներ և հայ ավանդական հասարակական կարծիքը չի խրախուսում առանց ամուսնանալու երեխաներ ունենալը, որը վարքի նորմ է թելադրում նրանց: Սույն հարցի վերաբերյալ տվյալներն ըստ հարցվողների կրթական մակարդակի, ցույց են տալիս էական տարբերություններ մեկ հարցի վերաբերյալ, այն է՝ առանց ամուսնանալու երեխա ունենալը, որին համաձայն են միջնակարգ կրթություն ունեցողների 25,0%-ը, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների 43,0%-ը: Սա կրկին վկայում է նորամուծությունների ներթափանցման գործընթացում կրթության դերի մասին: Մեր հետազոտական վարկածներով ենթադրվում էր, որ բնակավայրի տիպը կարող է ազդեցություն ունենալ ընտանեկան համակարգի վրա, քանի որ գյուղական բնակավայրը հայ ավանդական մշակույթի, այդ թվում՝ ընտանիքի պահպանման օջախն է: Այդ ենթադրությունները հիմնականում չհաստատվեցին, որը վկայում է գյուղի և քաղաքի միջև ոչ վաղ անցյալում առկա տեղեկատվական, սոցիալ-մշակութային և այլ կարգի տարբերությունների համահարթման մասին: Այնուամենայնիվ, որոշ առանձնահատկություններ գրանցվել են: Եթե առանց ամուսնանալու երեխա ունենալու նկատմամբ դրական վերաբերմունք են արտահայտել Երևանի հարցվողների 39,2%-ը, ապա գյուղական բնակչության 20,0%-ը: Էական տարբերություն է գրանցվել նաև արհեստական ընդհատումների հարցում, որի նկատմամբ դրական են արտահայտվել Երևանի հարցվողների 40,8%-ը, հանրապետության այլ քաղաքների 33,0%-ը իսկ գյուղական բնակավայրերի 26,0%-ը: Այս փաստը վկայում է, որ գյուղական բնակչությունը, քաղաքայինի համեմատ, ինչ որ չափով դեռևս ավելի է պահպանում մեր ավանդական արժեքները

1.3.Երեխաների մասնագիտության նախապատվությունը

Մասնագիտությունը հասարակական կյանքում մեծ դեր է կատարում և ունի բազմաբնույթ ազդեցություններ: Այն հնարավորություն է տալիս լուսաբանել սոցիալական կառուցվածքին, կարգավիճակին, սոցիալական հեղինակությանը, սոցիալական շարժերին, տնտեսությանը, աշխատաշուկային, միջպետական միգրացիոն

հոսքերին և բազմաթիվ այլ խնդիրներին առնչվող հարցերը: Մասնագիտական կողմնորոշումները կադրային ներուժի հիմքն են հանդիսանում, որը մեծապես կանխորոշում է երկրների ընդհանուր զարգացման գործընթացը: Միևնույն ժամանակ, մասնագիտացման ոլորտում տեղ գտած խնդիրները կարող են ունենալ բավականին բացասական հետևանքներ՝ միջոցների փոշիացում, նյութական վիճակի վատթարացում, միգրացիա, հոգեբանական խնդիրներ և այլն: Եվ պատահական չէ, որ մասնագիտությունները հանդիսանում են միջազգային և ազգային կառույցների մանրակրկիտ ուսումնասիրության խնդիր: Արդեն 1919 թ. ստեղծվել է Աշխատանքի միջազգային կազմակերպությունը՝ որպես Ազգերի Լիգայի մասնագիտացված կառույց, որի նպատակն է եղել մասնագիտությունների ստանդարտների մշակումը և օգնելու երկրներին բարելավել աշխատանքի վիճակագրության որակը, հավաստիությունը, համեմատականությունը, ինչպես նաև զարգացնելու տարբեր ուղղությունների համեմատական հետազոտությունների մեթոդաբանությունը[21]: Այնուհետև այդ աշխատանքների ծավալներն ընդլայնվեցին, մշակվեցին, մասնագիտությունների բազմաթիվ դասակարգիչներ, որոնք աստիճանաբար կատարելագործվեցին: Դրանց հիմքում ընկած են աշխատանքի հետ կապված բազմաթիվ հատկանիշներ՝ մասնագիտությունը, որակավորումը, կրթությունը, աշխատանքի ոլորտը, պաշտոնը և այլն: Այսօր եվրոպական երկրներում՝ որոշ տեղայնացումներով հանդերձ, հիմնականում օգտագործվում է մասնագիտությունների ISCO–88 դասակարգիչը: Այդ դասակարգչի վրա է հիմնված նաև ՀՀ «Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների դասակարգիչ»-ը (ՀՊ–010–2013):

Մասնագիտությունների այդ բարդ համակարգի շուրջ՝ ըստ անհրաժեշտ կիրառական կամ տեսական նպատակների, իրակա-

21 *Симончук Е.* Классификатор профессий ISCO–88: история разработки, концептуальные основания, модель операционализации, применение в социологических исследованиях // Социология: теория, методы, маркетинг, 2008 N 3, с. 27.

նացվում են ծավալուն, բազմապրոֆիլ, նեղ մասնագիտական հիմնարար հետազոտություններ: Ձանգվածային սոցիոլոգիական հետազոտություններում հնարավոր չէ գրանցել մասնագիտությունների այդ ծավալուն ցանկը, քանի որ դրանք շատ նեղ մասնագիտություններ են և բնակչության ստվար զանգվածը չի կարող ծանոթ լինել դրանց մեծ մասին: Բնակչության շրջանում մասնագիտությունների մասին պատկերացումներն ավելի ընդհանրացված են, կարծրատիպային, ուստի սույն շարադրանքում հնարավոր չէ մանրամասն անդրադառնալ մասնագիտություններին առնչվող բազմաթիվ հարցերի[22]: Մեր հիմնական նպատակն է լինելու՝ ուրվագծել բնակչության շրջանում առավել ցանկալի մասնագիտությունների շրջանակներն ընտանեկան արժեհամակարգի տեսանկյունով: Փորձ կկատարվի բացահայտելու դրանց ձևավորման պատճառները և փոփոխման միտումները[23]:

Մասնագիտական կողմնորոշումները ձևավորվում են տեղեկատվության փոխանցման տարբեր աղբյուրների միջոցով՝ ընտանիքի, ազգականների, ընկերների, ծանոթների, ՁԼՄ-ների, տեսողական այլ միջոցների (պատերին փակցված հայտարարություններ, պաստառներ) և այլնի: Այնուամենայնիվ, երեխաների սոցիալականացման հիմնական օղակն ընտանիքն է, որը մեծ ազդեցություն է գործում երեխաների մասնագիտական կողմնորոշումների և կոնկրետ մասնագիտության ընտրության վրա: Ավելին, երեխանե-

22 Դրա ուսումնասիրման բարդության մասին է վկայում այն փաստը, որ ՀՀ Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների դասակարգիչում (ՀՊ–010–2013) միայն բանվորների մասնագիտությունների, մասնագիտացման 01. խմբում ընդգրկված են 714, 02. -ում՝601, 014-ում՝ 306 մասնագիտություններ:

23 Նախընտրելի մասնագիտությունները լայնորեն ուսումնասիրվում են սոցիոլոգիայում մասնագիտության հեղինակության տեսանկյունով: Մասնագիտության հեղինակությանն առաջին անգամ անդրադարձել է Է. Դյուրկհեյմը, իսկ առաջին կոնկրետ սոցիոլոգիական ուսումնասիրությունն իրականացրել է ամերիկյան սոցիոլոգ Ջորջ Կաունտսը 1925թ.: *М. Г. Рудневъ* МЕТОДОЛОГИЯ И ОСНОВНЫЕ РЕЗУЛЬТАТЫ ИССЛЕДОВАНИЙ ПРЕСТИЖА ПРОФЕССИЙ В ЗАРУБЕЖНОЙ СОЦИОЛОГИИ. https://www.hse.ru/data/2010/12/31/1208184671/11.pdf(23.09.2017.)

րի մասնագիտության ընտրության ձևավորման վրա հաճախ ազդում է նաև ծնողների կամ հարազատների մասնագիտությունը, տեղի է ունենում մասնագիտության միջսերնդային փոխանցման գործընթաց:

Մեր նախնական վարկածների համաձայն՝ ենթադրվում էր, որ երեխաների ցանկալի մասնագիտությունները կունենան գենդերային բնույթ, ուստի հարցերը կազմվեցին աղջիկների և տղաների համար առանձին: Ստացված մասնագիտությունների ցանկը փոքր չէր, ուստի մենք փորձել ենք դրանք խմբավորել նյութերի վիճակագրական մշակման սկզբունքների համաձայն:

Աղյուսակ 5

Գերադասելի մասնագիտությունները, %

Մասնագիտություններն ըստ ոլորտների	Գերադասելի մասնագիտությունները	
	Աղջիկների համար	Տղաների համար
Առողջապահություն	51,3	35,1
Դատաիրավական	7,5	24,7
Տնտեսական	12,5	23,4
Արհեստներ	18,2	15,6
Գիտություն, կրթություն	29,9	5,2
Ճարտարապետություն	–	8,9
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	4,2	8,3
Սպորտ	–	6,0
Արվեստ	13,0	6,0
Ռազմական	–	5,5
Լեզուներ	6,5	–
ՋԼՄ-ներ	2,9	–
Այլ մասնագիտություններ	1,6	7,6
Միևնույնն է	2,6	3,4
Դժվարանում եմ պատասխանել	4,4	5,7

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի նյութերը, որոշակի առանձնահատկություններ են նկատվում աղջիկների և տղաների համար գերադասելի մասնագիտությունների ցանկում: Չնայած, որ երկու սեռերի համար էլ ամենահեղինակություն վայելող մասնագիտությունը առողջապահության ոլորտն է, այնուամենայնիվ, ակնհայտ է դրանց միջև տոկոսային էական տարբերությունը: Մեր կողմից խմբավորված տարբերակով առաջին հայացքից արհեստների հարցում էական տարբերություններ չեն նկատվում, այնուամենայնիվ, դրանց խմբավորման մեջ ընդգրկված աղջիկների և տղաների արհեստներն էապես տարբերվում են: Տղաների արհեստների ցանկում տեղ են գտել ավտովերանորոգողը, փականակագործը, զոդողը, մեխանիկը, փայտամշակողը, էլեկտրիկը, վարսահարդարը, խոհարարը, դերձակը, իսկ աղջիկների ցանկում՝վարսահարդարը, դիմահարդարը, մատնահարդարը, խոհարարուհին, դերձակը, ասեղնագործողը: Մյուս մասնագիտությունների հարցում նկատելի են էական տարբերություններ: Աղջիկների համար գերադասվում են կրթության, գիտության, արվեստի բնագավառները, իսկ տղաների համար՝ դատաիրավական և տնտեսական ոլորտները: Եվ եթե համեմատում ենք աղյուսակում առկա մյուս մասնագիտությունները, ապա նկատվում են ակնհայտ տարբերություններ: Հստակ ուրվագծվում է մասնագիտությունների գենդերային բնույթը: Սա ապացուցում է, որ մասնագիտությունը նույնպես հանդիսանում է ընտանեկան արժեհամակարգի տարր և մեր հասարակական կարծիքը, ընտանիքը և այլ սոցիալական միկրոմիջավայրեր ուղղորդում են մասնագիտական կողմնորոշման գործընթացը՝ տղաների և աղջիկների մասին ընդունված պատկերացումներին համապատասխան:

Կարևոր է իմանալ նաև, թե սույն երևույթը չունի արդյո՞ք առանձնահատկություններ տարբեր սոցիալական շերտերի շրջանում: Այս հարցի պատասխանը կարող է հնարավորություն ընձեռել բացահայտելու դրա ձևավորման, պահպանման և փոփոխման միտումները: Համեմատելով կանանց և տղամարդկանց նախապատվությունները՝ նկատվում են որոշ առանձնահատկություններ: Տղաների հա-

Աղյուսակ 6

Տղաների և աղջիկների գերադասելի մասնագիտությունները, %

Մասնագիտություններն ըստ ոլորտների	Աղջիկների մասնագիտությունները			Տղաների մասնագիտությունները		
	18–29 տ.	30–49 տ.	50 և բարձր	18–29 տ.	30–49 տ.	50 և բարձր
Առողջապահություն	52,4	4,3	52,4	41,5	37,4	30,1
Դատաիրավական	3,6	13,2	4,	31,7	23,5	22,3
Տնտեսական	9,8	11,8	11,5	24,4	25,0	21,7
Արհեստներ	18,3	13,2	22,3	6,1	11,8	23,5
Գիտություն, կրթություն	24,4	29,4	33,1	1,2	7,4	5,4
Ճարտարապետություն	–	–	–	2,4	6,6	13,9
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	2,4	5,1	4,2	3,6	7,4	11,4
Սպորտ	–	–	–	11,0	7,4	2,4
Արվեստ	17,0	13,2	10,8	7,3	9,6	2,4
Ռազմական	–	–	–	3,7	7,4	4,8
Լեզուներ	3,6	8,1	6,6	2,4	6,6	10,8
ՋԼՄ-ներ	3,6	2,2	3,0	–	–	–
Այլ մասնագիտություններ	–	2,2	1,8	2,4	6,6	10,8
Միևնույնն է	1,2	2,9	3,0	1,2	3,7	4,2
Դժվարանում եմ պատասխանել	6,1	5,1	3,0	8,5	7,4	3,0

մար մասնագիտությունների թվում առողջապահության ոլորտը նշել են կանանց 41,2%-ը, իսկ տղամարդկանց՝ 27,%-ը, որը, ըստ մեզ, վկայում է հայ կանանց ավանդական գենդերային մտածելակերպի մասին: Սակայն հետաքրքիր է, որ դատաիրավական ոլորտը նշել են կանանց 27,6%-ը իսկ տղամարդկանց՝ 20,9%-ը, տնտեսական ոլորտը, համապատասխանաբար, 27,6%-ը և 17,8%-ը, գիտությունն ու կրթությունը, համապատասխանաբար, 0,5%-ը և 8,0%-ը: Մյուս մասնագիտությունների հարցում տարբերություններ չեն գրանցվել: Այս փաստերը կարելի է բացատրել ընտանիքների նյութական վի-

ճակի համար կնոջ պատասխանատվությամբ: Հայտնի է, որ տնտեսական և դատահիրավական ոլորտների եկամուտներն ավելի բարձր են, ուստի կանայք ավելի են գերադասում իրենց երեխաներին ուղղորդել դեպի այդ մասնագիտությունները, որը նրանց ապագա ընտանիքներին կապահովի ավելի բարեկեցիկ կյանք:

Տարիքային տարբեր խմբերի շրջանում աղջիկների նախընտրելի մասնագիտությունների ցանկում էական առանձնահատկություններ չեն արձանագրվել: Դա վկայում է այն մասին, որ աղջիկների ապրելակերպի վերաբերյալ պատկերացումները բավականին կարծր դիրքորոշումներ են և դժվարությամբ են ենթարկվում միջսերնդային փոփոխությունների: Տղաների գերադասելի մասնագիտությունների հարցում նկատվում են միջսերնդային որոշ տարբերություններ: Այսպես, առողջապահության ոլորտին նախապատվություն են տվել 18–29 տարեկան հարցվողների 41,5%-ը, 30–49 տարեկանների 37,5%-ը, 50 և բարձր տարիք ունեցողների 30,1%-ը, դատահիրավական ոլորտին՝ համապատասխանաբար 31,7, 23,5 և 22,3%-ը, սպորտին՝11,0, 7,4, և 2,4%-ը: Փաստորեն, ավագ սերնդի համեմատ, երիտասարդության համար այս երեք մասնագիտություններն ավելի նախընտրելի են: Այլ պատկեր է նկատվում արհեստների հարցում, որը գերադասել են երիտասարդների 6,1%-ը, 30–49 տարեկանների 11,8%-ը, 50 և բարձր տարիքի հարցվողների 23,5%-ը: Այստեղ կարող է դրսևորվել ոչ միայն մասնագիտությունների համապատասխանությունը աշխատաշուկային, այլև մասնագիտության հեղինակությունը, որն աշխատանքի ընտրության կարևորագույն դրդապատճառներից է: Աշխարհի բազմաթիվ երկրներում, անգամ ծանր տնտեսական իրավիճակում, «հեղինակություն» չվայելող աշխատանքներից տեղաբնիկ ազգաբնակչությունը խուսափում է[24]: Սակայն մեզ ավելի է մտահոգում այն փաս-

24 Օրինակ՝մոսկովյան և պետերբուրգյան փողոցները մաքրող հավաքարարների ինչսուն տոկոսից ավելին Տաջիկստանից, Ուզբեկստանից և Ադրբեջանից եկած աշխատանքային միգրանտներն են: Մայրաքաղաքներում միշտ հավաքարար են աշխատել այլ բնակավայրերից եկածները: Как работают дворники в разных странах. http://venividi.ru/node/31581 (22.10.2017)

տը, որ երիտասարդների ընդամենը 1,2%-ն է նշել գիտության և կրթության ոլորտը, որը կարող է ծանր հետևանքներ ունենալ հանրապետության ապագայի համար:

Մասնագիտական կողմնորոշումների ձևավորման վրա ազդող գործոնների թվում նշվում է ծնողների կրթական մակարդակը: Սակայն մեր հարցումների տվյալները երեխաների մասնագիտական նախապատվություններում բավականին աննշան տարբերություններ են արձանագրել կրթական տարբեր մակարդակ ունեցողների միջև: Աղջիկների մասնագիտությունների թվում միակ տարբերությունն այն է, որ բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում գիտությունը և կրթությունը նշել է 39,8%-ը, միջին մասնագիտական և միջնակարգ կրթություն ունեցողների՝ համապատասխանաբար 25,9 և 27,9%-ը, որը որոշ չափով վկայում է կրթության դերի մասին: Այս փաստն այնուամենայնիվ, կրկին անգամ վկայում է աղջիկների ավանդական կերպարի հաստատուն լինելու մասին:

Մեր նախնական վարկածի համաձայն՝ մասնագիտական կողմնորոշումների ձևավորման կարևոր գործոնների թվում կանխատեսվել էր բնակավայրի տիպը: Դրա հիմնավորման համար հիմք էր հանդիսացել խորհրդային շրջանում համեմատաբար միատիպ սոցիալական ենթակառուցվածքներ ունեցող Հայաստանի երկու քաղաքային բնակավայրերի՝ Լենինականի (ներկայիս Գյումրին) և Կիրովականի (Վանաձորի) հարցումների նյութերը, որոնցում արձանագրվել էին որոշակի առանձնահատկություններ: Դրա հիման վրա կատարվել էր այն եզրակացությունը, որ մասնագիտությունների հեղինակությունը ձևավորվում է ոչ միայն անհատական բնույթի գործոնների, այլև խմբային, այդ թվում նաև «համաքաղաքային» մասշտաբի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բարդ մեխանիզմների ազդեցությամբ, որն իր հերթին կարող է պայմանավորված լինել պատմական, ավանդութային բազմաթիվ գործոններով[25]:

25 *Օհանջանյան Ռ.Ս.* Մասնագիտության ընտրությունը պայմանավորող գործոնների մասին, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական վեցերորդ գիտական նստաշրջանի նյութեր, «ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն», Գյումրի, 2004, էջ 92:

Սույն հետազոտության ընտրանքի ծավալները հնարավորություն չեն տալիս համեմատություններ կատարել առանձին բնակավայրերի միջև, այնուամենայնիվ, նկատվում է հետաքրքիր օրինաչափություն: Արդի ժամանակաշրջանում մասնագիտությունների ընտրության հարցում տարբեր տիպի բնակավայրերի միջև տարբերությունները բավականին թույլ են դրսևորվում: Դրանց թվում կարելի է նշել այն, որ տղաների համար առողջապահության ոլորտը գերադասելի են համարել Երևանի հարցվողների 44,8%-ը, մյուս քաղաքային բնակչության՝ 33,0%-ը, իսկ գյուղական բնակչության՝ 28,7%-ը և տեղեկատվական տեխնոլոգիաները, համապատասխանաբար՝ 12,8%-ը, 11,0%-ը և 2,7%-ը: Իսկ աղջիկների մասնագիտությունների առանձնահատկությունների պատկերը հետևյալն է. Երևանում դատաիրավական ոլորտին նախապատվություն են տվել 12,8%-ը, մյուս քաղաքներում՝ 4,6%-ը, գյուղերում՝ 5,3%-ը: Դա թերևս, կարելի է բացատրել նրանով, որ հետխորհրդային շրջանում կատարված արմատական քաղաքական, իրավական, սոցիալ-տնտեսական, տեղեկատվական և այլ կարգի ինստիտուտային փոփոխությունները նպաստել են բնակավայրերի միջև արժեհամակարգի տարբերությունների համահարթմանը:

Աղյուսակ 7

Ընտանիքի նյութական վիճակի ազդեցությունը մասնագիտության ընտրության վրա (տղաների մասնագիտությունները)%

Նախընտրելի մասնագիտությունները	Ընտանիքի նյութական վիճակի գնահատումը				
	Շատ վատ	Ավելի շուտ վատ	Միջին	Ավելի շուտ լավ	Շատ լավ
Առողջապահություն	42,1	40,4	33,0	34,6	17,8
Տնտեսական	10,5	21,0	24,2	28,2	17,8
Արհեստներ	36,8	17,5	14,4	7,7	11,1
Սպորտ	5,3	10,5	9,8	6,4	11,1

Մասնագիտությունը և դրան համապատասխան աշխատանքը ընտանիքի եկամուտների ապահովման հիմնական միջոցն է, ուս-

տի կարելի էր ենթադրել, որ մասնագիտության նախապատվությունը հնարավոր է, որ պայմանավորված լինի նաև ընտանիքի նյութական վիճակով, որը հիմք է տալիս ենթադրելու, որ, ի տարբերություն անձնային այլ հատկանիշների, այն կարելի է դիտարկել որպես ընտանեկան արժեքների առանցքային հատկանիշ:

Աղյուսակ 8

Ընտանիքի նյութական վիճակի ազդեցությունը մասնագիտության ընտրության վրա (աղջիկների մասնագիտությունները)%

Նախընտրելի մասնագիտությունները	Ընտանիքի նյութական վիճակի գնահատումը				
	Շատ վատ	Ավելի շուտ վատ	Միջին	Ավելի շուտ լավ	Շատ լավ
Առողջապահություն	63,2	61,4	44,8	53,8	50,0
Տնտեսական	10,5	21,0	24,2	28,2	17,8
Արհեստներ	36,8	17,5	14,4	7,7	11,1
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	5,3	10,5	9,8	6,4	11,1

Ինչպես ցույց են տալիս աղյուսակների տվյալները, տնտեսական ոլորտը և սպորտը տղաների համար ավելի են գերադասում իրենց նյութական վիճակը լավ և շատ լավ գնահատող հարցվողները, իսկ առողջապահությունը, արհեստներն ու արվեստը՝ նյութական վիճակը վատ գնահատողները: Իրենց նյութական վիճակը վատ գնահատողներն աղջիկների մասնագիտություններում ավելի են նախընտրել առողջապահությունը, դատաիրավական ոլորտը, գիտությունն ու կրթությունը: Նյութական վիճակը լավ գնահատողների շրջանում նկատելի է նույն մասնագիտությունների սակավ գրավչությունը, որը վկայում է նյութական գործոնի որոշակի ազդեցությունների մասին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՄՈՒՍՆՈՒ ԵՎ ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐՆԵՐՆ ՈՒ ԴԵՐԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

2.1. Ամուսնու և կնոջ կերպարները

Ամուսնու և կնոջ նկատմամբ պահանջների մասին կարելի է պատկերացում կազմել նրանց իդեալական կերպարների միջոցով, որոնք ընտանիքի ինստիտուտի ուսումնասիրությունների շրջանակներում ընդգրկված բազմաթիվ հարցերի թվում առ այսօր բավականին բարդ տեսական քննարկումների առարկա են: Կերպարն ընկած է մարդու ընկալման, մտածողության, լեզվի և վարքի հիմքերում, որն ստիպում է բազմակողմանի ուսումնասիրություններ իրականացնել ֆիզիոլոգիայի, հոգերուժության, հոգեբանության, սոցիոլոգիայի, բանասիրության և այլ բնագավառներում: Կերպարների այդ անսահման բազմազանության մեջ սոցիոլոգիայում կարևորվում են անձի, զանազան սոցիալական խմբերի ընդհանրացված կերպարները, որոնք նույնպես տարաբնույթ են: Մանրամասն ուսումնասիրելով իդեալական տիպերի նկատմամբ մոտեցումները, ներկայացնելով դրա ուսումնասիրման հետ կապված հարցականները, այնուամենայնիվ նշվում է, որ այն իրենից ներկայացնում է թույլատրելի մոտիվացիա՝ դրդելով, կանխորոշելով վարքը[26]: Սույն շարադրանքի նպատակը միայն իդեալական կնոջ և ամուսնու կերպարներին առնչվող հարցերի քննարկումն է, որն ընտանեկան արժեհամակարգում կարևոր դեր է կատարում:

Կերպարը, հանդիսանալով անձի վարքի հոգեբանական կարևոր կարգավորիչ, պարունակում է նաև փոխադարձ պահանջներ և ակնկալիքներ, որոնց անհամապատասխանությունը միջանձնային հաղորդակցման գործընթացներում կարող է բացասական ազ-

26 *Jacq Coenen-Hunter*, Le type ideal comme instrument de la recherche sociologiqe, Revu francaise de sociologie, 44–3, 2003. p. 544.

դեցություններ ունենալ ամուսնական զույգերի փոխհարաբերությունների վրա: Դա կարող է դրսևորվել հատկապես այն դեպքերում, երբ զույգերը նախամուսնական ծանոթության շրջանում չեն ընկալել իդեալական կերպարին հակասող հատկանիշները և ամուսնանալուց հետո, համատեղ ապրելու ընթացքում, անհանդուրժողականության մթնոլորտի պայմաններում, զգում են այդ անհամապատասխանությունը, որը կարող է բազմազան խնդիրներ հարուցել ընտանիքում: Իդեալական կնոջ և ամուսնու կերպարները նույնպես բազմաթիվ այլ կարգի հատկանիշներն ամբողջացնող հոգեբանական ձևավորումներ են, ուստի զուգահեռներ են անցկացվում կարծրատիպերի հետ: Ինչ խոսք, կարծրատիպը նույնպես կերպար է, սակայն դրանց ձևավորման աղբյուրները, միջավայրը, մեխանիզմները յուրահատուկ են, որով պայմանավորվում է դրանց բովանդակությունը, գործառույթները և վարքի կարգավորման հնարավորությունները: Ի տարբերություն այլ կերպարների, որոնցից շատերը ձևավորվում են ոչ ամբողջական տեղեկատվության (այդ թվում նաև միջանձնային հաղորդակցության) միջոցով, իդեալական կնոջ և ամուսնու կերպարները ձևավորվում են ավելի լայնածավալ հասարակական կարծիքի ազդեցությամբ, դառնում վարքի ավելի «կարծր» դիրքորոշումներ և կատարում սոցիոնորմատիվ մշակույթի, այդ թվում՝ ընտանիքի ինստիտուտի կարգավորիչի գործառույթներ:

Այս հարցը մենք կփորձենք դիտարկել հետևյալ ուղղություններով՝ կանանց և տղամարդկանց կերպարների կառուցվածքն ըստ բովանդակության, ու դրանց փոփոխման միտումները:

Նյութերի վերլուծության համար որոշակի բարդություն է ներկայացնում նաև կերպարների առանձին հատկանիշների խմբավորումը, որն անհրաժեշտ է նյութի վիճակագրական մշակման առումով: Դրանց խմբավորման փորձերը վաղ պատմություն ունեն: Մոտեցումները նույնպես բազմազան են: Սոցիալական կերպարների ուսումնասիրման մեր փորձը ցույց է տալիս, թե որքան ծավալուն է ընկալման օբյեկտը, այնքան մեծաթիվ և խայտաբղետ են դրանց

վերագրվող հատկանիշները սոցիոլոգիական հարցումներում[27]: Այնուամենայնիվ, առավել նպատակահարմար է գենդերային մոտեցումը, քանի որ այս դեպքում մատնանշվում են սեռերի հատկանիշները: Նման սկզբունքից ելնելով՝ փորձ է կատարվել գենդերային նշանակության դարձվածքաբանական միավորները սիստեմավորել հիմնական ամբողջացնող սեմերի հիման վրա[28]: Սակայն առանձնացված դարձվածքաբանական խմբերի կառուցվածքը որոշակի ճշգրտումների կարիք է զգում: Տարածված է նաև նյութը ներկայացնել՝ ըստ կոնկրետ հատկանիշների, որն առավել հստակ պատկեր է արտացոլում[29]: Սույն շարադրանքում դրանց մի մասը խմբավորվել է նաև ըստ կենսագործունեության ոլորտների, ինչպես օրինակ, աշխատանքայինը և կենցաղայինը:

Կերպարի վերլուծությունը բավականին բարդ է, քանի որ մեր խմբավորման մեջ ընդգրկված անգամ յուրաքանչյուր հատկանիշն է պահանջում մանրամասն միջառարկայական հետազոտություններ: Սակայն այստեղ կսահմանափակվենք միայն հիմնական հատկանիշների և դրանց փոփոխման միտումների վերլուծությամբ: Սոցիոլոգիական հետազոտություններում իդեալական կերպարի հատկանիշներն իրենցից ներկայացնում են կոնկրետ երևույթի

27 *Оганджанян Р. С.* Некоторые вопросы формирования этнических стереотипов в мононациональной среде// Психологический журнал, Том 10, N 1, 1990.

28 *Першай А.* Семантика пола: Репрезентация гендерных отношений во фразеологии. Изд. «Европейский гуманитарный университет», Вильнюс, 2014, с. 73–74.

29 *Օհանջանյան Ռ.* Ավանդականն ու նորը ամուսնու և կնոջ կերպարներում, Հոգեկան առողջությունը և քրիստոնեությունը՝համագործակցում և հաղթահարում: Գիտական աշխատանքների ժողովածու նվիրված քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700 ամյակին և հոգեկան առողջության համաշխարհային օրվան, «Ասողիկ» հրատ., Երևան, 2001, էջ 130–140, Գենդերային հարաբերությունների խճանկար. գենդերային սոցիալականացում, գենդերային հանդուրժողականություն, գենդերային ինքնություն (Սոցիոլոգիական հետազոտությունների տվյալներ) Հ. Գևորգյանի խմբագրությամբ, «Էդիթ Պրինտ» հրատ., Եր., 2011, էջ 83–92, *Գարգոյան Լ. Ա., Հարությունյան Ի. Կ.* Գենդերային սոցիալականացում. Գործընթացն ու արդյունքը, ԵՊՀ հրատ., Եր., 2016, էջ 50–61:

Աղյուսակ 9

Կնոջ և ամուսնու գերադասելի հատկանիշները, %

Հատկանիշներ	Կնոջ գերադասելի հատկանիշները	Ամուսնու գերադասելի հատկանիշները
Համեստություն	54,9	–
Հոգատարություն	41,9	53,6
Աշխատանքային հատկանիշներ	8,6	48,2
Կամային հատկանիշներ	–	33,9
Հանդուրժողականություն	26,8	24,5
Կնոջ նկատմամբ լավ վերաբերմունք	–	21,4
Մաքրասիրություն	20,6	–
Մտավոր հատկանիշներ	19,8	16,7
Ազնվություն	9,1	19,5
Խնայող լինի	9,4	–
Սիրող լինի	8,3	–
Բարոյական լինի	8,0	6,2
Կենցաղային այլ հատկանիշներ	6,5	–
Արտաքին տեսք	6,0	–
Հարգանք	5,5	–
Այլ հատկանիշներ	4,9	18,0
Դժվ. է պատ.	1,3	2,5

նկատմամբ անձի որոշակի դիրքորոշում՝ հանդիսանալով հասարակության կողմից առավել ընդունված վարքի կաղապարներ: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ բերված ցանկի տոկոսային հարաբերությունը չի մատնանշում մյուս հատկանիշների անտեսում: Անձը կարող է նշել որևէ հատկանիշ՝ մյուսները համարելով ինքնաբերաբար բնական, պարտադիր պայման և դրանց չանդրադառնալ: Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, կանանց և տղամարդկանց գերադասելի անձնային հատկանիշներն էականորեն տարբերվում են: Կանանց հատկանիշները հիմնականում ֆո-

կուսացված են ընտանեկան կյանքի ապահովման և ներընտանեկան հարաբերությունների կարգավորման վրա: Տղամարդկանց նկատմամբ հասարակական պահանջներում կարևորվում են աշխատանքային և կամային հատկանիշները, որոնք ընտանիքի նյութական բարեկեցության նախապայման են: Սակայն նրանց հատկանիշների թվում առավել կարևորվել է հոգատարությունը, հանդուրժողականությունն ու կնոջ նկատմամբ վերաբերմունքը, որը վկայում է ներընտանեկան կյանքի առաջնահերթության մասին: Կիրառական կարևոր նշանակություն ունի կանանց և տղամարդկանց պատկերացումներն իդեալական կնոջ և ամուսնու կերպարների վերաբերյալ: Խնդիրը կայանում է նրանում, որ ներընտանեկան փոխհարաբերությունների, ամուսնալուծությունների պատճառների վերլուծություններում առ այսօր պատշաճ ուշադրություն չի հատկացվում իդեալական կերպարների դերին: Սոցիոլոգիայում ամուսնալուծությունների պատճառների դասակարգումներում հայտնի են նաև նախամուսնական գործոնները, որոնք հիմնականում ունեն սոցիալ-ժողովրդագրական, ֆիզիոլոգիական բնույթ: Հոգեբանական ուսումնասիրություններում այդ խնդրի շուրջ անդրադառնում են բազմաթիվ հոգեբանական գործոնների, սակայն խիստ հպանցիկ են կնոջ և ամուսնու կերպարների դերի բացահայտումները: Մենք կարծում ենք, որ ամուսնական զույգերի իդեալական կերպարների անհամապատասխանությունը նույնպես անհրաժեշտ է ընդգրկել ընտանեկան բախումների պատճառների և ամուսնալուծությունների նախամուսնական գործոնների թվում:

Այս տվյալների համաձայն՝ իդեալական կնոջ կերպարում կանանց և տղամարդկանց պատասխաններում էական տարբերությունները նկատելի են «համեստություն», «հոգատարություն», «աշխատանքային հատկանիշներ», «հանդուրժողականություն» և «կնոջ նկատմամբ լավ վերաբերմունք» հատկանիշներում: Այստեղ կարևորվում է կանանց համեստության նկատմամբ տղամարդկանց և կանանց պահանջի տարբերությունը, որը կարող է ընտանեկան համակարգի համար խնդիրներ հարուցել: Տղամարդկանց

Աղյուսակ 10

Կանանց և տղամարդկանց գերադասելի հատկանիշները՝ ըստ հարցվողների սեռի, %

Կերպարային հատկանիշները	Կնոջ հատկանիշներ		Ամուսնու հատկանիշներ	
	իգական	արական	իգական	արական
Համեստություն	46,2	66,9	–	–
Հոգատարություն	49,3	31,9	61,1	43,6
Աշխատանքային հատկանիշներ	31,3	5,5	52,5	42,3
Կամային հատկանիշներ	–	–	30,3	38,7
Հանդուրժողականություն	31,2	20,9	26,7	21,5
Կնոջ նկատմամբ լավ վերաբերմունք	28,1	–	28,1	12,3
Մաքրասիրություն	23,0	17,2	–	–
Մտավոր հատկանիշներ	17,6	22,7	13,6	20,9
Ազնվություն	10,0	8,0	20,8	17,8
Խնայող լինի	10,0	8,6	–	–
Սիրող լինի	8,6	8,0	–	–
Բարոյական լինի	9,5	6,1	8,1	4,9
Կենցաղային այլ հատկանիշներ	8,1	4,3	–	–
Արտաքին տեսք	5,4	6,7	–	–
Հարգանք	5,9	4,9	–	–
Այլ հատկանիշներ	5,9	3,7	19,5	16,0
Դժվարացել են պատասխանել	0,0	3,1	2,5	0,0

հատկանիշների թվում կանայք ավելի են կարևորում հոգատարությունը, աշխատանքային հատկանիշները և կնոջ նկատմամբ լավ վերաբերմունքը: Բացի այդ, արական սեռի հարցվողները կանանց համեմատ ավելի են կարևորել կամային և մտավոր հատկանիշները:

Իդեալական կնոջ և ամուսու կերպարները ձևավորվում են կոնկրետ սոցիալական իրականության պայմաններում, որոնք ժամանակի ընթացքում փոփոխվում են՝ արտացոլվելով տարբեր սերունդների գիտակցության մեջ: Ուստի նյութերի վերլուծությունը տարիքային կտրվածքով հնարավորություն է տալիս բացահայտելու, թե այդ կերպարները որքանով են փոփոխուն: Սակայն տարիքային խմբերի պատասխանների տարբերակներում առանձնահատկություններ սակավ են արձանագրվել: 18–29 տարեկան հարցվողների 18,3%-ն է նշել կանանց մաքրասիրությունը, իսկ 50 և բարձր տարիք ունեցողների՝ 26,5%-ը, խնայողությունը, համապատասխանաբար, 3,7%-ը և 12,7%-ը, մտավոր հատկանիշները՝26,8% և 19,2%-ը: Ավագ սերունդը բավականին զրկանքների միջով է անցել, ուստի պատահական չէ, որ կարևորում է խնայողությունը: Մաքրասիրությունը նույնպես ավանդական պահանջների թվում է եղել: Սակայն կնոջ մտավոր հատկանիշների մատնանշումը նոր ժամանակների պահանջներով է թելադրվում: Ամուսնու հատկանիշներից ազնվությունը նշել են 18–29 տարեկանների 11,0%-ը իսկ 50 և բարձր տարիքի հարցվողների 22,9%-ը: Ամուսնու ազնվության վերաբերյալ այս տվյալը բացառված չէ, որ արտացոլում է հասարակական կյանքում, անձնական հաջողությունների հասնելու գործընթացում բարոյական արժեքների փոփոխման միտումները:

Որպես կանոն, հասարակական կյանքի փոփոխությունների նախապայման է հանդիսանում նաև կրթությունը: Ուստի հարկ է պարզել, թե այդ գործոնն ազդում է արդյո՞ք կնոջ և ամուսնու կերպարների ձևավորման վրա:

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ կրթությունը որոշ ազդեցություն ունի կնոջ և ամուսնու նկատմամբ պահանջների ձևավորման վրա: Բարձրագույն կրթությամբ հարցվողներն ավելի են կարևորել հոգատարությունը, կամային ու մտավոր հատկանիշները և ազնվությունը:

Կնոջ և ամուսնու կերպարների վերաբերյալ պատկերացումների փոփոխման միտումների մասին որոշակի հստակություն են

Աղյուսակ 11

Կնոջ և ամուսնու կերպարների վերաբերյալ տարբեր կրթական մակարդակ ունեցող հարցվողների պատասխանները, %

Հատկանիշներ	Կնոջ հատկանիշները			Ամուսնու հատկանիշները		
	Միջնակարգ	Միջին մասնա-գիտական	Բարձրագույն	Միջնակարգ	Միջին մասնա-գիտական	Բարձրագույն
Համեստություն	60,3	50,0	46,6	–	–	–
Հոգատարություն	28,7	49,1	53,4	42,6	53,7	67,0
Աշխատանքային հատկանիշներ	9,6	9,3	8,7	50,7	50,9	40,8
Կամային հատկանիշներ	–	–	–	31,6	27,8	48,5
Հանդուրժողակա-նություն	29,4	16,7	39,8	29,4	18,5	25,4
Կնոջ նկատմամբ լավ վերաբերմունք				22,1	29,2	20,4
Մաքրասիրություն	17,6	23,1	19,4	–	–	–
Մտավոր հատկանիշներ	14,7	16,7	30,1	14,0	14,8	20,4
Ազնվություն	11,8	3,7	11,7	16,9	16,7	30,1
Խնայող լինի	5,1	13,9	8,7	–	–	–
Սիրող լինի	8,8	5,6	7,8	–	–	–
Բարոյական լինի	6,6	9,3	9,7	3,7	7,4	7,8
Կենցաղային այլ հատկանիշներ	8,8	5,6	7,8	–	–	–
Արտաքին տեսք	4,4	4,6	8,7	–	–	–
Հարգանք	7,4	6,5	1,9	–	–	–
Այլ հատկանիշներ	3,7	2,8	10,7	21,3	12,0	17,5
Դժվարացել են պատասխանել	2,2	0,9	0,9	1,5	0,9	0,0

մտցնում մեր տրամադրության տակ եղած 1987 թ.-ին Չարենցավան քաղաքում և 2000 թ.-ին Երևանի ուսանողության շրջանում իրականացված հարցումների նյութերը[30]:

Չարենցավանում տղամարդկանց և կանանց նկատմամբ ներկայացվող պահանջներում էական տարբերություններ էին նկատվում: Կանայք գտնում էին, որ իդեալական ամուսնու ամենակարևոր հատկանիշները կենցաղայինն են (որի մեջ ընդգրկվել էին, օրինակ, հոգատարությունը կնոջ և երեխաների նկատմամբ) 46,0%, բարոյականը՝ 30,3%, հաղորդակցվելու հատկանիշները՝ 10,7%, աշխատանքայինը՝ 8,8%: Տղամարդկանց համար ամուսնու կերպարի կարևոր հատկանիշներն հետևյալ քանակական տեսքն ունեին. բարոյական՝ 37,6%, կենցաղային՝ 32,9%, աշխատանքային՝ 15,2%: Մյուս հատկանիշները թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք սակավ էին նշել: Վերլուծելով այս փաստերը՝ չի կարելի շրջանցել որոշ հանգամանքներ, որոնք վկայում էին մեր հասարակական կյանքում բացասական երևույթների երևան գալու մասին: Ինչպես նշեցինք, իդեալական ամուսնու կերպարում կանանց համար էական չէին աշխատանքային և առավել ևս մտավոր հատկանիշները: Այն հանգամանքը, որ այդ հատկանիշներին կարևորություն չեն տվել, խոսում է կոնկրետ ժամանակաշրջանում գոյություն ունեցող հասարակական խորքային երևույթների մասին: Խորհրդային տարիներին աշխատանքով ապահովվում էր յուրաքանչյուր մարդ և դա լուրջ խնդիր չէր ներկայացնում, որը դրսևորվել էր ամուսնու կերպարում: Իդեալական կնոջ հատկանիշների առանձնացման հարցում տղամարդկանց և կանանց բնութագրումներում բավականին մեծ ընդհանրություններ են արձանագրվել: Կանայք գտնում են, որ իդեալական կնոջ կարևորագույն հատկանիշներն են. կենցաղայինը՝

30 Այդ հետազոտությունների մասին տես՝ *Օհանջանյան Ռ.* Ավանդականն ու նորը ամուսնու և կնոջ կերպարներում, Հոգեկան առողջությունը և քրիստոնեությունը՝ համագործակցում և հաղթահարում: Գիտական աշխատանքների ժողովածու նվիրված քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700 ամյակին և հոգեկան առողջության համաշխարհային օրվան, «Ասողիկ» հրատ., Երևան, 2001, էջ 130–140:

47,2%, բարոյականը՝ 24,0%, կոմունիկատիվը՝ 19,4%, աշխատանքայինը՝ 6,4%, իսկ տղամարդիկ. կենցաղայինը՝ 45,4%, բարոյականը՝ 27,2%, կոմունիկատիվը՝ 11,3%, աշխատանքայինը՝ 11,3%: Ամուսնու և կնոջ ցանկալի հատկանիշների վերլուծությունը հանգեցնում է մեզ նաև մեկ այլ՝ բարոյական երևույթի գոյության մասին վարկածի առաջադրմանը: Ինչ է նշանակում այն փաստը, որ իդեալական տղամարդու հատկանիշներում այդքան մեծ տոկոս են կազմել բարոյական հատկանիշները, որոնք, ի դեպ, մեծաքանակ են նաև կնոջ կերպարում: Սա չի վկայում արդյո՞ք հասարակական կյանքում ընտանեկան, բարոյական նորմերի փոփոխության մասին, որը ցավագին է ընդունվում հասարակության բազմաթիվ շերտերի կողմից: Ավանդական բարոյական նորմերի քայքայումը և, այսպես կոչված, «ինտերնացիոնալ» ապրելակերպի և վարքի նորմերի մուտքը չէ արդյո՞ք ընտանեկան անախորժությունների և վերարտադրման դիրքորոշման փոփոխության պատճառը:

2000թ.-ի Երևանի ուսանողության հարցումների նյութերում ամուսնու կերպարում աշխատասիրությունն արդեն երկրորդ կարևոր հատկանիշն էր՝ հավատարմությունից հետո: Սա վկայում է, որ այդ ժամանակահատվածում տեղի ունեցած քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ կարգի արմատական փոփոխություններն իրենց ազդեցությունն են թողել ընտանեկան համակարգի վրա: Այնուամենայնիվ, նշված երկու հարցումներում նույնպես գերակշռում էին ավանդական ընտանեկան պատկերացումները: Կնոջ կերպարում գերակշռում էին ընտանիքին նվիրվածությունը, համեստությունը, հոգատարությունը, մաքրասիրությունը, համբերատարությունը, ազնվությունը, իսկ ամուսնու կերպարում՝ ընտանիքին նվիրվածությունը, հոգատարությունը, համբերատարությունը, կնոջը հարգելը, հասկացող լինելը, ուշադրությունը: Համադրելով այս տվյալները 2016թ. մեր հարցման տվյալների հետ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ սոցիալական իրականության փոփոխություններն ինչ որ չափով ազդում են կնոջ և ամուսնու մասին պատկերացումների ձևավորման վրա: Այնուամենայնիվ, դրանց միջուկը կազմում

են մեր ավանդական ընտանեկան արժեքները, որոնք մնում են բավականին հաստատուն:

2.2. Դերերի բաշխումն ընտանիքում

Ընտանիքի անդամների դերերի բաշխումը, հատկապես ամուսնու և կնոջ միջև, կարևոր հիմնախնդիր է, քանի որ այն ունի և՛ տեսական, և՛ գործնական նշանակություն: Տեսական առումով այն հիմք է հանդիսանում ընտանիքի դասակարգումների, ներընտանեկան հարաբերությունների տեսությունների մշակման և այլ հարցերի համար: Միևնույն ժամանակ, դերերի բաշխման մեջ գոյություն ունեցող անհամաձայնությունը կարող է նպաստել ընտանիքի անդամների միջև հարաբերությունների լարման, բախումների, ամուսնալուծությունների, բազմակողմանի բացասական ազդեցություններ գործել երեխաների վրա և այլն:

Գոյություն ունեն դերերի բաշխման տարբեր սկզբունքներ և դասակարգումներ, որոնց հիմքում կարևորվում է ոչ միայն ընտանիքի անդամներից որևէ մեկի հեղինակության սուբյեկտիվ ընկալումը, այլև դերերի իրական բաշխումն ընտանիքում: Է.Տ.Կարապետյանը երևանյան ընտանիքները՝ ըստ ներընտանեկան իշխանության բաշխման բնույթի, բաժանում է երկու տիպի՝ ընտանիքներ՝ հիմնված հավասարության հարաբերությունների վրա, և ընտանիքներ, որոնցում, որպես գլխավոր, ճանաչվում է մեծահասակ անդամներից որևէ մեկը[31]: Այլ կերպ, առաջին տիպն անվանվում է դեմոկրատական, երկրորդը՝ ավտորիտար[32]: Ամենատարածված դասակարգումներից է ընտանիքի երեք տիպերի առանձնացումը.

1. Ավանդական կամ պատրիարխալ ընտանիք. դրան բնորոշ են՝ ա) կնոջ տնտեսական կախվածությունն ամուսնուց, բ) ընտանեկան կյանքի հստակ գործառութային բաժանումը, տղամարդու և կնոջ պարտականությունների ամրագրումը,

31 Населени Еревана. Этносоциологическое исследование, изд, «АН Арм. ССР», Ер., с.132.

32 Նույն տեղում, էջ 133:

որտեղ ամուսինը տան կերակրողն է, իսկ կինը՝ տնտեսուհի, գ) ընտանիքի գլխավորի անվերապահ ընդունումը:

2. Նոր ավանդական ընտանիք. այստեղ պահպանվում են տղամարդու լիդերության ավանդական դիրքորոշումներն ու ամուսնու և կնոջ միջև ընտանեկան պարտականությունների տարանջատումը: Սակայն, ի տարբերություն առաջին տիպի, այն չունի բավարար տնտեսական հիմքեր: Այս տիպը հաճախ անվանում են նաև շահագործող, քանի որ կինը տղամարդուն հավասար աշխատում է՝ միևնույն ժամանակ հոգալով կենցաղային հոգսերը:

3. Էգալիտար ընտանիք (հավասարների ընտանիք). բնորոշ գծերն են՝ ա) ընտանիքի անդամների միջև ընտանեկան պարտականությունների համաչափ բաշխումը, կենցաղային հարցերի լուծման դեպքում իրար փոխարինելը, որն անվանվում է նաև դերային սիմետրիա, բ) ընտանիքի համար կարևոր հարցերի քննարկում և որոշումների համատեղ ընդունում, գ) հարաբերությունների հուզական հագեցվածություն:

Նշվում է նաև ընտանիքի անցումային տիպերի մասին, որոնցում տղամարդկանց դերային դիրքորոշումները կրում են ավելի ավանդական բնույթ, քան նրանց փաստական վարքն է: Կամ, ընդհակառակը, ժողովրդավարական դիրքորոշումների դեպքում տղամարդը սակավ է մասնակցում տնային աշխատանքներին[33]: Մեր ուսումնասիրություններն ապացուցում են, որ տղամարդկանց և կանանց դերերն ընտանիքում բավականին անհավասարաչափ են բաշխված:

33 Социолгия: Учебник для вузов. Под ред. Лавриненко В.Н., М., "Культура и спорт", Изд. "ЮНИТИ", 1998,с. 215-216.

Աղյուսակ 12

Դերերի բաշխումն ընտանիքում, %

	Սննդամթերքի գնում	Սննդի պատրաստում	Տան մաքրություն	Լվացք, սորոց	Ծեր ծնողների խնամք	Երեխաներին դաստիարակելը	Դասապատրաստում	Գյուղատնտեսական աշխատանքներ
Ամուսինը /հայրը/	20,1	1,6	0,5	0,3	1,3	6,3	1,0	16,1
Կինը /մայրը/	64,8	87,8	88,8	87,8	19,3	29,9	32,0	10,2
Երեխաները	6,0	2,9	6,8	6,0	1,8	2,6	2,1	3,1
Ծնողները /տատ, պապ/	7,3	6,0	1,6	1,8	1,0	6,0	1,3	2,6
Այլ պատասխան	1,8	1,8	2,3	4,2	0,8	2,1	1,8	3,1
Կիրառելի չէ	–	–	–	–	75,8	53,1	61,7	64,8
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

Ինչպես տեսնում ենք, մեր իրականության մեջ բավականին հստակ են բաշխված ընտանեկան դերերը: Դրանք կրում են գենդերային բնույթ: Առ այսօր, կնոջ ուսերին է ընկած ընտանեկան հոգսերի ճնշող մեծամասնությունը: Տղամարդիկ համեմատաբար շատ են օգնում միայն սննդամթերք գնելու հարցում: Տղամարդկանց գիտակցության մեջ ձևավորվել է որոշակի ընտանեկան աշխատանքների բաշխման կարծրատիպ, որն իդեալական տղամարդու կերպարի կարևոր բաղկացուցիչներից է և ձևավորվում է դաստիարակության դեռևս վաղ շրջանում: Ամբողջ դաստիարակության համակարգը ոչ միայն ազդում է գիտակցության վրա, այլև սովորեցնում որոշակի հմտություններ, աշխատանք: Մեր ժողովրդի ավանդական կենցաղում և դաստիարակության համակարգում տղամարդկանց և կանանց դերերը, նրանց գործառույթները խստիվ առանձնացված էին և դրանց համապատասխան էլ արմատավորվում էին

հմտությունները: Բազմաթիվ աշխատանքներ, որոնք կարող էին արդի ընտանիքում անհրաժեշտ լինել՝ թեթևացնելու կանանց հոգսերը, ոչ միայն տղամարդու կերպարին բացասական, «հեղինակազրկող» երանգ են հաղորդում տղամարդու պատկերացումներում՝ թույլ չտալով զբաղվելու «կանացի» աշխատանքներով, այլև նրանք պարզապես այդ հմտություններին չեն տիրապետում ողջ կյանքի ընթացքում: Ի.Ս.Կոնը նշում է, որ գենդերային դերերի յուրացումը փոփոխվող գործընթաց է և տեղի է ունենում գենդերային գաղափարախոսությունների ուժեղ ազդեցությամբ, որոնք կերպարանափոխվում են՝ կախված սոցիալական միջավայրից և մշակութային համատեքստից: Այդ գործընթացներում կարող են ձևավորվել գենդերային-դերային բախումներ՝ տղամարդկանց մեջ առաջացնելով սթրեսային վիճակներ: Տղամարդիկ սթրես են տանում ոչ միայն այն դեպքում, երբ իրենց անկարող են համարում կատարելու իրենց տղամարդու դերի պահանջները (օրինակ՝ հաջող կարիերա ունենալ կամ ընտանիքը պահել), այլև երբ իրավիճակը պահանջում է նրանցից «ոչ տղամարդկային վարք» (օրինակ՝ նստել տանը և խնամել փոքր երեխային): Այդ զգացումները տղամարդկանց մեջ նպաստում են դեպրեսիվ տրամադրությունների, սոցիալական ապատիայի առաջացմանը, ինքնասպանությունների նկատմամբ հակումներին, դժվարությունների հետ ակտիվ պայքարից խուսափելուն, իրենց անօգնականությունը ուրիշներին շահագործելու միջոց օգտագործելուն[34]:

Հարկ է ճշտել, նաև թե ընտանիքի որ տիպին կարելի է վերագրել մեր ընտանիքը, որի համար անհրաժեշտ է պարզել նաև կնոջ աշխատանքային գործունեության ծավալները: Ըստ մեր նյութերի՝ կանանց կրթական մակարդակը տղամարդկանց համեմատ որոշ չափով բարձր է: Միջին մասնագիտական կրթություն ունեն կանանց 29,4%-ը, իսկ տղամարդկանց 26,4%-ը, բարձրագույն կրթություն՝ համապատասխանաբար՝ 29,0%-ը և 22,1%-ը: Սակայն տղա-

34 *Кон И.* Гегемонная маскулинность как фактор мужского (не)здоровья. // Социология: теория, методы, маркетинг, 2008, N 4, с. 7–8.

մարդիկ ավելի մեծ չափերով են ընդգրկված աշխատանքային ոլորտում: Այսպես, աշխատում կամ աշխատանք են փնտրում տղամարդկանց 77,9%-ը, իսկ կանանց՝ 35,3%-ը: Այս փաստը բացատրելը որոշակի բարդությունների հետ է կապված: Աշխատանքային ոլորտում կանանց սակավ ընդգրկվածությունը կարող է բացատրվել և՛ կնոջ ավանդական դերով, որտեղ կնոջ աշխատանքին էական դեր չի տրվում, և՛ մեր աշխատաշուկայում աշխատատեղերի սակավությամբ, որը հանրապետության առջև ծառացած լուրջ խնդիրներից է: Այնուամենայնիվ, անգամ բերված տվյալներն ապացուցում են, որ կանանց բավականին մի ստվար հատված աշխատանքը համատեղում է ընտանեկան աշխատանքների հետ, որը որոշ հիմքեր է տալիս ենթադրելու, որ տարածված է նաև նոր ավանդական ընտանիքի տիպը, սակայն ոչ մենիշխանական հարաբերությունների հատկանիշով: Նման իրավիճակներ է գրանցվել ավանդույթները պահպանող նաև այլ ազգերի շրջանում: Նշելով, որ չնայած հարցումների ընթացքում երկու սեռի ներկայացուցիչներն էլ գերադասել են ընտանիքի ավանդական տիպը, այնուամենայնիվ, կանայք լայնորեն ընդգրկված են աշխատանքային ոլորտում: Եվ դա բացատրվում է ոչ միայն ընտանիքի նյութական ապահովման, այլև արժեհամակարգի փոփոխությամբ: Աշխատանքն ու կրթությունը տղամարդկանց և կանանց շրջանում համարվում են կարևոր կենսական արժեքներ: Էական նշանակություն ունի նաև ամուսնության ոչ հաստատուն լինելը, որը կանանց ստիպում է ձգտելու ունենալ կրթություն և աշխատանք՝ որպես տնտեսական անկախության երաշխիք: Միևնույն ժամանակ, սոցիալական շերտավորումը, հասարակության ապահովված շերտերի ձևավորումը նպաստում են ընտանիքի ավանդական մոդելի հայտնվելուն[35]: Անգամ Դաղստանում, որտեղ ամուր են ավանդական և կրոնական վարքի նորմերը, նկատվել են կարիերային տիպի ընտանիքների թվաքանակի ավելացման միտումներ, որտեղ զույգերը ձգտում են սկզբում մասնագի-

35 *Бурханова Ф.Б.* Брак и семья у башкир// Социологические исследования, 2015, N 8, с. 74.

տական կարիերայի՝ չպլանավորելով երեխա ունենալը, մինչ մասնագիտական և նյութական հաստատուն վիճակի հասնելը[36]: Նման գործընթացներից զերծ չէ նաև մեր հասարակական կյանքը:

Ընտանիքում աշխատանքների իրականացման պատկերը ավելի հստակեցվում է սոցիալական տարբեր շերտերի պատասխանների համադրմամբ: Աշխատանքների իրականացման հարցում կանանց և տղամարդկանց պատասխաններում որոշ տարբերություններ են նկատվում: Հիմնական օրնաչափությունն այն է, որ որոշ աշխատանքներում կանայք ավելի սակավ են նշել տղամարդկանց մասնակցությունը, իսկ տղամարդիկ՝ կանանցը: Մնդի պատրաստման գործում տղամարդկանց մասնակցությունը նշել են տղամարդկանց 3,1%-ը, իսկ կանանց՝ 0,5%-ը, սնդամթերքի գնումը, համապատասխանաբար, 25,8%-ը և 15,8%-ը, ծեր ծնողների խնամքը՝ 2,5%-ը և 0,5%-ը, երեխաներին զբոսանքի տանելը՝ 9,8 և 3,6%-ը, գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը՝ 19,6%-ը և 13,6%-ը: Սա հավանաբար պայմանավորված է կատարվող աշխատանքների ծավալների և կարևորության աստիճանի ընկալման հոգեբանական մեխանիզմներով, որոնք կարող են բազմաթիվ բացատրություններ ունենալ ու պահանջում են առանձին հոգեբանական ուսումնասիրություններ: Ըստ տարիքային և կրթական հատկանիշի՝ պատասխանների տարբերակների տվյալներում էական տարբերություններ չեն գրանցվել:

Մեր հարցաթերթում աշխատանքների ցանկում առանձնացվել էր նաև գյուղատնտեսական աշխատանքը, որի նպատակը գյուղական բնակավայրերում դերերի բաշխման առանձնահատկությունները պարզելն էր: Այդ աշխատանքների հիմնական իրականացնողը տղամարդն է: Սակայն մեզ հետաքրքրում էր նաև դրանցում երեխաների մասնակցության ծավալների որոշումը, որը կարևոր գործնական նշանակություն ունի: Հայտնի է, որ օրենքով արգելվում է անչափահասների ներգրավումը աշխատանքային

36 *Верещагина А. В., Шахбанова М. М.* Նշվ., աշխ., էջ 84:

գործունեության ոլորտում[37]: Սակայն հանրապետությունում, հատկապես Երևանում, հաճախ ենք տեսնում առևտրով զբաղվող երեխաների, անգամ առևտրի կետերում: Ըստ սույն հարցումների նյութերի՝ գյուղական բնակավայրերում երեխաների 8,0%-ը զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքներով: Չխորանալով դրա բազմակողմանի գնահատումներում՝այնուամենայնիվ, հարկ է նշել որ այն ունենում է նաև բացասական հետևանքներ: Փորձագիտական հարցումներում որոշ դպրոցների ղեկավարությունը և ուսուցիչները նշում էին, որ գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջանում, ծնողները երեխաներին տանում են աշխատելու՝ կտրելով դասերից: Հատկապես մեծ ափսոսանք էին հայտնում այն դեպքերի համար, որ դասերից կտրվում են նաև լավ սովորող աշակերտները, որն ազդում էր նրանց առաջադիմության վրա[38]: Փաստորեն, այս խնդիրը հանրապետությունում դեռևս լիովին չի լուծվել, հատկապես՝գյուղական բնակավայրերում:

37 Ըստ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի աշխատող են համարվում նաև ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձինք: Տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձինք կարող են ընդգրկվել միայն նրանց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը և բարոյականությանը չվնասող ժամանակավոր աշխատանքներում: Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք:
http://www.irtek.am/views/act.aspx?aid=150028 (24. 10. 2017):

38 *Օհանջանյան Ռ.*, ԴՄՆ, Սյունիքի մարզ, 2016:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ընտանեկան բախումների պատճառները

Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունը, ինտեգրվելով միջազգային կառույցներում, իրականացրեց բազմաթիվ արմատական քայլեր, որոնք նպաստում են համամարդկային արժեքների տարածմանը մեր հասարակական կյանքում: Կարևորագույն արժեքների թվին է պատկանում մարդու իրավունքների պաշտպանությունը, որն օրենսդրական դաշտի մշակման և կիրառման արդյունքում հայտնվեց հասարակության ուշադրության կենտրոնում: Այդ իրավունքների թվում կարևորվեց նաև կանանց և երեխաների իրավունքների դերը, որը մինչ ոչ վաղ անցյալը, որպես լուրջ հիմնախնդիր չէր ընկալվում: Հայաստանի Հանրապետությունը, միջազգային չափանիշներին համապատասխան կատարելով իրավական բարեփոխումներ, 1992թ. հունիսի 1-ից միացել է «Երեխայի իրավունքների մասին», իսկ 1993թ. հունիսի 9-ից՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիաներին: Օրենսդրական դաշտի ստեղծումը կարևոր նախապայման է հանդիսանում ընտանեկան բախումների կանխարգելման համար: Ընտանեկան բախումների նկատմամբ հասարակական ակտիվ արձագանքները պայմանավորվում են դրանց բազմաթիվ բացասական հետևանքներով՝ առաջացնելով ընտանիքի անդամների ֆիզիկական, հոգեբանական խնդիրներ, աշխատանքային գործունեության ու սովորողների առաջադիմության անկում, ամուսնալուծությունների թվաքանակի ավելացում և, համապատասխանաբար, թերի ընտանիքների ձևավորում, ծնելիության նվազում, բարոյական նորմերի անկում, ալկոհոլի չարաշա-

հում և այլն, որոնց թվարկումը բավականին երկար ցանկ կկազմի[39]: Ընտանեկան համակարգը ժողովրդի ամենահաստատուն կառույցներից է և չնայած սոցիալական իրականության փոփոխությունների ազդեցությամբ այն որոշ չափով ձևափոխվում է, այնուամենայնիվ, հիմնականում կառավարվում է գոյություն ունեցող ավանդույթների ուժով: Այդ ավանդույթները միշտ չէ, որ կարող են համապատասխանել օրենսդրական դաշտի պահանջներին, քանի որ բազմաթիվ ավանդույթներ քարացած բնույթ ունեն և դրանց փոփոխությունը ժամանակ և նպատակաուղղված կազմակերպական ու քարոզչական աշխատանքներ է պահանջում: Ընտանեկան բախումներն ուսումնասիրվում են գիտական մի շարք բնագավառների կողմից՝ քրեագիտության, հոգեբանության, սոցիոլոգիայի և այլն: Էթնոսոցիոլոգիական հետազոտություններում հիմնական ուշադրությունը հատկացվում է դրանց տեսակներին, տարածվածության չափերի որոշմանը և առաջացման սոցիալական գործոնների բացահայտմանը: Ընտանեկան բախումները հաճախ դիտարկվում են նաև ընտանեկան բռնարարքների համատեքստում, որը նույնպես արդյունավետ մոտեցում է և տալիս է վերլուծությունների լայն հնարավորություն: Պաշտոնական մոտեցումներով ընտանեկան բռնությունները դասակարգվում են՝ ֆիզիկականի, հոգեբանականի, սեռականի և տնտեսականի[40]: Սակայն սոցիոլոգիական հետազոտություններում բավականին բարդ է տնտեսական բաղադրիչի գրանցումը, քանի որ դրանց հիմնական մասն իրավական դաշտի խնդիրների թվում են և տեղեկատվական առումով՝ անհասանելի լայն հասարակությանը: Ընտանիքի սոցիոլոգիայում առավել տա-

39 Ընտանեկան բռնությունները Հայաստանի Հանրապետությունում (սոցիոլոգիական հետազոտություն), Եր., «Զանգակ 97» հրատ., 2002, էջ 50:

40 Հիմք ընդունելով ՄԱԿ-ի համապատասխան Կոնվենցիան, 2011թ.-ի ապրիլի 7-ին Եվրոպական Խորհրդի նախարարների Կոմիտեն ընդունել է կանանց նկատմամբ և կենցաղային բռնությունների կանխարգելման մասին նոր Կոնվենցիա: Конвенция Совета Европы о предотвращении и борьбе с насилием в отношении женщин и домашним насилием (Стамбульская конвенция). http://website-pace.net/documents/.

բածված է տնտեսական բռնության տարատեսակներից հիմնականում աշխատանքի նկատմամբ արգելքի ուսումնասիրումը, որն իրականացվել է սույն աշխատանքում: Ինչպես վկայում են նյութերը, մեր ընտանիքներում բախումներ առկա են, սակայն համեմատելով բազմաթիվ այլ երկրներում տիրող իրավիճակի հետ՝ հայաստանյան միջավայրում դրանց տարածվածությունն անհամեմատ փոքր է[41]:

Աղյուսակ 13

Ընտանեկան հարաբերությունների գնահատումը, %

Գնահատականներ	Հաճախականություն
Շատ վատ	0,5
Ավելի շուտ վատ	1,0
Միջին	7,6
Ավելի շուտ լավ	28,4
Շատ լավ	56,0
Մենակ է ապրում	6,5
Ընդամենը	100,0

Մեր բնակչության հիմնական հատվածը ընտանեկան հարաբերությունները գնահատում է լավ և շատ լավ: Սակայն հնարավոր է, որ սույն գնահատումները հենվում են ընտանեկան հարաբերությունների ավանդական պատկերացումների վրա, որոնցում որոշ բախումների նկատմամբ գոյություն ունի հանդուրժողական վերաբերմունք:

Ընտանեկան բախումների պատճառները բազմաթիվ են և բազմատեսակ ու պայմանավորված են սոցիալական գործոններով և անձնական բնույթի հատկանիշներով:

Ինչպես տեսնում ենք, բախումների ամենահիմնական պատճառ է նշվել ֆինանսական վիճակը և գործազրկությունը, որը մեր սոցիալական իրավիճակի, ցածր կենսամակարդակի, աղքատու-

41 *Хиладжева Г. Ф.* Насилие в семье как социальная проблема современного общества// Социологические исследования, 2015, N 8, с. 61-63.

Աղյուսակ 14

Ընտանեկան բախումների պատճառները, %

Պատճառներ	%
Բնակարանային, կենցաղային պայմանները	19,8
Վատ բնավորությունը	20,8
Երեխաների դաստիարակության հարցում անհամաձայնությունը	5,7
Նախասիրությունների, հայացքների տարբերությունը	18,0
Ֆինանսական վիճակը, գործազրկությունը	80,7
Անուշադրությունն ընտանիքի նկատմամբ	10,4
Ծնողների և ազգականների նկատմամբ անհարգալից վերաբերմունքը	3,1
Սիրո, հարգանքի բացակայությունը	12,5
Խանդը	16,9
Ամուսնու անհավատարմությունը	16,9
Կնոջ անհավատարմությունը	14,1
Սեռական կյանքում ամուսինների անհամատեղելիությունը	0,8
Ծնողների բացասական վերաբերմունքն ամուսնու/կնոջ նկատմամբ	4,7
Այլ ազգականների բացասական վերաբերմունքն ամուսնու/կնոջ նկատմամբ	1,0
Ալկոհոլի չարաշահումը	7,3
Իրար չհասկանալը, փոխհամաձայնության չգալը, միմյանց կարծիքներ չընդունելը	5,5
Այլ պատասխան	6,3
Դժվարանում է պատասխանել	0,8

թյան բարձր մակարդակի արտացոլումն է: Տնտեսական պատճառների թվում կարևորվել է նաև բնակարանային, կենցաղային պայմանների դերը, որը կարող է էական խոչընդոտ հանդիսանալ երիտասարդ ընտանիքների ձևավորման գործում: Բազմաթիվ հոգե-

Աղյուսակ 15

Տարիքային խմբերի պատասխաններն ընտանեկան բախումների պատճառների մասին %

Պատճառներ	18–29 տ.	30–49 տ.	50 և բարձր
Բնակարանային, կենցաղային պայմանները	17,1	17,6	22,9
Վատ բնավորությունը	9,8	21,3	25,9
Երեխաների դաստիարակության հարցում անհամաձայնությունը	7,3	6,6	4,2
Նախասիրությունների, հայացքների տարբերությունը	23,1	14,0	18,7
Ֆինանսական վիճակը, գործազրկությունը	69,5	86,8	81,9
Անուշադրությունն ընտանիքի նկատմամբ	9,8	13,2	8,4
Ծնողների և ազգականների նկատմամբ անհարգալից վերաբերմունքը	6,1	2,2	2,4
Սիրո, հարգանքի բացակայությունը	17,1	12,5	10,2
Խանդը	24,4	16,9	13,3
Ամուսնու անհավատարմությունը	19,5	19,1	13,9
Կնոջ անհավատարմությունը	15,9	16,9	10,8
Սեռական կյանքում ամուսինների անհամատեղելիությունը	0,0	0,7	1,2
Ծնողների բացասական վերաբերմունքը ամուսնու/կնոջ նկատմամբ	3,7	5,1	4,8
Այլ ազգականների բացասական վերաբերմունքն ամուսնու/կնոջ նկատմամբ	2,4	0,7	0,6
Ալկոհոլի չարաշահումը	6,1	5,1	9,6
Իրար չհասկանալը, փոխհամաձայնության չգալը, միմյանց կարծիքներ չընդունելը	7,3	6,6	3,6
Այլ պատասխան	4,9	3,7	9,0
Դժվարանում է պատասխանել	2,4	0,7	0,0

բանական հատկանիշներ մոտավորապես հավասար չափով են նշվել: Սակավ տեղ է հատկացվել ծնողների, ազգականների հետ հարաբերությունների դերին, երեխաների դաստիարակության հարցում անհամաձայնությանը և հատկապես, սեռական անհամատեղելիությանը, որը մեր իրականության մեջ ամենափակ թեմաներից է: Այս խնդրի շուրջ տղամարդկանց և կանանց կարծիքները բավականին համահունչ են: Միայն վատ բնավորությունը կանանց համեմատ տղամարդիկ փոքր ինչ ավելի են նշել, համապատասխանաբար, 24,5% և 18,1%: Որոշակի տարբերություններ են նկատվում տարիքային տարբեր խմբերի պատասխաններում:

Ավագ սերնդի ներկայացուցիչներն ավելի են կարևորել ֆինանսական, կենցաղային խնդիրներն ու վատ բնավորությունը: Երիտասարդների պատասխաններում նույնպես առաջնային տեղ է հատկացվել ֆինանսական վիճակին, սակայն կարևորվել են նաև նախասիրությունների, հայացքների տարբերությունը, սիրո, հարգանքի բացակայությունը, խանդը և ամուսնու անհավատարմությունը: Դա կարելի է բացատրել երիտասարդների հուզական աշխարհի առանձնահատկությամբ՝ չբացառելով մեր հասարակության մեջ տեղի ունեցող բարոյական արժեքների փոփոխությունները, որը յուրահատուկ ձևով է արտացոլվում երիտասարդների հոգեկան աշխարհում: Կրթական տարբեր մակարդակ ունեցող հարցվողների պատասխաններում բարձրագույն կրթություն ունեցողները միջնակարգ կրթություն ունեցողների համեմատ որոշ չափով ավելի շատ են նշել վատ բնավորությունը (համապատասխանաբար՝ 25,2 և 16,2%), նախասիրությունների, հայացքների տարբերությունը (համապատասխանաբար՝ 23,5 և 16,3%): Սա կարելի է բացատրել գիտակցության վրա կրթության կարևոր ազդեցությամբ, որը պայմանավորում է արժեհամակարգի կառուցվածքը:

Բախումների պատճառների մասին տարբեր տիպի բնակավայրերի հարցվողների պատասխաններում արձանագրվել են կարևոր առանձնահատկություններ: Սիրո, հարգանքի բացակայու-

թյունը նշել են Երևանի հարցվողների 9,6%-ը, իսկ գյուղական բնակչության 18,7%-ը, խանդը, համապատասխանաբար, 15,2%-ը և 20,7%-ը, ամուսնու անհավատարմությունը՝ 8,0%-ը և 22,0%-ը, կնոջ անհավատարմությունը՝4,8%-ը և 18,7%-ը: Այս փաստերը վկայում են մեր գյուղական բնակավայրերից և փոքր քաղաքներից տեղի ունեցող ինտենսիվ միգրացիոն գործընթացների հետևանքների մասին, որի արդյունքում անցանկալի խնդիրներ են առաջանում ընտանեկան համակարգում[42]:

Ընտանեկան բռնությունների գնահատման, հետևանքների, ձևավորման հետ կապված բազմաթիվ հարցեր հնարավոր չէ վերլուծել՝ առանց դրանց վերաբերյալ բնակչության կարծիքները, հանդուրժողականության աստիճանը որոշելու: Մարդկանց վերաբերմունքը կոնկրետ երևույթի նկատմամբ հանդիսանում է վարքի դրդապատճառ՝ նպաստելով համապատասխան վարքի ձևերի վերարտադրությանը: Այդպիսի դրդապատճառ է հանդիսանում նաև ընտանեկան բախումների տարբեր ձևերի նկատմամբ վերաբերմունքը, որը կարող է նպաստել բախումների իրականացմանը: Ընտանեկան բախումների, հատկապես «բռնությունների» պաշտոնական որակավորումները հիմնվում են միջազգային ստանդարտներին համապատասխանող օրենսդրական դաշտի վրա: Սակայն բաց է մնում այն հարցը, թե առօրյա կյանքում բնակչության վերաբերմունքը և գնահատականներն արդյո՞ք համընկնում են այդ դաշտի հետ: Կարևոր է նաև բռնարարքների կոնկրետ տեսակների նկատմամբ բնակչության տարբեր շերտերի վերաբերմունքի յուրահատկությունների ուսումնասիրությունը, որը գործնական կարևոր նշանակություն ունի:

Տվյալներն ակնհայտորեն փաստում են, որ մեր հասարակության շրջանում պաշտոնապես բռնություն համարվող գործողությունների մի մասը բռնություն չեն համարվում: Սակայն այստեղ,

42 Այդ մասին մանրամասն տես՝ *Գալստյան Մ. Վ.* Աշխատանքային միգրացիան և ընտանիքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2012, N 2–3, էջ 254–265:

Աղյուսակ 16

Բնակչության վերաբերմունքն ընտանեկան բախումների տարբեր ձևերի նկատմամբ, %

Բռնության ձևեր	Բռնություն է	Բռնություն չէ	Դժվ. է պատ.
Թեթև վիճաբանությունը, լեզվակռիվը	12,2	87,3	0,5
Արհամարհանքը	32,0	67,7	0,3
Հայհոյանքը	57,8	40,9	1,3
Սպառնալիքը բռունցքներով	82,8	17,2	0,0
Ծնողների և այլ ազգականների հետ շփման արգելքը	78,9	20,8	0,3
Հարևանների, ընկերների և ծանոթների հետ շփման արգելքը	68,2	31,3	0,5
Ազատ ժամանակն ըստ նախասիրությունների անցկացնելու արգելքը	59,1	39,8	1,0
Աշխատանքի արգելքը	68,5	29,9	1,6
Ապտակը	80,2	19,8	0,0
Ծեծը	88,8	10,9	0,3

ըստ իս, խնդիրը նրանում չէ, որ մարդիկ չգիտեն նշված արարքների պատժելիությունը: Յուրաքանչյուրը գիտի, որ ինչ որ մեկին հայհոյի, սպառնա, հարվածի, ապա կարող է օրենքի առաջ պատասխան տալ: Ստացվում է, որ նույն արարքը թույլատրելի է ընտանիքում, իսկ դրսում՝ ոչ: Սա կրկին անգամ ապացուցում է, որ տվյալ երևույթներն ընդգրկված են մեր ընտանեկան վարքի ավանդական նորմերի մեջ և որոշակիորեն անկախ են սոցիալական այլ միջավայրերի նորմերից և կառույցներից: Բնակչության ճնշող մեծամասնությունը բացասաբար է վերաբերվում ֆիզիկական բռնություններին և սպառնալիքին, սակայն հոգեբանական որոշ բռնությունների

նկատմամբ բավականին հանդուրժողական վերաբերմունք է դրսևորել: Վիճաբանությունների մասին բնակչությունը համատարած միևնույն պատասխանն է տալիս «այդպիսի տուն չկա, որ վեճ չլինի», «էլ ինչ տուն, որ վեճ չլինի» և նման այլ արտահայտություններ:

Աղյուսակ 17

Բոնություն համարում են արդյո՞ք հետևյալ արարքները, %

	18–29 տ.			30–49 տ.			50 և բարձր տ.		
	Այո	Ոչ	ԴՊ	Այո	Ոչ	ԴՊ	Այո	Ոչ	ԴՊ
Թեթև վիճաբանություն, լեզվակռիվ	7,3	92,7	–	11,0	88,2	0,7	12,2	87,2	0,5
Արհամարհանք	24,4	75,6	–	29,4	70,6	–	38,0	61,4	0,6
Հայհոյանք	47,6	51,2	1,2	60,3	39,0	0,7	60,8	37,3	1,8
Սպառնալիք բռունցքներով	74,4	25,6	–	83,8	16,2	–	86,1	13,9	–
Ծնողների և այլ ազգականների հետ շփման արգելք	67,1	32,9	–	81,6	18,4	–	82,5	16,9	0,6
Հարևանների, ընկերների և ծանոթների հետ շփման արգելք	59,8	40,2	–	68,4	31,6	–	72,3	26,5	1,2
Ազատ ժամանակն ըստ նախասիրությունների անցկացնելու արգելք	50,0	50,0	–	61,8	37,5	0,7	61,4	36,7	1,9
Աշխատանքի արգելք	63,4	35,4	1,2	67,7	29,4	2,9	71,7	27,7	0,6
Ապտակը	80,5	19,5	–	79,4	20,6	–	80,7	19,3	–
Ծեծ	84,1	15,9	–	87,5	11,8	0,7	92,2	7,8	–

Արգելքները կարող են իրականացնել ընտանիքի բոլոր անդամներն իրար հանդեպ և պատահական չէ, որ դրա նկատմամբ նույնպես առկա է որոշակի հանդուրժողական վերաբերմունք: Իհարկե, արգելքներն հիմնականում իրականացնում է տղամարդը կանանց և երեխաների նկատմամբ, սակայն նա նույնպես կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել կնոջ և երեխաների կողմից: Ընդհանուր առմամբ, բռնությունների բոլոր ձևերի նկատմամբ տղամարդկանց համեմատ կանայք ավելի անհանդուրժողական են: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ բախումների համեմատաբար «թույլ կողմը» կինն է և ավելի հաճախ նա է դրանից տուժում: Դիտարկելով նյութն ըստ տարիքային կտրվածքի՝ նկատվում է հստակ Տրինաչափություն՝ բռնությունների նկատմամբ երիտասարդ սերունդն ավելի հանդուրժող է:

Գոյություն ունեն դաժանությունների, բռնությունների պատճառների բազմաթիվ բացատրություններ՝ ժառանգական, հոգեբանական գործոններից[43] մինչ բազմազան սոցիալական պատճառները և անգամ ձևավորվել է միջառարկայական գիտական բնագավառ՝ զոհաբանությունը:

Հայկական հեռուստասերիալների ուսումնասիրություններից մեկում հեղինակներն ապացուցել են, որ դրանցում շեշտադրվում է տղամարդկանց ուժեղ, դոմինանտ դիրք զբաղեցնող (գերիշխող) դերը: Այդ կերպարները ագրեսիվ առնականության դրսևորումներ են, ագրեսիայի, որն արտացոլվում է ոչ միայն տղամարդկանց հետ փոխհարաբերություններում, այլև ընտանիքում[44]: Այդ հետազոտության հեղինակները նշել են, որ մեդիայում պատկերված բռնությու-

43 Վերջերս ապացուցվել է, որ դրանց պատճառ է հանդիսանում նաև կոմունիկատիվ հմտությունների զարգացման մակարդակը: Տես՝ *Адамьянц Т.З.* Качественныве индикаторы процессов самоорганизации и самоопределения в среде современных подростков // Общественные науки и современность, 2013, N 3, с.163–176.

44 *Կոջոյան Ա.*, *Գևորգյան Ա.*, Առնականությունն ու գենդերային բռնությունը հայկական հեռուստասերիալներում, Գենդերային հիմախնդիրները ժամանակակից Հայաստանում. Հետազոտությունից դեպի քաղաքականություն (գիտաժողովի նյութեր), Երևան, ԵՊՀ Հրատ., 2016 էջ 198:

նը ոչ թե ուղղակիորեն ծնում է հասարակության մեջ բռնություն, այլ նպաստում է արդեն իսկ գոյություն ունեցող բռնության նորմալիզացմանը, կրկնապատկմանը և դրա հետագա տարածմանը և այնուհետև հայտնում են իրենց մտահոգությունները[45]:

Երիտասարդության շրջանում դաժանության դրսևորումների նմանատիպ աճման միտումներ արձանագրվել են նաև ՌԴ-ում իրականացված հետազոտություններում[46],[47]: Վերլուծելով այդ փաստը՝ Ա.Մերենկովը գտնում է, որ շուկայական տնտեսության անցման առաջին տարիներին բազմաթիվ ընտանիքներ հայտնվեցին այնպիսի իրավիճակում, որ անհրաժեշտ էր առաջին հերթին ապահովել մեծահասակների և երեխաների ֆիզիկական գոյատևումը: Հայրերն ու մայրերը մտահոգված էին ոչ թե երեխաների դաստիարակությամբ, այլ գոյատևման միջոցների փնտրտուքով: Սակայն, նոր պատկերացումներն այն մասին, թե ինչպես դաստիարակել երեխաներին՝ շուկայական հարաբերությունների պահանջներին համապատասխան բարեհաջող ադապտացման համար, չէին ձևավորվել և ոչ մեկի կողմից չէին քարոզվում: Հեռուստատեսությունը հեռուստասերիալներում ցուցադրում էր նոր կյանքին տարբեր կարգի բանդիտների, խարդախների, սպեկուլյանտների հարմարվելու ձևերը[48]: Փաստորեն, ընտանիքը կորցրել էր դաստիարակության կողմնորոշիչները և այդ բացը «լրացնում էին» ԶԼՄ-ները: Հեղինակը կարևորում է նաև արտաքին միջավայրի ազդեցությունները՝ նշելով, որ կյանքի գլխավոր նպատակն է դառնում ցանկացած ձևով հաջողության հասնելը: Ընդ որում, դրա հատկանիշների մեջ չեն մտնում ազնիվ, բարեխիղճ աշխատանքի արդյունքները, անհատական ընդունակությունների ծավալման ակտիվությունը, ամուր ընտանիքի պահպանումը, երեխա-

45 Նույն տեղում, էջ 204–205:

46 *Меренков А.В.* Тенденции изменения семейного воспитания в современном обществе // Социологические исследования, 2013, N 2, с.101–110.

47 *Павлов Б.С.* Над опасным «социальным придоньем» (о девиантной субкультуре подростков)//Социологические исследования, 2013, N2, с. 69–80.

48 *Меренков А.В.* նշվ. աշխ., էջ 103–104.

ների դաստիարակությունը: Հիմնական չափորոշիչներ են դառնում նյութական բարեկեցությունը, կարիերային աճը, հանրահայտությունը: Ոչ մեկին չի հետաքրքրում այն հատկանիշները, որոնց միջոցով անհատը հասնում է այնպիսի դիրքի, որը հնարավորություն է տալիս ոչ մի բանից իրեն չզրկել, ունենալ թանկարժեք անշարժ գույք, հանգստանալ հեղինակավոր հանգստավայրերում և այլն: Այդպիսի մարդիկ դարձել են վերջին տարիների հեռուստասերիալների հերոսներ, օրենսդրական իշխանության օրգանների պատգամավորներ, քաղաքապետեր, գուբերնատորներ, նախարարներ[49]:

Փաստորեն, մեր տվյալները հաստատում են Հայաստանում և Ռուսաստանում իրականացված հետազոտությունների հեղինակների եզրահանգումները: Այս փաստերից ելնելով՝ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ դաժանությունը ձևավորվում է տարբեր գործոնների և միջավայրերի ազդեցությամբ՝ ԶԼՄ-ների, ընտանիքի, արտաքին միջավայրի: Դրանում արտացոլվում են հասարակական գիտակցության մեջ և ապրելակերպում տեղի ունեցող զարգացումները, որոնց հիմքում ընկած է գոյատևելու համար անհրաժեշտ վարվելակերպի մասին երիտասարդության պատկերացումները: Վերջինիս հիման վրա ձևավորվում է «ուժեղ տղամարդու» հակասական կերպարը, որը մեր պայմաններում կարող է պատճառ հանդիսանալ խեղաթյուրված, պախարակելի վարվելաձևերի: Բացառված չէ, որ, ընդհանրապես, նշված երևույթները շուկայական հարաբերությունների ձևավորման սկզբնական փուլի համար լինեն ընդհանուր զարգացումներ, որը հնարավոր է պարզել ուսումնասիրելով այդ հարաբերությունների պատմական անցյալը, ձևավորման առանձնահատկությունները և հետևանքները տարբեր երկրներում, ուստի հարկ է իրականացնել ավելի մանրակրկիտ, համալիր հետազոտություններ:

Ընտանեկան բռնությունների գնահատումների վրա էական ազդեցություն ունի նաև կրթական մակարդակը: Վեճերից և արհա-

49 Նույն տեղում, էջ 106:

մարհանքից բացի մյուս բոլոր տեսակների նկատմամբ բարձրագույն կրթություն ունեցող հարցվողներն ավելի բացասական վերաբերմունք են դրսևորել:

Տարբեր տիպի բնակավայրերում բախումների նկատմամբ վերաբերմունքում նկատվում են որոշ առանձնահատկություններ: Ծնողների և այլ ազգականների հետ շփման արգելքը բռնություն են համարել Երևանի հարցվողների 89,6%-ը, մյուս քաղաքների՝ 77,1%-ը և գյուղական բնակչության՝ 71,3%-ը, ազատ ժամանակն ըստ նախասիրությունների անցկացնելու արգելքը, համապատասխանաբար, 63,2%-ը, 64,2%-ը և 52,0%-ը, աշխատանքի արգելքը՝ 78,4, 65,1 և 62,7%-ը, ապտակը՝ 82,4%-ը, 81,7-ը և 77,3%-ը, ծեծը՝ 97,6%-ը, 88,1%-ը և 82,0%-ը: Ինչպես տեսնում ենք, գյուղական միջավայրում փոքր ինչ ավելի է տարածված հանդուրժողական վերաբերմունքը որոշ բռնարարքների նկատմամբ, որը, հավանաբար, ավանդական հարաբերությունների և ապրելակերպի դրսևորում է[50]:

3.2. Երեխաների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ կարծիքները

Երեխաների ապագան ապահովելը հայ ընտանիքների առաջնային նպատակներից է, որը յուրաքանչյուր ծնող իրականացնում է դաստիարակության ձևերի մասին իր պատկերացումների հիման վրա: Մարդկությունը դեռ վաղ ժամանակներից մինչ ոչ վաղ անցյալը դաստիարակության ձևերի թվում կիրառել է տարբեր տիպի պատժամիջոցներ: Այսօր այդ պատժամիջոցներն իրականացնողների նկատմամբ մշակվել են օրենսդրական սանկցիաներ: Այնուա-

50 Այս աշխատանքի շարադրման ընթացքում, հասարակական լուրջ քննարկումներ սկսվեցին «Ընտանեկան բռնության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի» նախագծի շուրջ: Այդ նախագծի կարևորության մասին հնարավոր էր պատկերացում կազմել ամբողջական, հավաստի վիճակագրական տվյալների հիման վրա: Համացանցում տեղադրվում են տվյալներ, որոնք խիստ մասնակի են և չեն արտացոլում ընտանեկան բռնարարքների իրական պատկերը: Պաշտոնական տվյալների մեր փնտրտուքները ոչնչի չհանգեցրեցին, ուստի անհրաժեշտ է այդ խնդիրի գիտական համալիր ուսումնասիրություններ:

մենայնիվ, դեռևս արձանագրվում են դրանց կիրառման դեպքերը, որոնք կարող են պայմանավորվել տարբեր գործոններով՝ անհատական հատկանիշներով, սոցիալական պայմաններով, ավանդական պատկերացումներով, լինել իրավիճակային և այլն: Հայտնի է, որ բռնությունները խիստ բացասական հետևանքներ են ունենում երեխաների համար: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ կանանց նկատմամբ բռնարարքներն իրականացնող սուբյեկտների թիվը հիմնականում սահմանափակվում է ամուսնով կամ նրա ծնողներով, իսկ երեխան ավելի մատչելի թիրախ է և համարյա ցանկացած ավագ տարիքի անձ իրեն կարող է իրավունք վերապահել դաստիարակելու երեխային, կիրառելով դաստիարակության իր «նախընտրելի ձևերը»: Ուստի պատահական չէ, որ երեխաների նկատմամբ բռնությունները գտնվում են պետական և հասարակական կառույցների ուշադրության կենտրոնում: Բացի գոյություն ունեցող օրենքներից, մշակվում են նաև երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելման զանազան ծրագրեր: ՀՀ կառավարությունը հիմք ընդունելով «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, 2014թ-ի դեկտեմբերի 4-ի նիստում ընդունել է «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի» հայեցակարգը, որի 2-րդ հավելվածում ներկայացվել է աշխատանքների ուղղությունները: Այնուամենայնիվ, երեխաների նկատմամբ պատժամիջոցները նույնպես ներընտանեկան խնդիրներ են համարվում և կարող են մնալ «փակ դռների ետևում»: Պատիժների ձևերի և մասշտաբների մասին կարելի է որոշակի պատկերացում կազմել՝ պարզելով հասարակության վերաբերմունքը դրանց նկատմամբ:

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ աղջիկների նկատմամբ վերաբերմունքը փոքր ինչ մեղմ է: Տղաների նկատմամբ սպառնալը և ապտակը ավելի թույլատրելի պատժամիջոց է համարվել: Սպառնալը, հայհոյանքը, ապտակը, ծեծը բացասական են համարել հարցվողների ճնշող մեծամասնությունը: Բավականին մեծ է նաև նախասիրությունների նկատմամբ արգելքների կողմնա-

Աղյուսակ 18

Թույլատրելի համարում են արդյո՞ք երեխաների նկատմամբ հետևյալ պատժամիջոցները, %

	Աղջիկների նկատմամբ		Տղաների նկատմամբ	
	Այո	Ոչ	Այո	Ոչ
Զայրանալը	84,6	15,4	86,7	13,3
Սպառնալը	18,8	81,3	22,4	77,6
Նախասիրությունների նկատմամբ արգելքը	53,6	46,4	52,9	47,1
Հայհոյանքը	4,2	95,8	6,0	94,0
Ապտակը	18,5	81,5	24,7	75,3
Ծեծը	5,7	94,3	9,1	90,9

կիցների քանակը, որի պատճառների մասին արդեն խոսվել է: Ամենաընդունելի պատժամիջոցը համարվել է զայրանալը: Հարցումները հնարավորություն են տալիս պարզելու, թե հասարակության որ շերտներն են հակված կոնկրետ պատժամիջոցներ կիրառելու: Աղջիկների նկատմամբ պատիժների ձևերի հարցում կանայք և տղամարդիկ հիմնականում նույնական են վերաբերվում: Տարբերությունների թվում առանձնանում են սպառնալը, որը թույլատրելի են համարել տղամարդկանց 27,6%-ը, իսկ կանանց՝ 12,2%-ը, ծեծը, համապատասխանաբար, 8,0 և 4,1%-ը: Ստացվում է, որ աղջիկների դաստիարակության «միջոցների» հարցում տղամարդկանց և կանանց կարծիքները համընկնում են: Տղաների պատժամիջոցների նկատմամբ տղամարդկանց վերաբերմունքը համեմատաբար ավելի խիստ է: Զայրանալը թույլատրելի են համարել տղամարդկանց 89,6%-ը, կանանց՝ 84,6%-ը, սպառնալը, համապատասխանաբար, 31,3%-ը և 15,8%-ը, հայհոյանքը՝ 9,8%-ը և 3,2%-ը: Բացի նշված այս տարբերություններից, մնացած պատժամիջոցների նկատմամբ տղամարդկանց վերաբերմունքը նույնպես ավելի խիստ

է, սակայն սույն հետազոտության մեջ այդ փոքր տարբերությունների (2–3%) վիճակագրական վերլուծության հնարավորություն չունենք:

Երեխաների պատժամիջոցների նկատմամբ տարիքային խմբերի պատասխանները միանշանակ չեն: Ավագ տարիքային խումբը փոքր ինչ ավելի է հակված աղջիկների նկատմամբ կոշտ պատժամիջոցներին: Աղջկա նկատմամբ սպառնալը թույլատրելի են համարել 18–29 տարեկանների 12,2%-ը, իսկ 50 և բարձր տարիքի հարցվողների 23,5%-ը, հայհոյանքը, համապատասխանաբար, 1,2%-ը և 4,8%-ը, ծեծը՝ 2,4%-ը և 7,2%-ը: Սակայն միջին տարիքային խումբը ավելի է հակված նախասիրությունների նկատմամբ արգելքներին: Այդ արգելքները թույլատրելի են համարել 18–29 տարեկան հարցվողների 51,2%-ը, 30–49 տարեկանների 61,8%-ը և 50 և բարձր տարիքի անձանց 48,2%-ը: Այս փաստը կարելի է բացատրել նրանով, որ 30–49 տարիքային խմբում ավելի մեծ է ձևավորված ընտանիքների քանակը և ծնողներն ավելի են մտահոգվում երեխաների ապագայով: Ըստ կրթական մակարդակի նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ գործոնը որոշ չափով մեղմում է պատժամիջոցների նկատմամբ վերաբերմունքը, բացառությամբ նախասիրությունների նկատմամբ արգելքների, որի վերաբերյալ պատասխաններում էական տարբերություններ չեն նկատվում: Հարցման նյութերում երեխաների հանդեպ թույլատրելի պատժամիջոցների նկատմամբ քաղաքային և գյուղական բնակչության միջև որոշ առանձնահատկություններ են գրանցվել:

Ձայրանալը ամենաընդունելի տարբերակն է համարվել և՛ Երևանում, և՛ գյուղական բնակավայրերում: Սպառնալը և հայհոյանքը գյուղական բնակավայրերում ավելի է գերադասվել: Սակայն հետաքրքիր է ապտակի և ծեծի նկատմամբ վերաբերմունքի հարաբերակցությունը: Ապտակն ավելի թույլատրելի են համարել Երևանի, իսկ ծեծը՝ գյուղական բնակավայրերի հարցվողները: Այս փաստի բացատրությունը դժվարություններ է հարուցում, սակայն որոշակի հիմք է տալիս ենթադրելու, որ այդ պատժամիջոցները սերտորեն փոխկապված չեն և կարող են պայմանավորվել զանազան

Աղյուսակ 19

Երեխաների պատժամիջոցների նկատմամբ Երևանի և գյուղական բնակչության վերաբերմունքը, %

(Ներկայացված են պատժամիջոցների նկատմամբ դրական պատասխանները)

Պատժամիջոցներ	Աղջիկների նկատմամբ		Տղաների նկատմամբ	
	Երևան	Գյուղեր	Երևան	Գյուղեր
Քայրանալը	84,0	86,0	88,0	85,3
Սպառնալը	16,8,	23,3	21,6	26,0
Նախասիրությունների նկատմամբ արգելքը	65,6	48,7	65,6	46,7
Հայհոյանքը	3,2	5,3	4,0	7,3
Ապտակը	22,4	18,0	32,8	22,0
Ծեծը	4,8	8,7	8,0	13,3

գործոններով: Մասնավորապես, հնարավոր է որ ապտակը Երևանում համարվի խիստ պատիժ, իսկ գյուղում՝մեղմ: Իսկ ծեծը Երևանում իր խստությամբ անընդունելի լինի, սակայն գյուղական բնակչության որոշ հատվածների համար՝ ընդունելի: Սույն աղյուսակի տվյալներում էական տարբերություններ են նկատվում նախասիրությունների արգելքների վերաբերյալ:

Երևանի հարցվողները ավելի են հակված նախասիրությունների արգելքներին, որը քաղաքային պայմանների արդյունք է:

Կարևոր է նաև երեխաների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ վերաբերմունքի փոփոխման միտումների ուրվագծումը և պատճառների բացահայտումը: Համեմատելով աղյուսակ 18-ի և 20-ի տվյալները՝ նկատվում է պատժամիջոցների նկատմամբ դրական վերաբերմունքի էական աճ:

Աղյուսակ 20

Թույլատրելի համարում են արդյո՞ք երեխաների նկատմամբ հետևյալ պատժամիջոցները (ըստ 2000 թ. հարցումների)[51] %

	Աղջիկների նկատմամբ		Տղաների նկատմամբ	
	Այո	Ոչ	Այո	Ոչ
Ձայրանալը	46,2	57,8	48,0	52,0
Սպառնալը	26,1	73,9	28,8	71,2
Նախասիրությունների նկատմամբ արգելքը	25,6	74,4	27,3	72,7
Հայհոյանքը	3,2	96,8	6,2	93,8
Ապտակը	15,9	84,1	27,8	72,2
Ծեծը	6,9	93,1	13,8	86,2

2000 թ. հետազոտության նյութերն ապացուցում էին, որ տղամարդկանց համեմատ կանանց ավելի մեծ թիվն է թույլատրելի համարում ապտակը և ծեծը: Եվ դա ավելի ուժեղ է դրսևորվում աղջիկների նկատմամբ: Այս երևույթը մենք հիմնավորել էինք նրանով, որ «երեխաների դաստիարակության հիմնական ծանրությունն ընկած է կանանց ուսերին[52] և տարբեր պատճառներով նրանք երբեմն կիրառում են զանազան պատժամիջոցներ և՛ տղաների, և՛ աղջիկների նկատմամբ: Երեխաների դաստիարակության գործում մայրերի դերը հատկապես էական է աղջիկների սոցիալականացման գործընթացում: Այս հարցում հոր դերն աննշան է: Եվ սրանով է բացատրվում աղջիկների նկատմամբ խիստ պատժամիջոցներ կիրառելու կողմնակիցների աննշան լինելը տղամարդկանց մեջ»[53]: Նշել էինք նաև, որ այդ փաստերը վկայում են հայ ընտանիքներում հոր ավանդական դերի, հեղինակության պահպանման մասին: Հոր

51 Ընտանեկան բռնությունները Հայաստանում, էջ 67:

52 Պատկերավոր, դիպուկ է բնորոշել կնոջ դերն ընտանիքում Բ. Պավլովը. «Ընտանեկան դաստիարակությունում բնության և հասարակության կողմից հատուկ առաքելություն է տրված կնոջը»: *Павлов Б.С.* Նշվ., աշխ., էջ 73:

53 Ընտանեկան բռնությունները Հայաստանում, էջ 68:

ավանդական հեղինակության ընկալումն ընտանիքի անդամների, այդ թվում՝ նաև երեխաների կողմից, համապատասխան դերերի ամրագրված լինելը ենթադրում է հոր որոշումներին, հրահանգներին ենթարկվելու սովորություն, որն ինքնաբերաբար նվազեցնում է խիստ պատժամիջոցների կիրառման անհրաժեշտությունը հոր կողմից: Հաճախ հոր միայն խոսքը բավական է երեխայի վարքը կարգավորելու համար: Բազմաթիվ մայրեր իրենց երեխաներին վախեցնում են, որ հորը տեղյակ կպահեն գործած չարությունների, զանցանքների մասին[54]:

Ինչումն է խնդիրը, որ այսօր պատկերը փոխվել է և տղամարդիկ ավելի են հակված պատժամիջոցների կիրառմանը: Անհատական խորացված հարցազրույցները հաստատեցին արդեն նշված արտաքին վտանգավոր միջադեպերից և անընդունելի ազդեցություններից ընտանիքը զերծ պահելու մտադրության գործոնը, որոնց ավելի լավատեղյակ են տղամարդիկ: Սոցիալական իրականության մեջ տեղի ունեցող զանազան կարգի փոփոխությունները՝ քաղաքներում ազատ ժամանակի անցկացման ձևերի տեսականու ընդլայնում (խաղատներ, գիշերային ակումբներ, դիսկոտեկներ, պիկնիկներ և այլն), օլիգարխիկ և կրիմինալ տարրերի անպատիժ մնացող, հանցավոր արարքներ, գյուղական բնակավայրերում և փոքր քաղաքներում՝ միգրացիայի հետևանքով ընտանեկան, բարոյական և այլ սոցիալական խնդիրներ, որոնք անցանկալի են բնակչության որոշ հատվածների համար և կարող են նրանց շրջանում տագնապ հարուցել ընտանիքի բարոյական նորմերի պահպանման հարցում: Այսպիսի պայմաններում բնակչության որոշ հատվածի համար նման խնդիրներից խուսափելու, ընտանիքի ամրությունը և անվտանգությունն ապահովելու ամենադյուրին, մատչելի միջոցը կարող է համարվել ընտանիքի անդամներին արտաքին միջավարի հետ շփումների սահմանափակումը, որը հնարավոր է արգելքների և այլ պատիժների միջոցով: Այս դեպքում արգելքները կարելի է համարել արտաքին միջավայրի նկատմամբ ընտանիքի, անձի ինքնապաշտպանական ռեակցիա:

54 Նույն տեղում:

Բացառված չէ նաև այն հանգամանքը, որ նշված տարիների ընթացքում կայացել են սոցիալական կառույցները, կյանքը դարձել է ավելի հաստատուն, բնակչության սոցիալական վիճակը համեմատաբար բարելավվել է և ընտանիքի ինստիտուտը վերականգնում է իր «կորցրած կողմնորոշիչները» և վերադառնում իր ավանդական ներընտանեկան դերերին ու հարաբերություններին:

3.3. Ամուսնալուծությունների պատճառները և դրանց նկատմամբ հասարակության վերաբերմունքը

Ընտանեկան հարաբերությունների լարման վերջակետն ամուսնալուծությունն է, որի վերաբերյալ նշվում են դրա բացասական և դրական հետևանքները: Այնուամենայնիվ, դրականները բացասականների համեմատ չնչին են: Ամուսնալուծությունը շղթայական ռեակցիա է առաջացնում՝ հանգեցնելով բազմաթիվ անհատական և սոցիալական բնույթի բացասական հետևանքների: Ուսումնասիրություններում բացահայտված դրական գործառույթները տվյալ պահին կարող են նպատակահարմար լինել, սակայն դրանց որոշ մասը հետագայում կարող են ունենալ բացասական հետևանքներ: Ըստ ՀՀ ԱՎԾ-ի տվյալների՝ 2016 թ.-ին գրանցվել է 16294 ամուսնություն և 3648 ամուսնալուծություն՝ կազմելով 1,2 պրոմիլ[55]: Եվրոստատի տվյալներով եվրոպական երկրներում 2015 թ. ամուսնալուծությունների ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են Լիտվայում՝ 3,2 և Դանիայում՝2,9 պրոմիլ, իսկ ամենացածրը՝ Մոնտենեգրոյում՝0,9 պրոմիլ: Վրաստանում այդ ցուցանիշը կազմել է 2,4, իսկ Ադրբեջանում՝1,3 պրոմիլ[56]: Հայաստանը եվրոպական երկրների շարքում այդ ցուցանիշով բարեբախտաբար վերջին տեղերում է գտնվում: Սակայն մտահոգիչ է այն փաստը, որ Հայաստանում ամուսնալուծությունները տարիների ընթացքում աճի միտում ունեն: Ամուսնալուծությունների կանխարգելման աշխատանք-

55 Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն http://www.armstat.am/file/doc/99499383.pdf (24.10.2017):

56 Eurostat http://appsso.eurostat.ec.europa.eu/nui/show.do?dataset=demo_ndivind&lang=en (22.10. 2017.):

Աղյուսակ 21

Ամուսնալուծությունների պատճառները, %

Պատճառներ	Հաճախականություն
Նախասիրությունների տարբերությունը	27,1
Վատ բնավորությունը	24,7
Ֆինանսական պայմանները, գործազրկությունը	51,3
Անուշադրությունն ընտանիքի նկատմամբ	9,1
Բնակարանային, կենցաղային պայմանները	8,3
Երեխա չունենալը	18,0
Խանդը	17,7
Սիրո, հարգանքի բացակայությունը	20,8
Ամուսնու անհավատարմությունը	39,3
Կնոջ անհավատարմությունը	39,6
Սեռական կյանքում ամուսինների անհամատեղելիությունը	3,4
Ամուսնու ծնողների միջամտությունը զույգերի կյանքին	6,3
Կնոջ ծնողների միջամտությունը զույգերի կյանքին	5,7
Արտագնա աշխատանքը	4,4
Ալկոհոլի չարաշահումը	12,0
Կնոջ անհնազանդությունը	1,6
Հիվանդությունը	1,6
Իրար չզիջելը, իրար չհասկանալը, անհանդուրժողականությունը, համբերատար չլինելը	4,9
Ամուսնու բռնությունը	4,4
Այլ պատասխան	7,0
Դժվարանում է պատասխանել	1,6

ների համար կարևոր նշանակություն ունի դրա պատճառների վերաբերյալ հասարակական կարծիքը:

Ինչպես տեսնում ենք, ամուսնալուծությունների պատճառների թվում կարևորվել է նյութական պայմանները, ամուսնու և կնոջ անհավատարմությունը: Այս վերջին պատճառները վկայում են հասարակական կյանքում տեղի ունեցող սոցիալական և բարոյական կարգի փոփոխությունների մասին, որոնց խորանալու դեպքում կարող են արմատական անցանկալի ձևափոխումներ կատարվել ընտանեկան համակարգում: Սույն հարցի շուրջ կանանց և տղամարդկանց կարծիքները հիմնականում համընկնում են: Միայն տղամարդիկ կանանց համեմատ ավելի շատ են նշում վատ բնավորությունը, համապատասխանաբար, 29,4% և 21,3%, իսկ կանայք՝ սիրո, հարգանքի բացակայությունը, համապատասխանաբար, 24,9% և 15,3% և ամուսնու անհավատարմությունը՝ 44,3% և 32,5%: Ամուսնալուծությունների պատճառների թվում երիտասարդները ավագ տարիքային խմբերի համեմատ ավելի սակավ են նշել ֆինանսական պայմանները, համապատասխանաբար, 39,0% և 54,2% և ավելի շատ՝ ամուսնու և կնոջ անհավատարմությունը, համապատասխանաբար՝ 47,6% և 33,1%: Միայն այն փաստը, որ 2000 թ.-ի հարցումների ընթացքում ընտանեկան բախումների պատճառների թվում ամուսնական անհավատարմությունը նշել էին հարցվողների ընդամենը 1,4%-ը[57], կրկին անգամ ապացուցում է սոցիալական, հոգեբանական, բարոյական այն էական փոփոխությունների մասին, որոնք տեղի են ունեցել ընդամենը մոտ տասնհինգ տարում:

Բնակավայրի տիպը նույնպես որոշակի ազդեցություն է ունենում ամուսնալուծությունների վրա: Գյուղական բնակչությունը երևանցիների համեմատ ավելի է նշել վատ բնավորությունը՝ համապատասխանաբար՝ 29,3% և 19,2%, իսկ վերջիններս, ամուսնու և կնոջ անհավատարմությունը՝ համապատասխանաբար 52,0% և 36,7%, ամուսնու ծնողների միջամտությունը զույգերի կյանքին՝ 12,2% և 2,7%, ալկոհոլի չարաշահումը՝ 19,2% և 7,3%, ամուսնու բռնու-

57 Ընտանեկան բռնությունները Հայաստանում, էջ 43:

թյունը՝ 10,4% և 2,0%: Այս փաստերը վկայում են Երևանում գոյություն ունեցող սոցիալական և բարոյական խնդիրների մասին, որոնք համեմատաբար թույլ են արտահայտվում գյուղական բնակավայրերում:

Ընտանեկան համակարգի փոփոխությունների մասին կարելի է որոշակի պատկերացում կազմել նաև ամուսնալուծությունների նկատմամբ վերաբերմունքի միջոցով:

Աղյուսակ 22

Բնակչության կարծիքը ամուսնալուծությունների մասին, %

Դատողություններ	%
Եթե զույգերը երջանիկ չեն, ապա ամուսնալուծությունը ընդունելի է, եթե անգամ կան երեխաներ	38,3
Ամուսնալուծությունը նպատակահարմար չէ, եթե կան երեխաներ	15,1
Ընդհանրապես դեմ եմ ամուսնալուծություններին	40,4
Դժվարանում է պատասխանել	6,2
Ընդամենը	100,0

Ինչպես տեսնում ենք, ամուսնալուծությունների նկատմամբ բնակչության վերաբերմունքը միանշանակ չէ: Անգամ ոչ վաղ անցյալում, Հայաստանում ամուսնալուծությունները չէին խրախուսվում: 1980թ. հետազոտությունների տվյալներով ամուսնալուծություններին կտրականապես դեմ են եղել հարցվողների 67,2%-ը[58]: Փաստորեն, նշված ժամանակահատվածում ամուսնալուծությունների նկատմամբ վերաբերմունքն ավելի հանդուրժողական է դարձել և եթե այս միտումը զարգանա, ապա կարող է նպաստել ավանդական ընտանիքի քայքայմանը: Ամուսնալուծությունների նկատմամբ սոցիալական տարբեր շերտերի վերաբերմունքում նկատվում են առանձնահատկություններ: Կանայք, տղամարդկանց համեմատ, ավելի հանդուրժողական են դրանց նկատմամբ: Ամուսնալու-

58 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության էթնոսոցիոլոգիայի բաժնի արխիվ:

ծություններին կտրականապես դեմ են եղել տղամարդկանց 53,4%-ը իսկ կանանց՝ 30,8%-ը: Երիտասարդները, ավագ տարիքային խմբերի համեմատ, ավելի շատ են նշել «ընդհանրապես դեմ եմ» տարբերակը, համապատասխանաբար՝48,8% և 36,1%, որը կարելի է բացատրել ընտանիք կազմելու ձգտմամբ: Առավել մեծ տարբերություններ են գրանցվել գյուղի և քաղաքի բնակչության պատասխաններում: Ամուսնալուծություններին Երևանում կտրականապես դեմ են արտահայտվել հարցվողների 28,0%-ը, մյուս քաղաքներում՝ 38,5%-ը իսկ գյուղերում՝52,0%-ը, որը վկայում է հայ ավանդույթների պահպանման գործում գյուղի կարևոր դերի մասին:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՄՈԴԵԼՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1. Միգրանտների ընտանիքի ուսումնասիրության տեսական մոտեցումները

Արդի փոխակերպվող հասարակությունում ընտանիքը փնտրում է այնպիսի ուղիներ, որոնք առավել կհամապատասխանեն ձևավորված նոր հարաբերություններին և այդ ինստիտուտի բովանդակային փոփոխություններին: Օրինակ՝արևմտյան հասարակությունում զգալիորեն ավելացել է պայմանագրային ամուսնությունների, համատեղ ապրող, սակայն պաշտոնապես չգրանցված զույգերի, կրկնակի ամուսնությունների, միասեռականների, միայնակ ապրողների, ինչպես նաև ծնողներով երեխա դաստիարակելու անհրաժեշտությունը և ընտանիքը չկարևորող, սակայն երեխաներ ունեցողների թիվը: Այդ բոլորը հանգեցրել է ամուսնությունների թվի կրճատման, ծնելիության անկման, արտամուսնական կապերից երեխաների թվի ավելացման, կամավոր անզավակ ընտանիքների քանակի աճի և այլն[1]:

Հայ հասարակությունում դարեր շարունակ ընտանիքը համարվել է սոցիալականացման գլխավոր գործակալ, որի միջոցով տեղի է ունեցել տարբեր սերունդների կողմից գիտելիքների և ավանդական դերերի յուրացում: Սակայն արդի համաշխարհայնացման և միգրացիոն գործընթացները, տեղեկատվական հոսքերը և նոր ձևավորված ինստիտուցիոնալ կառույցների հետ շփում-

1 *Митрикас А. А.* Семья как ценность: Состояние и перспективы ценностного выбора в странах Европы// Социологические исследования (далее СИ), 2004, N 5, с. 65–73

ներն իրենց ազդեցությունն են թողնում ավանդական ընտանիքի կազմի, կառուցվածքի և ներընտանեկան հարաբերությունների վրա: Մասնավորապես, Հայաստանում աշխատանքային միգրացիայի հետևանքով լայն տարածում է ստացել «հեռավորության վրա ձևավորված» ընտանիքի մոդելը. ընտանիքի տան գլխավորը և նաև որոշ անդամներ տարվա մի մասը երկար ժամանակով գտնվում են հանրապետությունից դուրս: Այսինքն՝ ընտանիքը երկատվում է, և խախտվում է նրա բոլոր անդամների՝ մեկ հարկի տակ ապրելու կարևոր դրույթը: Այդ իսկ պատճառով այս բաժնում կքննարկենք աշխատանքային միգրացիայի հետևանքով ընտանիքներում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և էթնոմշակութային փոփոխությունները և ծառացած հիմնախնդիրները: Որպես կարևոր հետազոտական հարց՝ կվերլուծվի, թե աշխատանքային միգրացիան ինչ փոփոխություններ է առաջ բերում ընտանիքի կազմում և ներընտանեկան հարաբերություններում, գործառույթներում, կենսափուլերում, արժեքային համակարգում: Խնդրո առարկա կդառնա նաև, թե միգրացիայի հետևանքով ընտանիքում թուլանո՞ւմ է արդյոք տղամարդու իշխանությունը՝ նպաստելով հայրիշխանական համակարգից անցմանը մայրիշխանականին կամ էգալիտարին (իշխանության հավասարաչափ բաժանումը տղամարդու և կնոջ միջև): Այսինքն՝ տեղի ունենո՞ւմ է արդյոք անցում ավանդականից ժամանակակից ընտանիքի տիպին, այն ի՞նչ ազդեցություն է թողնում աստիճանակարգային կառուցվածքի վրա, փոխվո՞ւմ են արդյոք տղամարդու և կնոջ կարգավիճակը, ներընտանեկան և միջընտանեկան դերերը և պարտականությունները: Թե՞ ընդհակառակը՝ հասարակության մեջ աշխատանքային միգրանտը շարունակում է ընկալվել որպես «ուժեղ տղամարդ», որն ընտանիքի համար դրսում գումար պետք է վաստակի և ունենա խոսքի առաջնայնություն, իսկ կանայք պետք է զբաղվեն երեխաների դաստիարակությամբ և տան գործերով: Մյուս կողմից՝ կանայք, որոնք առավել ակտիվ են մասնակցում միգրացիոն գործընթացներին և ավելի հաճախ են հատում սահմանները, կարող են դառնալ ավելի ազդե-

ցիկ այն ընտանիքներում, որտեղ ամուսինն անգործ է[2]: Իսկ անգործ տղամարդիկ հոգեբանորեն համարվում են ընտանիքի ոչ լիարժեք անդամ և զուգընկեր՝ ազդելով ամուսնական հարաբերությունների վրա: Միգրանտ կանանց շրջանում փոփոխվում է նաև նրանց վերարտադրողական վարքագիծը՝ ենթարկվելով խիստ վերահսկողության:

Մինչ այդ հիմնախնդիրների քննարկումը բնութագրենք ընտանիքը: Ընտանիքի միջգիտակարգային ուսումնասիրության հիմնախնդիրը ներկայումս տարբեր հետազոտողների՝ ազգագրագետների, սոցիոլոգների, հոգեբանների, մշակութաբանների, իրավաբանների, տնտեսագետների, բժիշկների և այլ մասնագետների ուշադրության կենտրոնում է[3]: Ընտանիքը բնութագրվում է որպես ամուսնության կամ ազգակցության հիման վրա ձևավորված փոքր խումբ, որին բնորոշ են կենցաղի միասնությունը, փոխադարձ օգնության դրսևորումը և բարոյական պատասխանատվությունն անդամների միջև: Նրա անդամները, որպես կանոն, ապրում են համատեղ նույն հարկի տակ, միմյանց հետ կապված են ամուսնական (կին-տղամարդ) կամ արյունակցական կապով (ծնողներ-երեխաներ, երեխա-երեխա, եղբայր-քույր): Այն դեպքում, երբ ընտանիքի տան գլխավորը կամ անդամները մեկնում են աշխատանքային միգրացիայի, և, հետևաբար, ամուսինները ապրում են առանձին, կամ նրա մյուս անդամների միջև սահմանափակվում են անմիջական և կրկնվող հարաբերությունները, ապա դրանով իսկ խաթարվում է մեկ ընդհանուր տանիքի տակ ապրելու նրա կարևոր հատկանիշներից մեկը:

Անդրադառնանք ընտանիքը մեկնաբանող սոցիոլոգիական հայեցակարգերին, որոնք հնարավորություն կտան համակողմանիորեն քննարկելու այն փոխակերպումները, որոնք աշխատանքա-

2 *Ravenstein E. G.* The Laws of Migration // Journal of the Statistical Society of London, Vol. 48, No. 2. (June, 1885), pp. 167–235.

3 *Билан Ю. В., Чабелкожа И.* Интердисциплинарный подход к исследования миграционных процессов// СИ, 2015 N 9, с.71-73.

յին միգրացիայի հետևանքով դրսևորվում են նրանց ընտանիքներում: Ընտանիքի ուսումնասիրության տեսական մոտեցումներից են կառուցվածքային-գործառնական, կոնֆլիկտայնության, սիմվոլիկ ինտերակցիոնալ, համակարգային, փոխանակման, ֆեմինիստական, կենսաէկոլոգիական և այլ տեսություններ, որոնք անդրադարձել են այդ հիմնախնդրին[4]:

Կառուցվածքային-ֆունկցիոնալ տեսությունը, որը ձևավորվել է XX դարի սկզբին, հասարակությունը դիտարկում էր որպես մի համակարգ՝ կազմված միմյանց հետ սերտորեն կապված կառուցվածքային տարրերից: Դրանք հասարակության ամբողջական համակարգի պահպանման համար կատարում են որոշակի գործառույթներ: Համաձայն այդ մեթոդի՝ հասարակության մեջ ձևավորված հարաբերությունները, գործողությունները և ընդհանրապես ամենատարբեր երևույթները պետք է բացատրել միմյանց հետ փոխկապակցված գործառույթների միջոցով, որոնք նրանք իրականացնում են այս կամ այն սոցիալական հանրույթներում կամ սոցիոմշակութային համակարգում: Այն կողմնորոշված է սոցիալական համակարգերի կառուցվածքի և այդ համակարգի տարրերի միջև կապերի ուսումնասիրությանը, այսինքն՝ ինչպես են նրա առանձին մասերը ներգործում ընդհանուրի կառուցողականության վրա: Ընտանիքը դիտարկվում էր որպես հասարակության մաս և վերլուծվում գործառույթների կամ սոցիալական պահանջմունքների տեսանկյունից, որին նա ծառայում է: Առանձնահատուկ տեղ էր հատկացվում վերջին երկու հարյուր տարիների ընթացքում ընտանիքի գործառույթների փոփոխությանը: Դրանք հանգեցրել են ընտանիքի թուլացմանը: Օրինակ, երիտասարդների շրջանում հանցագործությունների ավելացումը, ամուսնալուծությունների աճը, ծնողների իշխանության թուլացումը փաստում են ընտանիքի՝ որպես կարևոր սոցիալական ուժի փլուզման մասին[5]: Ըստ նրանց՝ ըն-

4 *Гурко Т. А.* Теоретические подходы к изучению семьи, М., Институт социологии РАН, 2016, с. 1–10:

5 *Огборн Д.* и *Нимкофф Р.* Семья в новой исторической ситуации // Социологические исследования, 2005, 3, С. 7–10.

տանիքը կատարում է տնտեսական գործառույթ: Յուրաքանչյուր հասարակության մեջ ընտանիքին վերապահված է կարևոր տնտեսական դեր: Գյուղացիական տնտեսությունում և արհեստագործական արտադրությունում ընտանիքը համարվել է միասնական կոոպերատիվ աշխատանքային միավորում: Պարտականությունները բաժանվել են ընտանիքի անդամերի սեռատարիքային կազմին համապատասխան: Սակայն, արդյունաբերության զարգացմանը զուգահեռ, ընտանիքը դադարեց միասնական կոոպերատիվ տնտեսական միավոր լինելուց, և նրա անդամները սկսեցին աշխատել տնից դուրս: Արդյունաբերական հասարակությունում անհետանում են շատ խիստ ամրապնդված ընտանեկան կարգավիճակները: Կանայք ստիպված էին աշխատել տնից դուրս՝ ընտանիքի գոյատևման համար անհրաժեշտ գումար վաստակելու, և քանի որ նրանք աշխատավարձ էին ստանում, նրանց դիրքը, մեծ հաշվով, ավելի էր մոտենում տղամարդկանց կարգավիճակին: Հասարակության շրջանում զանգվածային կրթական համակարգի ներդրումը փոխում է ընտանիքի կարևոր գործառույթներից մեկը՝ երեխաների սոցիալականացումը, և ընտանիքին զուգահեռ՝ կտրուկ աճում է այդ գործառույթը կատարող գործակալների թիվը: Ֆունկցիոնալիստների տեսանկյունից՝ ընտանիքը հասարակության կայուն տարրերից է և իր գործառույթներով սերտորեն առնչվում է հասարակության հետ՝ որպես ամբողջի: Թ. Պարսոնսը նշում է. ամբողջ սոցիալական համակարգը, ներառյալ՝ ընտանիքը, կատարում է 4 խումբ գործառույթ. առաջին՝ ադապտացիոն (հարմարվելու): Յուրաքանչյուր սոցիալական համակարգ հարմարվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին կարգի փոփոխությանը: Երկրորդ համընդհանուր (ունիվերսալ) գործառույթը նպատակին հասնելն է: Համակարգը սահմանում և հասցնում է դրված նպատակին: Այդ գործառույթն ապահովում է համակարգի ինքնազարգացումը և դրա գործելու ընդունակությունը: Երրորդը ինտեգրացիոնն է, որը համակարգում և միավորում է բոլոր տարրերը և գործառույթները: Չորրորդը՝ ընդօրինակելիությունը և դրա պահպանումն է: Սոցիա-

լական երևույթի բոլոր փոփոխականության, ինքնապաշտպանության և կայունության համար անհրաժեշտ է պահպանել և փոխանցել վարքի, մշակութային սկզբունքների և արժեքների ձևերը: Այս գործառույթն ընտանիքը դարձնում է մշակութային ավանդույթի, սովորույթների փոխանցման գործակալ՝ սերնդեսերունդ ապահովելով նրանց շարունակականությունը: Ընտանիքը՝ որպես սոցիալական համակարգ, պետք է այնքան կազմակերպված լինի, որ համակցվի այլ համակարգերի հետ: Նրա կարծիքով՝ ընտանիքը մասնակիորեն կորցնում է այդ գործառույթները և դառնում առավել մասնագիտացված ինստիտուտ՝ առավել արդյունավետ իրականացնելով երեխաների սոցիալականացման գործառույթը, ժամանակակից արդյունաբերական հասարակությունում պատրաստելով նրանց՝ ապագայում կատարելու մեծերի դերերը[6]: Այսպիսով, ըստ ֆունկցիոնալիստների, հասարակության մեջ գոյություն ունեցող կառուցվածքային մասերը կարգավորված մեխանիզմի տարրեր են, որոնք անընդհատ հարմարվում են մեկը մյուսին: Ընտանիքը նույնպես համարվում է այդ ամբողջի մի մաս: Ընտանիքը բարդ համակարգ է, իսկ նրանք անտեսում էին անդամների միջև գոյություն ունեցող անհատական հոգեբանական տարբերությունները և հետաքրքրությունները, շահերի բախումները:

Կոնֆլիկտայնության ուղղության ներկայացուցիչները նշում են, որ ընտանիքում կոնֆլիկտները բնական և անխուսափելի երևույթ են: Ինչպես հասարակության մեջ, այնպես էլ ընտանիքում դրանք համարվում են իշխանության և հսկողության հաստատման համար պայքարի արդյունք: Ընտանիքի ներսում իշխանության բաշխման կարգն իր ազդեցությունն է ունենում նաև որոշումների ընդունման հարցում: Որպես կանոն՝ ընտանիքի այն անդամները, որ մեծ հաշվով տիրապետում են նյութական միջոցներին, ձեռք են բերում մեծ իշխանություն՝ կարողանալով ազդել նաև որոշումների կայացման

6 *Парсонс Т.* Понятие общества компоненты и их взаимоотношения, THESIS, 1993, вып. 2, http://ecsocman.hse.ru/data/876/582/1217/2_2_1pars.pdf (12.10. 2016)

վրա: Ընտանիքում իրագործվում է տնտեսական արտադրություն և նյութական միջոցների վերաբաշխում, ընդ որում, նրա յուրաքանչյուր անդամի շահը բախվում է մնացած անդամների շահերի հետ: Այդ կոնֆլիկտները ծագում են՝ կապված եկամտի ձեռքբերման չափերի և ծախսերի, նրա անդամների միջև ռեսուրսների անհավասարաչափ բաշխման, որոշումների ընդունման մասնակցության չափերի, տնային աշխատանքի կատարման, երեխաների դաստիարակության և հիմնախնդիրների հետ[7]:

Ընտանեկան կոնֆլիկտների պատճառներում կարևորվում են միկրո և մակրոմիջավայրի սոցիալական գործոնները: Միկրոմիջավայրի գործոնները ներառում են ընտանիքի ֆինանսական վիճակի վատթարացումը, աշխատավայրում մեկ կամ երկու ամուսինների չափազանց մեծ զբաղվածությունը, ամուսինների կամ նրանց ընտանիքի անդամների բարեկամների բնականոն աշխատանքի հնարավորությունը, առանձին բնակարանների բացակայությունը, մանկական հաստատություններում երեխաներին տեղավորելու հնարավորության բացակայությունը և այլն: Ամուսինների մեջ սիրո առկայությունը ազդում է իշխանության բաշխման վրա: Առավել շատ սիրող ամուսինը, լինելով հոգեբանական մեծ կախվածության մեջ, ունի ավելի քիչ իշխանություն: Միմյանց նույն չափով սիրող ամուսիններն ընտանիքում սովորաբար ունենում են հավասար իշխանություն: Քանի որ կանայք սովորաբար ավելի շատ են իրենց սերն արտահայտում ամուսնու նկատմամբ, հետևաբար, ամուսնությունը դիտարկվում է որպես փոխանակման մի ձև՝ սոցիալ-տնտեսական բարիքների փոխարեն, որը ամուսնու մոտ ավելի շատ է, կինն ամուսնուն տալիս է իր սերը:

Բնութագրելով մակրոմիջավայրի գործոնները՝ պետք է ընդգծել, որ երկրում սոցիալական և տնտեսական կայունությունը օգնում է նվազեցնել ներընտանեկան հակամարտության մակարդակը: «Կայուն պետությունը կայուն ընտանիք է, կայուն ընտանիքը

7 *Хартманн П.* Семейные конфликты в современном обществе, М., Реф. сборник Академии наук, 1989.

կայուն, դինամիկ զարգացող պետություն է: Կատարելով կոնֆլիկտների դասակարգում՝ հարկ է առանձնացնել մի շարք հիմնավորումներ: Դրանցից ելնելով՝ ընտանեկան հակամարտությունների բազմազանությունը կարելի է դասակարգել.

1. Արժեքային՝ հակառակ շահերի արժեքների առկայություն:
2. Դիրքորոշումային՝ պայքար ընտանիքում առաջնորդության համար:
3. Ընտանիքի անդամներից մեկի «ես»-ի կարևորության ճանաչման հարցում պահանջմունքների անբավարարվածություն:
4. Ամուսինների սեռական և սեռահոգեբանական անհամապատասխանություն:
5. Զգացմունքային՝ դրական զգացողությունների հարցում անբավարարվածություն (փաղաքշանքի, հոգածության, ընտանիքի անդամի կողմից ուշադրության և փոխըմբռնման բացակայություն):
6. Տնտեսական և տնտեսավարման՝ ամուսինների հակառակ տեսակետներն ընտանիքի վարման հարցում և յուրաքանչյուրի, ինչպես նաև ընտանիքի մյուս անդամների մասնակցությունն այս գործընթացին:
7. Ընտանիքի ծանր նյութական վիճակ[8]:

1.2. Միգրանտների սեռատարիքային կազմը և կրթական բնութագիրը

Հետազոտությանը մասնակցած Հայաստանի վեց մարզերի և Երևան քաղաքի 384 ընտանիքներից 126-ն ունեին աշխատանքային միգրանտներ: Այդ ընտանիքների 69,8%-ից արտագնա աշխատանքի է մեկնել մեկ, 25.4%-ից՝ երկու, 4%-ից՝ երեք, իսկ 0.8%-ից՝ չորս միգրանտ: Առկա միգրանտների թիվը կազմել է 164 մարդ: Հարցված ընտանիքներից յուրաքանչյուր երրորդն ունի աշխատանքային

8 *Гурко Т. А.* Теоретические подходы к изучению семьи, М., Институт социологии РАН, 2016, с. 81-92.

միգրանտ (այդ տվյալները վերաբերում են վերջին 5 տարվա աշխատանքային միգրանտներին):

Աղյուսակ 1

Միգրանտ ունեցող ընտանիքների և միգրանտների թիվը, %

Միգրանտներ	Միգրանտ ունեցող ընտանիքների թիվը	Ընտանիքներում միգրանտների թիվը
1 միգրանտ	69,8	76,8
2 միգրանտ	25,4	19,5
3 միգրանտ	4,0	3,0
4 միգրանտ	0,8	0,6
Ընդամենը	100,0	100,0

Վիճակագրական վերը բերված տվյալները փաստում են այդ գործընթացին Հայաստանի բնակչության ակտիվ մասնակցության մասին: Մյուս կողմից, այդ ցուցանիշներից կարելի է եզրակացնել, որ այն ընտանիքներից, որտեղից աշխատանքային միգրացիայի է մեկնում երկու և ավել մարդ, մասնակիցների միջև գոյություն ունեն սերտ ազգակցական կապեր:

Հետազոտության արդյունքներով՝ աշխատանքային միգրացիայի մասնակցության ցուցանիշները բարձր են գյուղական ընտանիքներում (56,7%)՝ դառնալով նրանց եկամուտների ձևավորման կարևոր աղբյուրներից մեկը: Աշխատանքային միգրացիայի հոսքերի ձևավորման մյուս կարևոր աղբյուրը Հայաստանի քաղաքային բնակավայրերն են (Երևանում՝ 9,8%, իսկ մյուս քաղաքներում՝ 33,5%, տես գծապատկեր 1):

Հատկապես վերջինիս բնակչությունը Խորհրդային Միության փլուզումից և այնտեղ գոյություն ունեցող արդյունաբերական ձեռնարկությունների փակվելուց հետո ունի զբաղվածության լուրջ խնդիր: Նրանց մի մասը, արդյունաբերության ոլորտում լինելով բարձր որակավորմամբ մասնագետներ, ստիպված էր աշխատանք փնտրել այլ երկրներում: Ինչ վերաբերում է Երևանից մեկնողներին, որը համեմատաբար կազմել է ցածր տոկոս, նրանց մի մասը մայրաքաղաք տեղափոխված գյուղաբնակներն են, որոնք իրենց

կապերը սերտորեն պահպանում են նախկին բնակավայրի և հարազատների հետ: Ազգակցական և սոցիալական այդ ցանցերի միջոցով նրանք շարունակում են մեկնել արտագնա աշխատանքի: Օրինակ՝ Երևանում բնակվող մարտունեցիների, շիրակցիների, լոռեցիների որոշ մասը արտագնա աշխատանքի էր մեկնում համագյուղացիների հետ: Նույն միտումն էր դիտարկվել նաև երևանաբնակ ջավախքցիների շրջանում:

Գծապատկեր 1

Աշխատանքային միգրանտների բնակավայրը, սեռը, տարիքը, %



Ըստ գծապատկեր 1-ի՝ աշխատանքային միգրանտների գերակշռող մեծամասնությունը ակտիվ աշխատունակ տարիքում է, նրանց 47,6%-ը պատկանում է միջին, 29,9%-ը՝ ավագ, իսկ 22,6%-ը՝ երիտասարդ սերնդին: Ակներև է, որ բացարձակ մեծամասնությունը հանրապետությունից դուրս աշխատանքի է մեկնում վերարտադրողական տարիքում, ինչն էլ իր բացասական ազդեցությունը կարող է թողնել ծնելիության պլանավորման խնդիրների վրա:

Ըստ սեռային բաշխվածության՝ այդ ընտանիքներում միգրանտների 89,6%-ը տղամարդ է, իսկ 10,4%-ը՝ կին: Կանանց մասնակցությունն այդ գործընթացին արձանագրում է հայ ընտանիքում նրանց կարգավիճակներում և դերերում տեղի ունեցած փոփոխությունները, քանի որ ավանդաբար այդ աշխատանքներով հիմնա-

կանում զբաղվել է տան տղամարդը: Մեկ այլ հետազոտության արդյունքներով՝ կին միգրանտների մասնաբաժինը 2002–2004 թթ, 14,1%-ից նվազել է՝ 2005–2006 թթ. հասնելով 6,5%-ի[9]:

Կանանց միգրացիոն շարժունության ակտիվության վրա իր ազդեցությունն է թողնում նաև բնակավայրի տիպը: Հետազոտության արդյունքներով Երևանից կին աշխատանքային միգրանտների թիվը կազմել է ավելի բարձր տոկոս (25,0%), քան Հայաստանի այլ քաղաքներից (11%): Գյուղական բնակավայրերում դեռևս ամուր կերպով պահպանվող ավանդույթների և սովորույթների պայմաններում կանայք այդ հարցում ավելի պահպանողական են՝ 7,5% (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2

Միգրանտների բնակության վայրը՝ ըստ սեռի, %



Որոշ հետազոտողների կարծիքով՝ Հայաստանը, որպես աշխատուժ արտահանող պետություն, եզակի է այն առումով, որ այդ գործընթացում գերակշռում է տղամարդկանց մասնակցությունը՝ առանձնացնելով մեզ աշխարհում տեղի ունեցող աշխատանքային միգրացիայի հոսքերի ֆեմինիզացման համընդհանուր միտումնե-

9 Միգրացիան և զարգացումը: Հայաստանում առակա իրավիճակի ուսումնասիրություն, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Եր., 2009, էջ 13:

րից[10]: Աշխատանքային միգրացիայով զբաղվելը համարվում է «ուժեղ տղամարդու» գործունեության ոլորտ, նա պատրաստ է դրսում կատարելու ծանր ֆիզիկական աշխատանքներ և հաղթահարել բոլոր դժվարությունները: Դրանով հանդերձ՝ վերջին տարիներին Հայաստանից ՌԴ-ում աշխատող հայ կանանց թիվն ունեցել է աճի միտում՝ 7,6%: Համեմատության համար նշենք, որ ՌԴ-ում Ղազախստանի կին միգրանտները կազմել են 2,1%, Վրաստանինը՝ 2,4%, Բելառուսինը՝ 3,9%: Իսկ ամենաբարձր ցուցանիշները կին միգրանտների շրջանում գրանցվել են նախկին խորհրդային հանրապետություններից՝ Ուզբեկստանից (30,2%), Ուկրաինայից (17,2%), Կիրգիզիայից (13,0%), Տաջիկստանից (9,9%), այնուհետև՝ Մոլդովայից (9,3%)[11]: Նրանց գերակշիռ մասն ակտիվ աշխատունակ և վերարտադրողական տարիքում է: ՌԴ-ում աշխատող հայ կանանց 11,3%-ը նշել է, որ մեկնել է կարճ ժամանակով, 5,6%-ը՝ սեզոնային, 23,9%-ը՝ համարյա ամբողջ տարին գտնվել է այնտեղ, 38,3%-ը՝ գործնականորեն տուն չի վերադարձել և մշտապես այնտեղ է[12]: Այն տեսակետը, որ աշխատանքային միգրացիային մասնակցում են միայն երիտասարդ կանայք, այնքան էլ իրականությանը չի համապատասխանում, քանի որ, ըստ հետազոտության արդյունքների, համապատասխանաբար նրանց 5,4%-ը և 7,1%-ը պատկանում են 18–29 տ. և 30–49 տ., իսկ 16,3%-ը՝ 50 և բարձր տարիքային խմբերին (տե՛ս գծապատկեր 3):

Սա նշանակում է, որ հետխորհրդային Հայաստանում կանանց շրջանում դիտարկվում է տարածական սոցիալական շարժունության ակտիվացում, իսկ ընդունող երկրներում ձևավորվում է «կանացի» աշխատանքի կայուն պահանջարկ՝ ընդգրկելով սպասարկ-

10 ՀՀ միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն և կարիքների գնահատում, Եր., 2014, էջ 16, https://publications.iom.int/system/files/pdf/review_and_needs_assessment_arm.pdf (21.03.16):

11 Женщины-мигранты из стран СНГ в России (Под. ред. Е. В. Тюрюкановой), М., Макс Пресс, 2011, с. 9.

12 Նույն տեղում, էջ 19:

ման ծառայությունների և տնային աշխատանքների ոլորտները[13]:

Անդրադառնանք միգրանտների կրթական մակարդակին: Նրանք ընդհանուր առմամբ ունեն կրթական բարձր մակարդակ, միգրանտների 18,3%-ն ունի բարձրագույն կրթություն: Նրանց մեծ մասը բուհն ավարտելուց հետո Հայաստանում աշխատանք չգտնելու պատճառով մեկնում է արտագնա աշխատանքի՝ հիմնականում կատարելով որակավորում չպահանջող ֆիզիկական աշխատանքներ:

Գծապատկեր 3

Միգրանտների սեռատարիքային կազմը, %



Սա նշանակում է, որ հատկապես բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում աշխատանքային միգրացիայի ժամանակ տեղի է ունենում սոցիալական վարընթաց շարժունություն, քանի որ նրանք, հիմնականում ընդգրկվելով շինարարության ոլորտում, ստիպված կատարում են տարբեր տիպի աշխատանքներ: Մյուս կողմից՝ կրթական այդպիսի ցուցանիշներ ունեցողներն իրենց սոցիալական վիճակից հայտնվում են մեկ այլ սոցիալական վիճակի սահմանագծում՝ ավելի խորացնելով լուսանցքայնության երևույթը: Վերջինս նրանց մեջ առաջ է բերում մշակույթի, սոցիալական կարգավիճակի և դերերի փոփոխություն: Իրենց որակավորմանը հա-

13 *Карачурина Л.* Женщины- мигранты в нише домашнего труда В России// СИ, 2015, N 5, с. 93-101.

մապատասխան աշխատանքներով չզբաղվելը բացասաբար է ազդում նաև նրանց զարգացման հետագա կարողությունների վրա: Աշխատանքային միգրանտների մեծամասնությունն (51,2%) ունի միջնակարգ կրթություն: Միգրանտների մոտ մեկ քառորդը (24,4%) ստացել է միջին մասնագիտական, իսկ 4,3%-ը՝ նախնական մասնագիտական կրթություն, և դրանց մեծ մասը արդյունաբերական և ոչ արդյունաբերական ոլորտների մասնագիտություններ են: Դրա շնորհիվ՝ նրանց մի մասը արտագնա աշխատանքի վայրում աշխատում է իր մասնագիտությամբ (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Միգրանտների կրթական մակարդակը, %

Կրթություն	Հաճախականություն
Տարրական	0,0
Թերի միջնակարգ	1,8
Միջնակարգ	51,2
Նախնական մասնագիտական	4,3
Միջին մասնագիտական	24,4
Բարձրագույն	18,3
Ընդամենը	100,0

Բարձրագույն կրթություն ունեցող միգրանտների քանակում, ըստ հարցված միգրանտների սեռերի համամասնության, կանայք 10% են: Բարձրագույն կրթությամբ կանանց գերակշռող մասը արտագնա աշխատանքի վայրում նույնպես չի կարողանում իր մասնագիտությամբ աշխատանք գտնել՝ ընդգրկվելով որակավորումից ցածր աշխատանքներում (տե՛ս գծապատկեր 4):

Ներկայացված վիճակագրական տվյալները փաստում են, որ հայ կանայք նույնպես ներգրավված են միջազգային միգրացիոն գործընթացներում, և այդ հիմնախնդրի ուսումնասիրության ժամանակ չպետք է անտեսել նրանց դերը: Այս առումով կարևոր է նաև այն հարցը, թե հայ կանանց մասնակցությունը փոխո՞ւմ է արդյոք միգրացիայի վերաբերյալ հասարակության գենդերային պատկե-

րացումները, ինչ վերաբերմունքի են արժանանում, քանի որ դրանով իսկ նրանք իրենց վրա են վերցնում տղամարդկանց գործառույթների և հատկանիշների մի մասը:

Գծապատկեր 4

Կրթական մակարդակը՝ ըստ միգրանտների սեռի, %



Այն հարցին, թե «Որքանո՞վ եք համաձայն, երբ հայ կանայք մեկնում են արտերկիր աշխատանքի», բացասական կարծիք է հայտնել 40,6%-ը: Նրանք նշել են, որ միգրացիան հարիր չէ հայ կանանց: Ընդ որում, միգրանտ ունեցող ընտանիքների շրջանում այդ ցուցանիշն ավելի բարձր է (48,4%), քան միգրանտ չունեցողների (36,8%), և առաջինները, լինելով այդ գործընթացի անմիջական մասնակիցը, առավել լավ են պատկերացնում կանանց առջև ծառացած աշխատանքային դժվարությունները: Հարցվածները, հիմնվելով ավանդական արժեքների և գենդերային դերերի պատկերացումների վրա, կանանց միգրացիան չեն խրախուսում, և նրանց այդ վարքագիծը երբեմն քննարկվում է ավանդական արժեհամակարգի և բարոյահոգեբանական հարթությունում: Միգրանտ չունեցող ընտանիքներից հարցվածների 50,0%-ը և միգրանտ ունեցողների 34,1%-ը վերապահումով են մոտեցել այդ հարցին և կանանց միգրացիային կողմ են միայն այն պայմանով, եթե նրանք միգրա-

ցիայի են մեկնում ոչ մենակ, այլ ամուսնու կամ հարազատի հետ: Ինչպես միգրանտ ունեցող, այնպես էլ միգրանտ չունեցող ընտանիքների փոքր մասն է (համապատասխանաբար 10,3% և 1,6%) կողմ արտահայտվել առանց հարազատի կամ ամուսնու՝ մենակ կանանց աշխատանքային միգրացիայի տարբերակին, իսկ 7,1%-ը և 10,9%-ը նրանց այդպիսի վարքագիծը պայմանավորել են Հայաստանում աշխատանքի բացակայության գործոնով (տե՛ս գծապատկեր 5):

Գծապատկեր 5

Կանանց՝ աշխատանքային միգրացիայի մեկնելու վերաբերյալ կարծիքներ, %



Համեմատության համար նշենք, որ խորհրդային տարիներին շատ քիչ թվով կանայք նույնպես արտագնա աշխատանքի են մեկնել, սակայն հիմնականում ամուսինների հետ՝ զբաղվելով սննդի և կենցաղի կազմակերպման խնդիրներով: Այդ կանանց որոշ մասը արտագնա խմբերի համար կատարել է նաև խոհարարական աշխատանքներ՝ պատրաստելով ազգային կերակրատեսակներ[14]:

14 *Գալստյան Մ.*, Արտագնացությունը Հայաստանում (XIX դարի երկրորդ կես–XX դարի 80-ական թթ.), Հայ ազգագրություն և բանահյուսություն, Եր., «Գիտություն» հրատ., 2009, էջ 29:

Հետխորհրդային տարիներին ավելացել է մենակ՝ առանց ամուսինների մեկնող կանանց թիվը: Այսպես, հայ կին աշխատանքային միգրանտների 50,6%-ը ՌԴ մեկնել է ինքնուրույն, իսկ 49,4%-ը՝ ամուսինների հետ[15]: Այդ առթիվ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքի ղեկավարը նշեց, որ իրենց համայնքից մի կին, որ երկար տարիներ ապրում է ՌԴ-ում, այնտեղ հիմնել է կազմակերպություն և զբաղվում է շինարարական աշխատանքներով: Նա ամեն տարի իրենց համայնքից մոտ 15–20 մարդ է տանում ՌԴ՝ շինարարական աշխատանքներ իրականացնելու: Նրան գյուղում անվանում են «առաջին կին փոդրադչին», որ զբաղվում է կանանց համար չնախատեսված աշխատանքներով: Գյուղում արտագնա աշխատանքով զբաղվելը և «շինարարական բրիգադ աշխատացնելը» համարում են տղամարդու գործ, իսկ նման դեպքերը՝ բացառություն[16]: Ներկա պայմաններում հայ կանանց գերակշռող մասը դրսում կատարում է տան մաքրման, երեխաների և տարեցների խնամքի գործեր, աշխատում է առողջապահական և հյուրանոցային ոլորտներում: Ի տարբերություն ՌԴ մեկնող կանանց, որոնց մեծ մասը, ինչպես արդեն նշեցինք, ունի ընտանիք, ապա հատկապես Թուրքիա, Արաբական Էմիրություններ մեկնողների մեծ մասը ամուսնալուծված կամ միայնակ մայր է: Նրանց բացակայության ժամանակ երեխաների խնամքով զբաղվում են ընտանիքի մյուս անդամները: Հետազոտության արդյունքներով, օրինակ, Գյումրիից և Վանաձորից կանանց տեղաշարժերին նպաստում են նաև տեղի միջնորդները, որոնք նրանց հավաքագրում և ուղարկում են Թուրքիա: Էթնիկ սոցիալական ցանցերի միջոցով ընդգրկվում են տան մաքրման, երեխաների, ծերերի խնամքի և մի շարք այլ ցածրակարգ աշխատանքներում, որոնք հիմնականում կրում են ոչ լեգալ բնույթ: Այդ կանայք, հաճախ ենթարկվելով խիստ շահագործման, երբեմն պաշտպանված չեն ֆիզիկական, սեռական ոտնձգու-

15 Женщины-мигранты из стран СНГ в России (Под. ред. Е. В. Тюрюкановой), М., Макс Пресс, 2011, с. 36.

16 *Գալստյան Մ.*, ԴՄՆ, Գեղարքունիքի մարզ, 2005:

թյուններից: Ընդհանուր առմամբ, կանանց այդ աշխատանքները մեծապես թերագնահատվում և վարձատրվում են շատ ցածր: Այնուհանդերձ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միգրացիայում հաջողություններ ունեցող կանայք վերադառնալուց հետո դառնում են կարծիք ձևավորողներ՝ այդ գործընթացում նոր կանանց ընդգրկելու համար: Կանանց միջոցով միգրացիոն ցանցերում երբեմն հայտնվում են նաև ընտանիքի անդամները և հարազատները: Կանանց որոշ մասն էլ ինքնուրույն է մեկնում աշխատանքային միգրացիայի՝ շնորհիվ մասնագիտական հմտությունների: Օրինակ՝ խորհրդային տարիներին Գյումրին համարվում էր տեքստիլագործության, տրիկոտաժի արտադրության խոշոր կենտրոն, որտեղ, բացի հայերից, աշխատում էին նաև Խորհրդային Միության տարբեր ծայրերից եկած կանայք: Հետխորհրդային շրջանում ձեռնարկությունների փակման հետևանքով այդ աշխատուժը դարձավ գործազուրկ, և նրանց մի մասը աշխատանքի մեկնեց ՌԴ-ի համանման կենտրոններ, հատկապես Իվանովո: Այսինքն՝ Հայաստանում միգրացիան նույնպես սկսել է ցուցաբերել ֆեմինիզացվելու միտում, և այդ գործընթացում աստիճանաբար աճում է կանանց թիվը, ու կարևորվում է նրանց դերը[17]: Ճիշտ է, կանայք, շնորհիվ միգրացիայի, նոր աշխատանքի հնարավորություն են ստանում և դառնում ընտանիքի կերակրող, սակայն այդ ընտանիքները երկատվում են, իսկ ընտանիքի տղամարդը և երեխաները հոգեբանական առումով տուժում են այդ վիճակից:

Հայաստանից կանանց միգրացիայի միտումների վրա մեծ ազդեցություն են թողնում դրսում ձևավորված էթնիկ սոցիալական ցանցերը և դրանում ընդգրկված նրանց ազգակիցները և բարեկամները: Նրանց մեծ մասը արտերկիր մեկնում է ազգակիցների և բարեկամների մոտ, որոնց անմիջական աջակցությամբ գտնում է նաև աշխատանք: Այդ մասին է վկայում այն, որ, ի տարբերություն

17 Արժանապատիվ աշխատանք որոնելիս. աշխատանքային միգրանտների իրավունքները, Ձեռնարկ արհմիության անդամների համար, Աշխատանքի միջազգային գրասենյակ, Եր., 2010, էջ 11:

ուկրաինուհիների, մոլդավուհիների, կիրգիզուհիների, տաջիկուհիների և ուզբեկուհիների (որոնք ՌԴ-ում հիմնականում բնակարան կամ սենյակ են վարձում կամ ապրում են հանրակացարանում), հարազատների, ընկերների մոտ ապրող հայ կանանց ցուցանիշը ամենաբարձրն է՝ 38,9%[18]:

Գծապատկեր 6

Կանանց աշխատանքային միգրացիայի վերաբերյալ կարծիքները՝ ըստ բնակավայրի տիպի, %



Հարցվածների բնակավայրի տիպը (քաղաք-գյուղ) իր ազդեցությունն է թողնում կանանց միգրացիայի վերաբերյալ կարծիքների ձևավորման հարցում: Ըստ հետազոտության արդյունքների՝ Երևանում հարցվածների միայն 26,4%-ը համաձայն չի եղել կանանց աշխատանքային միգրացիային, իսկ Հայաստանի մյուս քաղաքային բնակավայրերում այդ ցուցանիշը կազմել է 36,7%: Կանանց աշխատանքային միգրացիայի հարցում առավել պահպանողական հայացքներ ունեն գյուղաբնակները, նրանց 55,3%-ը դեմ է արտահայտվել այդ երևույթին (գծապատկեր 6): Հետազոտության

18 Женщины-мигранты из стран СНГ в России (Под. ред. Е. В. Тюрюкановой), М., Макс Пресс, 2011, с. 71.

արդյունքներով, անկախ հարցվածների տարիքային առանձնահատկություններից, կանանց աշխատանքային միգրացիայի վերաբերյալ երիտասարդ, միջին և ավագ սերունդների 40%-ն այդ երևույթի վերաբերյալ ունի բացասական դիրքորոշում՝ համարելով հայ կնոջը ոչ բնորոշ երևույթ (տե՛ս գծապատկեր 7):

Գծապատկեր 7

Կանանց աշխատանքային միգրացիայի վերաբերյալ կարծիքները՝ ըստ տարիքային կազմի, %



Այսինքն՝ հասարակության շրջանում առանց ամուսնու կամ հարազատների կանանց միգրացիան չի խրախուսվում՝ պայմանավորված այն մտայնությամբ, որ նրանք, մեկնելով հանրապետությունից, դուրս են մնում ամուսինների, ընտանիքի և համայնքի վերահսկողությունից: Այդ գործընթացին մասնակցող կանայք ընկալվում են որպես «շեղված» վարքագիծ ունեցողներ, ովքեր թերանում են մայրական պարտականությունների մեջ: Հասարակությունը դատապարտում է նաև այն տղամարդկանց, որոնց կանայք մեկնում են աշխատանքային միգրացիայի:

Աղյուսակ 3

Կանանց աշխատանքային միգրացիայի վերաբերյալ կարծիքները՝ ըստ հարցվածների սեռի, %

		Որքանով եք համաձայն, երբ հայ կանայք մեկնում են արտերկիր աշխատանքի					Ընդամենը
		Ընդհանուր առմամբ համաձայն եմ, քանի որ Հայաստանում աշխատանք չկա	Համաձայն եմ, եթե նա մեկնում է ամուսնու կամ հարազատի հետ	Համաձայն եմ, եթե նա մեկնում է նույնիսկ առանց ամուսնու կամ հարազատի	Համաձայն չեմ, քանի որ այն բնորոշ չէ հայ կնոջը	Դժվարանում է պատասխանել	
Միգրանտ ունեցող ընտանիք	Արական	5,2	27,6	8,6	58,6	0,0	100,0
	Իգական	8,8	39,7	11,8	39,7	0,0	100,0
	Ընդամենը	7,1	34,1	10,3	48,4	0,0	100,0
Միգրանտ չունեցող ընտանիք	Արական	6,7	42,9	1,9	47,6	1,0	100,0
	Իգական	13,7	54,9	1,3	29,4	0,7	100,0
	Ընդամենը	10,9	50,0	1,6	36,8	0,8	100,0

Հավաքված նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ կանանց միգրացիան սոցիալ-տնտեսական և հոգեբանական առումով հանգեցնում է նրանց անկախացման: Այդպես նրանք կարողանում են ոչ միայն դուրս գալ ավանդական վերահսկողության համակարգից և դառնալ ավելի ինքնուրույն, այլև վաստակած գումարների միջոցով լուծել իրենց և ընտանիքի առջև ծառացած մի շարք խնդիրներ: Այն ընտանիքներում, որտեղ կանայք դրսում ունեն աշխատանք և վաստակում են եկամուտներ, իսկ տղամարդիկ անգործ են, որոշումների կայացման առումով կանայք դառնում են ավելի ազդեցիկ: Չնայած դրան, այնուհանդերձ, կանայք այդ զբաղմունքը շարունակում են համարել ընտանիքի տղամարդու գործ, քանի որ իրենց մեկ-

նելով ավելի շատ տուժում են երեխաները: Նրանք իրենց տեղը և դերը շարունակում են տեսնել ընտանիքում՝ կանանց միգրացիան համարելով ոչ նորմալ երևույթ և դատապարտելով այն: Ըստ 3-րդ աղյուսակի տվյալների՝ աշխատանքային միգրացիային կանանց մասնակցությունը համարել է հայ կնոջը ոչ բնորոշ երևույթ ինչպես միգրանտ ունեցող, այնպես էլ միգրանտ չունեցող ընտանիքների կանանց որոշ մասը:

Այսպիսով, Հայաստանում կանանց շրջանում միգրացիայի աճի միտումները որոշակի բովանդակային փոփոխություններ են առաջ բերել, նրանց որոշ մասը այդ գործընթացի պասիվ դիտորդից վերածվել է ակտիվ մասնակցի:

1.3. Աշխատանքային միգրանտների ընտանեկան դրությունը

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ աշխատանքային միգրանտների 64,0%-ն ամուսնացած էր և այն վավերացրել է պաշտոնապես, 17,7%-ն այդ ամուսնությունը մի շարք պատճառներով չի օրինականացրել: Ամուսնությունը վավերացրած և չվավերացրած աշխատանքային միգրանտները (81,7%) արտագնա աշխատանքի ժամանակահատվածում ապրում են իրենց ընտանիքներից առանձին, դրա հետևանքով ներընտանեկան հարաբերություններում կրճատվում են ամուսին և կին, հայր և երեխաներ անմիջական շփումները: Ըստ նույն աղյուսակի տվյալների՝ միգրանտների 14,6%-ն ամուրի է, և այդ գործընթացին նրանց մասնակցության կարևոր դրդապատճառ է ամուսնության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ձեռքբերումը: Աշխատանքային միգրանտների 2,4%-ն ունի այրու, իսկ 1,2%-ը՝ ամուսնալուծվածի կարգավիճակ: Իրականում ամուսնալուծվածների թիվը կարող է ավելի բարձր լինել, քանի որ հատկապես այն ընտանիքներում, որտեղ առկա են երեխաներ, ելնելով հասարակական կարծիքի ազդեցությունից, ամուսնալուծությունների մի մասը դեռևս պաշտոնապես գրանցում չի ստանում (տե՛ս գծապատկեր 8):

Գծապատկեր 8

Աշխատանքային միգրանտների ամուսնական կարգավիճակը, %



Ամուսնությունը և ընտանիքում երեխաների առկայությունը խոչընդոտ չեն դառնում կանանց համար աշխատանքային միգրացիայի մեկնելու համար, սակայն այդ հանգամանքների առկայությունը միայն փոխում է նրանց միգրացիոն վարքի ձևերը: Հետազոտության արդյունքներով՝ աշխատանքային միգրացիայի մեկնելու պահին կանանց 10,5%-ը և 6,9%-ը համապատասխանաբար ունեին գրանցված և չգրանցված ամուսնություն, իսկ 4,2%-ը այրի էր (տե՛ս գծապատկեր 9):

Գծապատկեր 9

Միգրանտների ամուսնական կարգավիճակը՝ ըստ հարցվածների սեռի, %



Հետազոտությունը ցույց տվեց, որ հայ ընտանիքի ներկայիս կազմը և կառուցվածքը խթանում են նրա անդամների միգրացիոն վարքագծի ձևավորմանը:

Աղյուսակ 4-ում բերված տվյալներից կարող ենք եզրակացնել, որ, ի տարբերություն միգրանտ չունեցողների, միգրանտ ունեցողների գերակշիռ մասը (58,0%) բարդ կառուցվածք ունեցող եռասերունդ ընտանիքներից (42,1%-ը՝ ամուսին, կին, երեխաներ, ամուսնու կամ կնոջ ծնողներ, իսկ 15,9%-ը՝ ամուսին, կին, երեխաներ, ամուսնու կամ կնոջ ծնողներ, ամուսնացած/չամուսնացած քույր, եղբայր) են:

Աղյուսակ 4

Աշխատանքային միգրանտների ընտանիքի կազմը, %

Ընտանիքի տիպը	Ընտանիքներ	
	Միգրանտ ունեցող	Միգրանտ չունեցող
Ամուսին, կին	3,2	14,7
Ամուսին, կին, երեխաներ	34,1	38,8
Ամուսին, կին, երեխաներ, ամուսնու կամ կնոջ ծնողներ	42,1	17,4
Ամուսին, կին, երեխաներ, ամուսնու կամ կնոջ ծնողներ, ամուսնացած/չամուսնացած քույր, եղբայր	15,9	8,5
Ոչ լրիվ կազմով երկսերունդ ընտանիք	1,6	7,8
Ոչ լրիվ կազմով եռասերունդ ընտանիք	1,6	3,9
Միայնակ	0,0	8,9
Այլ կազմ (տատ, թոռ և այլն)	1,6	0,0
Ընդամենը	100,0	100,0

Ընտանիքի նման կազմը ոչ միայն չի խանգարում, այլև նպաստում է նրա մեկ կամ նույնիսկ մի քանի անդամի արտագնացությանը: Նույն ընտանիքից աշխատանքային միգրացիայի են մեկնում հայրը որդու (որդիների) կամ եղբայրները միմյանց հետ, իսկ այդ ընտանիքներում տղամարդկանց վերաբերող գործառույթները

նրանց բացակայության ժամանակ նույնպես կանայք են կատարում: Դրանք վերաբերում են ընտանիքում և ընտանիքից դուրս իրականացվող գործառույթներին, որոնք հայոց մշակույթում սովորաբար կատարում են տղամարդիկ: Չնայած ընտանիքում, համայնքում և հասարակության մեջ կանայք ստիպված կատարում են այդ դերերը, այնուհանդերձ, այդ հարցերում նրանց մեջ շարունակում են գերիշխել հայրիշխանական պատկերացումները: Նման մոտեցումը հանգեցնում է համայնքային կյանքում նրանց մասնակցության ակտիվության նվազեցմանը:

Որոշ ընտանիքներում, խորհրդային շրջանից սկսած, այդ գործընթացին մասնակցում է միգրանտների երրորդ սերունդը, իսկ զբաղմունքը փոխանցվում է ժառանգաբար: Այդ ընտանիքները վերածվել են ռեֆերենտային խմբի, իսկ նրանում ընդունված արժեքները և նորմերը դառնում են կողմնորոշիչ երիտասարդների համար: Նման մոտեցումը նաև լուծում է կարևոր կենսական խնդիր՝ աշխատանք ունենալու և դրամական միջոցներ ձեռք բերելու հարցում: Ելնելով դրանից՝ նրանք շատ հաճախ ընդօրինակում են իրենց ծնողների վարքը կամ ուղղակի հետևում են նրանց խորհուրդներին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

2.1. Աշխատանքային միգրացիայի մասնակցության սոցիալ-տնտեսական դրդապատճառները

Անդրադառնանք այն խնդրին, թե աշխատանքային միգրանտների վարքի ձևավորման և այդ գործընթացին մասնակցության վրա ինչ գործոններ են ազդում: Նշենք, որ անհատի միգրացիոն վարքի մեխանիզմների ձևավորման հարցում կարևորվում են նրա պահանջմունքները և շահերը՝ որպես նրա տնտեսական գործունեությունը խթանող կարևոր աղբյուր: Աշխատանքային միգրացիայի պատճառների վերաբերյալ առավել օբյեկտիվ պատկեր ստանալու նպատակով «որո՞նք են արտագնա աշխատանքի մեկնելու հիմնական պատճառները» հարցին հնարավորություն էր տրված պատասխանելու միայն թիրախ խմբին, այն ընտանիքներին, որոնք ունեին աշխատանքային միգրանտներ: Որպես պատճառ՝ նրանց 52,1%-ը մատնանշել է աշխատանքի, իսկ 3,7%-ը՝ մասնագիտական աշխատանքի բացակայությունը: Այսինքն՝ հարցվածների կեսից ավելին որպես միգրացիայի պատճառ նշել է Հայաստանում աշխատանքի բացակայությունը: Այդ պատասխանի համար իրական հիմքը, բնականաբար, Հայաստանում գոյություն ունեցող գործազրկության բարձր մակարդակն է, որը 2016 թ. դրությամբ կազմել է 243,7 հազ. մարդ[19]: Արտերկրում աշխատելու պատճառները պայմանավորող կարևոր գործոններից է նաև ընտանիքի առաջնային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ գումար վաստակելու հանգամանքը, որի կողմնակիցների թիվը կազմել է 23,5%: Ընդհանուր առմամբ, ընտանիքի տնտեսական ապահովման գործառույթը կա-

19 Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2016, http://www.armstat.am /file/article/ 15._trud_2016 _8.pdf (13.10.2016):

րևոր ազդեցություն է թողնում նրանց միգրացիայի վարքագծի ձևավորման գործում, և մեր հասարակությունում տղամարդկանց միգրացիան ընկալվում և ընդունվում է որպես ընտանիք պահելու կարևոր միջոց: Նրանց 12,9%-ը պլանավորել է դրսում գումար վաստակել տան կառուցման/գնման, 2,3%-ը՝ ամուսնության/հարսանիքի և այլ արարողությունների, 4,6%-ը՝ երկարատև օգտագործման ապրանքներ (ավտոմեքենա, կահույք և այլն) ձեռք բերելու համար: Հարցման մասնակիցների չնչին տոկոսն է, որ ցանկացել է աշխատանքային միգրացիայի միջոցով դրամ վաստակել և դրանով հայրենիքում ձեռք բերել արտադրության միջոցներ (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Աշխատանքային միգրացիայի մեկնելու պատճառները, %

Պատճառները	Հաճախականություն
Աշխատանքի բացակայությունը	52,1
Մասնագիտությամբ աշխատանքի բացակայությունը	3,7
Ընտանիքի առաջնային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	23,5
Տան կառուցման (գնման), վերանորոգման համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	12,9
Ամուսնության, հարսանիքի, օժիտի և այլ անհրաժեշտ արարողությունների համար գումարի բացակայությունը	2,3
Ավտոմեքենա, կահույք, տեխնիկա ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	4,6
Արտադրության միջոցներ ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	0,9
Ընդամենը	100,0

Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների 56,7%-ը, որպես աշխատանքային միգրացիայի պատճառ, նույնպես նշել է աշխատանքի բացակայությունը, իսկ 34,3%-ը՝ ընտանիք

«պահելու» համար բավարար միջոցներ վաստակելու անհնարինությունը, իսկ 9,0%-ը՝ երկրի/բնակավայրի զարգացման հեռանկարի բացակայությունը[20]:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ միգրանտների 91,5%-ը աշխատելու նպատակով գտնվել է ՌԴ-ում[21]: Բոլոր նախորդ հետազոտությունները նույնպես վկայում են, որ ՌԴ-ն միշտ էլ եղել է Հայաստանից աշխատանքային միգրացիայի հիմնական ուղղությունը[22]: ՌԴ մեկնելու կարևոր խթան են նաև այդ երկրի վերաբերյալ համեմատաբար բարձր տեղեկացվածությունը, վիզային պահանջների բացակայությունը, լեզվական արգելքների հաղթահարումը: Մեր կարծիքով, այդ գործընթացին նպաստում է նաև ՌԴ-ում մեծաքանակ հայկական համայնքի առկայությունը, որը, ըստ ՌԴ 2010 թ.պաշտոնական մարդահամարի տվյալների, կազմել է 1 մլն 182 հազ. 338 մարդ[23], իսկ ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ գրեթե երկու անգամ ավելի: Վիճակագրական տվյալների վերլուծությունից պարզվեց, որ Հայաստանից ՌԴ աշխատանքային միգրացիայի այդպիսի մեծ չափերը պայմանավորված են նաև աշխատաշուկայում ազատ աշխատատեղերի առկայությամբ: Այսպես, ըստ 2011 թ. վիճակագրական տվյալների՝ ՌԴ կենտրոնական դաշնային օկրուգում աշխատուժի պահանջարկը կազմել է 320 հազ. մարդ, հյուսիս-արևելյանում և հարավայինում՝ համապատասխանաբար 130 հազ. մարդ, Պովոլժիեի մարզում՝ 220 հազ. մարդ, Սիբիրյան դաշնային մարզում՝ 170 հազ. մարդ, Ուրալյան դաշնային մարզում՝100 հազ.

20 Գալստյան Մ., Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների միգրացիան (էթնոսոցիոլոգիական հետազոտություն), Եր., «Գիտություն» հրատ., 2015, էջ 143:

21 Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf (11.09. 17):

22 Միգրացիան և զարգացումը. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, 2009, էջ 12–13:

23 Всероссийская перепись населения, Национальный состав населения 2010, http://www.gks.ru/free_doc/new_site/ (12.02.16).

մարդ և այլն[24]: Դրանք գլխավորապես բարձր որակավորում չպահանջող աշխատատեղեր են: Օրինակ՝ նույն տարվա համար ՌԴ աշխատաշուկայում կար 140 հազ. բանվորի տեղ (օժանդակ աշխատողի), 50 հազ,՝ որմնադրի, 30 հազ.՝ բետոնագործի, 30 հազ.՝ ծեփագործի, 20 հազ.՝ հյուսնի, 20 հազ.՝ խոհարարի, 15 հազ.՝ արմատուրագործի և բեռնակրի պահանջարկ[25]: ԱՊՀ տարբեր երկրներից, այդ թվում՝ Հայաստանից, Ռուսաստանի Դաշնություն ակտիվ աշխատանքային միգրացիոն հոսքերն իրենց դրական և բացասական ազդեցությունն են թողնում այդ երկրի տնտեսության զարգացման վրա[26]:

2.2. Աշխատանքային միգրացիայի պատճառները և հետևանքները՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների

Միգրանտ ունեցող ընտանիքների տրված պատասխաններից կարող ենք եզրակացնել, որ աշխատանքի (նաև մասնագիտական) բացակայությունը, որպես միգրացիայի պատճառ, ի տարբերություն տղամարդկանց, կանանց շրջանում կազմել է ավելի բարձր տոկոս (տե՛ս աղյուսակ 6): Նշենք, որ այդ փաստը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանում տարիներ շարունակ աշխատանքի շուկայում գործազուրկների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է կանանց մեջ: Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2016 թվականին ՀՀ-ում 243,7 հազար գործազուրկներից 123,3 հազարը կանայք էին[27]:

---

24 Анализ потребности в работниках, заявленной работодателями в органы службы занятости, http://trudvsem.ru/Charts/ (12.02.16).

25 Сравнительный анализ спроса и предложения на рынке труда, http://trudvsem.ru/(12.02.16).

26 *Нехода Е.В.*, *Соловьева Н.Н.* Миграционные волны на российском рынке труда// СИ, 2016 4, с.31–36.

27 Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2016 http://www.armstat.am/file/article/15. (10.10.2017):

Աղյուսակ 6

Աշխատանքային միգրացիայի մեկնելու պատճառները՝ ըստ հարցվածների սեռի, %

Արտագնացության մեկնելու պատճառները	Արական	Իգական
Աշխատանքի բացակայությունը	50,0	53,8
Մասնագիտությամբ աշխատանքի բացակայությունը	3,1	4,2
Ընտանիքի առաջնային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	25,5	21,8
Տան կառուցման (գնման), վերանորոգման համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	13,4	12,2
Ամուսնության, հարսանիքի, օժիտի և այլ անհրաժեշտ արարողությունների համար գումարի բացակայությունը	3,1	1,7
Ավտոմեքենա, կահույք, տեխնիկա ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	5,1	4,2
Արտադրության միջոցներ ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	1,0	0,8
Ընդամենը	100,0	100,0

Հավաքված նյութերի վերլուծությունից պարզվում է, որ, ելնելով ընտանիքի ծանր տնտեսական վիճակից, կանայք ստիպված են դիմում այդ քայլին, և հատկապես Հայաստանի գյուղական համայնքներում դրանք հազվադեպ են:

Հայ հասարակությունում տղամարդիկ շարունակում են համարվել ընտանիքի համար նյութական բարիքներ ստեղծող և հիմնական կերակրող: Ընտանիքի առաջնային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ միջոցների ձեռքբերումն ստիպում է տղամարդկանց կտրվել իրենց ընտանիքից և աշխատանք գտնել այլ երկրներում: Տղամարդկանց գործառույթների մեջ է մտնում նաև օտար ափերում տան կառուցման (գնման), վերանորոգման, ամուսնության, հարսանիքի, օժիտի և այլ անհրաժեշտ արարողությունների համար գումար վաստակելը: Այդ բոլորը հանգեցնում է

նրան, որը տղամարդու վաստակած գումարը դառնում է ընտանիքի գոյատևման կարևոր միջոց, ինչն էլ ավելի է բարձրացնում նրա դերը որոշումներ կայացնելու հարցում:

Ըստ միգրանտների սերունդների՝ 18–29 տարեկան երիտասարդների շրջանում աշխատանքի բացակայությունը՝ որպես միգրացիայի պատճառ, ի տարբերություն մյուս տարիքային խմբերի, կազմել է համեմատաբար բարձր տոկոս: Երիտասարդները միջնակարգ կամ մասնագիտական կրթություն ստանալուց կամ բուհը, ինչպես նաև զինվորական ծառայությունն ավարտելուց հետո տեղում չեն կարողանում գտնել աշխատանք և ստիպված իրենց ծնողների կամ ընկերների հետ մեկնում են արտագնա աշխատանքի: Այդ երիտասարդների աշխատանքային սոցիալականացումը տեղի է ունենում օտար միջավայրում և, կապված աշխատանքի բնույթի և ոլորտների հետ, ունի որոշ առանձնահատկություններ: Մյուս կողմից՝ նրանք ամուսնանալու և ընտանիք կազմելու շեմին են, որի համար անհրաժեշտ են որոշակի ֆինանսական միջոցներ: Որպես մասնակցության կարևոր շարժառիթ՝ նրանց մի մասն էլ աշխատած փողերով ցանկանում է ձեռք բերել ավտոմեքենա և երկարատև օգտագործման այլ կարևոր իրեր: Միջին և ավագ սերունդների միգրանտների շուրջ կեսը միգրացիայի պատճառ նշել է տեղում աշխատանքի բացակայության հանգամանքը, իսկ մոտ մեկ քառորդը՝ ընտանիքի առաջնային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ գումար վաստակելը (տե՛ս աղյուսակ 7):

Ըստ հարցվածների կրթական մակարդակի՝ աշխատանքային միգրացիայի մեկնելու դրդապատճառներում գոյություն ունեն որոշ առանձնահատկություններ: Աղյուսակ 8-ի տվյալներով՝ աշխատանքի բացակայությունը միգրացիայի պատճառ են համարել միջնակարգ կրթություն ունեցող միգրանտների 58,1%-ը և բարձրագույն կրթություն ունեցողների 52,4%-ը: Հատկապես վերջին ցուցանիշը փաստում է այն մասին, որ միգրանտների կեսից ավելին Հայաստանում ստացել է բարձրագույն կրթություն, սակայն աշխատանքի բացակայության հետևանքով ստիպված է եղել մեկնել ար-

Աղյուսակ 7

Աշխատանքային միգրացիայի մեկնելու պատճառները՝ ըստ հարցվածների տարիքի, %

Արտագնացության մեկնելու պատճառները	18–29	30–49	50 և բարձր
Աշխատանքի բացակայությունը	55,1	51,3	50,0
Մասնագիտությամբ աշխատանքի բացակայությունը	1,4	3,9	5,6
Ընտանիքի առաջնային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	18,8	27,6	23,6
Տան կառուցման (գնման), վերանորոգման համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	14,5	10,5	13,9
Ամուսնության, հարսանիքի, օժիտի և այլ անհրաժեշտ արարողությունների համար գումարի բացակայությունը	1,4	2,6	2,8
Ավտոմեքենա, կահույք, տեխնիկա ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	7,2	2,6	4,2
Արտադրության միջոցներ ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	1,4	1,3	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0

տագնա աշխատանքի՝ կատարելու որակավորում չպահանջող ֆիզիկական աշխատանքներ: Միգրանտների որոշ մասը, որ ունի նախնական և միջին մասնագիտական կրթություն, որպես աշխատանքային միգրացիայի պատճառ նշել է տեղում մասնագիտությամբ աշխատանքի բացակայությունը: Նախնական մասնագիտական կրթություն ունեցողների մի մասն էլ (14,3%), մեկնելով արտագնա աշխատանքի, ցանկանում է արտադրության միջոցներ ձեռք բերելու և սեփական գործ հիմնելու համար վաստակել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Ըստ նույն աղյուսակի տվյալնե-

րի՝ ընտանիքի առաջնային կարիքների բավարարումը, տան կառուցման (գնման), վերանորոգման համար անհրաժեշտ գումարի ձեռքբերումը, անկախ նրանց կրթական մակարդակից, համարվում է ընտանիքի առջև ծառացած կարևոր խնդիր:

Աղյուսակ 8

Աշխատանքային միգրացիայի մեկնելու պատճառները՝ ըստ հարցվողների կրթական մակարդակի, %

Արտագնացության մեկնելու պատճառները	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Նախնական մասնագիտական	Միջին մասնագիտական	Բարձրագույն
Աշխատանքի բացակայությունը	42,9	58,1	42,9	45,5	52,4
Մասնագիտությամբ աշխատանքի բացակայությունը	0,0	1,1	14,3	3,0	9,5
Ընտանիքի առաջնային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	28,6	21,5	14,3	24,2	26,2
Տան կառուցման (գնման), վերանորոգման համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	28,6	11,8	14,3	15,2	9,5
Ամուսնության, հարսանիքի, օժիտի և այլ անհրաժեշտ արարողությունների համար գումարի բացակայությունը	0,0	3,2	0,0	3,0	0,0
Ավտոմեքենա, կահույք, տեխնիկա ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	0,0	4,3	0,0	7,6	2,4
Արտադրության միջոցների ձեռքբերման համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	0,0	0,0	14,3	1,5	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Աշխատանքային միգրացիան այդ ընտանիքներում ձևավորում է նաև հանրապետությունից մշտական արտագաղթելու դիրքորոշումներ: Այն հարցին, թե «Կցանկանայի՞ք ընտանիքով տեղափոխվել և մշտական բնակություն հաստատել արտերկրում», ի տարբերություն միգրանտ չունեցողների (32,3%), միգրանտ ունեցող ընտանիքներում դրական դիրքորոշում ունեցողների թիվը կազմել է ավելի բարձր տոկոս՝41,1% (գծապատկեր 10):

Գծապատկեր 10

Միգրանտ ունեցող և չունեցող ընտանիքներում հանրապետությունից արտագաղթելու դիրքորոշումները, %



Նրանց մի մասը դրսում մշտական աշխատանք գտնելուց հետո ընտանիքով մեկնում է նաև մշտական բնակության:

Հետազոտության արդյունքներով՝ հանրապետությունից արտագաղթելուն ավելի են հակված երիտասարդ աշխատանքային միգրանտները, այդ ցուցանիշը, ի տարբերություն տարիքային մյուս խմբերի, կազմել է ավելի բարձր տոկոս: Նրանք այլ երկիր տեղափոխվելու հանգամանքը համարում են մշտական աշխատանք ունենալու և ապագայի պլանների իրականացման կարևոր միջոց (տե՛ս աղյուսակ 9): Միգրանտ ունեցող ընտանիքներում հանրապե-

տությունից արտագաղթելու ցանկություն է հայտնել կանանց 41,8 %-ը, և այդ մոտեցումը տոկոսային հարաբերությամբ գրեթե համընկնում է տղամարդկանց դիրքորոշումների հետ:

Աղյուսակ 9

Միգրանտ ունեցող ընտանիքներում հանրապետությունից արտագաղթելու դիրքորոշումները՝ ըստ տարիքի և սեռի, %

	Հարցվողի տարիքը			Հարցվողի սեռը	
	18–29	30–49	50 և բարձր	Արական	Իգական
Այո	54,5	42,5	25,0	40,4	41,8
Ոչ	45,5	55,0	75,0	57,9	58,2
Դժվ. պատ.	0,0	2,5	0,0	1,8	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Նրանց շրջանում միգրացիան իր ազդեցությունն է թողնում նաև երեխաների ապագա բնակության վայրի նախընտրության կարծիքների ձևավորման վրա:

Աղյուսակ 10

Միգրանտ ունեցող և չունեցողի կարծիքները երեխաների ապագա նախընտրելի բնակավայրի վերաբերյալ՝ ըստ սեռի, %

	Սեռ	Որտեղ եք գերադասում ձեր երեխաների ապագան							Ընդամենը
		ՀՀ-ում	ՌԴ-ում	Եվրոպական երկրներում	ԱՄՆ-ում	Այլ երկրում	Դ/Պ	Երեխա չունի	
Միգրանտ ունեցող ընտանիք	արական	65,5	15,5	6,9	6,9	3,4	1,7	0,1	100,0
	իգական	64,7	16,2	8,8	2,9	0,0	4,4	2,9	100,0
	ընդամենը	65,1	15,9	7,9	4,8	1,6	3,2	1,6	100,0
Միգրանտ չունեցող ընտանիք	արական	73,3	1,0	11,4	10,5	1,9	1,0	1,0	100,0
	իգական	71,2	3,3	9,8	2,6	0,7	5,9	6,5	100,0
	ընդամենը	72,1	2,3	10,5	5,8	1,2	3,9	4,3	100,0

Միգրանտները, որոնք, ինչպես արդեն նշել ենք, հիմնականում մեկնում են ՌԴ աշխատանքի, Հայաստանից հետո իրենց երեխաների հետագա ցանկալի բնակության վայր են համարել այդ երկիրը (15,9%): Աղյուսակ 10-ում ներկայացված տվյալներով միգրանտ չունեցող ընտանիքներում այդ ցուցանիշը կազմել է ավելի ցածր տոկոս՝ 2,3%: Ի տարբերություն առաջինի, նրանք Հայաստանից հետո իրենց երեխաների համար բնակության նախապատվելի վայր են համարել եվրոպական երկրներն ու ԱՄՆ-ն (համապատասխանաբար 10,5% և 5,8%):

Ի տարբերություն մյուս տարիքային խմբերի՝ երիտասարդ աշխատանքային միգրանտներն ավելի շատ են նշել ՌԴ-ն՝ որպես իրենց երեխաների ապագա նախընտրելի բնակավայր:

Աղյուսակ 11

Միգրանտ ունեցող և չունեցող ընտանիքների կարծիքները երեխաների ապագա նախընտրելի բնակավայրի վերաբերյալ՝ ըստ տարիքի, %

	Տարիք	Որտեղ եք գերադասում Ձեր երեխաների ապագան							Ընդամենը
		ՀՀ-ում	ՌԴ-ում	Եվրոպական երկրներում	ԱՄՆ-ում	Այլ երկրում	Դժվ. պատ.	Երեխա չունի	
Միգրանտ ունեցող ընտանիք	18–29	54,5	20,5	9,1	9,1	0,0	2,3	2,3	100,0
	30–49	71,4	14,3	9,5	2,4	0,0	2,4	0,0	100,0
	50 և բարձր	70,0	12,5	5,0	2,5	2,5	5,0	2,5	100,0
	Ընդամենը	65,1	15,9	7,9	4,8	1,6	3,2	1,6	100,0
Միգրանտ չունեցող ընտանիք	18–29	65,8	0,0	15,8	10,5	0,0	0,0	7,9	100,0
	30–49	67,0	1,1	17,0	6,4	2,1	5,3	1,1	100,0
	50 և բարձր	77,8	4,0	4,0	4,0	0,8	4,0	5,6	100,0
	Ընդամենը	72,1	2,3	10,5	5,8	1,2	3,9	4,3	100,0

Այսպիսով, աշխատանքային միգրացիան իր ազդեցությունն է թողնում հանրապետությունից նրանց արտագաղթի և նրանց երեխաների ապագա բնակության վայրի նախընտրության վերաբերյալ կարծիքների ձևավորման վրա:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԸՆՏԱՆԻՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

3.1. Աշխատանքային միգրանտների ընտանիքի ձևավորման կենսափուլերի առանձնահատկությունները

Ընտանիքն ունի իր ձևավորման կենսափուլերը՝ ամուսնություն, երեխայի կամ երեխաների ծնունդ, ամուսնալուծություն կամ ամուսնության դադարեցում: Իր գոյության ընթացքում յուրաքանչյուր ընտանիք անցնում է կենսական մի քանի որակական փուլ, որն անվանում են կենսական շրջափուլի աստիճաններ կամ ընտանիքի պատմություն: Զարգացման կենսափուլերի վերաբերյալ գոյություն ունեն տարբեր դասակարգումներ, որտեղ հաշվի են առնվում ներընտանեկան հարաբերությունների ամբողջությունը և գործառնության տարբեր փուլերում դրա նշանակությունը[28].

1. սիրահետություն կամ մինչամուսնական շրջան,
2. ամուսնություն,
3. երեխաների ծնունդ,
4. ամուսնության հասունության փուլ,
5. երեխաների հեռացում ծնողներից,
6. թոշակի տարիք և ծերություն:

Ընտանիք ստեղծած միգրանտները ձեռք են բերում ամուսնու, ծնողի կարգավիճակ և ինքնաբերաբար պետք է կատարեն համապատասխան դերեր: Ներընտանեկան դերերը, կապված ընտանիքից միգրանտի պարբերաբար բացակայության հետ, ունեն որոշ առանձնահատկություններ: Այսպես, ներընտանեկան դերերը, որոնք դրսևորվում են ընտանիքի հետ փոխգործունեության մեջ

28 *Андреева Т.В.* Семейная психология. СПб., Речь, 2004, с. 80.

մտնելիս, պայմանավորված վերը նշված հանգամանքով, ամուսնական (ամուսին և կին), ծնողական (հայր և մայր) և երեխաների դաստիարակության և սոցիալականացման հետ խաթարվում են: Նույն իրավիճակն է նաև միջընտանեկան դերերի իրականացման դեպքում, քանի որ սահմանափակվում են ազգակիցների և ընկերների հետ նրանց շփումները և փոխադարձ այցելությունները: Մյուս կողմից՝ հասարակության մեջ դեռևս կայուն պահպանվում են պատկերացումները ներընտանեկան և միջընտանեկան դերերի մասին:

Էթնոսոցիոլոգիական հարցումներից պարզվում է, որ վերը նշված կենսական փուլերից յուրաքանչյուրն իր տևողությամբ, բովանդակությամբ և հագեցվածությամբ տարբերվում է աշխատանքային միգրանտ ունեցող և չունեցող ընտանիքներում: Այդ առումով անդրադառնանք չամուսնացած աշխատանքային միգրանտների մինչամուսնական վարքագծին՝ ամուսնանալուն և ընտանիք կազմելուն նախորդող փուլին: Սովորաբար այդ փուլն ուղեկցվում է զույգերի ծանոթությունով, որը տևում է շատ ավելի կարճ, քան տեղում մնացած երիտասարդների դեպքում:

Աղյուսակ 12-ում բերված տվյալներից կարող ենք եզրակացնել, որ 18–29 տարեկան երիտասարդ միգրանտների 14,3%-ը կնոջ/ամուսնու հետ մինչև ամուսնությունը ծանոթ չի եղել կամ ծանոթ է եղել ընդամենը մեկ շաբաթ, և այդ ցուցանիշը մոտ երկուսուկես անգամ ավելի է՝ համեմատած միգրացիայի չմեկնող երիտասարդների հետ (6,3%): Միջին սերնդի (30–49տ.) միգրանտների 60%-ը կնոջ/ամուսնու հետ մինչև ամուսնությունը ծանոթ է մեկ շաբաթից մինչև մեկ ամիս: Համեմատության համար նշենք, որ այդ ցուցանիշը աշխատանքային միգրացիայի չմեկնող նույն տարիքային խմբի մոտ կազմել է 25,8%: Մինչև ամուսնությունը ժամկետային առումով (2–6 ամիս) կնոջը/ամուսնուն հանդիպել կամ ծանոթ է եղել միգրանտների 83%-ը, և այդ ցուցանիշը 30%-ով ավելի է տեղում մնացած տարիքային նույն խմբից: Զուգընկերոջ մասին անբավարար տեղեկատվության, միմյանց լավ չհասկանալու և չճանաչելու գործոնը և մինչամուսնական շրջանի կարճատևությունը երբեմն բացասաբար

Աղյուսակ 12

Միգրանտների և ոչ միգրանտների ծանոթության ժամկետները կնոջ/ամուսնու հետ մինչև ամուսնությունը, %

Վերջին 5 տարիների արտաքին միգրացիայում	Տարիք	Որքան ժամանակ եք ծանոթ եղել/հանդիպել Ձեր կնոջ/ամուսնու հետ մինչև ամուսնությունը					
		ծանոթ չեմ եղել կամ ընդամենը մեկ շաբաթ	մեկ շաբաթից մեկ ամիս	2–6 ամիս	7–12 ամիս	1–3 տարի	4 տարի և ավելի
Վերադարձած միգրանտ	18–29	14,3	0,0	0,0	0,0	37,5	0,0
	30–49	28,6	60,0	83,3	75,0	37,5	40,0
	50 և բարձր	57,1	40,0	16,7	25,0	25,0	60,0
	Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Երբեք չի մեկնել	18–29	6,3	25,8	9,1	8,7	14,3	0,0
	30–49	32,8	25,8	53,0	34,8	36,5	38,7
	50 և բարձր	60,9	48,4	37,9	56,5	49,2	61,3
	Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

են ազդում ընտանիքի կայունության վրա: Զուգընկերոջ հետ կարճատև ծանոթ լինելու բացը միգրանտների շրջանում լրացվում է վերջին շրջանում լայն տարածում ստացած միջնորդությամբ ամուսնանալու երևույթով: Ռուսաստանի Դաշնությունում աշխատանքային միգրացիայի մեկնած և այնտեղ բնակություն հաստատած երիտասարդների մեծ մասը մենէթնիկ ամուսնության նպատակով վերադառնում է հայրենի բնակավայր: Նրանց որոշ մասը ծնողների, բարեկամների, ընկերների, ծանոթների միջոցով կարճ ժամանակում ծանոթանում և ամուսնանում է, այնուհետև ընտանիքով տեղափոխվում բնակության Ռուսաստանի Դաշնություն: Այդպիսի ամուսնություններում հաճախ թերագնահատվում է մինչամուսնական շրջանի կենսական փորձ ձեռք բերելու նշանակությունը: Հետազոտության արդյունքներով՝ նման ընտանիքներում հետագա-

յում երբեմն գրանցվել են նաև ամուսնալուծություններ: Որպես ամուսնալուծության պատճառ՝ հարցվողները նման ընտանիքների համար հաճախ նշում էին «կոնֆլիկտները և միմյանց չհասկանալու», «նոր միջավայրին աղջկա չհարմարվելու», «աղջկա և տղայի միջև տարիքային մեծ տարբերության», «Ռուսաստանում տղայի ամուսնալուծված լինելու» հանգամանքները: Ամուսնությունը լուրջ խնդիր է համարվում նաև Ռուսաստանում գտնվող հայ աղջիկների համար: Ծնողների ցանկությամբ նրանց մեծ մասը վերադառնում է հարազատների մոտ՝ տեղում ամուսնանալու նպատակով: Տեղի երիտասարդությունը նախապատվությունը տալիս է նման ամուսնություններին, քանի որ ամուսնանալուց հետո հիմնականում տեղափոխվում են աղջկա ծնողների մոտ և ունենում աշխատանք: Հայաստանի տարբեր մարզերում միջնորդությամբ ամուսնությունների վերաբերյալ հարցման մասնակիցները ներկայացրել են բազմաթիվ պատմություններ, որ ամուսնանալուց հետո պարզվել է տղայի ամուսնացած լինելը, ռուս կին և երեխաներ ունենալը. «*Մեզ մոտ մի քանի ընտանիքներ կան, որ այդ հողի վրա բաժանվել են: Օրինակ, մի ընտանիք կար, որ Ռուսաստանում շատ հարուստ էին, եկան այստեղ՝ տղայի համար աղջիկ ուզեցին և տարան, բայց հետո պարզվեց, որ այնտեղ ամուսնացած է և ռուս կնոջից երեք տարեկան երեխա ունի և տուն չէր գալիս: Ստիպված այդ աղջիկը հետ եկավ: Տաշիրում նաև մի դեպք գիտեմ, որ տղան ապրում էր ՌԴ-ում, այստեղից մի խեղճ ընտանիքից աղջիկ են ուզել: Բայց տղան և աղջիկը իրար չէին տեսել: Ծնողների համաձայնությամբ այդ աղջկան տղայի մոր հետ դրել են ինքնաթիռ և ուղարկել տղայի մոտ: Ուղղակի վիրավորական էր, որ տղայի հայրը ասել էր, որ եթե տղաս չհավանի, հետ կուղարկենք, քանի որ մենք աղջիկների ընտրության լայն հնարավորություն ունենք: Այդ ընտանիքը երկու հարսի այդ ձևով են տարել, քանի որ տղաները այստեղ զինվորական ծառայությունից խուսափել են և դրա համար չէին կարող գալ Հայաստան: Բայց նրանք այնտեղ բիզնես ունեն և լավ ապրում են*» (կին,

37 տ., Տաշիր)[29]: Այդ կապակցությամբ Սարուխանի դպրոցի տնօրեններից մեկը հարցազրույցի ժամանակ նշեց, որ իրենց գյուղում գրանցվել է երեք դեպք, երբ տղան ու աղջիկն ամուսնացել են ընդամենը միմյանց նկարը տեսնելու միջոցով. «*ՌԴ-ում բնակվող նախկին համագյուղացու նկարը ուղարկել են գյուղ, գյուղում նրա հարազատները գտել են «լավ, տնական աղջիկ», նկարը ցույց են տվել աղջկան և ծնողներին, նրանք հավանել և տվել են համաձայնություն, ՌԴ-ից մատանի են ուղարկել, տեղում տղայի և աղջկա հարազատները հավաքվել, նշել են այդ արարողությունը, հետո աղջկան ուղարկել են տղայի մոտ: Եղել է դեպք, որ ՌԴ-ից աղջկա նկարն են ուղարկել, տղան տեսել, հավանել է, և այնտեղից աղջկան ուղարկել են, եկել է այստեղ և ամուսնացել է*» (տղամարդ, 38 տ., գ. Սարուխան)[30]: Վերջին շրջանում տարածված են նաև «սկայպով» ամուսնությունները, երբ ՌԴ-ում գտնվող տղան կամ աղջիկը հիմնականում միջնորդությամբ, երբեմն նաև առանց դրա, ծանոթանում են տեղի կամ Հայաստանի իրենց հայրենակիցների ու համագյուղացիների հետ, որոշ ժամանակ վիրտուալ ընկերություն անելուց հետո հանդիպում են և միմյանց հավանելու պարագայում ամուսնանում. «*Տղաս ընտանիքով արդեն երկար տարիներ ապրում է ՌԴ-ում: Թոռնիկս այնտեղ համալսարանն է ավարտել, աշխատում է: Միջնորդությամբ սկայպով ծանոթացավ Երևանում բնակվող մի երիտասարդի հետ: Մոտ 6 ամիս սկայպով ընկերություն արեցին: Հետո արձակուրդի ժամանակ թոռնիկս եկավ Հայաստան՝ մեր տուն: Այդ ժամանակ հանդիպեցին, հավանեցին, հետո ծնողները եկան, այստեղ հարսանիք արեցին, և տղան տեղափոխվեց աղջկաս մոտ բնակության*» (կին, 68 տ., Երևան)[31]:

Այսպիսով, մինչամուսնական շրջանը կենսական փորձի ձեռքբերման նախաամուսնական փուլ է, որի նշանակությունը որոշակի պատճառներով երբեմն թերագնահատում են որոշ միգրանտներ:

29 *Գալստյան Մ.*, ԴԱՆ, Լոռու մարզ, 2012:

30 *Գալստյան Մ.*, ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2007:

31 *Գալստյան Մ.*, ԴԱՆ, Երևան, 2015:

Դա իր բացասական ազդեցությունն է թողնում ամուսնության և ընտանիքի հետագա կազմավորման գործընթացում:

Անդրադառնանք նաև միգրանտների ամուսնության կենսափուլին և նրանց վարքագծին: Ինչպես բոլոր, այնպես էլ աշխատանքային միգրանտների ընտանիքներում կարևոր իրադարձություն է ընտանիքի սկզբնավորումը: Մինչդեռ նոր ձևավորված ընտանիքներում, որի ամրության համար շատ կարևոր են համատեղ կյանքը և փոխադարձ հարմարվելը, աշխատանքի բացակայության պատճառով ամուսնությունից անմիջապես հետո նրանք հանրապետությունից մեկնում են աշխատանքային միգրացիայի:

Աղյուսակ 13

Ամուսնանալուց ինչքա՞ն ժամանակ հետո է միգրանտը մեկնել արտագնա աշխատանքի, %

Ժամկետները	Հաճախականություն
Ամուսնանալուց 1–2 ամիս հետո	11,6
Ամուսնանալուց 3–6 ամիս հետո	9,1
Ամուսնանալուց 7–12 ամիս հետո	2,4
Ամուսնանալուց մեկ և ավել տարի հետո	31,1
Այդ ժամանակահատվածում արտագնա աշխատանքի չէի/չէր գնում	29,3
Ամուսնացած չէ	16,5
Ընդամենը	100,0

Ըստ աղյուսակ 13-ի տվյալների՝ միգրանտների 11,6%-ը աշխատանքային միգրացիայի է մեկնել ամուսնանալուց 1–2 ամիս, իսկ 9,1%-ը՝ 3–6 ամիս հետո: Անշուշտ, ամուսնությունից հետո այդպիսի կարճ ժամկետներում ընտանիքից ամուսնու բացակայությունը խաթարում է ամուսինների համատեղ կյանքի ռիթմը, զուգընկերոջը և ընտանեկան կյանքին հարմարվելու կարողությունները և հմտությունները: Ամուսնությունից կարճ ժամանակ անց աշխատանքային միգրացիայի են մեկնում ոչ միայն երիտասարդները: 14-րդ աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ այդ երևույթը բնորոշ է եղել նաև խորհրդային միգրանտներին, քանի որ առաջին սերնդի (50 և

բարձր տարիքի) 15,4%-ը և երկրորդի (30–49 տ.) 22,2%-ը նույնպես աշխատանքային միգրացիայի են մեկնել ամուսնանալուց 1–2 ամիս հետո:

Աղյուսակ 14

Ամուսնությունից ինչքա՞ն ժամանակ հետո է միգրանտը մեկնել արտագնա աշխատանքի՝ ըստ տարիքային կազմի, %

Ամուսնությունից ինչքա՞ն ժամանակ հետո եք մեկնել արտագնա աշխատանքի	Հարցվողի տարիքը			Ընդամենը
	18–29	30–49	50 և բարձր	
Ամուսնանալուց 1–2 ամիս հետո	12,5	22,2	15,4	17,9
Ամուսնանալուց 3–6 ամիս հետո	12,5	11,1	0,0	7,7
Ամուսնանալուց 7–12 ամիս հետո	12,5	0,0	0,0	2,6
Ամուսնանալուց մեկ և ավելի տարի հետո	12,5	33,3	15,4	23,1
Այդ ժամանակաշրջանում արտագնա աշխատանքի չէի/չէր գնում	0,0	27,8	69,2	35,9
Երեխա չունի	50,0	5,6	0,0	12,8
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0

Խորացված հարցազրույցի ընթացքում միգրանտները կամ նրանց ընտանիքի անդամները պատմել են բազմաթիվ դեպքեր, երբ միգրանտը, նշանված կամ հղի կնոջը թողած, մեկնել է արտագնա աշխատանքի:

Ինչպես բոլոր, այնպես էլ միգրանտների ընտանիքներում ամենալարված և հագեցած շրջանը համարվում է երեխայի ծնունդը: Կենսական այս փուլերի ժամանակ տեղի են ունենում ընտանիքի անդամների դերերի զգալի փոփոխություններ, որոշ դերեր վերանում են, և առաջանում նոր դերեր: Եթե ամուսնանալուց հետո ընտանիքում տղամարդը և կինը կատարում են ամուսինների, սոցիալական և սեռական, զուգընկերների պարտականություններ, ապա առաջին երեխայի ի հայտ գալուն պես ավելանում է նաև ծնողի, դաստիարակի դերը: Ընտանիքում երեխայի սոցիալականացման գործընթացը տեղի է ունենում ծնողների հետ անմիջական

շփումների հիման վրա, և նրանցից յուրաքանչյուրն այդ հարցում կատարում է որոշակի դեր: Ընտանիքի հայրը երեխայի/երեխաների նկատմամբ ոչ միայն ունի դերային պարտականություններ, այլև որոշակի իրավունքներ, իսկ երեխաները՝ հորից որոշակի սոցիալական սպասումներ: Ընտանիքում է ձևավորվում նրանց անհատական արժեքային համակարգը, ներընտանեկան կարգավիճակների և դերերի սոցիալականացումն համարվում է շարունակական գործընթաց: Սակայն հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ պարբերաբար բացակայության հետևանքով միգրանտներն ավելի քիչ դերակատարում են ունենում երեխաների սոցիալականացման գործընթացներում:

Ըստ աղյուսակ 15-ի՝ առաջին կամ երկրորդ երեխայի ծննդյան ընթացքում միգրանտների համապատասխանաբար 7,9%-ը եղել է արտագնա աշխատանքի վայրում՝ բացակայելով ընտանիքի համար նման կարևոր իրադարձությունից: Տեղում չլինելու պատճառով նույնչափ միգրանտներ էլ ականատես չեն եղել երեխաների դպրոցի ավարտական արարողություններին, որը ևս նշանակալից փուլ է: Միգրանտների 2,4%-ը չի մասնակցել նաև զավակների նշանադրությանը, իսկ 1,2%-ը՝ ամուսնությանը: Ընտանիքում տեղի ունեցած կարևոր այդ հարցերն ընտանիքի անդամները հաճախ «սկայպի» կամ հեռախոսի միջոցով խորհրդակցել և համաձայնեցրել են միգրանտի հետ: Այս դեպքում հայրը, ճիշտ է, տնտեսապես ապահովում և հոգում է ընտանիքի անդամների նյութական խնդիրները, սակայն նշված ցուցանիշները փաստում են, որ ներընտանեկան հարաբերություններում նրանք չեն կարողանում կատարել մի շարք այլ կարևոր դերեր և պարտականություններ: Երեխաների հասունության կենսափուլում միգրանտների մի մասը, լինելով ընտանիքից հեռու՝ արտագնա աշխատանքի վայրում, նրանց երբեմն տարիներ շարունակ չի տեսնում. «*Մենք գյուղում ունենք մարդիկ, որոնց երեխաները ծնվել են այստեղ, բայց նրանք արտագնացության պատճառով տարիներով իրենց երեխաներին, թոռներին չեն տեսել*» (կին, 50 տ., գ, Ազատան)[32]:

32 *Գալստյան Մ.*, ԴՄՆ, Շիրակի մարզ, 2007:

Աղյուսակ 15

Աշխատանքային միգրանտի գտնվելու վայրը երեխայի ծնվելու, դպրոցը ավարտելու, նշանվելու, ամուսնանալու ժամանակ, %

	Որտեղ է եղել միգրանտը երեխաների				
	Ծնվելու ժամանակ (1-ին երեխա)	Ծնվելու ժամանակ (2-րդ երեխա)	Դպրոցն ավարտելու ժամանակ	Նշանվելու ժամանակ	Ամուսնանալու ժամանակ
ՀՀ-ում	47,6	36,0	19,5	16,5	17,7
Արտագնա աշխատանքի վայրում	7,9	7,9	7,9	2,4	1,2
Այդ ժամանակահատվածում արտագնա աշխատանքի չէր գնում	21,3	18,9	13,4	10,4	10,4
Երեխա չունի	23,2	37,2	59,1	70,7	70,7
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Եթե միգրանտ չունեցող ընտանիքներում, երեխաների հասունացմանը զուգընթաց, ծնողների, հատկապես մոր ծանրաբեռնվածությունը փոքրանում է, և առաջին պլան են մղվում սեփական առողջության պահպանման, ֆիզիկական հոգածության խնդիրները, ապա միգրանտ ունեցողներում, ընդհակառակը, ողջ ծանրաբեռնվածությունը շարունակում է մնալ կնոջ ուսերին:

Համեմատության համար նշենք, որ երեխայի ծնվելու, դպրոցն ավարտելու, ժամանակ ընտանիքից հեռու են գտնվել ոչ միայն երիտասարդ միգրանտները, այլև խորհրդային տարիներին արտագնա աշխատանքի մեկնած ավագ և միջին սերունդների միգրանտների մի մասը (տե՛ս աղյուսակ 16):

Աղյուսակ 16

Աշխատանքային միգրանտի գտնվելու վայրը երեխայի ծնվելու, դպրոցն ավարտելու, նշանվելու, ամուսնանալու ժամանակ՝ ըստ տարիքի, %

Որտեղ է եղել միգրանտը	Տարբերակներ	Տարիք		
		18–29	30–49	50 և բարձր
1-ին երեխայի ծնվելու ժամանակ	ՀՀ-ում	37,5	61,1	53,8
	Արտագնա աշխատանքի վայրում	0,0	11,1	0,0
	Այդ ժամանակահատվածում արտագնա աշխատանքի չէր գնում	0,0	16,7	30,8
	Երեխա չունի	62,5	11,1	15,4
	Ընդամենը	100,0	100,0	100,0
2-րդ երեխայի ծնվելու ժամանակ	ՀՀ-ում	0,0	33,3	53,8
	Արտագնա աշխատանքի վայրում	0,0	11,1	7,7
	Այդ ժամանակահատվածում արտագնա աշխատանքի չէր գնում	0,0	16,7	30,8
	Երեխա չունի	100,0	38,9	7,7
	Ընդամենը	100,0	100,0	100,0
Երեխաների դպրոցն ավարտելու ժամանակ	ՀՀ-ում	0,0	16,7	30,8
	Արտագնա աշխատանքի վայրում	0,0	5,6	30,8
	Այդ ժամանակահատվածում արտագնա աշխատանքի չէր գնում	0,0	11,1	23,1
	Երեխա չունի	100,0	66,7	15,4
	Ընդամենը	100,0	100,0	100,0

Հետազոտության արդյունքներով աշխատանքային միգրացիան հաճախ վերածվում է արտագաղթի, որի հետևանքով ընտանիքից երբեմն հեռանում են բոլոր երեխաները, իսկ ծնողները հանրապետությունում մնում են մենակ: Այդ ընտանիքները վերածվում են «դատարկ բույնի», և ընտանիքի կենսական ավարտական այդ

աստիճանը նման է առաջինին այն առումով, որ զույգերը կրկին մենակ են մնում: Սակայն այս երկու աստիճաններում կյանքի բովանդակությունը որակապես տարբերվում է, քանի որ ծերության տարիներին նրանք անմիջական և կապի տարբեր միջոցներով շփվում են երեխաների հետ, ստանում են նաև ֆինանսական աջակցություն: Հայաստանի թե՛ քաղաքային և թե՛ գյուղական բնակավայրերում արտագաղթի հետևանքով աճում է «դատարկ բույնի» նմանվող ընտանիքների թիվը: Սա, ըստ էության, հանրապետության առջև ծառացած լուրջ սոցիալ-ժողովրդագրական խնդիր է:

3.2. Միջէթնիկ ամուսնությունները աշխատանքային միգրանտների շրջանում

Նախքան այդ հիմնախնդրի քննարկումը անդրադառնանք միջէթնիկ ամուսնությունների վերաբերյալ խորհրդային և հետխորհրդային շրջանի առկա վիճակագրությանը: ԽՍՀՄ-ում մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածներում գրանցվել է խառնամուսնությունների թվի աճ, որը երկրի ղեկավարները երբեմն միակողմանիորեն ներկայացնում են որպես ազգամիջյան բարեկամական հարաբերությունների զարգացման արդյունք[33]: Սակայն այդ հարցում միութենական հանրապետություններից ամենացածր ցուցանիշը գրանցվել է Հայաստանում: Այսպես, 1959 թ. մարդահամարի տվյալներով Հայաստանում միջէթնիկ ընտանիքների բաժինը կազմել է 3,2%, 1979-ին՝ 4,0%, իսկ 1989-ին՝ 3,8%: Համեմատության համար նշենք, որ ԽՍՀՄ-ում այդպիսի ընտանիքների միջին ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 10,2%, 14,9%, 17,5%[34]: Ըստ վիճակագրական տվյալների՝ հայերի մեջ ինչպես սեփական, այնպես էլ այլէթնիկ միջավայրում միջէթնիկ ամուսնությունների ցուցանիշներն ավելի բարձր են տղամարդկանց շրջանում, և նրանք ավելի հաճախ են ամուսնանում այլազգի կա-

33 *Сусоколов А. А.* Межнациональные браки в СССР. М., Мысль 1987, с. 10.

34 *Сороко Е.* Этнически смешанные супружеские пары в Российской Федерации, с. 97. https://demreview.hse.ru/data/2015/05/25/1096965759/DemRev_1_4_2014_96-123.pdf, (10.05.2017)

նանց հետ: Այսպես, Խորհրդային Միության 1988 թվականի մարդահամարի տվյալների համաձայն՝ Ռուսաստանում ամուսնացած 6537 հայերից 4545 տղամարդ (63,5%) ամուսնացել էր այլազգիների հետ, որից 2800-ը (61,6%) մինչև 29 տարեկան երիտասարդներ էին: Այդ ամուսնություններն առավել տարածված են Ռուսաստանի քաղաքներում բնակվող հայերի շրջանում՝ 5587 մարդ, որից 69,7%-ը տղամարդ էր, իսկ 30%-ը՝ կին[35]: Հետխորհրդային շրջանի վիճակագրական տվյալները փաստում են, որ հայերի մեջ միջէթնիկ ամուսնությունների միտումները լուրջ փոփոխություն չեն կրել: Այսպես, 2002թ.-ի մարդահամարի տվյալներով ՌԴ-ում խառնամուսնական զույգերի բաժնում հայ տղամարդիկ կազմել են 30%, իսկ 2010թ.մարդահամարի տվյալներով այն մի փոքր կրճատվել է՝ 29,3%: Ընդ որում, այդ ցուցանիշը նախկին Խորհրդային Միության ժողովուրդների մոտ ղրղզներից և ղազախներից հետո ամենացածրն է: Ինչ վերաբերում է կանանց, ապա խառնամուսնական զույգերում, 2002թ. տվյալներով, նրանց բաժինը կազմել է 15%, իսկ 2010թ. տվյալներով նրանց թիվը նույնպես կրճատվել է՝ 12,3%, այդ ցուցանիշը նախկին ԽՍՀՄ ժողովուրդների մոտ ևս ամենացածրերից է[36]:

Աղյուսակ 17-ում բերված տվյալներից կարող ենք եզրակացնել, որ Ռուսաստանի Դաշնությունում միջէթնիկ ընտանիքների թվի վրա իր ազդեցությունն է թողնում սեռերի ծնունդավայրը: Այդ երկրում ծնված հայերի շրջանում նման ընտանիքների թիվն ավելի մեծ է, քան եկվորների, հատկապես նրանց, ովքեր տեղափոխվել են ավելի հասուն տարիքում: Անշուշտ, դա պայմանավորված է նաև լեզվական ու մշակութային տարբերությունների խնդրով:

35 Население СССР 1988 (Статистической ежегодник) М., Финансы и Статистика, 1989, с. 216–2107.

36 Сороко Е., նշվ. աշխ., էջ 99–102:

Աղյուսակ 17

Միջէթնիկ ընտանիքներ, որտեղ հայ տղամարդը և կինը ծնվել են ՌԴ-ում և ՌԴ-ից դուրս՝ ըստ 2010թ.-ի տվյալների[37]

		որից	
Միջէթնիկ ընտանիքներում հայ տղամարդկանց թիվը	29,3	Ծնվել է ՌԴ-ում	Ծնվել է ՌԴ-ից դուրս
		63,2	21,0
Միջէթնիկ ընտանիքներում հայ կանանց թիվը	12,3	Ծնվել է ՌԴ-ում	Ծնվել է ՌԴ-ից դուրս
		24,9	31,0

Ըստ գծապատկեր 11-ի՝ հայ տղամարդիկ Ռուսաստանում ավելի շատ ամուսնանում են իրենց ազգի ներկայացուցիչների, այնուհետև՝ ռուսների, ապա միայն մյուս ազգերի ներկայացուցիչների հետ:

Գծապատկեր 11

ՌԴ-ում հայերի և այլազգի աղջիկների հետ նախընտրելի ամուսնությունները հայ տղամարդկանց շրջանում



37 Աղյուսակը կազմված է Сорокo Е., նշված աշխատության տվյալների հիման վրա, էջ 102–104:

Ըստ նույն գծապատկերի՝ այլէթնիկ միջավայրում ծնված և այնտեղ բնակվող հայ տղամարդիկ միջէթնիկ ընտանիքներ կազմելիս երբեմն հաշվի չեն առնում նաև կնոջ կրոնական պատկանելությունը: Օրինակ՝ ՌԴ-ում գրանցվել է 103 ընտանիք, որտեղ կինը ղազախ է, 22 ընտանիք, որտեղ կինը չեչեն է, 427 ընտանիք, որտեղ կինը ադրբեջանցի է: Վերջինները հիմնականում բռնագաղթել են Ադրբեջանից:

Անդրադառնանք աշխատանքային միգրանտների շրջանում միջէթնիկ ամուսնությունների տարածվածության խնդրին: Ըստ 1987 թվականի էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքների՝ խառնամուսնական ընտանիքները կազմել են 11,7%, որը մոտ 3 անգամ ավելի է հանրապետության միջին ցուցանիշներից (1989 թ. մարդահամարի տվյալներով՝ 3,8%): Խորհրդային շրջանում նրանց թիվը հատկապես մեծ էր արտագնացությամբ զբաղվող գյուղական և քաղաքային բնակավայրերում: Այդ շրջանում հավաքված վիճակագրական տվյալներից պարզվում է, որ, օրինակ, Լոռու մարզի Մեծավան գյուղում, որտեղից ամեն տարի արտագնացության էր մեկնում շուրջ 700–750 տղամարդ, սկսած 1970-ական թթ. մինչև 1987 թ.-ին՝ գրանցվել է շուրջ 25, Մեծ Պարնի համայնքում՝ 6, Շիրակի մարզի Մայիսյան գյուղում՝ 7, Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում՝ շուրջ 20 խառնամուսնություն[38]: Այլազգի կանայք հիմնականում բնակություն են հաստատել Հայաստանում: Հայաստանի անկախությունից հետո այդ ընտանիքների մեծ մասը, սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով, առաջիններից էր, որ հեռացավ Հայաստանից: Հետխորհրդային շրջանի էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքներով՝ աշխատանքային միգրանտների շրջանում միջէթնիկ ամուսնությունների թիվը կրճատվել է՝ կազմելով 9,4%, իսկ նրանց շուրջ կեսը բնակություն է հաստատել Հայաստանից դուրս՝ հիմնականում կնոջ հայրենիքում:

Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակով և գործազրկության բարձր մակարդակով պայմանավորված՝ աշխա-

38 *Գալստյան Մ.*, ԴՄՆ, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի մարզեր, 1987:

տանքային միգրանտների որոշ մասը միջէթնիկ ամուսնությունները համարում է կարևոր ելք արտերկրում բնակություն հաստատելու համար[39]: Վերջին շրջանում դրսևորվող այդ միտումը քննության է արժանի ամուսնական զուգընկերոջ ընտրության «շուկայական» հայեցակարգի շրջանակում, որպես զուգընկերների նպատակաուղղված ընտրության արդյունք, որի նպատակն է ավելացնել այդ ամուսնությունից ստացվող օգտակարության գործակիցը: Ընդ որում, էթնիկ հատկանիշը ներառվում է ամուսնական զուգընկերոջ ընտրությունը որոշող չափորոշիչների առավել լայն ցանկում[40]: Նկատելի է, որ աշխատանքային միգրանտների մեջ երբեմն գործում է «ամուսնության շուկաների» մոդելը: Գ. Բեկերը, որ երկար տարիներ զբաղվել է վերջինիս մոդելավորման խնդրով, նշում է, «…ամուսնության արդյունավետ շուկան սովորաբար հանգեցնում է զուգընկերոջ այնպիսի ընտրության, որի դեպքում տղամարդիկ զույգեր են կազմում որակական բարձր հատկանիշներով կանանց, իսկ ցածր հատկանիշներով տղամարդիկ՝ նմանատիպ կանանց հետ, թեև հակադիր որակի զուգընկերոջ ընտրությունը երբեմն կարևոր դեր է խաղում… Ենթադրվում է, որ յուրաքանչյուր տղամարդ և կին հոգ է տանում միայն իր բարեկեցության, այլ ոչ թե հասարակության բարեկեցության համար»[41]: Միգրանտների դեպքում «ամուսնության շուկայի» մասնակիցները (հարսնացուն և փեսացուն) երբեմն հաշվի են առնում նաև նրանցից յուրաքանչյուրի հիմնական բնութագրերը (տարիքը, եկամուտը, կրթությունը, կրոնական և ազգային պատկանելությունը), ինչպես նաև ձևավորվող ընտանիքի ընդհանուր եկամուտը, որը հաջող ամուսնության դեպքում պետք է զգալի բարձր լինի, քան մինչև ամուսնությունը՝ ամուսիններից յուրաքանչյուրի եկա-

39 *Գալստյան Մ.* , Հայաստանից աշխատանքային միգրանտների միջէթնիկ ամուսնությունների վրա ազդող գործոնները, Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետ՝ ԼՀԳ), 2017, N 2, էջ 355-365:

40 *Беккер Г.* Выбори партнера на брачных рынках, THESIS, 1994, вып. 6, с. 12 (перевод Максименко Б. А.) https://igiti.hse.ru/data/444/313/1234/6_1_1Beck.pdf(10.05.2017).

41 Նույն տեղում:

մուտն առանձին վերցրած: Աշխատանքային միգրանտները, նախապատվությունը տալով միջէթնիկ ամուսնություններին, ցանկանում են փոխել նաև իրենց կարգավիճակը: Նրանք աշխատանքային գործունեության ընթացքում, հասնելով տնտեսական համեմատաբար բարձր կարգավիճակի, ամուսնանում են «հեղինակավոր» էթնիկ խմբի կնոջ հետ, որը, սակայն, երբեմն ունենում է սոցիալական առավել ցածր կարգավիճակ: Դրանով իսկ միգրանտների որոշ մասը փոխանակում է «ավելցուկային» սոցիալական կարգավիճակը իր և հետագայում նաև երեխաների էթնիկ կարգավիճակը բարձրացնելու և հեշտացված կարգով այդ երկրի քաղաքացի դառնալու նպատակով: Այդ մասին են փաստում նաև միգրանտների և նրանց ընտանիքի անդամների հետ իրականացված որակական հարցազրույցի արդյունքները. «*Մեր գյուղից շատ երիտասարդ տղաներ են խոպան գնում, ամուսնանում են ուրիշ ազգի աղջիկների հետ և մնում են այնտեղ: Երիտասարդները ստիպված են դա անում, քանի որ այստեղ աշխատանք չկա: Այստեղից նրանք ստիպված գնում են, էլ որ մնաց ամուսնանալուց հետո նրանց բերեն այստեղ ապրելու*» (Գեղարքունիքի մարզ, գյուղ Սարուխան, կին, 64 տ.)[42]: Անշուշտ, ոչ բոլոր ամուսնություններն են հիմնվում միայն տնտեսական գործոնի վրա, և զույգերի ընտրությունը պայմանավորվում է նաև սիրո, փոխըմբռնման հանգամանքով:

Հետազոտողները, անդրադառնալով միջէթնիկ ամուսնությունների հարցին, կարևորում են նաև «էթնոսի տեղեկատվական» հայեցակարգը: Այն ելնում է ոչ թե այսրոպեական տնտեսական շահերի ազդեցության ներքո անհատի ազատ ընտրության արդյունքի սահմանումից, այլ «էթնոս» որակվող կայուն մշակութային ընդհանրությանն իրեն նույնականացնելու՝ մարդու ձգտումը բացատրելու փորձից: Ըստ այդ հայեցակարգի՝ ժամանակակից աշխարհում էթնոսի հիմնական գործառույթը կյանքի անկայունությունից և անորոշությունից էթնոսի անդամների «տեղեկատվական պաշտպանության» մեջ է, որի դերը հատկապես մեծանում է անցումային

42 *Գալստյան Մ.*, ԴՄՆ, Գեղարքունիքի մարզ, 1987:

հասարակություններում, երբ հին արժեքային համակարգը փլուզվում է, իսկ նորը դեռևս չի ձևավորվել: Էթնոսն իր գործառույթն իրականացնում է մշակութային ավանդույթները պահպանելով, այսինքն՝ նոր սերունդների մեջ հին արժեքները, խորհրդանիշները, վարքականոնները վերարտադրելով: Էթնիկ մշակույթը և ինքնությունը վերարտադրվում են ոչ միայն որպես ամբողջություն էթնոսի կամ իր առանձին անհատների և ընտանիքների, այլև էթնոսի ներսում կայուն խմբերի մակարդակով: Այդ կայուն կառուցվածքի տարրերից են նաև ազգակցական խմբերը, որոնք միջանձնային հարաբերությունների մակարդակում ձևավորում և փոխանցում են առավել կայուն վարքականոնները, ըստ այդմ՝ դաստիարակվում է էթնիկ ինքնագիտակցությունը: Էթնոսի այդ կառուցվածքը ձևավորող շփման շրջանակներն էլ որոշում են ամուսնական զուգընկերոջ ընտրության կանոնները[43]: Շփման շրջանակներն այդ գործառույթն իրականացնում են առաջին հերթին «արտաքին» մեխանիզմի պահպանման, այսինքն՝ ամուսնական զուգընկերոջ ընտրության սոցիալական վերահսկողության հաշվին, երկրորդ՝ «ներքին», այսինքն՝ մշակութային նույնականացման և էթնիկ ինքնության ձևավորման հոգեբանական մեխանիզմների միջոցով: Այս տեսանկյունից որպես միջէթնիկ ամուսնության աճի հիմնական գործոններից մեկը նշվում է ավանդական ազգակցական և հարևանական կապերի ազդեցության թուլացումը, իսկ քաղաքային բնակավայրերում՝ նաև ամուսնական զույգերի ինքնավարացումը: Այս հայեցակարգի շրջանակներում բացատրելի է դառնում նաև միջէթնիկ ամուսնությունների հարցում աշխատանքային միգրանտների վարքագիծը և նախապատվությունը մենէթնիկ ամուսնություններին:

«Ինչ կարծիք ունեք այլազգիների հետ ամուսնությունների մասին» հարցի պատասխաններից կարելի է եզրակացնել, որ մասնակիցների գերակշռող մեծամասնությունը (59,1%) դեմ է արտահայտվել և այն համարել անցանկալի ամուսնություն: Դա հիմնականում

43 *Арутюнян Ю.В., Дробижева Л.М., Сусоколов А.А.* Этносоциология, М., Аспект-Пресс, 1999, с. 215–216.

պայմանավորված է այլազգիների հետ ունեցած ազգային սովորույթների, մշակութային և կենցաղային, ինչպես նաև լեզվական տարբերություններով: Նրանք միջէթնիկ ամուսնությունը սերունդների ինքնության պահպանման հարցում համարել են լուրջ խնդիր: Այդ դիրքորոշումները, ըստ սեռային կազմի, ունեն որոշ առանձնահատկություններ: Գծապատկեր 12-ի տվյալներով՝ այլազգիների հետ տղայի ամուսնությանը դեմ լինելու հարցում միգրանտ ունեցող և միգրանտ չունեցող ընտանիքները համարյա նույն դիրքորոշումներն ունեն (համապատասխանաբար 57,9% և 55,4%): Միգրանտ ունեցող ընտանիքներում, ի տարբերություն չունեցողների, շուրջ 5%-ով պակաս է «Ամուսնությանը դեմ չեմ, եթե ընտանիքում պահպանվում են մեր ազգային մշակույթն ու սովորույթները» տարբերակի կողմնակիցների թիվը (համապատասխանաբար 16,7%, և 21,7%), իսկ «ամուսնանալիս ազգությունը նշանակություն չունի» տարբերակի կողմնակիցների կարծիքները այդ ընտանիքներում կիսվել են:

Գծապատկեր 12

Տղայի ամուսնության դեպքում այլազգիների հետ ամուսնությունների վերաբերյալ դիրքորոշումները, %



Հարցազրույցի մասնակիցներից մեկը պատմեց, որ նա արդեն երկար տարիներ մեկնում է արտագնա աշխատանքի, ամուսնացած չէ, սակայն մտադրություն չունի ռուս աղջկա հետ ամուսնանալու.

«Ռուս աղջիկները չեն կարող մեր ավանդույթներին, սովորույթներին ենթարկվել, իրենք ավելի ազատամիտ են, նրանց և մեր մշակույթների միջև շատ տարբերություն կա» (տղամարդ, 29տ., Տաշիր)[44]:

Ի տարբերություն տղաների՝ բացասական դիրքորոշումներ ունեցողների թիվը շուրջ 5,7%-ով բարձր է այլազգիների հետ հայ աղջիկների ամուսնության հարցում, որը կազմել է 62,0% (գծապատկեր 13):

Գծապատկեր 13

Աղջկա ամուսնության դեպքում այլազգիների հետ ամուսնությունների վերաբերյալ դիրքորոշումները, %



Միգրանտ ունեցող ընտանիքների 18–29տ. երիտասարդները տղաների միջէթնիկ ամուսնությունների հարցում ավելի հանդուրժող են, և նրանց մոտ «ամուսնանալիս ազգությունը նշանակություն չունի» տարբերակի կողմնակիցների թիվը կազմել է 34,1%: Այդ ցուցանիշը, համեմատած միգրանտ չունեցող ընտանիքների երիտասարդների դիրքորոշումների հետ, շուրջ երկու անգամ ավելի է՝ 18,4%: Երիտասարդ միգրանտների մեջ այդ կարծիքները ձևավորվում են այլէթնիկ միջավայրում նրանց հետ անմիջական շփումների հիման վրա, և այն կապված է նաև այլէթնիկ միջավայրում նրանց

44 *Գալստյան Մ.*, ԴԱՆ, Լոռու մարզ, 2012:

գործունեության ընթացքում արժեքների փոփոխության հետ: Միջին և ավագ սերունդների ներկայացուցիչներն ավելի պահպանողական են այդ հարցում, և նման ամուսնություններին դեմ արտահայտվել է նրանց կեսից ավելին: Տարիքային այդ խմբերի մոտ հաճախ կարելի է հանդիպել «Օտար աղջիկները մեզ հարս չեն կարող դառնալ» պատասխանը (աղյուսակ 18):

Աղյուսակ 18

Տղայի ամուսնության դեպքում այլազգիների հետ ամուսնությունների վերաբերյալ դիրքորոշումները՝ ըստ տարիքային կազմի, %

	Տարիք	Ինչ կարծիք ունեք այլազգիների հետ ամուսնությունների մասին տղայի ամուսնության դեպքում				Ընդամենը
		Անհանդուրժողականությունը նշանակություն չունի	Ամուսնությանը դեմ չեմ, եթե ընտանիքում պահպանվում են մեր ազգային մշակույթն ու սովորույթները	Ընդհանրապես դեմ եմ	Դժվ. պատ.	
Միգրանտ ունեցող ընտանիք	18–29	34,1	9,1	56,8	0,0	100,0
	30–49	14,3	26,2	59,5	0,0	100,0
	50 և բարձր	22,5	15,0	57,5	5,0	100,0
	Ընդամենը	23,8	16,7	57,9	1,6	100,0
Միգրանտ չունեցող ընտանիք	18–29	18,4	21,1	60,5	0,0	100,0
	30–49	18,1	26,6	54,3	1,1	100,0
	50 և բարձր	27,0	18,3	54,8	0,0	100,0
	Ընդամենը	22,5	21,7	55,4	0,4	100,0

Օտարների հետ հայ աղջիկների ամուսնությանը միգրանտ ունեցող և չունեցող ընտանիքների երիտասարդները, միջին և ավագ սերունդների ներկայացուցիչների շուրջ 60%-ը և ավելին ընդհանրապես դեմ են և այն համարել են անցանկալի: Այսպիսով, հարցման մասնակիցները օտարների հետ հայ տղաների ամուսնության

հարցում ավելի հանդուրժող են, քան աղջիկների պարագայում: Այդ դիրքորոշումների ձևավորման վրա իր ազդեցությունն է թողնում նաև հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակը, որի հետևանքով երիտասարդների մի զգալի հատված հետագա գործունեության հեռանկարը տեսնում է հանրապետությունից դուրս: Միջէթնիկ ամուսնությունները դառնում են այն ուղին, որի միջոցով նրանք այլ երկրներում ձեռք են բերում մշտական բնակության հնարավորություն (աղյուսակ 19):

Աղյուսակ 19

Աղջկա ամուսնության դեպքում այլազգիների հետ ամուսնությունների վերաբերյալ դիրքորոշումները՝ ըստ տարիքային կազմի, %

	Տարիք	Ինչ կարծիք ունեք այլազգիների հետ ամուսնությունների մասին աղջկա ամուսնության դեպքում				Ընդամենը
		Ամուսնանալիս ազգությունը նշանակություն չունի	Ամուսնությանը դեմ չեմ, եթե ընտանիքում պահպանվում են մեր ազգային մշակույթն ու սովորույթները	Ընդհանրապես դեմ եմ	Դժվ. պատ.	
Միգրանտ ունեցող ընտանիք	18–29	29,5	6,8	63,6	0,0	100,0
	30–49	14,3	23,8	61,9	0,0	100,0
	50 և բարձր	20,0	10,0	62,5	7,5	100,0
	Ընդամենը	21,4	13,5	62,7	2,4	100,0
Միգրանտ չունեցող ընտանիք	18–29	18,4	15,8	65,8	0,0	100,0
	30–49	17,0	19,1	62,8	1,1	100,0
	50 և բարձր	27,0	13,5	59,5	0,0	100,0
	Ընդամենը	22,1	15,9	61,6	0,4	100,0

Այլազգիների հետ հայ տղաների և աղջիկների ամուսնության դիրքորոշումների վրա իր ազդեցությունն է թողնում բնակավայրի տիպը: Միգրանտ ունեցող և չունեցող գյուղաբնակ ընտանիքնե-

րում տղայի միջէթնիկ ամուսնությունների հարցում դեմ են արտահայտվել համապատասխանաբար նրանց 61,1% և 60,3%-ը, և այդ ցուցանիշները ՀՀ քաղաքային բնակավայրերում կազմել է համեմատաբար ցածր տոկոս, Երևան քաղաքում՝ համապատասխանաբար 50,0% և 54,0%, իսկ ՀՀ մյուս քաղաքներում՝ համապատասխանաբար 54,8% և 52,0% (աղյուսակ 20):

Աղյուսակ 20

Տղայի ամուսնության դեպքում այլազգիների հետ ամուսնությունների վերաբերյալ դիրքորոշումները՝ ըստ բնակավայրի տիպի, %

		Ինչ կարծիք ունեք այլազգիների հետ ամուսնությունների մասին տղայի ամուսնության դեպքում				Ընդամենը
		Ամուսնանալիս ազգությունը նշանակություն չունի	Ամուսնությանը դեմ չեմ, եթե ընտանիքում պահպանվում են մեր ազգային մշակույթն ու սովորությունները	Ընդհանրապես դեմ եմ	Դժ	
Միգրանտ ունեցող ընտանիք	Երևան	25,0	25,0	50,0	0,0	100,0
	Քաղաք	26,2	19,0	54,8	0,0	100,0
	Գյուղ	22,2	13,9	61,1	2,8	100,0
	Ընդամենը	23,8	16,7	57,9	1,6	100,0
Միգրանտ չունեցող ընտանիք	Երևան	20,4	25,7	54,0	0,0	100,0
	Քաղաք	26,9	20,9	52,2	0,0	100,0
	Գյուղ	21,8	16,7	60,3	1,3	100,0
	Ընդամենը	22,5	21,7	55,4	0,4	100,0

Օտարների հետ աղջիկների ամուսնության հարցում թե՛ գյուղաբնակ միգրանտ ունեցող և թե՛ չունեցող ընտանիքներն ունեն է՛լ ավելի կարծր դիրքորոշում, քանի որ նման ամուսնությունների դեմ

են արտահայտվել հարցվածների համապատասխանաբար 69,4%-ը և 66,7%-ը: Երևանում և Հայաստանի մյուս քաղաքներում այդ ցուցանիշները կազմում են ավելի ցածր տոկոս (տե՛ս աղյուսակ 21):

Աղյուսակ 21

Աղջկա ամուսնության դեպքում այլազգիների հետ ամուսնությունների վերաբերյալ դիրքորոշումները՝ ըստ բնակավայրի տիպի, %

		Ինչ կարծիք ունեք այլազգիների հետ ամուսնությունների մասին աղջկա ամուսնության դեպքում				Ընդամենը
		Անհանանալու ազգությունը նշանակություն չունի	Ամուսնությանը դեմ չեմ, եթե ընտանիքում ուսումնասիրում ենք մեր ազգային մշակույթն ու սովորույթները	Ընդհանրապես դեմ եմ	Դժ	
Միգրանտ ունեցող ընտանիք	Երևան	25,0	25,0	50,0	0,0	100,0
	Քաղաք	26,2	19,0	54,8	0,0	100,0
	Գյուղ	18,1	8,3	69,4	4,2	100,0
	Ընդամենը	21,4	13,5	62,7	2,4	100,0
Միգրանտ չունեցող ընտանիք	Երևան	21,2	18,6	60,2	0,0	100,0
	Քաղաք	26,9	14,9	58,2	0,0	100,0
	Գյուղ	19,2	12,8	66,7	1,3	100,0
	Ընդամենը	22,1	15,9	61,6	0,4	100,0

Միջէթնիկ ամուսնությունների հիմքի վրա ձևավորված ընտանիքների մշակութային-կենցաղային բնութագրերում ոչ միայն տեղի է ունենում տարբեր մշակութային արժեքների փոխներթափանցում, այլև այն իր ազդեցությունն է թողնում նաև ընտանիքի անդամների ինքնություն վրա: Ազգային ինքնությունն այդ ընտանիքների սերունդների մեջ նույն ինտենսիվությամբ չի դրսևորվում՝

պայմանավորված է, թե ընտանիքում ովքեր են անմիջականորեն զբաղվում երեխաների դաստիարակության խնդիրներով, և թե որտեղ է բնակություն հաստատել այդ ընտանիքը՝ մենէթնի՞կ, թե՞ բազմաէթնիկ միջավայրում: Ըստ հետազոտության արդյունքների՝ անկախ այն բանից՝ այդ ընտանիքում ծնված երեխան հոր էթնիկ պատկանելությունն է ժառանգել, թե մոր, նրա ինքնությունն արդեն իսկ երկատված է: Հայ-ռուսական խառնամուսնական ընտանիքում (հայրը՝ հայ, մայրը՝ ռուս) ծնված երեխան բնութագրվում է երկէթնիկ ինքնությամբ, քանի որ մայրը նրան մեծացնում և դաստիարակում է նաև իր ազգային արժեքային համակարգում ընդունված նորմերով և սովորույթներով: Հետազոտության արդյունքներով՝ այդ ընտանիքի երեխաների մեջ գերակշռում է ռուսական մշակութային համակարգը: ՌԴ Օմսկ քաղաքում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ որոշ ընտանիքներում հայ հայրը տանը երեխաների հետ հայերեն չէր խոսում և չէր զբաղվում նրանց դաստիարակությամբ, բնականաբար, այդ երեխաները ավելի շատ յուրացրել էին ռուսական մշակութային արժեքները, բարքերը, վարվելակերպը՝ դառնալով ավելի շատ ռուսական ինքնությունը կրող: Այդ առումով երիտասարդներից մեկը նշեց հետևյալը. «*Անուն-ազգանունս հայի է, բայց հայերեն լավ չգիտեմ՝ ռուսական դպրոց եմ ավարտել: Ես գիտեմ, որ հայ եմ, բայց Հայաստանի պատմությանը, մշակույթին լավ ծանոթ չեմ*» (Օմսկ, տղամարդ, 25 տ.)[45]: Իրավիճակը և ներընտանեկան հարաբերություններն այլ են այն ընտանիքներում, որտեղ ամուսինը ռուս է, իսկ կինը՝ հայ: Այս դեպքում առկա է կնոջ կողմից երեխաների մեջ իր էթնիկ ինքնության պահպանման ձգտումը, որը երբեմն նաև հանգեցնում է ներընտանեկան լարվածության: Ընտանիքների բնակության միջավայրը այդ հարցում ունենում է էական ազդեցություն, նույնիսկ այն դեպքում, երբ ընտանիքում կինը հայ կամ ռուս է: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ Հայաստանում ծնված և բնակվող այդ ընտանիքներում երեխաների ազգային ինքնությունը գերազանցապես հայկական է,

45 *Գալստյան Մ.*, ԴՄՆ, Ռուսաստանի Դաշնություն, ք. Օմսկ, 2001:

և ռուսական էթնիկ ինքնությունը շատ քիչ տեղ է գրավում: Ընդհանուր առմամբ, նման ընտանիքներում ամուսինը կամ կինը իր էթնիկ խմբում ոչ բացասական իմաստով համարվում է լուսանցքային մարդ, քանի որ շեղվում է տվյալ էթնիկ խմբի ընդունած սոցիալական վարքականոնի չափորոշիչներից: Այսպիսով, միգրանտների միջէթնիկ ամուսնությունները կարելի է համարել ինչպես անհատական ընտրության արդյունք, որին նպաստում են այլէթնիկ միջավայրում տեղի բնակչության հետ նրանց երկարատև շփումները, այնպես էլ միջէթնիկ սոցիալական վերահսկողության համակարգից նրանց դուրս մնալու հետևանք:

3.3. Աշխատանքային միգրացիայի ազդեցությունն ընտանիքի և ներընտանեկան հարաբերությունների վրա

Սոցիալ-մշակութային առումով կարևոր է ընտանիքների վրա աշխատանքային միգրացիայի ունեցած ազդեցության բացահայտումը, թե ինչ փոխակերպումներ են առաջանում ընտանիքի մոդելում և ներընտանեկան հարաբերություններում, որքանո՞վ է այն նպաստում հանրապետությունում անկայուն, լքված կամ ամուսնալուծված ընտանիքների թվի աճին, միգրացիան սոցիալ-հոգեբանական առումով ի՞նչ խնդիրներ է հարուցում այդ ընտանիքներում:

Հետազոտության արդյունքներից պարզվեց, որ աշխատանքային միգրացիան ընտանիքի վրա թողնում է երկակի՝ դրական և բացասական ազդեցություն: Աղյուսակ 22-ում ներկայացված է ընտանիքներում աշխատանքային միգրացիայի ունեցած դրական ազդեցությունը: Ըստ այդ աղյուսակի՝ հարցվածների 86,2%-ը համաձայն է, որ արտագնա աշխատանքի հետևանքով լուծվում են այդ ընտանիքների առաջնային կարիքները, 76,0%-ը՝ ընտանիքի աշխատունակ անդամների զբաղվածության, 79,2%-ը՝ ընտանիքի անդամների ուսման համար պահանջվող ծախսերի, 76,0%-ը՝ ընտանիքի անդամների առողջության հետ կապված ծախսերի, 70,1%-ը՝ տան կառուցման (գնման, վերանորոգման) ծախսերի, 71,6%-ը՝ ամուսնության, հարսանիքի, օժիտի և այլ անհրաժեշտ արարողությունների համար ծախսերի, 53,9%-ը՝ արտերկրում երեխաների

Աղյուսակ 22

Աշխատանքային միգրացիայի դրական ազդեցության վերաբերյալ դիրքորոշումները, %

Արտագնա աշխատանքի հետևանքով	Ընդհանրապես համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն եմ	Լիովին համաձայն եմ	Դժվարանում եմ պատասխանել	Ընդամենը
Լուծվում են ընտանիքի առաջնային կարիքները (երեխաների սննդի հագուստի և այլ հարցեր)	4,4	8,3	58,1	28,1	1,0	100,0
Լուծվում է ընտանիքի աշխատունակ անդամների զբաղվածության հարցը	6,3	16,9	53,9	22,1	,8	100,0
Լուծվում է ընտանիքի անդամների ուսման համար պահանջվող ծախսերի հարցը	4,4	14,8	53,4	25,8	1,6	100,0
Լուծվում է ընտանիքի անդամների առողջության հետ կապված ծախսերի հարցը	7,3	13,5	51,3	26,3	1,6	100,0
Լուծվում է տուն կառուցելու / գնելու, վերանորոգելու հարցը	11,7	15,6	46,9	23,2	2,6	100,0
Լուծվում են ամուսնության, հարսանիքի, օժիտի և այլ անհրաժեշտ արարողություններ-ի համար ծախսերի հարցը	9,9	16,1	50,8	20,8	2,3	100,0
Ստեղծվում է արտերկրում երեխաներին կրթություն ստանալու հնարավորություն	14,6	26,3	38,8	15,1	5,2	100,0
Ընտանիքը ստանում է արտերկիր տեղափոխվելու և այնտեղ ապրելու հնարավորություն	14,3	22,7	42,4	16,4	4,2	100,0

կրթություն ստանալու, 58,8%-ը՝ արտերկիր տեղափոխվելու և այնտեղ ապրելու հնարավորություն ստեղծելու հարցերը: Աշխատանքային միգրացիան նպաստում է ոչ միայն դրսից ուղարկված ֆինանսական հոսքերի ավելացմանը, որը 2016թ.կազմել 1,532,883 ԱՄՆ դոլար (որից 896 916-ը՝ ՌԴ-ից)[46], այլև նրանց ընտանիքների որոշակի կենսամակարդակի ապահովմանը: Ֆինանսական այդ հոսքերը նպաստում են նաև Հայաստանում սոցիալ-տնտեսական լարվածության թուլացմանը, բարեգործության մշակույթի և փոքր բիզնեսի զարգացմանը: Այդ գործընթացը դրական ազդեցություն է ունենում նաև այդ ընտանիքների նյութական վիճակի բարելավման հարցում:

«Ինչպե՞ս եք գնահատում Ձեր ընտանիքի նյութական վիճակը» հարցին իրենց նյութական վիճակը վատ են գնահատել միգրանտ ունեցող ընտանիքների 17,5%-ը, միջին՝ 50,8%-ը, իսկ 31,7%-ը՝ լավ: Համեմատության համար նշենք, որ միգրանտ չունեցող ընտանիքներում իրենց նյութական վիճակը վատ գնահատողները կազմել են ավելի բարձր տոկոս՝ 28,3%, իսկ լավ գնահատողները՝ 21,3% (տե՛ս աղյուսակ 23):

Անդրադառնանք այն հարցին, թե աշխատանքային միգրացիան ինչ խնդիրներ է հարուցում և ինչ բացասական ազդեցություն է թողնում ընտանիքի և ներընտանեկան հարաբերությունների վրա: Այդ հարցի պարզաբանման համար առաջարկվել էին դատողություններ, որոնց հետ համաձայն լինելու կամ չլինելու վերաբերյալ իրենց դիրքորոշումներն են արտահայտել հարցման մասնակիցները: Պատկերն այսպիսին է, հարցման մասնակիցների 97,7%-ը համաձայն է այն մտքին, որ աշխատանքային միգրացիայի պատճառով ընտանիքում ուժեղանում է միգրանտի նկատմամբ կարոտը, 90,1%-ը՝ տուժում է արտագնա աշխատանքի մեկնողի առողջությունը, 89,4%-ը՝ սրվում են ամուսին-կին հարաբերությունները, 89,0%-ը՝

46 ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով կատարված դրամական փոխանցումների ներհոսքը 2016 թվականին, http://www.smsmta.am/?menu_id=52(17.10.17)

Աղյուսակ 23

Միգրանտ ունեցող և միգրանտ չունեցող ընտանիքների նյութական վիճակը, %

		Ընտանիքի նյութական վիճակի գնահատում					Ընդամենը
		Շատ վատ	Ավելի շուտ վատ	Միջին	Ավելի շուտ լավ	Շատ լավ	
Միգրանտ ունեցող ընտանիք	Արական	5,2	12,1	50,0	22,4	10,3	100,0
	Իգական	5,9	11,8	51,5	26,5	4,4	100,0
	Ընդամենը	5,6	11,9	50,8	24,6	7,1	100,0
Միգրանտ չունեցող ընտանիք	Արական	15,2	16,2	48,6	16,2	3,8	100,0
	Իգական	9,8	16,3	51,6	19,6	2,6	100,0
	Ընդամենը	12,0	16,3	50,4	18,2	3,1	100,0

խանգարվում է երեխաներ ունենալու պլանավորումը, 87,7%-ը՝ ավելանում է ամուսնալուծվողների թիվը, 87,2%-ը՝ տուժում է երեխաների դաստիարակության գործը, 87,2%-ը՝ ավելանում է չամուսնացողների թիվը, 72,4%-ը՝ տուժում են արտագնա աշխատանքի մեկնողի բարոյական նորմերը, 71,9%-ը՝ տուժում է ծերերին և հիվանդներին անհրաժեշտ խնամքով ապահովելու գործը:

Այսպիսով, աշխատանքային միգրացիան ընտանիքների ամրության հարցում լուրջ հիմնախնդիրներ և փոփոխություններ է առաջ բերում. ներկայացված կարծիքներից կարող ենք եզրակացնել, որ թե՛ քանակական և թե՛ բովանդակային առումով այդ ընտանիքներում առկա են մի շարք նոր դրսևորումներ: Ընտանիքի անդամների ժամանակավոր բաժանումը բարձրացնում է ամուսնալուծվելու ռիսկայնության աստիճանը, որի հետևանքով համայնքներում հետզհետե աճ է նկատվում ամուսնալուծված ընտանիքների թվի: Այսպես, ներկայացնենք Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանի մի քանի համայնքներում մեր հավաքած տվյալները (2012 թ. հունիսի դրությամբ) (տե՛ս աղյուսակ 25):

wԱղյուսակ 24

Աշխատանքային միգրացիայի բացասական ազդեցության վերաբերյալ դիրքորոշումները, %

Արտագնա աշխատանքի պատճառով	Ընդհանրապես համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն եմ	Լիովին համաձայն եմ	ԴՊ	Ընդամենը
Տուժում են ընտանիքում ամուսին-կին փոխհարաբերությունները	2,3	7,6	33,1	56,3	0,8	100,0
Տուժում է երեխաների դաստիարակության գործը	1,3	10,9	28,9	58,3	0,5	100,0
Տուժում է ընտանիքում ծերերին և հիվանդներին անհրաժեշտ խնամքով ապահովելու հարցը	6,5	20,6	27,9	44,0	1,0	100,0
Ավելանում է ամուսնալուծ-վողների թիվը	2,1	8,6	32,8	54,9	1,6	100,0
Ավելանում է չամուսնացածների թիվը	2,9	8,6	38,0	49,2	1,3	100,0
Տուժում են արտագնա աշխատանքի մեկնողի բարոյական նորմերը	6,5	17,4	30,2	42,2	3,6	100,0
Տուժում է արտագնա աշխատանքի մեկնողի առողջությունը	1,6	7,0	35,2	54,9	1,3	100,0
Օտար միջավայրում մեծանում է նրան սպառնացող վտանգը	1,8	7,0	34,4	55,2	1,6	100,0
Ընտանիքում ուժեղանում է միգրանտի նկատմամբ կարոտը	,5	1,0	25,0	72,7	,8	100,0
Տուժում է երեխաներ ունենալու պլանավորումը	2,6	6,8	29,9	59,1	1,6	100,0

Աղյուսակ 25

Ամուսնալուծվածների թիվը՝ ըստ Լոռու մարզի հինգ գյուղական բնակավայրերի տվյալների[47]

Համայնքի անվանումը	Տնային տնտեսությունների թիվը	Նրանցից արտագնա աշխատանքի մեկնողների թիվը	Նրանցից ամուսնալուծվածների թիվը
Տաշիր	13 225	7 889	326
Մեծավան	7 002	3 800	155
Սարչապետ	2 100	1 322	88
Նորաշեն	1 820	1 100	73
Լեռնահովիտ	1 729	1 018	30

Ըստ ազգային վիճակագրական ծառայության 2016 թ. հունվարի 1-ի տվյալների՝ Հայաստանում ամուսնությունների թիվը կազմել է 17 603 մարդ, իսկ ամուսնալուծություններինը՝ 3760 մարդ (20,8 %), ընդ որում՝ դրա մի մասը կապված է աշխատանքային միգրացիայի հետ, և այդ մասին են փաստում նաև այն մարզերի տվյալները, որոնք ունեն այդ գործընթացին մասնակցության բարձր ցուցանիշներ: Այսպես, 2016 թ.հունվարի 1-ի դրությամբ Լոռիում գրանցվել են 1270 ամուսնություն և 480 ամուսնալուծություն, Շիրակում՝ համապատասխանաբար 1278 և 262[48]: Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Իջևանի բաժնի վարիչ Ռ. Կարապետյանի տվյալներով՝ 2011 թ. գրանցվել է 26 ամուսնալուծություն, որից մեկ երրորդը՝ աշխատանքային միգրացիայի պատճառով: Հետազոտության արդյունքներով՝ այդ բաժանությունների զգալի մասը նաև զուտ «փաստաթղթային ձևակերպումների» արդյունք է, այստեղ ճանաչում են երեխայի հայրությունը, իսկ Ռուսաստանում ձևակերպում են կեղծ ամուսնություն՝ դյուրին կարգավիճակ ստանալու համար: Ըստ Ռ. Կարապետյանի դիտարկումների՝ միայն 2012 թ. հունիսի տվյալներով «*կար 12 դիմում ամուսնալուծության համար, բայց 3*

47 *Գալստյան Մ.*, ԴՄՆ, Լոռու մարզ, 2012:

48 Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2016, էջ 94-97:

դեպք է, որ համապատասխանում է իրականությանը: Մնացածը փաստաթղթային է, քանի որ ՌԴ-ում ուզում են կարգավիճակ ձեռք բերել» (կին, 41 տ., Իջևան)[49]:

Աշխատանքային միգրանտների որոշ մասի շրջանում, բացի տեղում օրինական ընտանիքից, մուտքի երկրներում լայն տարածում են ստանում արտամուսնական կապերը, երկրորդ ընտանիք ունենալու երևույթը: Ելնելով այն հանգամանքից, որ միգրանտներն ընտանիքին նյութական միջոցներով հիմնական ապահովողն են, նրանց այդ վարքագիծը հաճախ հանդուրժում են ընտանիքի մյուս անդամները: Նրանց կանայք քանիցս այսպես են արտահայտվում. «*Դրսում ինչ ուզում են՝ թող անեն, կարևորը, որ կարողանում են պահել իրենց ընտանիքը*»[50]: Դերերի, կարգավիճակների և արժեքային կողմնորոշումների փոփոխության հետևանքով այդ ընտանիքները հաճախ դադարում են կրել իրենց վերապահված մի շարք գործառույթներ, որի հետևանքով ընտանիքի սիրո և փոխըմբռնման ամրության հիմքերն իրենց տեղը զիջում են տնտեսական գործոնին:

Գեղարքունիքի մարզում հարցազրույցին մասնակցած կանանցից մեկը պատմեց հետևյալը. «*Տղաս ամուսնացած էր և ուներ երկու երեխա՝ տղա և աղջիկ: Հիմա նրա տղան արդեն 16 տարեկան կլինի, իսկ աղջիկը՝ 14: Նրանք 7 տարի առաջ գնացին Բելառուսի Հանրապետություն և ապրում են Վիտեբսկի մարզում: Տղաս մի քանի տարի շարունակ գնում էր այնտեղ՝ աշխատելու: Այնտեղ կապվեց իրենից տարիքով մեծ մի հարուստ կնոջ հետ և մուտ երկու տարի տուն չեկավ: Այստեղի ընտանիքին ամեն ամիս փող էր ուղարկում, և ընտանիքը յոլա էր գնում: Կինը գիտեր այդ մասին, բայց երեխաների համար չբաժանվեց: Մի անգամ էլ ամռանը Վիտեբսկից զանգահարեց և այդ ոուս կնոջ հետ եկավ Սևանում հանգստա-*

49 *Գալստյան Մ.*, ԴԱՆ, Տավուշի մարզ, 2011:

50 *Գալստյան Մ.*, Ընտանիքի հիմնախնդիրները տնտեսական տեղաշարժերի համատեքստում, Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրներ, Ե., «Գիտություն» հրատ., 2001, էջ 27-29:

նալու: Այդ ռուս կնոջը բերեց մեր տուն և ծանոթացրեց իր կնոջ հետ: Նրան հյուրասիրեցինք և գնալուց նվերներ տվեցինք: Մի տարի հետո եկավ և կնոջն ու երեխաներին տեղափոխեց Վիտեբսկ՝ ապրելու, ասաց, որ տուն է վարձել նրանց համար: Հիմա ինքը ապրում է այդ ռուս կնոջ հետ, բայց նաև կապված է իր ընտանիքի հետ: Թոռս ասում է՝ ռուս կինը և մայրը իրար հետ շատ լավ են, գնում-գալիս են իրար տուն» (կին, 45 տարեկան, Գավառ)[51]: Մեր օրերում այդ երևույթների նկատմամբ ինչպես ընտանիքի, այնպես էլ համայնքային մակարդակով մեծացել է հանդուրժողական վերաբերմունքը: Դրսում ոչ ֆորմալ ամուսնություններից և երկրորդ ընտանիքի կազմավորումից հետո ծնված երեխաները երբեմն համարվում են «անցանկալի» և ծնողների կողմից ընկալվում են որպես «բեռ»: Ե. Տյուրյուկանովան դրանք որակում է «կեղծ ընտանիքներ»[52]: Հետազոտության արդյունքներով միգրանտների շրջանում ավելացել է նաև լքված ընտանիքների թիվը: Հետազոտության ընթացքում գրանցվել են մի շարք դեպքեր, երբ ամուսինը լքել և տարիներ շարունակ կապ չի պահպանել ընտանիքի հետ: Հատկապես գյուղական համայնքներում դեռևս ամուր պահպանվող ազգային ավանդույթների և հասարակական կարծիքի ազդեցությամբ այդ ամուսնալուծությունները չեն ստանում պաշտոնական ձևակերպում: Կան նաև դեպքեր, երբ ընտանիքը լքած ամուսինը ծերանալուց հետո վերադառնում է: Բերենք հարցազրույցից մի հատված, որը գրանցվել է Գեղարքունիքի մարզում. «*Մեր գյուղում կա 5–6 դեպք, երբ տղամարդիկ երկար տարիներ Ռուսաստան արտագնացության մեկնելուց հետո լքել են ընտանիքը: Սակայն ծերանալուց հետո դրսի ընտանիքը նրան չի պահել և ստիպված վերադարձել են գյուղ: Կանայք, հասարակական կարծիքի ազդեցության ներքո, որպես իրենց երեխաների հայր, ինչպես իրենք են ասում, նամուսի համար ընդունել են: Բայց վերաբերմունքը փոխվում է, և նրանք ընտանի-*

51 *Գալստյան Մ.*, ԴՄՆ, Գեղարքունիքի մարզ, 2005:

52 *Тюрюканова Е.В.* Миграция и гендер, Трудовая миграция в России, медико-социальние и гендерные аспек-ты, Материалы Международной конференции, 26-27 октября 2011года, М., 2012, с. 53.

քում արդեն չունեն այն նույն հեղինակությունը» (կին, 75 տ., գ, Սարուխան)[53]: Աշխատանքային միգրանտներին բնորոշ է նաև «կիսված ընտանիքներ» ունենալու երևույթը, քանի որ ընտանիքի տան տղամարդը գտնվում է արտագնա աշխատանքի վայրում, կինը երեխաների կամ երեխաները տատիկի ու պապիկի հետ ապրում են հայրենիքում[54]: Հարցազրույցների ժամանակ գրանցվել են բազմաթիվ դեպքեր, երբ ընտանիքներում «կիսվում են» նաև երեխաները՝ հայտնվելով սահմանի տարբեր կողմերում: Հատկապես տեղում՝ հարազատների մոտ, մնում են փոքր երեխաները և աղջիկները: Սովորաբար նման պարագայում առաջանում են դաստիարակության և վերահսկողության հետ կապված որոշակի խնդիրներ: «Կիսված» ընտանիքների այդ մոդելը լայն տարածում ստացավ համարյա բոլոր միգրանտների շրջանում: Շիրակի մարզի հարցազրույցներից մեկում կինն իր ընտանիքի մասին պատմեց հետևյալը. «*Ամուսինս և փղաս շուրջ քսան տարի մեկնում են խոպան: Նոր տարվան վերադառնում են, հետո նորից մեկնում: Այստեղ մնում են ամուսնուս մայրը, ես, հարսս ու թոռներս: Երեխաները շատ են կարոտում իրենց հորը և պապիկին: Մենք էլ տարիներ շարունակ ապասում ենք նրանց անփորձանք վերադարձին*» (կին, 59 տ., Հրազդան)[55]: Կիսված ընտանիքները վերամիավորվում և դառնում են լիարժեք այն դեպքում, երբ միգրանտները վերադառնում են, բայց այն տևում է ընդամենը մի քանի ամիս: Նույնիսկ այդ դեպքում միգրանտը դառնում է որպես «յուրայինների մեջ օտար», քանի որ ընտանիքում նրա ներկայությունը համարում են ժամանակավոր, և ընտանիքի անդամների կողմից միգրանտի նկատմամբ ցուցաբերվում է հյուրին բնորոշ վարքագիծ:

Միգրանտի բացակայության ժամանակ տնային տնտեսության ողջ աշխատանքներն առաջին հերթին ընկնում են կանանց, տարեցների և անչափահաս երեխաների ուսերին: Պայմանավոր-

53 *Գալստյան Մ.*, ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 2005:

54 *Գալստյան Մ.*, Աշխատանքային միգրացիան և ընտանիքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում, ԼՀԳ, 2012, N 2-3, էջ 254–265:

55 *Գալստյան Մ.*, ԴԱՆ, Կոտայքի մարզ, 2013:

ված այդ հանգամանքով՝ կանանց շրջանում տեղի է ունենում ավանդական մի շարք կարգավիճակների և դերերի փոփոխություն: Կանայք ընտանիքում նախկինում հիմնականում զբաղվում էին կենցաղի և երեխաների դաստիարակության խնդիրներով: Մեր օրերում կանայք ընտանիքից դուրս կատարում են իրենց վերապահված և չվերապահված մի շարք գործառույթներ, մեծացել է նրանց տնտեսական ակտիվությունը: Տան գլխավորի բացակայության ընթացքում նրանք մասնակցում են նաև համայնքի հասարակական կյանքին և կարևոր միջոցառումներին, հարսանեկան և թաղման ծեսերին, շփվում տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Սա նշանակում է, որ աշխատունակ բնակչության միգրացիայի հետևանքով տնտեսական աշխատանքներում մեծացել է ընտանիքի մյուս անդամների ծանրաբեռնվածությունը:

Միգրանտները, աշխատանքի բերումով երկար ժամանակով բացակայելով ընտանիքներից, երկատվում են: Հետաքրքիր է, թե այդ իրավիճակում արդյոք նրանք շարունակո՞ւմ են մնալ ընտանիքների գլխավոր, կարևոր հարցերի վերաբերյալ վերջնական վճիռներ կայացնողներ, և այդ հարցում ազդեցություն ունենո՞ւմ է միգրանտների վաստակը: Կամ միգրացիան և նոր արժեքների ձևավորումն ի՞նչ ազդեցություն են թողնում ընտանիքում համատեղ որոշումներ կայացնելու հարցում: Միգրանտ ունեցող հարցման մասնակիցների 48,4%-ի ընտանիքներում կարևոր որոշումները շարունակում է կայացնել ամուսինը: Սա նշանակում է, որ եթե նույնիսկ ամուսինը արտագնա աշխատանքի վայրում է, կինն ընտանիքի վերաբերյալ բոլոր հարցերը քննարկում է նրա հետ, և վերջնական խոսքը պատկանում է ամուսնուն: Այսինքն՝ նրանք ընտանիքից բացակայության դեպքում էլ շարունակում են մնալ տան գլխավորը և կարևոր հարցերի վերաբերյալ վերջնական վճիռներ կայացնողը:

Անշուշտ, այդ հարցում կարևոր նշանակություն է ձեռք բերում միգրանտների դրամական վաստակը: Օրինակ, Կապանում հարցազրույցի մասնակիցը պատմեց հետևյալը. «*Աղջկաս ամուսնացրել եմ այն ժամանակ, երբ ամուսինս Ռուսաստանում էր: Սկայպով*

կապը պահելով՝ անընդհատ խորհրդակցում էի նրա հետ: Մեր տան ղեկավարը ինքն է, նշանակություն չուներ, թե որտեղ է նա, վերջնական խոսքը նրան է պատկանում: Այնուհետև ամուսնուս բարեկամների՝ կեսուրիս, կեսրարիս, տեգրներիս հետ որոշում կայացրեցինք, և նշանեցի աղջկաս» (կին, 51տ., Կապան)[56]:

Գծապատկեր 14

Միգրանտների ընտանիքում կարևոր որոշում կայացնողները, %



Նշված ընտանիքներում առաջնորդի դերի ստանձնումը կապված է ոչ միայն տնտեսական, այլև ավանդութային գործոնի հետ, որի միջոցով տղամարդու՝ որպես տան գլխավորի մասին պատկերացումները դեռևս գերիշխում են հայոց մշակույթում: Հարցման մասնակիցների 37,4%-ը այդ հարցին ցուցաբերել է առավել ազատական մոտեցում՝ որոշումները կայացրել են ընտանյոք հանդերձ: Ամուսնու բացակայության պայմաններում կանանց միայն 6,4%-ն է կայացրել ինքնուրույն որոշումներ (աղյուսակ 41): Հարցման կին մասնակիցներից մեկն այն պայմանավորեց ընտանեկան գործերին առավել տեղեկացված լինելու հանգամանքով. «*Ճիշտն ասած, մեծ*

56 *Գալստյան Մ.*, ԴՄՆ, Սյունիքի մարզ, 2009:

մասամբ որոշումները ես եմ կայացնում: Եթե ինքը տանն է, նույնիսկ այդ պարագայում վերջին խոսքն իմն է: Երևի դա նրանից է, որ տանը միշտ ես եմ լինում և լավ տեղյակ եմ ամեն ինչից: Մեր տան դրվածքով այդ հարցը այդպես է լուծվում: Հեպո եթե տղամարդը տանը չէ, դու սովորում ես այդ ազատությանը, օրինակ՝ ես ինքս արդեն 50 տարեկան եմ, և եթե ամուսինս այստեղ չի, ազատորեն կարողանում եմ իմ ուզած քայլը անել, իյուր գնալ, իյուր ընդունել, բարեկամներիս մոտ գնալ, մի ուրիշ քաղաք գնալ: Բայց եթե ամուսինս այստեղ է լինում, կարող է չգնամ, որովհետև նրա սրտով կարող է չլինել, շատ բաներ պետք է իրեն հարցնեմ» (կին, 50տ., Տաշիր)[57]: Այսպիսով, աշխատանքային միգրացիայի հետևանքով տղամարդու բացակայությունն ընդհանուր առմամբ չի հանգեցնում ընտանիքում կարևոր որոշումների կայացման հարցում նրա դերի նվազեցման և հայոց մշակույթում հայրիշխանական մոտեցումների փոփոխության: Դրսևորվում է նաև «գերդաստանային», մոտեցում, միգրանտի բացակայության ժամանակ կարևոր որոշումների կայացմանը մասնակից են դառնում նրա մոտ ազգակիցները՝ տարեցների անմիջական մասնակցությամբ և համաձայնությամբ: Որոշ ընտանիքներում տղամարդ միգրանտի բացակայության ժամանակ կանայք ձեռք են բերում ինքնուրույն գործելու և մի շարք հարցերում որոշում կայացնելու ազատություն:

57 *Գալստյան Մ.*, ԴԱՆ, Լոռու մարզ, 2012:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՍԻՐԻԱՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1.1. Սիրիահայ համայնք. պատմական ակնարկ

Սիրիահայ համայնքն առավել հզոր, բազմաշերտ ու կայուն հայ համայնքներից մեկն է աշխարհում: Հայերը Սիրիայում բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից. Տիգրան Բ Մեծի օրոք Ասորիքի (Սիրիայի) զգալի մասը որոշակի ժամանակահատված (մ.թ.ա. 80–60-ական թթ.) ընդգրկվել է հայկական տերության կազմում: Հայկական աղբյուրները հիշատակում են, որ այդ ժամանակ հայերի մեծ գաղթ է տեղի ունեցել դեպի Սիրիայի հյուսիսային շրջաններ[1]: Սիրիահայ համայնքը մեծապես համալրվել է 1915 թվականին, երբ Հայոց ցեղասպանությունից հետո մեծ թվով հայեր են գաղթել Սիրիա: 1920-ականների սկզբի տվյալներով՝ բնակչության քանակով ամենամեծը Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախներն էին՝ 150 հազար, որից 90 հազարը՝ Հալեպում և մոտակայքում, 18 հազարը՝ Բեյրութում, 8 հազարը՝ Դամասկոսում, մնացածները՝ ցրված տարբեր քաղաք-ավաններում[2]:

Սիրիահայերի թիվը տարիների ընթացքում նվազել է. մինչև 2011 թվականը սիրիահայ համայնքը պաշտոնապես հաշվվում էր 100 հազար մարդ, այդ թվում, Հալեպում՝ մոտ 60–70 հազար, Դամասկոսում՝ մոտ 5–6 հազար կամ 1200 ընտանիք[3]: Համայնքի

1 *Աբրահամյան Ա. Գ.*, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատոր Ա, Եր., «Հայպետհրատ», 1964, էջ 428:

2 *Սրբեփանյան Ա.*, XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 27:

3 *Փաշայան Ա.*, *Հարությունյան Լ.*, Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր., «Լուսակն» հրատ., 2011թ., էջ 49:

թվաքանակի վերաբերյալ շրջանառվում են նաև ավելի նվազ տվյալներ՝ 50–80 հազարի սահմաններում:

XX դարի հայրենադարձության տարիներին Սովետական Հայաստան են ներգաղթել հազարավոր սիրիահայեր: Միայն 1921 թվականին՝ հայրենադարձության առաջին փուլում, ներգաղթել է 3 հազար մարդ: Հետպատերազմյան տարիներին (1946 թ. և 1947 թ.) Սիրիայից և Լիբանանից ընդհանուր թվով ներգաղթել է 32290 մարդ: 1960–1970 թթ.-ի ներգաղթի տարիներին Հայաստան եկած սիրիահայերի թիվը 4848 էր: Նրանք բոլորը ծագումով Կիլիկիայից էին: Շատերը մոռացել էին մայրենին՝ դառնալով արաբախոս, քրդախոս[4]: Սիրիայից ներգաղթածների մեջ ճնշող մեծամասնությունը գյուղի բնակիչներ էին՝ Հյուսիսային Սիրիայի Ջեզիրիե նահանգի Գամըշլը, Դեր Զոր ավաններից և Արամո, Յակուբիե, Ղնիե և այլ արաբախոս հայաբնակ գյուղերից, Քեսաբի գյուղերից և Լաթաքիայի շրջանի ավաններից:

Ցեղասպանությունից հետո Սիրիայում հայ գաղթականներն ապրել են ծանրագույն պայմաններում՝ հիմնականում վրանային ճամբարներում: «Ցրվելով երկրի քաղաքներում ու գյուղերում և օրհասական պայքար մղելով սովի ու մասսայական հիվանդությունների դեմ, հաղթահարելով այլևայլ դժվարություններ՝ հայ աշխատավորական մասսաները սկսում են կառուցել իրենց նոր օջախները, հայթայթել ապրուստի միջոցներ, հիմք դնել դպրոցների ու մշակութային հաստատությունների»[5]:

Բնական է, որ սկզբնական փուլում հայերը մտադրություն չէին ունենա վերջնականորեն հաստատվել Սիրիայում, որտեղ նրանք հայտնվել էին միանգամայն նոր, ինչ-որ իմաստով խորթ մի միջավայրում, որն ուներ տարբերակիչ մի շարք գործոններ՝ էթնիկ, կրոնական, լեզվական, մշակութային և այլն: Սակայն հետագայում

4 *Սրբեփանյան Ա.*, Սիրիահայերը Երևանում, Հայ ժողովրդական մշակույթ XVI, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Եր., «Գիտություն» հրատ., 2014, էջ 318:

5 *Գասպարյան Ս. Տ.*, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Եր., «Հայպետհրատ», 1962, էջ 168:

նրանք հաշտվեցին Սիրիայում հաստատվելու իրականության հետ, իսկ նշված գործոնները պարզապես նպաստեցին հայ տարագիրների էթնիկ և մշակութային ինքնության պահպանմանը[6]:

Հայերը ժամանակի ընթացքում սկսեցին ինքնակազմակերպվել՝ որպես համայնք, ցուցաբերել քաղաքական կազմակերպվածություն՝ ինտեգրվելով նաև Սիրիայի հասարակական կյանքում: Աստիճանաբար տարագիրների զանգվածը վերաճեց կազմակերպված ու կենսունակ համայնքի, որն ամեն կերպ ձգտում էր պահպանել ազգային ինքնությունը:

Սիրիահայ համայնքի հիմնական մասը Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ են, կան նաև հայ կաթոլիկներ և հայ ավետարանականներ: Պետության կողմից սիրիահայ առաքելական համայնքը դիտարկվում է որպես կրոնական փոքրամասնություն: «Համայնքը ղեկավարվում է հոգևոր-կրոնական իշխանության կողմից, որն ունի դատական և իրավական գործառույթներ, ինչն ամրագրված է Սիրիայի Արդարադատության նախարարության կողմից: Եկեղեցին պետության մոտ իր համայնքի ներկայացուցիչն է, իսկ համայնքի մոտ՝ պետության»[7]:

Հայերը գրեթե չեն մասնակցել երկրի քաղաքական զարգացումներին՝ կենտրոնանալով հայապահպանության խնդիրների վրա, սակայն նրանք ներգրավված են Սիրիայի սոցիալական և մշակութային գործընթացներում, գիտակցվում են երկրի լիիրավ և արժանավոր քաղաքացիներ: Սիրիայում հայկական կուսակցությունները գործում են սահմանափակ ձևով՝ հասարակական, մշակութային և մարզական կազմակերպությունների կամ միությունների (ակումբների) շրջանակներում[8]:

Սիրիայում հայկական բոլոր միություններն ու կրոնադավանական ուղղություններն իրենց ենթակառույցներն ունեն գրեթե բո-

6 *Гриншилдс Х. Т.*, Поселение армянских беженцев в Сирии и Ливане в 1915-1939гг., Ереван, 1982/2. с. 10:

7 *Փաշայան Ա.*, *Հարությունյան Լ.*, նշվ. աշխ., էջ 13:

8 Տես նույն տեղում, էջ 14:

լոր հայաշատ շրջաններում՝ Հալեպում, Դամասկոսում, Քեսաբում, Կամիշլիում, Լաթաքիայում, Հոմսում, և այդ ճանապարհով յուրաքանչյուր շրջանակ սերտորեն կապված է իր մասնաճյուղերի հետ: Ակումբներում կազմակերպվում են մշակութային և մարզական տարբեր միջոցառումներ :

Թեև Հալեպը չի դարձել սփյուռքահայ մշակույթի խոշոր կենտրոն, բայց այստեղ կան զանազան ուղղությունների պատկանող մշակութային կազմակերպություններ, հայրենասիրական և սպորտային միություններ (Սիրիահայերի Օգնության Խաչ, Սիրիահայերի Երիտասարդական Միություն, Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միություն, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն, Հայ Երիտասարդական Միություն, Նոր Սերունդ և Թեքեյան մշակութային միություններ) գործում են նաև բազմաթիվ հայրենակցական միություններ՝ «Մարաշ», «Ուրֆա», «Զեյթուն», «Այնթաբ», «Քիլիս» և այլն[9]: «Անոնք ունին մարդասիրական, ընկերային, մշակութային, գրական, մարզական գործունէութիւն, կը պահեն մարզական խումբեր, արուեստի, երգ-երաժշտութեան դպրոցներ, երգչախումբեր, պարախումբեր, սկաուտական խումբեր, որոնք կը կառավարուին մասնաճիւղերու կազմած յանձնախմբային կազմերով: ...Կարելի է ըսել, որ սուրիահայ գաղութի բոլոր ընտանիքները իրենց բոլոր կամ մի քանի անդամներով ներգրաւուած են ոստայնին մէջ»[10]:

Սիրիայում հայկական թերթեր չեն հրատարակվում, սակայն հայերը հետևում են Լիբանանում տպագրվող հայկական թերթերին, որոնցից են՝ «Ազդակը», «Ձարթոնքը», «Արարատը» և այլն: Հալեպի (Բերիո) Հայոց թեմի շաբաթաթերթը՝ «Գանձասարը», տարածվում է Սիրիայի հայկական շրջանակներում: Սիրիահայերի մեծ մասը պարբերաբար հետևում է հայաստանյան իրադարձություն-

9 *Գասպարյան Ս. Տ.*, նշվ. աշխ., էջ 172-173:

10 *Զոլաքյան Հ.*, Սիրիահայերը Հայաստանում. ադապտացման և ինտեգրման խնդիրները, ուսումնասիրության նպատակները, մեթոդաբանությունը և հեռանկարները: Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները, Եր., «Գիտություն» հրատ., 2015, էջ 31-32:

ներին: Արբանյակային հեռուստահեռարձակման շնորհիվ վերջիններս դիտում են Հ1-ը և հայաստանյան այլ ալիքներ:

Սիրիահայերի համար Հայաստանի գաղափարը ազգապահպանության կենտրոնական տարրն է և դրա կենսունակության կարևոր խթանը: Ազգային դաստիարակությունը տեղի է ունեցել ոչ միայն մշակութային և մարզական միություններում, այլ նաև՝ ընտանիքներում: Սիրիահայ համայնքը մեծ մասամբ հայախոս է: Արաբախոս են հիմնականում կաթոլիկ հայերը, ինչպես նաև հին հայերը՝ «արման կադիմ»[11], որոնց շրջանում ազգային գիտակցությունը շատ թույլ է արտահայտված:

Սիրիահայերի նկատմամբ թե՛ իշխանությունները, թե՛ հասարակությունը բարյացակամորեն են տրամադրված եղել՝ պայմանավորված հայերի ունեցած վաստակով, նրանց վստահելի և օրինապահ վարքագծով, նաև էթնիկ և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հանդուրժողական քաղաքականությամբ: Հայերն առօրյա և գործնական կյանքում տեղացիների հետ հարաբերություններում խնդիրներ չեն ունեցել, սակայն գերադասել են շփվել հիմնականում հայրենակիցների հետ:

Չնայած սիրիահայերի ներդրած ջանքերին՝ վերջին երկու տասնամյակում հայ համայնքում էթնիկ ինքնության պահպանման գործընթացը բազմաթիվ խոչընդոտներ է ունեցել, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները՝

- Խառնամուսնությունները,
- Սակավ ամուսնությունների պատճառով ծերացող համայնքը,
- Արաբական մշակույթի ազդեցությունը երիտասարդների վրա, դրա ակտիվ ներմուծումը հայ համայնք,
- Արաբախոս ընտանիքների՝ հայկական շրջանակում չմնալու ցանկությունը, ազգային կյանքից հեռանալը,

11 Հայերին, ովքեր դեռևս Ցեղասպանությունից առաջ են բնակվել Սիրիայում, անվանում են արման կադիմ (հին հայեր)£ Նրանց մի մասը կաթոլիկ, արաբախոս հայեր են:

- Սիրիայում տնտեսական իրադրության վատթարացումը, ինչն էապես նպաստել է արտագաղթի աշխուժացմանը:

Անկանխատեսելի զարգացումները, տարածաշրջանում միջէթնիկ և միջկրոնական լարվածությունը որոշակի մտավախություն և ազգային անվտանգությանն առնչվող ներքին տագնապ էին առաջացրել հայերի մոտ դեռևս մինչև 2011 թվականը, իսկ սկսված պատերազմն արդեն ճակատագրական եղավ սիրիահայ համայնքի և հազարավոր սիրիահայերի համար: Նրանք ցրվեցին աշխարհով մեկ: 2011 թվականից չդադարող ռազմական գործողությունների պատճառով հայերն աստիճանաբար սկսեցին հեռանալ ապահով վայրեր՝ Լիբանան, Իրան և ավելի հեռու՝ եվրոպական երկրներ: Սիրիահայերի տարերային ներհոսք սկսվեց նաև դեպի Հայաստանի Հանրապետություն:

Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ միայն 2013 թվականին Հայաստան է եկել 6000–7000 մարդ: Սա խոսում է այն մասին, որ ստույգ հաշվառում չի եղել: Ըստ ՀՀ Սփյուռքի նախարարության տրամադրած տվյալների՝[12] 2014 թվականի փետրվարի դրությամբ Հայաստանում բնակվում են շուրջ 11000 սիրիահայեր՝ մոտ 2800 ընտանիք: 2017 թվականին արդեն շրջանառվում է այն տեղեկատվությունը, որ սիրիական պատերազմի բռնկվելուց ի վեր մոտ քսաներկու հազար սիրիահայեր են եկել Հայաստան[13]:

Հայաստանում գտնվող սիրիահայերի մեջ հիմնական մեծ զանգվածը կազմում են հալեպահայերը, այնուհետև՝ դամասկոսահայերը: Հայաստանում են գտնվում նաև Սիրիայի հայաշատ այլ բնակավայրերից (Քեսաբ, Կամիշլի, Ռաքքա, Դեր Զոր) եկած մեր հայրենակիցները: Սիրիահայերի մի մասն էլ Հայաստան է եկել երրորդ երկրից՝ Քուվեյթ, Լիբանան, Շվեդիա: Նրանք Հալեպ քաղաքի հիմնական բնակիչներն են, որ պատերազմի պատճառով թողել

12 Տվյալները փոխանցվել են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 2014 թ. փետրվարի 13-ի թիվ 2470-34 գրության համաձայն:

13 https://armenpress.am/arm/news/895509/22000-syrian-armenians-re-locate-to-armenia-since-beginning-of-syrian-war.html, 23.06.2017, ժամը՝ 15:58:

են Սիրիան, և մինչև Հայաստան գալը՝ եղել այլ երկրներում, սակայն վերջնական ընտրությունը կանգնել է հայրենիքի վրա: Հարկ է նշել, որ այսօր մեծամասամբ քաղաքաբնակներ են՝ ի տարբերություն XX դարի ներգաղթած սիրիահայերի, որոնք առավելապես գյուղաբնակ էին և ավելի հեշտ էին բնակություն հաստատում Երևանից դուրս այլ վայրերում[14]:

Սիրիահայերը Հայաստան այցելության սկզբնական ժամանակաշրջանում կանգնած էին բազմաթիվ հարցերի առաջ՝ ինչի՞ց սկսել, ինչպե՞ս գործ գտնել, ինչպե՞ս պաշտպանել սեփական իրավունքները: Ըստ Միգրացիոն պետական ծառայության հաղորդման՝[15] ընդհանրական խնդիրներից է վիզաների և անձնագրերի հարցը, իսկ անհատական խնդիրները վերաբերում են հիմնականում աշխատանք, կացարան գտնելուն, ուսմանը, առողջապահությանը և այլն:

2012 թվականին ՀՀ Սփյուռքի նախարարության աջակցությամբ հիմնվում է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ն, որի աշխատանքի շրջանակներում բացահայտվում և գնահատվում են սիրիահայերի կարիքներն ու առաջնահերթ հիմնախնդիրները, ապա դրանք ներկայացվում տարբեր բարեգործական կազմակերպությունների, որի արդյունքում որոշակիորեն լուծվում են նրանց հագուստի, պարենային մթերքների ձեռքբերման, բնակարանային վարձի փոխհատուցման խնդիրները:

2012 թվականից ի վեր ստեղծվել ու իրենց նախաձեռնություններով հանդես են եկել նաև բազմաթիվ կազմակերպություններ, միություններ[16] (Սիրիահայերի աջակցման գրասենյակ, «Հայազն» միություն, «Հայրենադարձության և սիրիահայության աջակցության» խումբ, «Հայրենադարձ ընտանիքներին աջակցության»

14 *Ստեփանյան Ա.*, Սիրիահայերը Երևանում: Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում: Եր., «Գիտություն» հրատ., 2014, էջ 319:

15 Աղբյուրը՝ aravot.am, 10.11. 2012, ժամը՝ 17:25:

16 Աղբյուրը՝ aravot.am, 15.11.2012, ժամը՝ 12:10:

ֆեյսբուքյան խումբ[17] և այլն), որոնք իրենց աշխատանքներով նպաստել են սիրիահայերի խնդիրների լուծմանը:

ՀՀ Սփյուռքի և Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունների կողմից պարբերաբար կազմակերպվում է աշխատանքի տոնավաճառ՝ Հայաստանում գտնվող սիրիահայերի աշխատանքի տեղավորմանն աջակցելու նպատակով:

Չնայած բազմաթիվ կառույցների կողմից տարվող աշխատանքներին՝ սիրիահայերի մի մասի համար (պաշտոնական ստույգ տեղեկատվություն չկա այս հարցի վերաբերյալ) Հայաստանը համարվեց այն տրանզիտ երկիրը, որտեղից նրանք տեղափոխվեցին աշխարհի տարբեր երկրներ՝ իրենց ընտանիքների համար լավ միջավայր ապահովելու ակնկալիքով:

1.2. Սիրիահայ ընտանիքի ուսումնասիրության տեսամեթոդաբանական մոտեցումները

Ընտանիքն անհատի համար համարվում է առաջնային աղբյուր՝ սոցիալական արժեքների, նորմերի, ավանդույթների և վարքի ձևերի յուրացման, նաև հիմնաքար՝ կրոնական պատկանելիության, էթնիկ ինքնության և աշխարհայացքի ձևավորման հարցերում: Յուրաքանչյուր մշակույթ ծնում է ընտանիքի որոշակի նորմատիվ մոդել կամ մոդելների խումբ: Նորմատիվ մոդելի կառուցվածքն իր մեջ ներառում է տարրեր՝ ընտանիքի անդամներին, որոնցից յուրաքանչյուրը բնութագրվում է որոշակի կարգավիճակով, այսինքն՝ որոշակի իրավունքներ և պարտականություններ ունեցող դիրքով, որի հետ կապված է վարքի համապատասխան ձևը[18]: Ընտանիքի նորմատիվ մոդելի ձևավորման համար մեծ նշանակություն ունեն նաև հասարակական կեցությունը պայմանավորող

17 Վերջինիս նպատակն է եղել սիրիահայերին ժամանակավոր կացարան տրամադրելը, օգնել՝ լուծելու աշխատանքի, կենցաղային, ինչպես նաև բարոյական աջակցության և շփման խնդիրները, աղբյուրը՝ a1plus.am, 05.12. 2012, ժամը՝ 16:50:

18 *Шнейдер*. Семейная психология. Учебное пособие для вузов. М.: Академический проект; Екатеринбург, 2006. с.768., https://texts.news/semeynaya-psihologiya/normativnyie-kvazisemeynyie-modeli-semi-25573.html.

այնպիսի գործոններ, ինչպիսիք են բնակլիմայական, քաղաքական, տնտեսական, կենցաղային պայմանները, որոնք անուղղակի կերպով որոշում են նաև ընտանեկան և ամուսնական հարաբերությունների բնույթը:

Սույն վերլուծության մեջ ընտանիքը դիտարկել ենք որպես մշակութային երևույթ, որի շրջանակներում մարդն իր նմանների հետ ձևավորում է գերբնական հարաբերություններ և դառնում է մարդ: Մշակույթի և այլ սոցիալական ինստիտուտների, այդ թվում՝ ընտանիքի հետ փոխհարաբերության սահմանման մեջ հատուկ տեղ է զբաղեցնում բրիտանացի մարդաբան Բ. Մալինովսկու ֆունկցիոնալ դպրոցը, որը մշակույթը սահմանում է որպես գործիքային (ինստրումենտալ) համակարգ: Դրա միջոցով մարդ բավարարում է իր սեփական պահանջմունքները՝ ելնելով շրջապատող միջավայրից: Այդ պատճառով մարդկային գործունեության տարբեր դրսևորումները, մոտեցումներն ու օբյեկտները «կազմակերպվում են կարևոր և կենսականորեն անհրաժեշտ խնդիրների շրջանակներում այնպիսի ինստիտուտներում, ինչպիսիք են՝ ընտանիքը, ցեղը, համայնքը, տնտեսական, քաղաքական, իրավական ու կրթական գործունեության համար ձևավորված հանրույթները»[19]:

Նման մոտեցման կողմնակից է նաև սոցիոլոգ Պ. Սորոկինը: Ըստ նրա՝ «մշակույթը իմաստների, արժեքների և նորմերի ամբողջություն է, որոնցով օժտված են իրար հետ փոխազդող անձիք և դրանք կրողների խումբը, ովքեր օբյեկտիվացնում, սոցիալականացնում և բացահայտում են այդ իմաստները»[20]: Այն կրողներից մեկը համարվում է նաև ընտանիքը:

Ընտանիքը ծառայում է բարոյական և էթիկական սկզբունքների կարևորագույն աղբյուր: Այն իր անդամների համար ապահովում է սոցիալ-տնտեսական և ֆիզիկական անվտանգությունը,

19 *Malinowski B.*, A scientific theory of culture and other essays. New York, Oxford University Press, 1960, 228 P., p. 150.

20 *Сорокин П. А.*, Человек, цивилизация, общество. – М., Политиздат, 1992, 543 с., с. 218.

երեխաների, ծերերի և հիվանդների պաշտպանությունը: Ընտանիքում սերնդից սերունդ փոխանցվում են մշակութային ավանդույթներն ու սովորույթները, համամարդկային արժեքները: Այն հանդես է գալիս որպես միջնորդ անհատի, սոցիալական ինստիտուտների և պետության միջև: Ընտանիքի կայունությունը միաժամանակ կախված է և՛ արտաքին սոցիալ-մշակութային ազդեցություններից, և՛ ներքին փոխազդեցություններից: Ընտանիքը հասարակության ենթահամակարգն է, որն ապահովում է սոցիումի կայունությունը՝ շնորհիվ այլ սոցիալական ենթահամակարգերի և կառուցվածքների հետ հաստատված «ինստրումենտալ» հարաբերությունների և ընտանիքում միջանձնային հավասարակշռության պահպանման:

Մշակույթից և սոցիումից ծնված ընտանիքը, մի կողմից, հանդես է գալիս որպես որոշակի սոցիալ-մշակութային արժեք, որն ավանդաբար ընդունվում է մարդկության պատմության ընթացքում՝ որպես մարդկության ինքնաիրացման ու ցեղի շարունակության անհրաժեշտ պայման, մյուս կողմից, տվյալ հասարակությունում մշակութային արժեքների զարգացման արդյունք: Որպես մշակութային արժեք՝ ընտանիքը պատմականորեն մշակված նշանակությունների, իմաստների ամբողջություն է, որոնք անհատական մակարդակում ընդունվում են որպես ենթագիտակցական նախատիպեր և որոնք գնահատականներ տալու կամ կյանքի ռազմավարություններ ընտրելու և իրականացնելու հարցում հանդես են գալիս կարևոր կողմնորոշիչներ:

Հետևաբար, կախված հասարակության էթնոմշակութային առանձնահատկություններից՝ կարող են տարբերվել ընտանիքի բնութագրերն ու դրա մասին հասարակական պատկերացումները:

Արաբական հասարակությունում ծնված և կենսագործունեություն ծավալած հայերն այսօր տեղափոխվել են թեպետ իրենց հարազատ էթնիկ, սակայն նոր սոցիալ-մշակութային միջավայր: Այսօրվա Հայաստանը բոլորովին նոր և անծանոթ աշխարհ է սիրիահայերի համար: Տարբեր են մարդկանց աշխարհընկալումները, մտածելակերպը, բարքերն ու սովորույթները: Այս տարբերությունն-

ների հետ մեկտեղ նրանց համար ակնհայտ են դառնում նաև Հայաստանում ընտանիքի արժևորման, ընտանեկան ավանդույթների ու արժեքների պահպանման՝ իրենց ոչ ծանոթ պրակտիկաները: Մի կողմից, սիրիահայերը կանգնում են այդ տարբերություններն ընկալելու և ընդունելու խնդրի առջև, մյուս կողմից, այն ընտանիքի տեղի ու դերի վերաիմաստավորման կարևոր ազդակ է դառնում հայաստանաբնակ, ինչո՞ւ ոչ՝ համայն հայության համար:

Ընտանիքին վերաբերող հարցերը շատ են, և մենք չենք հավակնում ամբողջական ներկայացնել դրանք: Աշխատության այս հատվածում նպատակ ունենք համեմատական վերլուծության միջոցով դուրս բերել սիրիահայ ընտանիքների էթնոմշակութային առանձնահատկությունները՝ հետևյալ հարցերի շրջանակներում.

- Սիրիահայ ընտանիքների կազմ և կառուցվածք,
- Ընտանիքի պլանավորում և վերարտադրողական վարք,
- Հարսանեկան-ամուսնական ծիսական համակարգ,
- Ազգամիջյան ամուսնությունների նկատմամբ վերաբերմունք,
- Ընտանեկան բռնության մասին պատկերացումներ,
- Ընտանեկան նորմեր և արժեքներ:

Սույն գլխում խնդիր ենք դրել բացահայտել նաև սիրիահայերի ներդրումը Հայաստանի մշակութային և տնտեսական կյանքում՝ հայաստանցիների և հենց իրենց՝ սիրիահայերի պատկերացումներում:

Ելնելով հետազոտական օբյեկտի յուրահատկությունից (բնակության վայրի վերաբերյալ սուղ տեղեկատվություն, Հայաստան տեղափոխվելուց հետո տարածական ցրված ձևով ապրել և այլ հանգամանքներ)՝ սիրիահայ ընտանիքների հետ կապ հաստատելու համար կիրառվել է «ձնակույտի» մեթոդը: Հետևաբար, ստացված քանակական ցուցանիշները ներկայացուցչական չեն ողջ սիրիահայ համայնքի համար, այլ միայն օգտագործվում են սիրիահայ ընտանիքներում առկա հիմնական միտումները, տարբեր երևույթ-

ների և իմաստների վերաբերյալ նրանց մոտեցումները բացահայտելու նպատակով: Անհատական խորին հարցազրույցները հետապնդում են ավելի խորը տեղեկատվության ստացման և այն անհատական մակարդակում դիտարկման նպատակ:

1.3. Սիրիահայ ընտանիքների կառուցվածքի առանձնահատկությունները

Բազմաթիվ վիճակագրական տվյալներ վկայում են այն մասին, որ Հայաստանն ունի ժողովրդագրական խնդիրներ, որոնք հիմնականում խորանում են բնակչության ցածր ծնելիության, արտագնացության և միգրացիայի հետևանքով: Հայաստանի համար այսօր հարմար առիթ է ստեղծվել՝ իրապես վերլուծել իրավիճակն ու լուրջ քայլեր ձեռնարկել երկիր ժամանած սիրիահայերի ներուժն ըստ արժանվույն գնահատելու ուղղությամբ, քանզի նրանք դրական մեծ ազդեցություն կարող են ունենալ երկրի ժողովրդագրական ներկա մակարդակի վրա: Թե մարդկային ինչ ներուժի մասին է խոսքը, ինչ սեռատարիքային և ընտանեկան կազմով է ներկայանում սիրիահայ համայնքը Հայաստանում, ականատես կլինենք սույն ենթագլխում:

Էթնոսոցիոլոգիական հետազոտությանը մասնակցած սիրիահայ և հայաստանաբնակ ընտանիքների սեռատարիքային նկարագրի վերլուծությունը, թերևս, որոշակի պատկերացում է տալիս այդ ընտանիքների կազմի և կառուցվածքի վերաբերյալ ընդհանուր առմամբ: Երկու էթնիկ խմբերի՝ և՛ սիրիահայերի, և՛ հայաստանաբնակ հայերի պարագայում նկատելի է իգական սեռի ներկայացուցիչների գերակայությունը արական սեռի նկատմամբ, ընդ որում, սիրիահայերի խմբում նրանք ավելի մեծ կշիռ են կազմում (տե՛ս աղյուսակ 1):

Զափահաս սիրիահայերի մեջ մեծ կշիռ են կազմում երիտասարդները (հայաստանցիների հետ համեմատ 1,5%-ով քիչ են), որոնք նոր միջավայրի նյութական և հոգևոր մշակույթի սպառողների մեջ ակտիվ զանգված են համարվում: Նրանք նաև հասարակության վերարտադրողական գործառույթն իրականացնող ամենամեծ խումբն են կազմում: Մեկ այլ ուսումնասիրության արդյունքներ

վկայում են, որ 18–24 տարեկանների խմբում տղաների տեսակարար կշիռը համեմատաբար մեծ է և կազմում է երկու երրորդը, ինչն էլ բացատրվում է նրանց բանակային զորակոչի տարիքով[21]:

Աղյուսակ 1

Սիրիահայ և հայաստանաբնակ ընտանիքների սեռատարիքային ներկայացվածությունը, %

	Սեռ	Տարիք						
		0–7	8–12	13–17	18–35	36–55	56<	Ընդամենը
Սիրիահայեր	Արական	6,8	2,5	3,0	12,5	13,4	7,4	45,6
	Իգական	6,0	4,6	3,3	16,1	14,0	10,4	54,4
	Ընդամենը	12,8	7,1	6,3	28,6	27,4	17,8	100,0
ՀՀ հայեր	Արական	5,8	3,6	2,7	14,9	12,8	9,5	49,4
	Իգական	6,1	3,4	2,7	15,2	12,8	10,5	50,6
	Ընդամենը	11,9	7,0	5,4	30,1	25,6	20,0	100,0

Սիրիահայերի հաջորդ մեծ զանգվածը միջին սերնդի ներկայացուցիչներն են, որոնք ընտանեկան ավանդական և արդի նորմերի կրողներն ու փոխանցողներն են: Նրանք են, որ նոր սերնդին փոխանցում են ազգային մշակութային արժեքներն ու ավանդույթները, և կարևոր դեր կատարում էթնիկ զգացողությունների ձևավորման հարցում: Նկատենք, որ այս տարիքային խումբն ավելի մեծ է հայաստանցիների՝ նույն խմբի համեմատ, ինչն էլ հիմնականում բացատրվում է Հայաստանում միջին տարիքային խմբում տարածված արտագնացության և միգրացիայի համեմատաբար բարձր մակարդակով:

Ավագ տարիքային խմբում արդեն նկատում ենք հայաստանցիների գերակայությունը սիրիահայերի նկատմամբ: Այս տարբերությունը, ինչպես նաև մյուս տարիքային խմբերի համեմատու-

21 *Կարապետյան Ռ.Մ.*, Սիրիահայերը Հայաստանում. ադապտացման և ինտեգրման խնդիրները, ուսումնասիրության նպատակները, մեթոդաբանությունը և հեռանկարները: Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները, Եր., «Գիտություն» հրատ., 2015, էջ 15:

թյամբ սիրիահայերի ավագ սերնդի փոքր զանգվածը հիմնականում պայմանավորված են այն փաստով, որ մեծամասամբ ավագ սերունդն է, որ օրհասական վիճակում Սիրիան չլքելու բարոյական պարտքից դրդված և տարիների ընթացքում ձեռք բերած սեփականությունը պահպանելու ձգտմամբ չի տեղափոխվել Հայաստան:

Սիրիահայ ընտանիքներում անչափահաս երեխաների կազմում մեծ ներկայացվածություն ունեն աղջիկները և 0–7 տարեկանները, չնայած նկատենք, որ այս տարիքային խմբում տղաներն ավելի մեծ կշիռ ունեն: Կարող ենք ասել, որ սիրիահայ ընտանիքներում վերջին տարիներին տղա երեխաների թվաքանակի ավելացման միտում է նկատվում: Հայաստանաբնակ ընտանիքներում, ընդհակառակը, անչափահաս աղջիկ-տղաները գրեթե հավասար ներկայացվածություն ունեն, սակայն այստեղ ևս 0–7 տարեկան երեխաները մեծամասնություն են կազմում:

Ընդհանուր առմամբ, համեմատելով հայաստանաբնակ ընտանիքների սեռատարիքային նկարագրի հետ, պարզ է դառնում մեկ ընդհանուր օրինաչափություն. և՛ հայաստանաբնակների, և՛ սիրիահայերի ընտանիքներում տարիքային և սեռային չափանիշներով առանձնացված խմբերից յուրաքանչյուրը հերթականության իմաստով նույն, սակայն համամասնության իմաստով տարբեր կշիռ է ստացել:

Սիրիահայերի ընտանիքի կառուցվածքը առանձնահատուկ է նաև անդամների թվաքանակով:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ից, Հայաստանում գտնվող սիրիահայ ընտանիքների կեսը՝ 50%-ը, 4–5 անդամով է ներկայանում: Նրանք հիմնականում երկսերունդ ընտանիքներն են՝ կազմված ամուսիններից և երկու-երեք երեխաներից: Ընդհանրապես, սիրիահայ համայնքում տարածված է երիտասարդ ընտանիքների՝ ծնողներից առանձին ապրելը, քանզի երիտասարդ զույգն իր աշխատանքով, երբեմն նաև ծնողների աջակցությամբ կարողանում է նոր տնտեսություն ստեղծել և լուծել բնակարանային խնդիրները:

Գծապատկեր 1

Սիրիահայ և հայաստանաբնակ ընտանիքներում անդամների թիվը, %



Հայաստանաբնակ ընտանիքների համեմատությամբ՝ սիրիահայերի շրջանում շատ են 8 և ավել անդամներ ունեցող ընտանիքները, որոնք հիմնականում վերաձևավորվել են Հայաստանում՝ նյութական ռեսուրսների սղության պատճառով մեկ բնակարանում ապրելու հետևանքով: Գրեթե նույնչափ զանգված են կազմում նաև մենակ ապրող սիրիահայերը՝ հիմնականում երիտասարդներ, ովքեր գտնվում են Հայաստանում՝ կրթության և հետագայում ընտանիքին վերամիավորվելու նպատակով: Ի տարբերություն սիրիահայերի՝ հայաստանցիների մեջ միայնակները հիմնականում ավագ սերնդի ներկայացուցիչներն են, ովքեր այրիացել են, և/կամ ընտանիքը կիսվել է արտագաղթի հետևանքով:

Ընտանեկան կյանքում միջանձնային հարաբերությունների կարգավորման գործում կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե տվյալ ընտանիքում ում են ընդունում որպես գլխավոր՝ ընտանիքում կարևոր հարցերը որոշող անձ:

Հայկական ընտանիքներում, սովորույթի համաձայն, ընտանիքի գլխավոր է համարվել տան ավագ տղամարդը, իսկ նրա բացակայության կամ մահվան դեպքում՝ կինը[22]: Եթե այսօր հայաստա-

22 *Զաքարյան Թ.*, Ընտանիքը և ընտանեկան հարաբերությունները Տավուշի մարզում, Տավուշ. Սոցիալ-մշակութային գործընթացներ (Ավանդույթ

նաբնակ ընտանիքներում նշված սովորույթից որոշակի շեղում ենք նկատում, այսինքն՝ ավագ տղամարդուց և կնոջից բացի ընտանիքի գլխավոր է հանդիսանում նաև տնային տնտեսության միջին սերնդի տղամարդը և նույնիսկ նրանց ներկայության դեպքում՝ ավագ սերնդի կանայք, ապա սիրիահայ ընտանիքներում տան գլխավորի ընկալումն ու ընդունումը միանշանակ է. եռասերունդ ընտանիքներում նա հիմնականում ավագ սերնդի տղամարդն է, երկսերունդ, նուկլեար ընտանիքներում՝ տղամարդը, և միայն հինգից մեկ ընտանիքում (ոչ լրիվ կազմով եռասերունդ ընտանիքներում)՝ ավագ սերնդի կինը (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2

Տնային տնտեսության (SS) գլխավորի կարգավիճակը, համեմատական պատկեր



Ինչպես սիրիահայերի, այնպես էլ հայաստանաբնակների ընտանիքներում տան գլխավորը մեծամասամբ ավագ սերնդի ներկայացուցիչներն են, այնուհետև՝ միջին սերնդի և վերջում՝ երիտասարդները, ովքեր շատ փոքր մաս են կազմում, ընդ որում, միայն հայաստանցիների ընտանիքներում: Սիրիահայերի շրջանում այս երևույթը բացակայում է, քանզի նրանք դեռևս երիտասարդ տարիքում չեն կարող զբաղեցնել ընտանիքի գլխավորի «պաշտոնը»: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ սիրիահայ երի-

և արդիականություն), Եր., «Գիտություն» հրատ., 2014, էջ 134:

տասարդները համեմատաբար ուշ տարիքում են ամուսնանում և ձևավորում սեփական նուկլեար ընտանիքը:

Ինչպես վերևում նկատեցինք, սիրիահայ ընտանիքների 80%-ում գլխավորը տղամարդն է, և միայն մեկ հինգերորդ ընտանիքներն են գլխավորվում տարիքով մեծ կնոջ կողմից: Հայաստանաբնակ հայերի ընտանիքներում այս ցուցանիշը էականորեն չի տարբերվում. հարցվողների 83%-ը (75,5% և 7,5%) սեփական ընտանիքներում հիմնական որոշում կայացնողի դերը վերագրում են տղամարդուն (տե՛ս գծապատկեր 2):

Վերջին տարիներին հայաստանյան նոր սոցիալ-տնտեսական պայմաններում ավանդական ամուսնական տարիքը որոշակի փոփոխություններ է կրել: Գործազրկությունը, աշխատանքային միգրացիան, ընդհանուր կենսամակարդակի նվազումը, նաև ավանդական արժեքների վերագնահատումը ոչ միայն սահմանափակում են հայ երիտասարդների ամուսնության հնարավորությունը, այլ նաև փոխում են մարդկանց կարծիքները ամուսնության նախընտրելի տարիքի հարցում:

Մինչդեռ սիրիահայերի շրջանում ամուսնության չգրված օրենքներ են գործում. սիրիահայ համայնքում ամուսնանալու համար կարևոր է 1) զույգերի հասուն լինելը, 2) տղամարդու՝ ֆինանսապես անկախ, իր մասնագիտության մեջ և աշխատանքում կայացած լինելը:

Էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները ևս վկայում են հայաստանաբնակ հայերի և սիրիահայերի շրջանում գոյություն ունեցող տարբեր մոտեցումների մասին՝ տղաների ամուսնության պարագայում սիրիահայերի գերակշիռ մասը՝ 92%-ը, նախընտրում է 26-ից բարձր տարիքը, ընդ որում, նրանց երկու երրորդ մասը առանձնացնում է 26–30 տարիքային միջակայքը, այն դեպքում, երբ հայաստանաբնակ հայերի միայն 51,8%-ն է տղաների ամուսնությունը նախընտրելի համարում 26 և ավելի բարձր տարիքում: Հայաստանաբնակ հայերի մոտավորապես 41%-ի շրջանում դեռևս պահպանվում է տղաներին ավելի երիտասարդ (23–25 տարեկան) ամուսնացնելու ցանկությունը (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Տղաների ամուսնության նախընտրելի տարիք, համեմատական պատկեր



Աղջիկների ամուսնության տարիքի հարցում ևս հայաստանաբնակ հայերի ու սիրիահայերի կարծիքները էապես տարբերվում են՝ աղջիկների ամուսնության նախընտրելի տարիքը սիրիահայերի մեծ մասը (52%) համարում է 23–25 տարեկանը, իսկ հայաստանցի հայերի մեծ մասը (49%)՝ 18–22 տարեկանը: Եթե հայաստանցի հայերի մի փոքր զանգված նախընտրում է աղջիկների ամուսնությունը նույնիսկ մինչև չափահաս դառնալը և 31–35 տարեկանում, ապա սիրիահայերի մոտ այդ սահմանը հստակ է՝ 18–30 տարեկան (տե՛ս գծապատկեր 4):

Գծապատկեր 4

Աղջիկների ամուսնության նախընտրելի տարիք, համեմատական պատկեր



Տարիքային ցուցանիշը կարևոր գործոն է այս հարցում, հետևաբար, հետաքրքիր կլինի ներկայացնել, թե երիտասարդների ամուսնության տարիքի հարցում ինչ տեսակետ ունեն հենց իրենք՝ երիտասարդները: Պարզվում է, որ և՛ հայաստանաբնակ, և՛ սիրիահայ երիտասարդները (18–29 տարեկանները) նախընտրում են տղաների ամուսնությունը կատարել մինչև 30 տարեկանը: Ավելի բարձր տարիքում ամուսնությանը հակված են միջին սերնդի հայաստանցիները և ավագ սերնդի սիրիահայերը: Աղջիկների ամուսնության հարցում հայաստանցի երիտասարդների կարծիքները գրեթե կիսվում են 18–22 և 23–25 (համապատասխանաբար, 42,5% և 48,8%), իսկ սիրիահայ երիտասարդներինը՝ 23–25 և 26–30 տարիքային խմբերի միջև (համապատասխանաբար, 50% և 50%):

Գենդերային ասպեկտով վերլուծության արդյունքում բացահայտում ենք, որ սիրիահայ տղամարդկանց համար տղաների ամուսնության նախընտրելի տարիքային սահմանը մեծ է՝ 26–35 (26–30 և 31–35 տարիքային միջակայքերի համար, համապատասխանաբար, 41,7% և 41,7%): Աղջիկների ամուսնության դեպքում ևս այդ միջակայքը լայն է՝ 18–25 (18–22 և 23–25 տարիքային միջակայքերի համար, համապատասխանաբար, 50%, 50%): Ի տարբերություն տղաների՝ սիրիահայ աղջիկների գերակշիռ մասը (տղաների ամուսնության դեպքում՝ 84,6%-ը, աղջիկների ամուսնության դեպքում՝ 53,8%-ը) մեկ տարիքային շեմ է առանձնացնում՝ տղաների ամուսնությունը նախընտրելի է 26–30, իսկ աղջիկներինը՝ 23–25 տարեկանում:

Վերարտադրողական վարքագիծ:Չնայած վերջին տարիներին Հայաստանում ամուսնալուծությունների թվի ավելացմանը, ծնելիության մակարդակի նվազմանը, ամուսնությունների թվի կրճատմանը և այլն՝ հայերի շրջանում ծնող դառնալը նվիրական երազանքներից մեկն է համարվում: Հայ ընտանիքներում երեխաների ծնունդը կարևոր և սպասված իրադարձություն է, իսկ նրանց առկայությունը՝ ընտանիքի երջանկության, ամրության, հարատևության գրավական:

Երեխաներն առանձնահատուկ տեղ ու դեր ունեն նաև սիրիահայերի կյանքում:

Չնայած այն փաստին, որ սիրիահայերն ավելի շատ նախընտրում են երիտասարդների ուշ ամուսնությունը, այնուամենայնիվ, նրանք ավելի շատ են կիսում ընտանիքում երեք երեխա ունենալու ցանկությունը՝ ի տարբերություն հայաստանցիների: Նրանց մեջ երկրորդ մեծ խումբը կազմում են երկու երեխա նախընտրողները՝ 37% (տե՛ս գծապատկեր 5): Սիրիահայերը, կրկին համեմատության մեջ, ավելի շատ են հակված մեկ երեխա ունենալուն և ավելի քիչ՝ բազմազավակությանը:

Երեխաների նախընտրելի թվի հարցում հայաստանցիների տեսակետը երեք խմբերի է բաժանվում՝ երկու, երեք և չորս երեխա նախընտրողներ, ընդ որում, երկու և չորս երեխայի պարագայում կարծիքները գրեթե հավասարաչափ կշիռ են ստանում (տե՛ս գծապատկեր 5):

Գծապատկեր 5

Ընտանիքում ցանկալի երեխաների քանակ, %



Նախընտրությունն ու իրականությունն այս հարցում ամբողջությամբ չեն համընկնում իրար, քանզի, իրականում, սիրիահայերի մեջ մեծ թիվ են կազմում երեք երեխա ունեցող ընտանիքները, իսկ հայաստանցի հայերի մեջ՝ երկու երեխա ունեցող ընտանիքները:

Իսկ ինչ վերաբերում է երեխաների սեռին, ապա ամենամեծ կշիռը ստանում է «երկու որդի, մեկ դուստր» տարբերակը և՛ հայաս-

տանաբնակ հայերի, և՛ սիրիահայերի շրջանում (երկու որդի, համապատասխանաբար, 44,3% և 48,0%, մեկ դուստր, համապատասխանաբար, 45,7% և 56,0%): Ինչպես տեսնում ենք, երկու խմբում էլ գերակայում են այն մշակութային ավանդույթներն ու կարծրատիպերը, որոնք տղա երեխային՝ որպես մարդկային էակ, սերնդի շարունակող, ֆինանսական ապահովության հիմնական միջոց, վեր են դասում աղջիկ երեխայից:

Այսպիսով, սիրիահայ ընտանիքների շրջանում անցկացված ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս նկարագրելու նրանց բնորոշ հիմնական առանձնահատկությունները.

- Հայաստանում այսօր գերակշռում են 4–5 անդամից բաղկացած սիրիահայ ընտանիքները՝ կազմված միջին տարիքի (36–55 տարեկան) ծնողներից և երկու-երեք երեխաներից:
- Սիրիահայ երեխաների մեջ ավելի շատ են աղջիկները, սակայն վերջին տարիներին սիրիահայ ընտանիքներում տղա երեխաների նախընտրության միտում է նկատվում:
- Սիրիահայ ընտանիքներում, ի տարբերություն հայաստանաբնակ ընտանիքների, գլխավորի կարգավիճակը միանշանակ է՝ տան գլխավոր հիմնականում համարում են տղամարդուն, և միայն հինգից մեկ ընտանիքում է, որ որպես գլխավոր՝ ընդունում են ավագ սերնդի կնոջը (ոչ լրիվ կազմով եռասերունդ ընտանիքներում):
- Սիրիահայերը, ի տարբերություն հայաստանաբնակ հայերի, երիտասարդների՝ մեծ տարիքում ամուսնանալու կողմնակիցներ են. նրանց գերակշիռ մասը նախընտրում է տղաների ամուսնության 26-ից բարձր, իսկ աղջիկների ամուսնության՝ 23–25 տարիքային միջակայքը:
- Սիրիահայերի շրջանում երեխաների նախընտրելի և իրական թիվը համընկնում է. նրանց գերակշիռ մասը երեխաների իդեալական թիվը համարում է երեքը, և, փաստացի, մեծամասնություն են կազմում երեք երեխա ունեցող ընտանիքները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2.1.Ավանդական տարրերի նախընտրությունը

Պատմական Հայաստանի գրեթե բոլոր ազգագրական մարզերում ամուսնությունը ճանաչվում և իրավական կիրարկման ձև էր ստանում հարսանեկան ծեսերի և սովորույթների բազմատարր համակարգի իրագործումից հետո միայն: Հարսանեկան ծիսաշարը ներառում էր կենցաղավարման մեջ հաջորդական երեք հիմնական փուլեր՝ խնամախոսություն, նշանդրեք և բուն հարսանիք[23]: Սիրիայում ապաստան գտած հայերը, ովքեր Արևմտյան Հայաստանից գաղթած հայերի սերունդներն են, համարվում են այդ մշակույթի կրողները, իհարկե, նաև փոխանցողները: Որքանո՞վ են կարևորվում, պահպանվում և կատարվում նախահարսանեկան, բուն հարսանեկան և հետհարսանեկան ծիսակատարություններն այսօր, կբացահայտի մեր կողմից կատարած ուսումնասիրությունը:

Հայերի ընտանեկան ծիսակարգի կառուցվածքում խոսք առնելը և նշանդրեքը, ըստ ավանդույթի, հանդիսանում են ամուսնության անհրաժեշտ նախապայմաններ և կարևոր տեղ են գրավում մինչհարսանեկան փուլում[24]: Այսօր այդ ավանդույթը կարևորվում է և՛ սիրիահայերի, և՛ հայաստանաբնակ հայերի մեծ մասի կողմից, ընդ որում, համեմատության մեջ նշանդրեքն ավելի կարևոր ծիսակատարություն է համարվում, քան խոսքկապը (տե՛ս աղյուսակ 2):

23 *Նահապետյան Ռ. Ա.*, Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը (պատմաազգագրական ուսումնասիրություն), Եր., Հեղինակային հրատ., 2007, 304, էջ 63-64:

24 *Վարդանյան Լ. Մ.*, Տավուշցիների ընտանեկան ծիսակարգը: Տավուշ. Սոցիալ-մշակութային գործընթացներ (Ավանդույթ և արդիականություն), Եր., «Գիտություն» հրատ., 2014, էջ 180:

Աղյուսակ 2

Ամուսնական ծեսերի կարևորությունը ՀՀ հայերի և սիրիահայերի շրջանում, %

Ամուսնական ծեսեր	Սիրիահայեր	ՀՀ հայեր
Խոսքկապ	64,0	61,8
Նշանդրեք	76,0	81,1
Քավոր	92,0	84,7
Ազաբ բաշի	4,0	77,2
Հարսնաքույր	20,0	80,2
Հարսանեկան խնջույք	40,0	81,9
Հարսանեկան ճանապարհորդություն	16,0	69,1
Եկեղեցական պսակադրություն	100,0	87,2
Հարսանիքի օրը ամուսնության գրանցում	96,0	57,9
Կարմիր խնձոր	44,0	66,3
Գլուխլվա	12,0	55,2
Տեառնընդառաջ	64,0	74,1
Օժիտ	48,0	57,7

Նկատենք, որ եթե նշանդրեքը ավելի շատ կարևորվում է ՀՀ հայերի կողմից, ապա խնամախոսությունը, ընդհակառակը, շարունակում է կարևոր ծես համարվել սիրիահայերի շրջանում, չնայած տարածվածության և ձևի իմաստով այն ևս որոշակի փոփոխությունների է ենթարկվել. «*Առաջ նախքան երիտասարդների՝ ավելի ազատություն առնելը՝ մաման, պապան գնում էին աղջկան տեսնելու, հետո տանում էին տղային: Վերջում, եթե հավանում էին, ուզում էին աղջկան: Հիմա այդպես չէ: Այսօր աղջիկը և տղան մի քանի անգամ դուրս են գալիս միասին, իրար ճանաչում, և երբ ծնողներին ասում են, տղու տերը գալիս է աղջկա ծնողների մոտ՝ աղջկան ուզելու*» (կին, 55 տարեկան, ք. Երևան)[25]: «*Նախկինում ընտանիքներն են ծանոթացրել երիտասարդներին, հիմա արդեն երիտասարդներն են ծանոթացնում ընտանիքներին: Խոսք են առնում, 1–2*

25 *Հակոբյան* Գ., ԴԱՆ, Երևան, 2014:

շաբաթ հեպո տեղի է ունենում նշանի արարողությունը: Այնտեղ ավելի պաշտոնական է նշանդրեքը՝ սրահներ են վարձում, հրավիրատոմսով հրավիրում եկեղեցի, հեպո՝ ռեստորան: Այստեղ ավելի պարզ է՝ երկու ընտանիքներով են անում ամեն ինչ: Այնտեղ նշանի հագուստը, տարոսիկները, խմիչքը տղան է տանում...» (տղամարդ, 37 տարեկան, ք. Երևան)[26]:

Չնայած ծեսի հետ կապված տարբերություններին՝ այսօր կան սիրիահայ երիտասարդներ, որոնց կողմից ընդունվում և կիրարկվում են հայաստանաբնակ հայերի շրջանում տարածված նախահարսանեկան ծիսակարգի որոշ տարրեր. «*Խոսք առնել, նշանդրեք. տարբերությունները շատ են, այստեղ ավելի շատ ադաթներ են պահվում: Մեր նշանդրեքն այստեղի ադաթներով էր (հարսնացուն գյումրեցի է), ոչ թե՝ այնտեղի. ես այդպես ուզեցի: Ինչքան հասկացա՝ այստեղ մի քիչ ավելի ճոխ էր*» (տղամարդ, 26 տարեկան, ք. Երևան)[27]:

Հայ ընտանիքներում քավորի առկայությունը հարսանեկան ավանդական տարրերից ամենապահպանվածն է՝ չնայած արդի ժամանակներում առկա ձևափոխությունների: «...Մեր օրերում քավորի կերպարը որոշակի փոփոխությունների է ենթարկվել: Ի տարբերություն սերնդեսերունդ փոխանցված պապենական քավորի, այժմ հաճախ քավոր կարող է դառնալ ազգականներից կամ փեսացուի ընկերներից մեկը: Ավելին, նա կարող է լինել երիտասարդ և նույնիսկ չամուսնացած, որը նախկինում բացառվում էր՝ ըստ ավանդական ընդունված կանոնների»[28]:

Ի տարբերություն Հայաստանում պահպանված և ընդունված ավանդույթի՝ սիրիահայ համայնքում քավորի ընտրությունը կատարվում է ավելի մոտ՝ ընտանեկան և/կամ ազգակցական միջավայրից. «*Մեր մոտ միշտ եղել է այնպես, որ ամուսնու եղբայրն է լինում կնքահայրը: Եթե եղբայր չունի՝ հարազատ քրոջ ամուսինը,*

26 *Հակոբյան Գ.*, ԴԱՆ, Երևան, 2014:

27 *Հակոբյան Գ.*, ԴԱՆ, Երևան, 2014:

28 *Վարդանյան Լ. Մ.*, նշվ. աշխատ., էջ 190:

իսկ եթե քույր էլ չունի, ապա՝ հարազատ հորեղբայրը կամ քեռին» (կին, 27 տարեկան, ք. Երևան)[29]:

Երկու էթնիկ խմբերում տարբեր են նաև քավորին վերագրվող պարտականությունները: Օրինակ, սիրիահայերի շրջանում ոչ միայն տարածված չէ, այլ նաև նրանց մեծ մասին անծանոթ է հայկական խորոված ը մատուցողին քավորի կողմից նվեր (գումար) տալու երևույթը. «*Այստեղ հարսանիքների չեմ մասնակցել, բայց լսել եմ, որ շատ տարբերություններ կան: Այստեղ հետաքրքիր է անցնում: Խնջույքի ժամանակ, ասում են, որ խորոված կբերեն, կպարեն, մինչև կնքահայրը գումար տա*» (կին, 22 տարեկան, ք. Երևան)[30]:

Վերը նշված տարբերությունների հետ մեկտեղ, սիրիահայերի և հայաստանաբնակ հայերի կարծիքներում տարբեր է նաև հարսանիքներում քավորի կարևորության հարցը: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ի տվյալներից, սիրիահայերն ավելի շատ են կարևորում քավորի առկայությունը հայկական հարսանեկան ծեսի ժամանակ, քան հայաստանաբնակ հայերը: Կարող ենք ասել, որ քանակական ցուցանիշը բանասացների մեկնաբանությունների պարզ ապացույցն է:

Սակայն նույնը չենք կարող ասել հարսանիքներում հարսնաքրոջ և ազաբ բաշու դերակատարության մասին. հարցմանը մասնակցած սիրիահայերի միայն 20%-ն է հարսանեկան ծիսակատարության մեջ կարևոր համարում հարսնաքրոջ, և սրանից հինգ անգամ պակաս՝ ազաբ բաշու ներկայությունը: Սիրիահայերի հետ խորին հարցազրույցների վերլուծությունից պարզ է դառնում, որ սիրիահայ համայնքում հարսնաքրոջ, առավել ևս, ազաբ բաշու գաղափարը չի կիրարկվում հարսանիքներում, իսկ վերը բերված քանակական ցուցանիշները վկայում են ավանդույթի նկատմամբ նրանց մոտ ձևավորված հետաքրքրության մասին:

Ինչպես հայաստանաբնակ հայերի, այնպես էլ սիրիահայերի շրջանում ամուսնական ծիսակատարության մաս է համարվում

29 *Հակոբյան* Գ., ԴԱՆ, Երևան, 2014:

30 *Հակոբյան* Գ., ԴԱՆ, Երևան, 2014:

նաև օժիտը, սակայն, ինչպես ցույց են տալիս քանակական հետազոտության արդյունքները, այն ավելի շատ կարևորվում է հայաստանցի հայերի, քան սիրիահայերի կողմից (տե՛ս աղյուսակ 2)։ 2007–2008 թթ. հետազոտության արդյունքները թույլ են տալիս խոսելու այն մասին, որ Հայաստանում օժիտը հանդիսանում է ժամանակակից հայ ընտանիքի սոցիալական վիճակի արտացոլումը[31]։ Սիրիահայերի համար օժիտի մեջ կարևոր է հատկապես նախնիների նյութական մշակույթի արգասիքները՝ նորապսակ երիտասարդներին փոխանցելու ավանդույթը, որն ավելի շատ կարևորվում է ավագ սերնդի սիրիահայերի, քան երիտասարդների, և ավելի շատ կանանց, քան տղամարդկանց կողմից։ «*Օժիտը շատ զորավոր բան է մեր մոտ, շատ հարգելի է։ Պետք է աղջիկը ամուսնու տուն գնալուց հետո երկու տարի շուկա չգնա։ Եվ Սուրիո մեջ մենք տալիս ենք այդ բոլորը՝ ձեռագործներ, մահճակալի ծածկոցներ, այն ամենը, ինչ որ պետք է հարսին՝ հարս զգալու համար։ Եվ շատ լավ բան է օժիտը. ես սիրում եմ օժիտը և դրա մասին խոսիլը, մանավանդ, մեր օժիտների մեջ բոլոր քաղաքների ձեռագործները կան՝ Ուրֆայի, Մարաշի, Քիլիսի, Տիգրանակերտի, Վանի, Այնթափի։ Մեր օժիտների մեջ մեր մշակույթից մի կտոր կա։ Ես կարծում եմ, որ այստեղի օժիտները չեն կարող ձեռագործ լինել։ Օժիտ ասելը մեր մոտ ուրիշ բան է, ոչ թե՝ ասել է հագուստ*» (կին, 55 տարեկան, ք. Երևան)[32]։

Փաստորեն, եթե հայաստանաբնակ հայերի շրջանում օժիտը՝ բաժինքը, ներառում է վերմակ, ներքնակ, սպիտակեղեն, հարսի անձնական հագուստ, երկարատև օգտագործման կենցաղային առարկաներ, նաև ննջարանի, հյուրասենյակի կամ խոհանոցի կահույք, ապա սիրիահայերի համար այն ավելին է, քան իրն ու հագուստը։ Չնայած արդի ժամանակներում օժիտի մաս կազմող, սակայն ոչ առօրյա գործածական իրերի նկատմամբ հետաքրքրությունը պակասել է սիրիահայ երիտասարդների մոտ. «*...Բայց հիմա, որ նոր սերունդը չի ուզում, մամաներն աշխատում են տան համար նվեր*

31 *Վարդանյան Լ.*, նշվ. աշխ. էջ 198։

32 *Հակոբյան Գ.*, ԴԱՆ, Երևան, 2014։

տանել, ինչ որ հարսը պիտի գործածե: Պարտադիր չէ՝ աղջիկն ուզում է, թե չէ, մաման տալիս է» (կին, 58 տարեկան, ք. Երևան)[33]:

Մեր բանասացների փոխանցմամբ՝ նախկինում հարսի տարած օժիտը նաև ցուցադրաբար ներկայացվել է հյուրերին, սակայն ժամանակի թելադրանքով և երիտասարդների ցանկությամբ այդ ավանդույթը տարածման լայն շրջանակ չունի և կամաց-կամաց դուրս է գալիս կիրառությունից: «*Էս վերջերս երիտասարդները չեն ուզում, որ օժիտը բացեն, ցուցադրեն*» (կին, 22 տարեկան, ք. Երևան)[34]:

2.2. Հարսանեկան հանդիսություն

Հարսանեկան հանդիսությունը ավանդական մշակույթի և նրա պահպանման կայուն ցուցանիշներից մեկն է: Այսօր ժամանակակից հայերի հարսանեկան արարողությունը ներկայացնում է ավանդականի և բազմաթիվ նորամուծությունների յուրահատուկ համադրություն: Շատ ավանդույթներ, պահպանելով ազգային նկարագիրը, այսօրվա նոր պահանջներին համապատասխան ստացել են ժամանակակից իմաստավորում: Սա վերաբերում է հատկապես հարսանիքի անցկացման վայրին, հարսանեկան զգեստին, խնջույքի ճաշացուցակին, նվերներին, օժիտին և այլն[35]:

Սիրիահայ համայնքում ևս հարսանեկան հանդիսությունը կրում է ավանդական հայկական տարրեր և ազդված է այլ մշակույթներից՝ առավելապես արաբական երկրների մշակույթից:

Վերջին տարիներին սիրիահայ համայնքում հարսանեկան խնջույքներն ավելի շատ կազմակերպվում են հարսանյաց սրահներում, ռեստորաններում, որոնք փոխարինելու են եկել նորապսակների բնակարաններին, ինչպես որ տարածված է այժմ հայաստանաբնակ հայերի շրջանում: Սիրիայում հարսանեկան խնջույքը սկսվում է ուշ երեկոյան կամ կեսգիշերին և տևում մինչև լուսաբաց՝

33 *Հակոբյան Գ.*, ԴԱՆ, Երևան, 2014:

34 *Հակոբյան Գ.*, ԴԱՆ, Երևան, 2014:

35 *Վարդանյան Լ. Մ.*, նշվ. աշխատ., էջ 189:

պայմանավորված այն հանգամանքով, որ եկեղեցում պսակադրությունը տեղի է ունենում երեկոյան ժամը ինֆին:

Խնջույքի ճաշացանկին անդրադառնալիս նկատենք, որ, ըստ սիրիահայ բանասացների, «հարսանիքն իր հատուկ ուտեստը չունի, նման սովորություն չի պահպանվել»: Մյուս բոլոր տոներին պատրաստվող ուտեստները պատրաստվում են նաև հարսանիքներին՝ «տոլմա»[36], «քյուֆթա»[37], «չիյ քյուֆթա»[38], «ղավուրմա», «խորոված»՝ հավի, տավարի, քյաբաբ, «թաբուլե»[39], «հումուս»[40], «մուհամմարա»[41], «մութաբբալ»[42], «աբու ղաննուջ»[43], «ֆեթթուշ»[44] և այլն: Ցանկալի ուտեստներից է նաև «ոչխարի փորը». ուտեստն այդպես է կոչվում, որովհետև ամբողջական ոչխարի փորը լցոնում են աղացած մսով, բրնձով և նուշով պատրաստած խառնուրդով, ոչխարը եփում են և մաս առ մաս մատուցում բրնձով փլավի հետ: Ռեստորանների ճաշացանկի մեջ կարող են լինել նաև «եվրոպա-

36 Տոլման պետք է պատրաստված լինի խաղողի թփով: Կարող է լինել նաև առանց մսի տեսակը՝ «յալանչի», որը թարգմանաբար նշանակում է «ստախոս». հայկական պասուց տոլման՝ թփով:

37 Կան քյուֆթայի մի քանի տեսակներ, օրինակ, իչլի քյուֆթան լցոնած բլղուրե կոլոլակ է, որը պատրաստում են նաև հայաստանցիները: Հարսանիքներում սիրիահայերը քյուֆթան մատուցում են տապակած վիճակում. շոգեխաշած տեսակը տոնական սեղաններին չի դրվում:

38 Միսը շաղաղած բլղուրի հետ, մատուցում են հում վիճակում՝ զարդարելով մաղադանոսով:

39 Դեռևս մեծ հայրենադարձության տարիներից արաբական երկրներից բերված կերակրատեսակ է (մանրացրած ձավարով, սոխ ու կանաչիով, զեյթունի ձեթով աղցան), որը տեղ է գտել նաև տեղաբնակների խոհանոցում:

40 Սիսեռով կերակրատեսակ, որը յուրատեսակ համեմունքի հավելում է պահանջում:

41 Խորոված կարմիր պղպեղով և ընկույզով աղանդեր, որը գալիս է Միջին Արևելքի երկրներից:

42 Սմբուկով դելիկատես. բաղադրությունը՝ խորոված սմբուկ, թահին, սխտոր:

43 Սմբուկով աղցան, կոչվում է նաև «պապա ղաննուջ»:

44 Բաղադրությունը՝ հազարաթերթիկ, մանրացված լոլիկ, պղպեղ, վարունգ, սոխ, սխտոր և համեմունքներ:

կան, ծովային ուտելիքներ»՝ կախված սիրիահայերի նախասիրություններից:

Սիրիահայերի հարսանիքներում երաժշտական նվագակցությունը ներառում է ոչ միայն հայկական ազգային մեղեդիներ, այլ նաև ժամանակակից պարեր ու ռիթմեր: Ողջ խնջույքում առանձնահատուկ տեղ ու դեր ունի արաբական երաժշտությունը: Ի տարբերություն հայկական ավանդական հարսանիքների՝ սիրիահայերի հարսանիքներում բացակայում է նվագախմբի ուղեկցությամբ հարսի տուն գնալու ավանդույթը: Նորապսակները հանդիպում են եկեղեցում հայկական երաժշտության հնչյունների ներքո. «*«Ուրախ լեռ» երգ ունինք, եկեղեցականները դա երգում են անպայման, երբ հարսն ու փեսան մտնում են եկեղեցի*» (կին, 55 տարեկան, ք. Երևան)[45]:

Հարսանիքներին ոսկյա զարդերի հետ միասին գոյություն ունի նաև նվերի դրամական ձևը, սակայն վերջին տարիներին այն ավելի լայն տարածում է գտնում. «*Հիմա, որ ոսկին թանկացել է, և՛ մոտ հարազատները, և՛ հյուրերը կա՛մ փող են նվիրում, կա՛մ մի ապրանք են գնում տան համար, կա՛մ էլ բանկային հաշիվներին են փոխանցում իրենց նվերները*» (կին, 62 տարեկան, ք. Երևան)[46]:

Սիրիահայերի ամուսնական ծիսակարգի մեջ է մտնում նաև հարսանեկան ճանապարհորդությունը, որը կազմակերպվում է կա՛մ եվրոպական երկրներում, կա՛մ Հայաստանում, կա՛մ Սիրիայի շրջաններից որևէ մեկում: Հարսանիքից հետո զույգերի՝ տանից դուրս անցկացրած ժամանակը սիրիահայերն անվանում են «մեղրամիս», «մեղրալույս»:

Մշակութային և սոցիալական միջավայրի փոխվելուց հետո սիրիահայերի պատկերացումներում փոխվել են նաև հարսանեկան հանդիսությունների նկատմամբ վերաբերմունքն ու դրանք Հայաստանի պայմաններում կազմակերպելու կարևորությունը: Քանակական ցուցանիշները վկայում են, որ ավելի շատ երկրորդ պլանում է հայտնվել հարսանեկան ճանապարհորդությունը (հար-

45 *Հակոբյան* Գ., ԴԱՆ, Երևան, 2014:

46 *Հակոբյան* Գ., ԴԱՆ, Երևան, 2014:

սանեկան ճանապարհորդությունը կարևորել են հարցման մասնակցած սիրիահայերի միայն 16%-ը, տե՛ս աղյուսակ 2)՝ պայմանավորված ֆինանսական սուղ պայմաններով, ինչու ոչ՝ նաև նոր հոգեվիճակում հայտնվելու անխուսափելի փաստով:

Այսօր սիրիահայերի շրջանում հարսանեկան ծիսական տարրերը պահպանելը, սիրիահայ համայնքում ընդունված և տարածված հարսանեկան ավանդույթները շարունակելը կախված են մի քանի կարևոր գործոններից, որոնց մեջ կարելի է առանձնացնել նորապսակների էթնիկ պատկանելիությունը, նյութական վիճակը և այլն:

Կախված նրանից, թե ինչ էթնիկ խմբի ներկայացուցիչներ են ամուսնացող զույգերը՝ նորապսակները սիրիահայեր են, թե նրանցից մեկը՝ հայաստանցի հայ, փոխվում են հարսանեկան հանդիսության կարևոր տարրերը, առաջին հերթին, ուտեստներն ու երաժշտությունը: Եթե նորապսակները սիրիահայեր են, ապա հարսանեկան հանդիսությունները կազմակերպում են իրենց հարազատ դարձած ավանդական տարրերով. «*Քանի որ բոլոր հրավիրյալներն էլ հալեպցի էին, արդեն շատ նորմալ էր, որ իրենք սիրիական «սիստեմով» պիտի անեին: Երգերից շատը արաբերեն էր: Այնտեղ մենք Թաթա էինք լսում, Արման Հովհաննիսյան. կարոտ կար Հայաստանի նկատմամբ: Հիմա այստեղ սաղ արաբերեն են լսում, նվագում, երգում: Միշտ էլ այդպես է՝ որտեղ որ չես, կարոտում ես*» (տղամարդ, 49 տարեկան, ք. Երևան)[47]: «*Ամուսնացողները նոր էին եկել Հալեպից: Խնջույքի վայրը հայկական ռեստորան էր, բայց նույնիսկ երգիչը Սուրիայից էր, ճաշերը սուրիական էին պատվիրված*» (կին, 58 տարեկան, ք. Երևան)[48]:

Եթե նորապսակ զույգում մեկը հայաստանցի հայ է, իսկ նման զույգերում հիմնականում աղջիկն է հայաստանցի, ապա երաժշտության մեջ ավելի քիչ է նախապատվություն տրվում արաբականին, իսկ ուտեստները հիմնականում ընտրվում են հայկական ռես-

47 *Հակոբյան* Գ., ԴԱՆ, Երևան, 2014:

48 *Հակոբյան* Գ., ԴԱՆ, Երևան, 2014:

տորանի ճաշացուցակից, չնայած որ իրենց քիմքին հաճելի ուտեստները հնարավորության սահմաններում շարունակում են զարդարել հարսանեկան սեղանները:

Ամուսնացող զույգերի և նրանց ազգականների ֆինանսական հնարավորություններով պայմանավորված՝ Հայաստանում փոխվել է նաև հարսանեկան նվերների արժեքն ու ձևը, հարսանեկան ճանապարհորդության մեկնելու տարածվածությունը. «*Հիմա այստեղ ընդհանրացավ դրամ տալը, որովհետև ինչ էլ որ առնես այդ անձին, չպիտի պտտեցնի իր հետ*» (տղամարդ, 69 տարեկան, ք. Երևան)[49]:

2.3. Սիրիահայերի ամուսնության օրինականացումը

Այլէթնիկ և այլ կրոնական միջավայրում սիրիահայերն ապրել են հայի ինքնությունը պահելու առաջնային գիտակցությամբ, որում կարևորագույն դեր է ունեցել կրոնն ու եկեղեցին: Հայկական եկեղեցին՝ լինի առաքելական, կաթոլիկ, թե ավետարանչական, սիրիահայերի կողքին է եղել նաև նրանց կյանքի կարևոր իրադարձությունների ժամանակ: Հետևաբար, եկեղեցական պսակադրությունը սիրիահայ նորապսակների հարսանեկան ծեսի պարտադիր և կարևոր տարր է համարվում:

Հարսանիքի օրվա կարևոր հատված է համարվում նաև ամուսնությունը պաշտոնապես գրանցելու արարողությունը: Նույն օրը՝ պսակադրությունից առաջ, զույգերը ներկայանում են «Առաջնորդարան» (Սիրիայում հայկական եկեղեցիները խոշոր քաղաքներում ունեն առաջնորդարաններ, օրինակ, Հալեպի Ազգային առաջնորդարան)՝ ամուսնությունը գրանցելու խնդրանքով: Առաջնորդարանն ընդունում է երիտասարդների դիմումը, իսկ հետագա իրավական գործողությունների իրականացման պատասխանատվությունը՝ վերցնում իր վրա: Արդյունքում, ինչպես սիրիահայերն են ասում, իրենց տրամադրվում է «ընտանեկան տետրակ», որտեղ ներառված է նաև երիտասարդների ամուսնական կարգավիճակի

49 *Հակոբյան* Գ., ԴՄՆ, Երևան, 2014:

պատմությունը, օրինակ, տղամարդը քանի կին ունի, քանի՝ երեխա:

Եվ պատահական չէ, որ այսօր էլ ամուսնության վավերացման ձևերից երկուսի՝ եկեղեցական պսակադրության և քաղաքացիական գրանցման հարցում սիրիահայերի դիրքորոշումները միանշանակ են և քանակական ցուցանիշներով արտահայտված են հետևյալ կերպ՝ նրանց բացարձակ մեծամասնությունը՝ 100%-ը, կարևոր է համարում զույգերի՝ եկեղեցով ամուսնությունը, իսկ 96%-ը՝ ամուսնությունը նույն օրը պաշտոնապես գրանցելու փաստը (տե՛ս աղյուսակ 2):

Սիրիահայերի համար հարսանեկան այս ավանդույթները պահպանելու կարևորությունն արտահայտվում է ոչ միայն գիտակցական և զգացական մակարդակում, այլ նաև՝ վարքային, որի վկայությունն են ստորև բերված քանակական ցուցանիշները: Ինչպես տեսնում ենք գծապատկեր 6-ից, սիրիահայերի գերակշիռ մեծամասնությունը ամուսնությունը գրանցել է հարսանիքի օրը կամ մինչև հարսանիքը՝ այս դեպքում ի նկատի ունենալով սիրիահայ համայնքում ընդունված և կիրառվող հարսանիքի օրվա հաջորդական գործողությունները:

Գծապատկեր 6

Ամուսնության գրանցման փուլը, համեմատական պատկեր



Միևնույն ժամանակ նկատում ենք, որ շատ քիչ կշիռ են կազմում այն հայաստանաբնակ հայերը, ովքեր ամուսնությունը պաշտոնապես գրանցելու արարողությունը իրականացրել են հարսանիքի օրը կամ մինչև հարսանիքը: «Ամուսնության պարտադիր գրանցումը ՔԱԳՍ-ում[50] խորհրդային օրենսդրության ծնունդն էր: ՔԱԳՍ-ը, արմատներ չունենալով ավանդական ծիսակատարություններում, միաժամանակ նախկին ԽՍՀՄ-ում ունենալով պարտադիր հրահանգված բնույթ, հայերի հարսանեկան արարողակարգում չի զբաղեցրել պատշաճ տեղ: Դրան սովորաբար հատուկ նշանակություն չեն տալիս՝ բացառությամբ անհրաժեշտ դեպքերի: Թե՛ խորհրդային տարիներին, թե՛ այժմ ամուսնության գրանցումը սովորաբար կատարում են հարսի հղիության կամ առաջնեկի ծննդյան ժամանակ»[51]:

Հայաստանում ամուսնության հասարակական վավերացումն այսօր ավելի շատ ընկալվում է պարտադիր հարսանեկան արարողության, քան ՔԿԱԳ-ի գրանցման միջոցով, որը, ինչպես նշեցինք, հաճախ կատարվում է հարսանիքից շատ հետո և հիմնականում առանց որևէ հանդիսավորության[52]:

Սիրիահայերի համար որքան կարևոր է եկեղեցում պսակադրության փաստը, նույնքան կարևոր է նաև պսակադրության ձևը, որը, Հայաստանում տարբեր լինելով հանդերձ, անհանգստության և զայրույթի զգացումներ է առաջացնում նրանց մեջ: «*Մեր մոտ և ոչ միայն՝ քրիստոնեության մեջ, պսակը հատուկ արարողություն ունի, որը ո՛չ ես եմ գրել, ո՛չ՝ Դուք. Սուրբ գրքից առնված բան է: Այդ արարողությունը պետք է ամենաքիչը երեք-քառորդ ժամ տևի: Այդ պսակը ո՞նց սկսվեց, ո՞նց վերջացավ, մենք չհասկացանք*» (կին, 55 տարեկան, ք. Երևան)[53]:

---

50 Ռուսերենից թարգմանաբար նշանակում է՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցում (ՔԿԱԳ):

51 *Վարդանյան Լ. Մ.*, նշվ. աշխ. էջ 200:

52 *Շագոյան Գ.*, «Յոթ օր, յոթ գիշեր» հայոց հարսանիքի համայնապատկեր: Եր.: «Գիտություն» հրատ., 2011, 616 էջ, էջ 396:

53 *Հակոբյան Գ.*, ԴՄՆ, Երևան, 2014:

Իրականում, Հայաստանում պսակադրության արարողության ընթացքում գրաբարով ընթերցվում են այն մասերը, որոնց համար նախատեսված է երգեցողություն՝ մեջբերումներ Ավետարանից, մինչդեռ աղոթքների մի մասն ու քարոզը կատարվում են աշխարհաբար: Չնայած դրան՝ ամբողջ արարողակարգի բովանդակությունն ու խորհուրդը հիմնականում մնում են անհասկանալի ինչպես պսակվողների, այնպես էլ ծեսը դիտողների համար: Այսօրվա պսակադրության հատված են ներթափանցել եկեղեցական որոշ ծեսեր, որոնք նախկինում կատարվում էին այլ օրերի և հաճախ՝ եկեղեցուց դուրս, և որոնք այժմ համատեղված են մեկ ծառայության մեջ, և այս բոլոր ծեսերն իրականացվում են հնարավորինս կարճ տարբերակով[54]:

Այսպիսով, ինչպես ցույց տվեցին ուսումնասիրության արդյունքները, սիրիահայերը ամուսնական ծիսակատարությունների մեջ ավելի շատ կարևորում են եկեղեցում պսակադրությունը, քավորի առկայությունը, ինչպես նաև ամուսնությունը հարսանիքի օրը գրանցելու արարողությունը: Եթե առաջին երկուսը նրանք կարողանում և պահպանում են նոր սոցիալ-մշակութային միջավայրում, ապա վերջինս, ըստ Հայաստանում ընդունված սովորույթի, այլևս չի համարվում սիրիահայերի հարսանեկան ծիսակարգի պարտադիր տարր: Սրա հետ մեկտեղ, սիրիահայ համայնքում ընդունված և տարածված հարսանեկան ավանդույթները շարունակելն այսօր կախված է նաև ամուսնացող զույգերի էթնիկ պատկանելիությունից, նյութական ու հոգեբանական վիճակից:

54 *Շագոյան Գ.*, նշվ. աշխ. էջ 392:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ

3.1. Ազգամիջյան ամուսնությունների նկատմամբ սիրիահայերի վերաբերմունքը

Վերջին տարիներին հայ հասարակությունում ազգամիջյան ամուսնությունների նկատմամբ վերաբերմունքը, ենթարկվելով որոշակի փոփոխությունների, ավելի դրական է դարձել: Այն ավելի դրական երանգ է ստանում, երբ համեմատում ենք սիրիահայերի վերաբերմունքի հետ: Ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, հայաստանաբնակ հայերի մոտավորապես մեկ չորրորդ մասը (տղայի ամուսնության դեպքում՝ 24,2%, աղջկա ամուսնության դեպքում՝ 23,1%, տե՛ս գծապատկեր 7) համամիտ է այն տեսակետի հետ, որ ամուսնանալիս ազգությունը նշանակություն չունի: Մինչդեռ, նման տեսակետ ունեցող սիրիահայերի կշիռը մոտ վեց անգամ պակաս է՝ ի համեմատ հայաստանաբնակ հայերի. նրանց միայն 4%-ն է կիսում այդ մոտեցումը:

Սիրիահայերի գերակշիռ մեծամասնությունը դեմ է ազգամիջյան ամուսնություններին (և՛ տղայի, և՛ աղջկա ամուսնության դեպքում այն կազմում է 84,0%), և միայն տաս հոգուց մեկն է կարծում, որ նման ամուսնություն կարելի է թույլ տալ, եթե ընտանիքներում պահպանվի հայ ազգային մշակույթն ու ավանդույթները: Եվ սա ամենևին զարմանալի չէ, քանզի այլէթնիկ միջավայրում ապրող հայի էթնիկ ինքնագիտակցության պահպանման և ուծացման վտանգից պաշտպանելու հարցում մեծ նպաստ են ունեցել ազգապահպանման գործին ծառայող մշակութային կազմակերպությունները, եկեղեցին և որ ամենակարևորն է՝ ընտանիքը:

Այս հարցին անդրադարձել է նաև Ա.Ստեփանյանը իր հոդվածներից մեկում: Խառնամուսնությունները սփուռքահայերի մեջ, առավել հաճախ, դիտարկելի էին եվրոպական, քան մերձավորա-

Գծապատկեր 7

Այլազգիների հետ ամուսնության նկատմամբ վերաբերմունք, համեմատական պատկեր



ռևելյան երկրներում, ինչն, անշուշտ, պայմանավորված է և կրոնական միջավայրի գործոնով: Եթե քրիստոնեական միջավայրում այլազգու հետ ամուսնությունը չէր քաջալերում ընտանիքը, ավագ սերունդը, ապա մահմեդական միջավայրում խառնամուսնությունը այլակրոնի հետ չէր քաջալերում նաև հայ համայնքն ու եկեղեցին, որի ողջ ներուժն ուղղված էր ոչ միայն մշակութային, այլև հոգևոր-կրոնական ինքնուրույնության պահպանմանը: Հարկ է նշել, սակայն, որ մահմեդական միջավայրում բացառություն էին կազմում քրիստոնյա արաբները: Նմանօրինակ խառնամուսնությունները նույնպես չէին խրախուսվում, սակայն պատահում էր, երբ հայ տղան էր ամուսնանում քրիստոնյա արաբուհու հետ և ոչ հակառակը[55]:

55 *Ստեփանյան Ա.*, Սփյուռքահայերի խառնամուսնական ընտանիքները 1946-1948 թթ. ներգաղթի տարիներին, Հայ ինքնության որակների պահպանումը խառնամուսնություններում: Գիտագործնական համաժողով: Զեկուցումների ժողովածու, Եր., «Նորք», 2010, էջ 47:

Հարցի վերաբերյալ տեսակետները կտրուկ փոփոխության են ենթարկվում, երբ խոսքը գնում է հայաստանաբնակ հայերի հետ ամուսնության մասին: Այստեղ սիրիահայերի՝ սեփական համայնքից դուրս ամուսնությունների նկատմամբ բացասական վերաբերմունքը զիջում է իր դիրքը՝ 84,0%-ից (տե՛ս գծապատկեր 7) դառնալով 4,0% (տե՛ս գծապատկեր 8): Սիրիահայերի գերակշիռ մեծամասնությունը հավանություն է տալիս հայաստանցի հայ-սիրիահայ ամուսնություններին:

Գծապատկեր 8

Հայաստանցի հայ–սիրիահայ ամուսնությանը հավանություն, համեմատական պատկեր



Երբ խոսքը վերաբերում է արդեն անձնային մակարդակում ամուսնական հարաբերությունների ձևավորմանը, 2014 թվականին մեր կողմից անցկացրած ուսումնասիրությունն այլ ցուցանիշներ է բացահայտել: Հարցմանը մասնակցած սիրիահայերի մոտ 60%-ը պատրաստ է ամուսնական հարաբերություններ ձևավորել հայաստանցի հայերի հետ, որտեղ մեծ զանգված են կազմում արական սեռի ներկայացուցիչները: Եվ պատահական չէ այս ցուցանիշը, քանզի դաշտային նյութերի հավաքման ամբողջ ընթացքում շատ քիչ են հանդիպել ամուսնական կամ նախաամուսնական զույգեր, որում կինը լինի սիրիահայ, իսկ տղամարդը՝ հայաստանցի հայ: Ավելին, ամուսնության նպատակով մինչ այժմ Հայաստան այցելած սիրիահայերը 26–55, նաև 66-ից բարձր տարիք ունեցող տղամարդիկ են:

Գծապատկեր 9

Սոցիալական հեռավորության միջին թվաբանական ցուցանիշ (1–7)



Համեմատելով սոցիալական հեռավորության[56] մակարդակները չորս տարբեր խմբերում՝ սիրիահայություն, ՀՀ հայություն, քրիստոնյա արաբների խումբ և մահմեդական արաբների խումբ (տես գծապատկեր 9), կտեսնենք հետևյալ պատկերը. սիրիահայը սեփական համայնքի ներկայացուցչին միանշանակ ընդունում է որպես զուգընկեր: ՀՀ հայի դեպքում սոցիալական հեռավորության միջին թվաբանական ցուցանիշը 1,5 է, որը նշանակում է ամուսնական-ըն-

56 *Է. Բոգարդուսի* սոցիալական դիստանցիաների մոդիֆիկացված սանդղակը (1-7 բալանոց սանդղակ, որտեղ 1-զուգընկեր, 2-ընկեր, 3-հարևան, 4-գործընկեր, 5-նույն երկրի քաղաքացի, 6-տուրիստ, 7-նախընտրում են չտեսնել երկրում) ուղղված է խմբերի դիստանցիան հասկանալուն: Սոցիալական դիստանցիայի սանդղակը ցույց է տալիս խմբերի միջև հոգեբանական մտերմության աստիճանը, որը նպաստում է նրանց հեշտ կոմմունիկացիային: Սոցիալական առավելագույն դիստանցիան՝ 7 թիվը, նշանակում է, որ խմբերն ավտոնոմ են գործում, հաղորդակցությունն այս դեպքում հիմնականում սիմվոլիկ, ֆորմալ բնույթ է կրում: Նվազագույն սոցիալական դիստանցիան՝ 1 թիվը, վկայում է այն մասին, որ երկու խմբերի ներկայացուցիչները միմյանց հետ հարաբերությունները կառուցում են՝ հաշվի առնելով և ընդունելով դիմացինի բնորոշ առանձնահատկությունները, յուրօրինակությունները: Տես Սոցիալական հեռավորության սանդղակ (Բոգարդուսի սանդղակ) http://vsetesti.ru/395/:

կերական փոխհարաբերությունների մակարդակով շփման պատրաստակամություն: Համեմատած մահմեդական արաբի՝ քրիստոնյա արաբի պարագայում սիրիահայը նախընտրում է փոխհարաբերությունների մեջ մտնել ընկեր-հարևան միջանկյալ դաշտում՝ ավելի մոտ ընկեր կատեգորիային: Ամենաթույլ կապն արտահայտվում է մահմեդական արաբի հետ շփման պարագայում, որը մոտենում է գործընկերային հարաբերությունների սահմանին՝ միջին թվաբանական ցուցանիշը 3,8:

Ինչպես տեսանք հետազոտության արդյունքներից, Հայաստան տեղափոխվելու առաջին տարիներին սիրիահայերն այլ, միգուցե կարծրատիպային մոտեցում ունեին հարցի վերաբերյալ, իսկ այսօր երկարատև բնակությունը նրանց շրջանում, անձնական, ընկերական և գործընկերային շփումները նրանց հետ փոխել են հայաստանցի հային՝ որպես զուգընկեր ընդունելու պատրաստակամության աստիճանը:

Ընդհանրապես, սփյուռքահայերի շրջանում հայաստանցի «աղջիկ ուզելու» սովորությունը արդիական է եղել բոլոր ժամանակներում, որը շարունակվում է նաև այսօր: Դեռևս առաջին հայրենադարձության տարիներին՝ հատկապես 1946–1948 թթ.-ին, ողջ Սփյուռքը, բռնկված հայրենասիրության ոգով, առաջնորդվելով «մեկ ազգ», «մեկ հայրենիք» կարգախոսով՝ միաձուլվելու, մեկտեղվելու, նաև Հայաստանում ընտանիք կազմելով՝ «բոլորովին հայ ըլլալու» երազանքն ուներ[57]:

Այդ տարիներին, գալով Հայաստան, «նրանք, ովքեր դեռևս Սփյուռքում երազում էին հայաստանցու հետ ամուսնացնել իրենց զավակին, խուսափելով օտարի հետ ընտանիք կազմելու հեռանկարից, ստեղծված իրավիճակում, դեմ առ դեմ հանդիպելով իրենց միանգամայն անհասկանալի, օտարոտի, արհամարհական, որոշ դեպքերում՝ նաև թշնամական վերաբերմունքի, տրամագծորեն փո-

57 *Ստեփանյան Ա.*, Հայրենադարձների ենթաէթնիկ ինքնագիտակցության դրսևորումներն ամուսնական կապերում: Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, «Գիտություն» հրատ., Եր., 2001, էջ 97:

խում են դիրքորոշումը՝ կտրականապես մերժելով և բացարձակորեն անհնար համարելով նման կապերը: «Մենք տեղացիի աղջիկ տվողը չենք» ասելով՝ միաժամանակ տեղացիներին բնութագրում էին իբրև «կոշտ ու կոպիտ, վայրենի»: Քանի որ խորթացումը երկկողմանի էր, ապա տեղացիներն էլ իրենց հերթին էին խուսափում նման կապերից՝ հայրենադարձներին բնորոշելով իբրև «սև ջուր (սուրճ) խմողներ» կամ «հում միս (բաստուրմա) ուտողներ»»[58]:

Մեր կողմից անցկացրած հետազոտությունը հայաստանցի հայ-սիրիահայ ամուսնությանը հավանություն չտալու այլ պատճառներ է բացահայտել: Ինչպես տեսանք վերևում, 30,1%-ը, նույնն է, թե տաս հոգուց երեքը հակված չէ սիրիահայի հետ ընտանիք կազմելու գաղափարին: Այդ զանգվածի մեջ ավելի շատ են արական, քան իգական սեռի ներկայացուցիչները (համապատասխանաբար, 32,2% և 27,2%): Տարիքային առումով էական օրինաչափություն չի բացահայտվել, սակայն նկատենք, որ չնչին տարբերությամբ հավանություն չտվողների զանգվածում մեծ կշիռ են կազմում ավագ սերնդի ներկայացուցիչները (երիտասարդներ՝ 27,5%, միջին սերունդ՝ 29,6%, ավագ սերունդ՝ 31,8%): Նմանօրինակ պատկեր բնորոշ էր նաև խորհրդային տարիներին, երբ հետազոտողները գրում էին էթնիկ խմբերի ամուսնության հարցի մասին՝ «հետհիսունականներին ծնված, ամուսնության տարիքի նոր սերունդն արդեն ձերբազատված է այդ բարդույթից»[59]:

Սիրիահայերի խմբում հայաստանցի հայերի հետ ընտանիք կազմելուն դեմ են արտահայտվել միայն երիտասարդ իգական սեռի ներկայացուցիչները:

Վերլուծելով ստորև բերված պատճառները՝ բացահայտում ենք, որ հայաստանցի հայերի շրջանում սիրիահային սեփական ընտանիք չընդունելու հիմքերը մեծամասամբ կենցաղամշակութային են (ընդհանուր կշռում կազմում են 39,8%, տես աղյուսակ 3), որոնք հետևյալ արտահայտումներն ունեն՝ սիրիահայերը տարբեր են

58 *Ստեփանյան Ա.*, նշվ. աշխ. էջ 98:

59 *Ստեփանյան Ա.*, նշվ. աշխ. էջ 99:

իրենց սովորություններով, ավանդույթներով, կենցաղով, տարբերվում են նաև մտածելակերպով, արժեքներով և բնավորությամբ: Հայաստանցիները մտավախություն ունեն նաև, որ ամուսնության պարագայում նրանք չեն հետևի «հայկական» ավանդույթներին, արժեքներին ու ծեսերին:

Աղյուսակ 3

Հայաստանցի հայ-սիրիահայ ամուսնական կապը չընդունելու հայաստանցիների պատճառները, %

Պատճառներ	Հաճախա-կանություն
Սովորություններով, ավանդույթներով կենցաղով (վատ) տարբերվում են	23,7
Չեմ ուզում ուղղակի/չեմ սիրում սիրիահայերին	13,6
Մտածելակերպով, արժեքներով, բնավորությամբ տարբերվում են	11,9
Ճիշտն այն է, որ «հայը» «հայի» հետ ապրի, տեղացի-տեղացի եմ ընդունում միայն	7,6
Նրանք «արաբացած են», արդեն հայ չեն	7,6
Ով Հայաստանից դուրս է, հայ չեմ համարում, «երրորդ կարգի հայ» են	5,1
Չեն պահպանի հայկական ավանդույթները, արժեքները, ծեսերը	4,2
Շահադիտական նպատակներով են ամուսնանում տեղի հայերը	4,2
Բռնությունը շատ է Սիրիայում, տղամարդիկ բռնապետ են, կանայք իրավունքներ չունեն	2,5
Տարբերվում են վարքով (վատ)	1,7
Պատերազմի պատճառով	1,7
Այլ	2, 6
Դժվարանում է պատասխանել	13,6
Ընդամենը	100,0

Թերևս վերը նշված պատճառներն արդեն բացահայտում են հայաստանաբնակների անհանդուրժողականության մակարդակը,

սակայն նրանց մի մասի մոտ հայի ինքնության զգացողություններն ավելի են սրանում, և օտար համարելով սիրիահայերին՝ դուրս են մղում սեփական խմբից հետևյալ ձևակերպումներով՝ ճիշտն այն է, որ «հայը» «հայի» հետ ապրի, տեղացի-տեղացի եմ ընդունում միայն; նրանք «արաբացած են», արդեն հայ չեն; ով Հայաստանից դուրս է, հայ չեմ համարում, «երրորդ կարգի հայ են» (ընդհանուր զանգվածում կազմում է 20,3%, տե՛ս աղյուսակ 3)։ Այստեղ հատկապես ուշադրության է արժանի սիրիահայերին՝ որպես հայ չընդունելու, ավելին, նրանց արաբացած համարելու փաստը։ Նույն իրավիճակն է եղել նաև 1970-ական թթ.-ին, երբ սիրիահայերը էթնիկ յուրայինների մեջ օտարվել ու մերժվել են։ Այդ պայմաններում ձևավորվում է ներգաղթած հայի նոր ինքնություն՝ հայ, բայց երկրորդ կարգի, տեղացուն ստորադասվող, առնվազն՝ նրան ոչ նման[60]։

Սիրիահայերի հետ ամուսնությանը հավանություն չտալու պատճառների մեջ մեծ մաս են կազմում նաև անձնային մակարդակի պատասխանները՝ հղում անելով պարզապես ցանկության բացակայությանը, «հաշվարկով ամուսնության» գաղափարը չկիսելուն և այլն։

Հայաստանաբնակ հայերի պատասխաններում ակնարկվում է նաև սիրիահայ ընտանիքներին վերագրվող գենդերային անհավասարության և ընտանեկան բռնության մասին։ Նրանք կարծում են, որ սիրիահայ տղամարդիկ ընտանիքում բռնապետ են, իսկ կանայք՝ իրավազուրկ։ Մեծ հայրենադարձության տարիներին, երբ Խորհրդային Հայաստան էին ներգաղթել ոչ միայն սիրիահայերը, այլ մոտեցում է եղել տեղացի հայերի պատկերացումներում. «Նորեկ տղամարդկանց բնութագրելիս նշում էին, որ վերջիններս մեղմաբարո են, կանանց նկատմամբ բռնություններ չեն կիրառում և, ընդհանրապես, լավ են կին պահում»[61]։

Իրականում, թե ինչքանով է տարածված բռնությունը սիրիահայերի շրջանում և ինչ պատկերացումներ ունեն նրանք ընտանե-

60 *Ստեփանյան Ա.*, XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 239։

61 *Ստեփանյան Ա.*, նշվ. աշխ. էջ 216։

կան բռնության մասին, կբացահայտենք աշխատության հաջորդ էջերում:

Ամփոփելով թեման՝ մեկ անգամ ևս փաստենք, որ սիրիահայերի շրջանում բավականին բարձր է այլէթնիկ ամուսնությունների նկատմամբ անհանդուրժողականության մակարդակը, ավելին, այն սրանում է հատկապես այլակրոն ազգերի համատեքստում: Երկար տարիներ, ապրելով և կենսագործունեություն ծավալելով մահմեդական աշխարհում, սիրիահայերը հայի ինքնության պահպանման գործում եկեղեցուց հետո կարևոր դերակատարությունը վերագրում են ընտանիքին, ուստիև, հայկական միջավայրից զույգի ընտրությունն այդ գործընթացի հաջողության համար ամենակարևոր երաշխիքն է:

Ի տարբերություն սիրիահայերի, որոնց մեծամասնությունը կողմ է հայաստանցիների հետ ամուսնությանը, վերջիններս ավելի անհանդուրժողական են և սիրիահայերին դժվարությամբ են ընդունում սեփական ընտանիքներ: Գենդերային ցուցանիշն այս հարցում կարևոր գործոն է համարվում, քանզի մեծամասամբ արական սեռի ներկայացուցիչներն են, որ հավանություն չեն տալիս սիրիահայերի հետ ամուսնությանը: Ընդ որում, այս վերաբերմունքը փոխադարձ է այն իմաստով, որ սիրիահայ աղջիկների մեծամասնությունը նույնպես դեմ է արտահայտվել հայաստանցի տղաների հետ ամուսնությանը: Օտար-յուրային տարանջատման պատճառներն ավելին, քան հիմնավոր են, և հասնում են՝ ընդհուպ մինչև անձնային մակարդակ:

3.2. Ընտանեկան բռնության վերաբերյալ ընկալումներ

ՀՀ-ի անկախացումից հետո առկա քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ բնույթի խնդիրները հանգեցրել են ընտանեկան հարաբերությունների ագրեսիվ բնույթին՝ ընդհուպ մինչև ընտանեկան բռնության: Ընտանեկան բռնություն է համարվում համակարգված գործողությունների ամբողջությունը, որն արտահայտվում է պարբերաբար կրկնվող ֆիզիկական (ապտակ, ծեծ), հոգեբանական (հայհոյանք, անտեսում, բաժանման սպառնա-

լիք), սեռական (կամքին հակառակ սեռական բնույթի գործողություններ), տնտեսական (աշխատանքի արգելք, գումարից զրկում) ճնշումներով ընտանեկան հարաբերություններ կառուցած անձանց միջև՝ ամուսին-կին, ծնող-երեխա, ամուսնու ծնողներ և այլն:

Կախված սոցիալ-մշակութային միջավայրից՝ տարբեր են ոչ միայն բռնության դրսևորումներն ու տարածվածությունը, այլ նաև դրա մասին հասարակական ընկալումները: Հայաստան տեղափոխված 200 սիրիահայ կանանց շրջանում 2013 թվականին իրականացված սոցիոլոգիական հարցումը[62] նպատակ է ունեցել ի հայտ բերել համայնքի կանանց շրջանում գենդերային բռնության ձևերն ու տարածվածությունը: Պարզվում է, որ սիրիահայ կանանց գրեթե կեսը պատկերացում չունի այն հարցի մասին, թե ընտանեկան բռնության իմաստով ինչպիսին է իրավիճակը հայաստանյան հասարակությունում: Օրինակ, այն տեսակետի շուրջ, թե ընտանեկան բռնությունը Հայաստանում տարածված խնդիր է, 47,4%-ը դժվարացել է կարծիք հայտնել: Չնայած նկատենք, որ 41,3%-ը, այսինքն՝ մոտ տաս հոգուց չորսը, համաձայնել է վերը բերված մոտեցման հետ, ինչն արդեն լուրջ և մտածելու տեղիք տվող ցուցանիշ է:

Մեկ այլ հարցում, որը վերաբերում է կանանց հանդեպ բռնությանը, ցուցանիշը փոխվում է՝ ի օգուտ հայ հասարակությանը: Սիրիահայ կանանց միայն 32,5%-ն է լիովին կամ մասամբ համաձայնել այն դատողության հետ, որ կանանց հանդեպ բռնության խնդիրը դեռևս ակտուալ է Հայաստանում, քանի որ հասարակությունն անտարբեր է բռնության զոհերի հանդեպ, իսկ գերակշիռ մասը (53,1%-ը) կրկին դժվարացել է կարծիք հայտնել դատողության շուրջ[63]:

Աշխատության այս մասում կանդրադառնանք հոգեբանական, տնտեսական և ֆիզիկական բռնության ձևերի ընկալումների վեր-

62 Տես «Սիրիայից տեղահանված կանայք փնտրում են անվտանգ ապաստան Հայաստանում» հետազոտական արդյունքների հաշվետվություն, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն (ICHD), Երևան, 2013:

63 Տես նույն տեղում, էջ 16:

լուծությանը: Մեր կարծիքով, սեռային բռնությունն ուսումնասիրության ավելի զգայուն թեմա է, որին առանձին ուշադրություն չի հատկացվել, սակայն վերը նշված հետազոտության արդյունքներն անհատական մակարդակով որոշակի պատկեր ուրվագծում են. «Ներկա ամուսնու կողմից բռնության դեպքերի առկայության մասին վկայել են հինգ կին (2,5%), որոնցից մեկը նշել է համարյա բոլոր տեսակի հնարավոր բռնությունների մասին: Այս դեպքում կինը դիմել է ծնողների օգնությանը, իսկ բռնության պատճառը համարում է խանդը: Մնացած չորս դեպքերը վերաբերել են համայնքային կյանքին մասնակցելու արգելքին, տնային կալանքին կամ գումար չտրամադրելուն, ինչը կանանց կողմից լուրջ խնդիր չի համարվել»[64]:

Ընդհանուր առմամբ, սիրիահայերը լավատես են նաև ընտանեկան հարաբերությունների գնահատման հարցում:

Գծապատկեր 10

Ընտանեկան հարաբերությունների գնահատում, համեմատական պատկեր



Գծապատկեր 10-ի արդյունքները, իհարկե, սուբյեկտիվ մակարդակով բացահայտում են սիրիահայ ընտանիքներում տիրող

64 Տե՛ս նույն տեղում, էջ 15:

մթնոլորտը՝ սիրիահայերի գերակշիռ մասը՝ 72,0%-ը, շատ լավ է գնահատում սեփական ընտանիքներում ձևավորված հարաբերությունները՝ ի տարբերություն հայաստանցիների: Սակայն, եթե միավորում ենք «շատ լավ» և «լավ» տարբերակները, դրական մթնոլորտը գրեթե հավասարաչափ տարածվում է և՛ սիրիահայ, և՛ հայաստանաբնակ ընտանիքների վրա: Չնայած սրան՝ միջին մակարդակի ընտանեկան փոխհարաբերություններն ավելի շատ բնորոշ են հայաստանաբնակ, քան սիրիահայ ընտանիքներին (համապատասխանաբար, 7,8% և 4,0%): Վերջիններիս մեջ բացակայում, իսկ հայաստանցիների մեջ 1,7% է կազմում ընտանեկան հարաբերությունները բացասական գնահատողների զանգվածը:

Աղյուսակ 4

Ընտանեկան բռնության մասին պատկերացումներ, համեմատական պատկեր, %

Բռնության ձևեր	Սիրիահայեր	ՀՀ հայեր
Թեթև վիճաբանություն, լեզվակռիվ	8,0	12,5
Արհամարհանք	36,0	31,8
Հայհոյանք	60,0	57,7
Սպառնալիք՝ բռունցքներով	84,0	82,7
Ծնողների և այլ ազգականների հետ շփման արգելք	88,0	78,3
Հարևանների, ընկերների և ծանոթների հետ շփման արգելք	68,0	68,2
Ազատ ժամանակն՝ ըստ նախասիրությունների անցկացնելու արգելք	76,0	57,9
Աշխատանքի արգելք	92,0	66,9
Ապտակ	88,0	79,7
Ծեծ	96,0	88,3

Սիրիահայերի շրջանում հոգեբանական բռնության ընկալման մեջ առաջնային երեք ձևերն են՝ ծնողների և այլ ազգականների հետ շփման արգելքը, բռունցքներով սպառնալիքը և ազատ ժամանակն ըստ նախասիրությունների անցկացնելու արգելքը (համապատաս-

խանաբար, 88,0%, 84,0%, 76,0%, տե՛ս աղյուսակ 4): Ինչպես տեսնում ենք, թեթև վիճաբանություն/լեզվակռիվը՝ որպես հոգեբանական բռնության ձև, ընկալվում է շատ փոքր զանգվածի կողմից, չնայած հայաստանցիների շրջանում այդ ցուցանիշը մի փոքր բարձր է:

Ի տարբերություն հոգեբանականի՝ սիրիահայերի գերակշիռ մասը (92,0%) զգայուն է տնտեսական բռնության ձևերից՝ ընտանիքում աշխատանքի արգելքի նկատմամբ և նկատելիորեն շատ ավելի, քան հայաստանաբնակ հայերը: Ֆիզիկական բռնության հարցում ևս նկատենք, որ, հայաստանցիների հետ համեմատությամբ, սիրիահայերը՝ որպես բռնության դրսևորումներ, ավելի շատ են ընկալում ծեծն ու ապտակը:

Հայաստանաբնակ հայերի, հատկապես տղամարդկանց կոպտության մասին նկատում և խոսում են սիրիահայ կանայք, ինչը նաև հիմնական պատճառներից մեկն է նրանց զուգընկեր չդիտարկելու հարցում՝ «*Գիտե՞ք ինչ՝ այստեղ տղամարդիկ կոպիտ են կանանց հանդեպ: Կարող է նոր սերունդը ավելի լավն է, չգիտեմ: Բայց հիմա 40 տարեկանները կոպիտ են շատ, չնայած որ իրենք շատ ազատ են, իրենց ճամփաները շատ ազատ են: Ես այստեղ տեսա, թե ինչպես տղամարդը դրսում ծեծեց իր կնոջը: Ինչ խնդիր էլ լինի, մե՛կ է՝ չի՛ կարելի: Իմ բերանը բաց էր մնացել: Կինը նորը է, ո՞նց կարելի է նման բան անել: Կարող է բոլորը նույնը չեն, մեր մոտ էլ կան, բայց այդ մարդուն ես մարդ չեմ համարում*» (կին, 27 տարեկան, ք. Երևան)[65]:

Այսպիսով, ինչպես ցույց տվեցին մեր ուսումնասիրության արդյունքները, ընտանեկան բռնության դրսևորումների նկատմամբ սիրիահայերն ավելի զգայուն են, քան հայաստանաբնակ հայերը, ընդ որում, այն ավելի արտահայտված է ֆիզիկական և տնտեսական բռնության համատեքստում: Չնայած ընտանեկան բռնության հարցում մեղադրանքները փոխադարձ են, այնուամենայնիվ, մենք գտնում ենք, որ սիրիահայ և հայաստանաբնակ հայերի ընտանիքներում բռնության տարածվածությունն ու դրա համեմատական վերլուծությունը պահանջում են առանձին և խորը ուսումնասիրություն:

65 *Հակոբյան* Գ., ԴՄՆ, Երևան, 2014:

3.3. Ընտանեկան արժեքներ և նորմեր

Սիրիահայերի տեղափոխվելը Հայաստան միայն ֆիզիկական տեղաշարժ չէ, այլ կենսաձևի և մտածելակերպի փոփոխություն, որը ենթադրում է ողջ արժեքային համակարգի վերանայում: Արժեքները հասարակության ընդհանուր պատկերացումներն են ցանկալիի, ճշմարիտի, օգտակարի մասին: Դրանք ապահովում են հասարակության ինտեգրացիան և օգնում են անհատին՝ կենսական կարևոր իրավիճակներում ընտրություն կատարելու հարցում:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 5-ի արդյունքներից, և՛ սիրիահայերի, և՛ հայաստանցի հայերի համար կյանքի կարևոր իմաստները պտտվում են երեք արժեքների շուրջ՝ ընտանիք, առողջություն, աշխատանք, չնայած որ դրանք տարբեր էթնիկ խմբերի համար գտնվում են կարևորության տարբեր աստիճաններում: Ընտանիքը միշտ էլ առանձնահատուկ տեղ ու դեր է ունեցել հայ ժողովրդի արժեքային համակարգում, որտեղ էլ նա ապրելիս լինի: Համաշխարհայնացումը, եվրոպական արժեքների ներթափանցումը հայ հասարակություն, ինչպես նաև ներքին սոցիալ-տնտեսական խնդիրները չեն ստվերել ընտանիքի դերը հայաստանցիների կյանքում, և պատահական չէ, որ աշխատանքից և առողջությունից առաջնային նրանք կարևոր են համարում ընտանիքը:

Սիրիահայերի մոտ, սակայն, իրավիճակն այլ նկարագրություն է ստանում: Վերջին շրջանի իրադարձությունները՝ պատերազմը Սիրիայում, Հայաստան տեղափոխությունը, վերջինիս սոցիալ-տնտեսական խնդիրները սիրիահայերի արժեքային կողմնորոշումների վրա որոշակի ազդեցություն են ունենում: Պատերազմից մազապուրծ եղած և հայաստանյան տնտեսական կյանք ոտք դրած սիրիահայերի համար առաջնային են դառնում առողջությունն ու աշխատանքը՝ երրորդ տեղում թողնելով ընտանիքը: Արտահայտված կշիռների ոչ այնքան մեծ տարբերությամբ հանդերձ՝ վերոնշված երեքն էլ կենսիմաստ արժեքներ են[66], որոնք ուղղված են

66 Սույն վերլուծության համար հիմք ենք վերցրել արժեքների հետևյալ տիպաբանությունը՝ իդեալական, ինտերակցիոն, սոցիալականացնող,

իրացնելու մարդկանց կյանքի համար նշանակալի գործունեության ընդհանուր իմաստները:

Աղյուսակ 5

Կյանքի կարևոր արժեքները, համեմատական պատկեր, %

Կարևոր արժեքները	Սիրիա-հայեր	Կարևոր արժեքները	ՀՀ հայեր
Առողջությունը	26,2	Ընտանիքը	18,0
Աշխատանքը	26,2	Առողջությունը	17,6
Ընտանիքը	25,0	Աշխատանքը	16,7
Կրոնը	7,1	Կրթությունը	12,3
Կրթությունը	7,1	Ընկերները	8,4
Աշխատավարձը	3,6	Աշխատավարձը	7,9
Ընկերները	3,6	Կրոնը	6,1
Աշխատանքային կարիերան	1,2	Հանգստի կազմակերպումը	4,7
Հանգստի կազմակերպումը	0,0	Աշխատանքային կարիերան	3,8
Ճանապարհորդելը	0,0	Ճանապարհորդելը	2,5
Քաղաքականությունը	0,0	Քաղաքականությունը	1,6
Այլ	0,0	Այլ	0,4
Ընդամենը	100,0	Ընդամենը	100,0

կենսիմաստ: Իդեալական արժեքներն ուղղված են պարզագույն կամ առաջնային պահանջմունքներին, որոնք նշանակալի են կյանքի շարունակության և պահպանության համար (բարեկեցություն, հարմարավետություն, անվտանգություն): Ինտերակցիոն արժեքներն ուղղված են ավելի բարդ պահանջմունքների, որոնք վերաբերվում են այլ մարդկանց հետ փոխազդեցությանը, շփմանը: Սոցիալականացնող արժեքները նույնպես ուղղված են բարդ պահանջմունքների՝ յուրացնելու համար տվյալ էթնոսի արժեքները, նորմերը, վարքի ձևերը, սովորույթները: Կենսիմաստ արժեքները ավելի բարձր են՝ ըստ բարդության և ֆունկցիաների, և ուղղված են լրացնելու մարդկանց՝ ամբողջ կյանքի համար նշանակալի գործունեության ընդհանուր իմաստները: Տե՛ս *Здравомыслов А.Г.*, Потребности, интересы, ценности. М., Политиздат, 1986, էջ 68-72:

Կրոնը մահմեդական միջավայրում ապրող հայի համար եղել և մնում է հայապահպանության կարևոր և առաջնային գործիքներից մեկը, և պատահական չէ, որ այն հաջորդ կարևոր արժեքն է սիրիահայերի կյանքում՝ ի տարբերություն հայաստանաբնակ հայի, ում արժեքային համակարգում այն յոթերորդ տեղում է գտնվում: Այս տարբերությանն ականատես կլինենք նաև աշխատության հաջորդ էջերում, երբ սիրիահայերը հայաստանցիների արժեհամակարգին բնորոշ չեն համարում քրիստոնեական արժեքները՝ որպես ընտանիքի ձևավորման և գոյատևման կարևոր գրավական:

Կրթությունն ու ընկերությունը՝ որպես սոցիալականացնող և ինտերակցիոն արժեքներ, ավելի շատ կարևորվում են հայաստանաբնակ հայերի, քան սիրիահայերի կողմից, ընդ որում, եթե արժեքների ընդհանուր համակարգում կրթությունը մեկ մակարդակով տեղը զիջում է կրոնին, ապա ընկերությունը՝ երկու մակարդակով կրթությանը և աշխատավարձին: Աշխատավարձը՝ որպես բարեկեցության ցուցանիշ, չնայած կշիռների տարբերությանը, հավասար մակարդակի կարևորություն է ստանում սիրիահայերի և հայաստանցիների համար:

Հարկ է նշել նաև, որ սիրիահայերի ներկա հոգեվիճակում և հայաստանյան ներկա սոցիալ-քաղաքական միջավայրում նրանց բացարձակ մեծամասնության համար անկարևոր են դառնում քաղաքականությունը, ճամփորդելն ու հանգստի կազմակերպումը:

Ընտանիքը համարելով կյանքի կարևոր արժեքներից մեկը՝ սիրիահայերն ունեն նաև սեփական պատկերացումները ընտանեկան արժեքների, սեփական համայնքի և անհատական մակարդակում ընդունված նորմերի վերաբերյալ, որոնք բացահայտվում են ներքևում բերված դատողությունների վերլուծության շնորհիվ (տե՛ս աղյուսակ 6):

Երեխաների դաստիարակության և հետագա նորմալ կենսագործունեության իրականացման համար, ըստ սիրիահայերի 92%-ի, կարևոր գործոն է համարվում ընտանիքի ամբողջականությունը և երկու ծնողների ներկայությունը նրանց կյանքում: Սիրիահայերի նույնքան զանգվածն էլ կրկին հակված է այն գաղափարին, որ

ծնողների պարտականությունները դրանով չեն ավարտվում, քանզի նրանք պետք է ամեն ինչ անեն երեխաների համար: Այս իմաստով երեխայապաշտության երևույթը համեմատաբար քիչ է տարածվում հայաստանաբնակ հայերի շրջանում (87,7%), չնայած նրանց մոտ ևս գերակա է այն դիրքորոշումը, որ ծնողները պատասխանատու են երեխաների առողջության, երջանկության և հաջողության համար:

Աղյուսակ 6

Ընտանեկան նորմերի մասին պատկերացումներ, համեմատական պատկեր, %

Դատողություններ	Սիրիահայեր	ՀՀ հայեր
Երեխան կարող է նորմալ զարգանալ միայն լրիվ ընտանիքում	92,0	93,0
Ծնողների պարտքն է ամեն ինչ անել երեխաների համար	92,0	87,7
Կնոջ կյանքը լիարժեք է, եթե նա երեխաներ ունի	88,0	87,2
Կարելի է արդարացնել այն կնոջը, ով ցանկանում է երեխա ունենալ՝ առանց ամուսնանալու	8,0	28,7
Ընդունելի է, որ չամուսնացած աղջիկն ու տղան ապրում են միասին, նույնիսկ եթե չեն պլանավորում ամուսնանալ	12,0	13,1
Ամուսնությունն իր դարն ապրել է	8,0	9,5
Կարելի է արդարացնել արհեստական ընդհատումը, եթե ամուսինները չեն ցանկանում երեխա ունենալ	40,0	32,3

Այս ամենին ի պատասխան՝ հայերի արժեքանորմատիվ համակարգում ձևավորված այն իմաստը, որ երեխան կնոջ կյանքի լիարժեքության, երջանկության գրավականն է, կիսվում է ինչպես սիրիահայերի, այնպես էլ հայաստանաբնակ հայերի մեծամասնության կողմից (ՀՀ հայեր և սիրիահայեր, համապատասխանաբար, 87,2% և 88,0%, տե՛ս աղյուսակ 6):

Երեխայի՝ կնոջ կյանքին իմաստ տալու դերը, սակայն, ստվերվում է, երբ առաջ է գալիս ավանդական ընտանիքներին բնորոշ կերպարը պահպանելու հարցը: Սիրիահայերի շրջանում տաս հոգուց միայն մեկն է հանդուրժողական գտնվել այն երևույթի նկատմամբ, որ կինը կարող է մայրանալ՝ առանց ընտանիք կազմելու: Հայաստանաբնակ հայերի շրջանում, սակայն, այս թիվն ավելի, քան եռապատկվում է՝ մեծացնելով հանդուրժողական զանգվածի կշիռը հայ հասարակությունում և մեզ՝ բոլորիս, ականատես դարձնելով ավանդականի կողքին արդի հայացքների միաժամանակյա գոյության փաստին (ՀՀ հայեր և սիրիահայեր, համապատասխանաբար, 28,7% և 8,0%, տե՛ս աղյուսակ 6):

Շարունակելով սիրիահայերի՝ ամուսնությանն առնչվող արժեքանորմատիվ համակարգի վերուծությունը՝ նկատենք, որ տղայի և աղջկա միջև ազատ հարաբերությունների կողմակից են միայն 12,0% սիրիահայեր: Նրանց գերակշիռ մասի արժեքային համակարգը դուրս է մղում նաև ոչ հայկական, օտար, եվրոպականից ազդված երևույթները՝ ամուսնությանը տալով արժանի տեղ ու դեր հայ երիտասարդի կյանքում («ամուսնությունն իր դարը ապրել է» դատողությանը համակարծիք է եղել միայն 8,0%-ը):

Բացի զուտ ամուսնությունը կարևորելուց՝ սիրիահայերը կարևորում են նաև զույգերի ամուսնությանը նախորդող ծանոթության ձևը: Ինչպես տեսնում ենք գծապատկեր 11-ից, նրանք հստակ և ավելի շատ բացասական վերաբերմունք (48,0%) ունեն վերջին տարիներին ծնված ու զարգացում ապրող երևույթի՝ համացանցային ծանոթությունների և ամուսնությունների նկատմամբ: Այս իմաստով հայ հասարակությունում մեկ ու կես անգամ մթնոլորտն ավելի անհանդուրժողական է դառնում և վերաբերմունքը՝ ավելի բացասական: Հետաքրքրական է նաև այն արդյունքը, որ մոտեցումը նույնն է և՛ տղայի, և՛ աղջկա պարագայում:

Գծապատկեր 11

Համացանցի միջոցով ամուսնությունների նկատմամբ վերաբերմունք, համեմատական պատկեր



Այսպիսով, սիրիահայերի արժեքանորմատիվ համակարգում առանձնահատուկ տեղ ու դեր ունեն ընտանիքն ու ընտանեկան նորմերը, որոնք ձևավորվում և զարգանում են քրիստոնեական արժեքների հիմքի վրա՝ որոշակի իմաստով տարբերելով նրանց հայաստանաբնակ ընտանիքներից: Ինչպես տեսանք, սիրիահայերն ավելի շատ անհանդուրժողական են միայնակ մոր ինստիտուտի և երիտասարդների ազատ հարաբերությունների նկատմամբ՝ համարելով դրանք օտարածին և ոչ հայեցի երևույթներ:

3.4. Հայկական ընտանիքը սիրիահայերի պատկերացումներում

Քրիստոնեական արժեքները սիրիահայերի համար հանդիսացել/հանդիսանում են հիմնաքար՝ «սիրիահայկական» ընտանեկան կյանքի ձևավորման և այսօր նաև հայաստանաբնակ ընտանիքների գնահատման հարցում: Սիրիահայերի կողմից երկու ընտանիքներին (սիրիահայ և հայաստանաբնակ) վերագրվող հատկանիշների համեմատական վերլուծության, ինչպես նաև արդեն անդրադարձ կատարած թեմաների միջոցով աշխատության այս

հատվածում նպատակ ունենք դուրս բերել հայկական ընտանիքի մոդելը նրանց պատկերացումներում:

Գրականության մեջ առանձնացվում են քրիստոնյա ընտանիքներին բնորոշ մի շարք հատկանիշներ՝ ընտանիքում պետք է գերակայի փոխադարձ սերը, հարգանքն ու վստահությունը, փոխօգնությունը, հանդուրժողականությունը, մեծահոգությունը, ներելու կարողությունը և այլն, չնայած այստեղ անպայման պետք է հաշվի առնել ազգային-էթնիկ մշակույթն ու հասարակության առանձնահատկությունները: Մեր պարագայում պետք է դիտարկել նաև հետևյալ հանգամանքը՝ տվյալ հասարակությունում այդ ընտանիքները մեծամասնությու՞ն, թե՞ փոքրամասնություն են կազմում: Սիրիահայերը, ապրելով մահմեդական երկրում և Սիրիայի հասարակության մեջ համարվելով փոքրամասնություն, բնականաբար, ընտանիքի և ընտանեկան արժեքների վերաբերյալ այլ՝ հայաստանաբնակներից տարբեր հայացքներ են որդեգրել, ինչին ականատես եղանք նաև աշխատության նախորդ էջերում: Ինչպես բազմիցս նշվել է, սփյուռքում ընտանիքը եղել է առաջնային ագենտներից մեկը՝ ազգային ինքնության ձևավորման, ազգային ավանդույթների և վարքի ձևերի յուրացման ու փոխանցման և, մեծ հաշվով, հայապահպանության հարցում: Հայաստանում հայապահպանության խնդիրը դուրս է գալիս հայ ընտանիքների գործառույթների շարքից՝ փոխելով նրանց դերակատարության առաջնահերթությունները: Այս պարագայում սփյուռքից ներգաղթած հայը հայրենիքում տեսնում է այլ ընտանիք, շփվելով կամ չշփվելով նրանց հետ՝[67] համեմատում է սեփական ընտանիքի հետ ու իր արժեքային համակարգի դիտանկյունից բնութագրում այն:

Աղյուսակ 7-ում տոկոսային արտահայտությամբ դուրս են բերված այն հատկանիշները/դատողությունները, որոնցով սիրիահայերը բնութագրել են սեփական համայնքի և հայաստանաբնակ ընտանիքներին: Հատկանիշները ներկայացված են զուգահեռ և հա-

67 Ըստ հետազոտության արդյունքների՝ սիրիահայերի 72,8%-ն է երբևէ առնչություն ունեցել հայաստանաբնակ *ընտանիքների* հետ:

կանիշ զույգերով՝ դրական ու բացասական: Նրանց համար հայ ընտանիքի մոդելը՝ ի թիվս արդեն քննարկված թեմաների, ձևավորվում է նաև հետևյալ հարցերի տիրույթում.

1. Ընտանիքի ամրություն, ամուսինների հավատարմություն,
2. Ընտանիքում քրիստոնեական արժեքների պահպանում,
3. Ազգային ավանդույթների պահպանում,
4. Գենդերային հիմնահարց,
5. Ամուսին-կին փոխհարաբերությունների բնույթ,
6. Երեխաների դաստիարակություն,
7. Ընտանիքի տնտեսական վարք:

Առաջին ցուցանիշը, որն արտահայտվում է դրական և բացասական հատկանիշների մեծ հաճախականությամբ, վերաբերում է *ընտանիքի ամրությանը*. այն, որ ընտանեկան կապերն ամուր են, զույգերը համերաշխ են ու հավատարիմ, ամուսնալուծության սովորություն չկա, բացի այն, որ սիրիահայերը շատ են կարևորել, նաև ավելի բնորոշ համարել են իրենց ընտանիքներին՝ 12,5%՝ մոտ երեք անգամ շատ հայաստանաբնակ ընտանիքների համեմատությամբ: Նկարագրված հատկանիշի բացասական զույգը, ըստ սիրիահայերի, բնորոշ է միայն հայաստաբնակ ընտանիքներին: Խորացված հարցազրույցների ժամանակ ևս սիրիահայերը անդրադարձել են այս հարցին՝ կրկին իրենց ընտանիքների հետ համեմատություն անցկացնելով. «*Մարդիկ ինչո՞ւ են ամուսնանում, ինչո՞ւ են երեխա ունենում, որ լավ պահեն իրենց երեխաներին, չէ՞: Չնայած այստեղ մարդիկ ուրիշ նպատակներ ունեն. տղամարդն անպայման պիտի սիրուհի ունենա: Մեր մոտ այդպիսի բան չկա: Կարող է՝ կա, բայց մեր մոտ ոչ մեկ չի ասում՝ սիրուհի չունես, ուրեմն՝ տղամարդ չես: Սա ինձ համար ապուշ բան է՝ ո՛չ հայկականության հետ կապ ունի, ո՛չ հայության: Սա ռուսներից մնացած բան է*» (տղամարդ, 49 տարեկան, ք. Երևան)[68]:

68 *Հակոբյան* Գ., ԴՄՆ, Երևան, 2014:

Աղյուսակ 7

Սիրիահայ և հայաստանաբնակ ընտանիքներին բնորոշ դատողությունների հականիշ զույգեր, %

Ընտանիքներին բնորոշ հականիշ դատողություններ					
Դրական	ՀՀ-ում ապրող	Սիրիահայ	Բացասական	ՀՀ-ում ապրող	Սիրիահայ
1) Ամուսնալուծության սովորություն չկա, ընտանեկան կապերն ամուր են, զույգերը զիջող են, համերաշխ, սիրով, հավատարիմ	4,8	12,5	1) Շատ են ամուսնալուծությունները, հանդուրժող չեն իրար նկատմամբ, ազատ հարաբերությունների կողմնակից են	5,6	0,0
2) Քրիստոնեական կյանքով են ապրում, աստվածավախ, ընտանեկան սրբությունը հարգող	1,6	5,8	2) Հավատի պակաս կա, ընտանեկան սրբություն չունեն	4,8	0,0
3) Ավանդապաշտ, հայեցի, պահպանողական	,8	6,7	3) Օտարամոլ, ռուսամետ	1,6	0,0
4) Կնոջ և տղամարդու միջև հավասարություն, հարգանք կնոջ նկատմամբ	1,6	2,5	4) Կինը երկրորդային է ընտանիքում, կոպիտ են կանանց նկատմամբ	4,8	1,7
5) Սրտամոտ են ամուսինները, հարաբերությունները պարզ են, զարգացած, կիրթ	7,2	5,0	5) Ընտանեկան հարաբերությունները ձևական են, կենցաղային, չզարգացած	0,8	2,5
6) Հարգալից մեծերի նկատմամբ	1,6	5,0	6) Անհարգալից մեծերի նկատմամբ	1,6	0,8
7) Խնայող, տնտեսական հաշվարկով են ապրում, համեստ	3,2	0,8	7) Պարտքով ծախսեր են անում, ուտող-խմող են	4,8	0,8

Աղյուսակ 7-ում բերված երկրորդ դատողությունը վերաբերում է քրիստոնեության մեջ կարևորվող *ընտանիքի արժեքի իմաստավորմանն ու պահպանմանը*: Սիրիահայերի դիտարկումներով ու գնահատականներով՝ Հայաստանում ապրող ընտանիքներում պակասում է հավատը, հետևաբար, սրանով պայմանավորված, չի կարևորվում ընտանիքի արժեքը, իսկ իրենք, ընդհակառակը, ապրելով քրիստոնեական կյանքով, գիտակցում ու պահպանում են ընտանիքի արժեքը: Եթե վերջինս՝ դրական հատկանիշը, շատ քիչ չափով բնորոշ են համարել հայաստանաբնակ ընտանիքներին (իրենց համեմատությամբ 3,5 անգամ ավելի քիչ), ապա բացասական դատողություններով ընդհանրապես չեն բնութագրում իրենց. «*Մենք սուրբ ընտանիքներ կհամարվինք: Մինչև հիմա, եթե անգամ ես իմ ձայնը բարձրացնեմ աղջկաս վրա, չի ասի՝ մամա՛, ես մեծ եմ արդեն, մի՛ խոսիր: Մենք այդպես կապրինք*» (կին, 55 տարեկան, ք. Երևան)[69]:

Սիրիահայերն ընդհանրապես իրենց չեն վերագրում նաև *օտարամոլությունը*, այլ, փոխարենը, շեշտում են ավանդապաշտ ու պահպանողական լինելու մասին՝ 6,7%: Ազգային ավանդույթները չպահպանող, օտար վարք ու բարքով ապրող հայաստանաբնակների մեջ (թեպետ քանակական ցուցանիշը շատ փոքր է՝ 1,6%, սակայն այն մեծ և կարևոր է դառնում համեմատություն անցկացնելով) նրանք առանձնացրել են հատկապես երիտասարդներին: Եվ սա այն խումբն է, որ երկարատև շփումների արդյունքում սիրիահայ երիտասարդության համար վատ օրինակ կարող է ծառայել/ է ծառայում, որի մասին ասում են հենց իրենք՝ սիրիահայ երիտասարդները. «*Մեր մոտ ընտանիքը սրբություն է: Մեր պապաները մեզ վախով էին ապրեցնում, որ մենք այլ ազգի մեջ ենք ապրում, պետք է ուշադիր լինենք, ակումբից զատ ուրիշ տեղ չգնանք: Ակումբում ընկերական շրջանակ է միայն, ուրիշ բաներ չես տեսնի: Մենք մինչև 18–19 տարեկանը երեխա էինք, չէինք մտածում ուրիշ բանի մասին: Իսկ այստեղ դպրոցից արդեն սկսում են: Մեր մոտ աղջիկը,*

69 *Հակոբյան* Գ., ԴՄՆ, Երևան, 2014:

որ փղային ասի՝ արի՛ ընկերություն անենք, դա անկարելի բան է: Իսկ այստեղ արդեն եղբայրս լրիվ փոխվեց. մտնում է սենյակ, աղջիկների հետ խոսում: Այստեղ աղջիկներն են ժամադրում» (կին, 27 տարեկան, ք. Երևան)[70]:

Ընտանիքի մոդելի կառուցվածքում սիրիահայերը կարևորել և անդրադարձել են նաև *ամուսինների իրավունքներին ու պարտականություններին*: Տղամարդու և կնոջ հավասարության ու հարգանքի հարցում ևս շարունակում են օրինակելի համարել իրենց, չնայած, ըստ քանակական ցուցանիշների, տարբերություններն այնքան էլ էական չեն: Այս հարցում առաջադիմական հայացքներ ունեն հատկապես սիրիահայ երիտասարդ տղաները. «*Ես հայավարի «խասյաթները» չեմ սիրում. ոնց որ փղան իրավունք ունի, այնպես էլ աղջիկը պետք է իրավունք ունենա իր խոսքերի, իր ընտրությունների մեջ: Մենք գնում ենք այս ճանապարհով, ու դա ես համարում եմ ամենաճիշտ բանը: Ոչ թե փղայի ասածը պիտի լինի և վերջ*» (տղամարդ, 26 տարեկան, ք. Երևան)[71]: Աղյուսակում բերված արդյունքներից նկատում ենք, որ այս հարցում բացասական բնութագրիչը տարածվում է նաև սիրիահայ ընտանիքների վրա, չնայած համեմատության մեջ կրկին ակնհայտ է, որ, ըստ նրանց, հայաստանաբնակների շրջանում է, որ կանայք ավելի երկրորդային են ընտանիքում, և տղամարդիկ՝ կոպիտ կանանց նկատմամբ (մոտ երեք անգամ ավելի):

Հաջորդ բնութագրիչով սիրիահայերը բացահայտում են իրենց ընտանիքների թերությունը՝ պարզ և անկեղծ փոխհարաբերությունների ձևավորման հարցում օրինակելի համարելով հայաստանցիներին: Նրանք կարծում են, որ իրենց ընտանիքներում *ամուսին-կին փոխհարաբերությունները կենցաղային մակարդակի* վրա են գտնվում և ավելի շատ ձևական են (երեք անգամ ավելի բարձր է այս ցուցանիշը), մինչդեռ, հայաստանցիներն իրենց ընտանիքները կառուցում են ջերմ, պարզ ու զարգացած հարաբերությունների

70 Հակոբյան Գ., ԴԱՆ, Երևան, 2014:

71 Հակոբյան Գ., ԴԱՆ, Երևան, 2014:

հիմքի վրա: Սիրիահայերի հետ խորին հարցազրույցների արդյունքների վերլուծությունից բացահայտում ենք ընտանիքում նման հարաբերությունների ստեղծման կարևոր դերակատարին՝ կնոջը: Մեջբերենք սիրիահայ երիտասարդի հետ հարցազրույցից մի հատված. «*Ես, ճիշտն ասած, սիրիահայ աղջիկներից մի այլ կարգի զզվում եմ: Այնտեղ էլ էր այսպես: Ճիշտ է, խոսում էի, բան, բայց հեռու էի մնում: Ընկերությունը, որ ամենապարզ բանն է, իմ առաջ պայմաններ է դնում: ...Դրա համար էլ ես նպատակ դրեցի, որ Հայաստանից եմ աղջիկ ընտրելու, որովհետև իրենք հասկացող են, ուսյալ են, զարգացած են: Եվ այդպես էլ եղավ*» (տղամարդ, 29 տարեկան, ք. Երևան)[72]:

Հաջորդ դատողությունը դիտարկենք *երեխաների դաստիարակության* համատեքստում, քանզի մեծերի նկատմամբ հարգանքի դրսևորումը, առաջին հերթին, ընտանեկան դաստիարակության արդյունք է: Այս առումով դրական և բացասական հատկանիշները հայաստանաբնակ ընտանիքների վրա տարածվում են հավասար չափով (հարգալից են մեծերի նկատմամբ՝ 1,6%, անհարգալից են՝ 1,6%), իսկ սիրիահայ ընտանիքներում դրականը մոտ վեց անգամ գերազանցում է բացասականին (հարգալից են մեծերի նկատմամբ՝ 5,0%, անհարգալից են՝ 0,8%):

Սիրիահայերն *ընտանիքի տնտեսական վարքի* վերաբերյալ հակասական պատկերացումներ ունեն, ընդ որում, թեման ակնհայտ ու կարևոր է դառնում հենց Հայաստանում, երբ հանդիպում են իրենցից տարբեր ընտանիքների: Սրա մասին են վկայում սեփական ընտանիքների վերաբերյալ՝ փոքր, իսկ հայաստանաբնակ ընտանիքների դեպքում՝ շատ քիչ տարբերվող քանակական ցուցանիշները: Ամեն դեպքում, սիրիահայերն ավելի շատ բացասական, քան թե դրական երանգավորմամբ են խոսում հայաստանցի հայերի առատաձեռնության և, ընդհանրապես, ընտանիքի տնտեսական կյանքի կազմակերպման մասին (դրական հատկանիշ՝ 3,2%, բացասական հատկանիշ՝ 4,8%):

72 *Հակոբյան* Գ., ԴՄՆ, Երևան, 2014:

Բացի դրական և բացասական՝ համեմատության մեջ քննարկվող հատկանիշներից՝ սիրիահայերն այլ բնութագրիչներով ևս նկարագրում են հայ ընտանիքներին, որոնք վերաբերում են ներընտանեկան հարաբերությունների մեջ կարևորվող մարդկային հատկանիշներին, ընտանիքում կնոջ աշխատելու փաստին և այլն: Վերջինիս պարագայում մեզ իրավունք չվերապահեցինք գնահատել՝ որպես դրական կամ բացասական, սակայն այն հանգամանքը, որ սիրիահայ ընտանիքներում կանայք և տարիքով մեծերը չեն աշխատում, իսկ ընտանիքի ֆինանսական ծախսերը հոգում է տղամարդը, շատ սիրիահայերի կողմից ընդունված նորմ է (ՀՀում ապրող հայերին բնորոշ՝ 0,8%, սիրիահայերին բնորոշ՝ 10,0%): Այս երևույթը հայաստանցիների կողմից նկատվել է դեռևս մեծ հայրենադարձության տարիներին. «Հայրենադարձների ընտանիքներում ընդունված չէր, որ կանայք աշխատեն: Աշխատողը տղամարդն էր, որն էլ հոգում էր ընտանիքի կարիքները»[73]:

Վերը նշված բնութագրիչները, ընդհանրացրած և ըստ դրական, բացասական ու չեզոք հատկանիշների խմբավորած, արտացոլված են ստորև բերված գծապատկերում:

Գծապատկեր 12

Սիրիահայ և հայաստանաբնակ ընտանիքների բնութագրումը՝ ըստ սիրիահայերի



73 *Ստեփանյան Ա.*, նշվ. աշխ., էջ 215:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 12-ից, սիրիահայերի ինքնագնահատականը բավական բարձր է սեփական խմբին բնութագրելիս. դրական գնահատականը հասնում է մինչև 61,7%-ի: Հայաստանաբնակ ընտանիքներին նույնպես դրական հատկանիշներ են վերագրել նրանք (41,6%), սակայն, երբ դիտարկում ու համեմատում ենք բացասական հատկանիշների շրջանակում, ապա վերջինս՝ դրականի նկատմամբ, գերակշռում է անհամեմատ ավելի շատ:

Չմոռանալով կարծրատիպերի գոյության և սեփական խումբը դիմացինի համեմատ սովորաբար ավելի բարձր գնահատելու փաստի մասին՝ այնուամենայնիվ, անհրաժեշտ է մտածել նաև սիրիահայերի բացասական գնահատականների մասին, քանզի դրանք շարունակում են գոյություն ունենալ նաև հայաստանաբնակ ընտանիքների հետ շփման պարագայում: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ շփման դեպքում կարծիքը կիսով չափ է դրական՝ 51,0%. հատկանիշների մոտ մեկ երրորդ մասը՝ 28,6%, գտնվում է բացասական տիրույթում (տե՛ս գծապատկեր 13):

Գծապատկեր 13

Սիրիահայ և հայաստանաբնակ ընտանիքների բնութագրումը՝ ըստ շփման փաստի



Հայաստանաբնակ ընտանիքներին բացասական հատկանիշներով բնութագրող սիրիահայերի զանգվածում գերակշռում են

հիմնականում կանայք և միջին սերունդը, չնայած վերջին խումբն ավելի շատ բացասական հատկանիշներ է օգտագործել նաև սիրիահայ ընտանիքներին բնութագրելիս:

Վերը բերված բնութագրիչների, ինչպես նաև նախորդ ենթագլուխներում քննարկված նյութի հիման վրա նկարագրենք սիրիահայերի արժեքանորմատիվ համակարգում արմատացած հայկական ընտանիքի մոդելը.

- Հայ ընտանիքը պետք է ստեղծվի միայն հայկական եկեղեցու խորանի առաջ, իսկ հետագայում զարգանա միայն ու միայն քրիստոնեական ավանդույթների և արժեքների հիմքի վրա:
- Հայ ընտանիքը պետք է լինի ամբողջական և ամուր՝ շնորհիվ ամուսինների հավատարմության և համերաշխության: Ամուսնալուծություններն ու երկրորդ ամուսնությունները պետք է բացառվեն հայոց ամուսնական մշակույթից:
- Երեխան կնոջ երջանկության գրավականն է, բայց պետք է ծնվի ամբողջական ընտանիքում: Նախընտրելի է, որ ընտանիքում երկու որդի և մեկ դուստր լինեն, ու դաստիարակվեն երկու ծնողների կողմից հայկական ոգով՝ մեծերի նկատմամբ հարգալից, նրանց լսող ու խոնարհ, օտար վարք ու բարքերից հեռու[74]:
- Ընտանիքի գլխավորը պետք է լինի տղամարդը կամ տան ավագ կինը: Ժողովրդավարական հիմունքներով որոշումներ կայացնելու գործընթացում կարևոր է և պարտադիր գլխավորից ավելի կիրթ ու բանիմաց անձի ներկայությունն ընտանիքում:

---

74 Այս առումով հետաքրքիր է մանավանդ հայրերի մոտեցումը: Մեջբերում եմ խորին հարցազրույցներից մի հատված. «*Մեր մոտ՝ Սիրիայում, միություններ կային, տղաներին ուղարկում էինք, որ ազգային, հայկական, եկեղեցական դաստիարակություն ստանային: Որ իջնում եմ քաղաք, ստիպված տղայիս էլ հետս եմ իջեցնում, որ ինքն էլ ազգային շրջանակ ունենա, ազգային մտածելակերպ: Բայց, քանի որ այստեղ փողոցը, դրսի ընտանիքների համակարգն ուրիշ է, պետք է մի քիչ սանձը ամուր պահես*», (տղամարդ, 39 տարեկան, ք. Աբովյան), *Հակոբյան Գ.*, ԴԱՆ, Կոտայք, 2014:

- Հայ ընտանիքում կնոջ և ամուսնու իրավունքներն ու պարտականությունները թեպետ սահմանված են ոչ ֆորմալ, սակայն այդ «իրավահարաբերությունը» պարզ է և միանշանակ՝ ընտանիքը ֆինանսապես պետք է ապահովի տղամարդը, իսկ կինը պատասխանատու լինի կենցաղային կարևոր և երկրորդային հարցերի համար:
- Այս ամենի հետ մեկտեղ, ամուսին-կին փոխհարաբերությունները պետք է վեր լինեն կենցաղային մակարդակից. և՛ կնոջ, և՛ ամուսնու զարգացած ու կիրթ լինելը խրախուսելի է հայ ընտանիքներում:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՆՊԱՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

4.1. Հայաստանում սիրիահայերի գործունեության սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատումը

Սիրիահայերն արևմտահայ մշակույթի արժանի ժառանգորդներն են, ովքեր հարյուրամյակից ավելի կրել և ապագա սերունդներին են փոխանցել ողջ մշակութային հարստությունը՝ լեզուն, կրոնը ավանդույթներն ու արժեքները: Այդ ամենի վառ ապացույցը մահմեդական երկրում հայ մնալն է, հայի ոգով և ավանդույթներով ընտանիք ստեղծելն է, քրիստոնեական արժեքներով երեխա դաստիարակելն է, ազգային սովորույթներով կենցաղավարելն է և այլ կարևոր ցուցիչներ, որոնց ականատես եղանք աշխատության նախորդ էջերում:

Տեղափոխվելով նոր սոցիալ-մշակութային միջավայր՝ նրանք բազմաթիվ հոգեբանական անհանգստությունների կողքին ապրում են նաև հայրենիքում չհասկացված և չգնահատված լինելու վախը: Սակայն մեր կողմից անցկացրած ուսումնասիրությունը ոչ այնքան մտահոգիչ ցուցանիշ է արձանագրել այս առումով:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 8-ի տվյալներից, հայաստանաբնակ հայերի միայն 22,8%-ը, այսինքն՝ մոտ տաս հոգուց երկուսն է կարծում, որ սիրիահայերը, այլ կենցաղի կրողներ լինելով հանդերձ, վատ ազդեցություն ունեն/կարող են ունենալ տեղացիների վրա: Փոխարենը, սիրիահայերն են ավելի հակված այն տեսակետին, որ հայաստանցի հայերի հետ իրենց շփման վրա ազդում է այն տարբերությունը, որն առկա է երկու էթնիկ խմբերի կենցաղում և առօրյայում: Հավելենք, որ հարցմանը մասնակցած սիրիահայե-

րը այս կամ այն մակարդակով շփում ունեցել են հայաստանաբնակ հայերի հետ, ընդ որում, ամենատարածվածը գործընկերային/ընկերային փոխհարաբերություններն են:

Աղյուսակ 8

Սիրիահայերի մշակութային ազդեցության մասին երկկողմանի պատկերացումներ, %

Դատողություններ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Դժ. պատ.	Ընդամենը
Սիրիահայերն այլ կենցաղի կրողներ են և վատ ազդեցություն ունեն տեղի հայերի վրա	22,8	70,2	7,0	100,0
ՀՀ հայերն այլ կենցաղի կրողներ են, որն ազդում է նրանց հետ ձեր շփման վրա	32,0	68,0	0,0	100,0
Սիրիահայերը կարևոր ազդեցություն ունեն երկրի մշակույթի զարգացման վրա	52,4	38,4	9,2	100,0
ՀՀ հայերը մտածում են, որ դուք՝ սիրիահայերդ, կարևոր ներդրում ունեք երկրի մշակույթի զարգացման գործում	72,0	24,0	4,0	100,0

Ավելի լայն համատեքստում՝ Հայաստանի մշակույթի զարգացման վրա սիրիահայերի ազդեցության իմաստով, իրավիճակը փոխվում է՝ մտնելով կիսով չափ դրական տիրույթ: Լայն իմաստով, մշակույթը մեծ ամբողջություն է, որն իր մեջ ներառում է գիտելիքներ, հավատալիքներ, արվեստ, բարոյականություն, օրենքներ, սովորույթներ և այլ ընդունակություններ, որոնցով օժտված է յուրաքանչյուր մարդ՝ որպես հասարակության անդամ: Թե մշակույթ հասկացության տակ ինչ իմաստ են դրել հարցման մասնակիցները, դժվար է ենթադրություններ կատարել, սակայն, ամեն դեպքում, նրանց մոտ կեսը (52,4%) հակված է մտածելու, որ սիրիահայերը դրական կարևոր ազդեցություն ունեն/կարող են ունենալ մեր երկրի մշակութային կյանքի զարգացման վրա (տե՛ս աղյուսակ 8):

Իրենք՝ սիրիահայերը, ավելի դրական են տրամադրված այս առումով, և նրանց մեծ մասը (72,0%-ը) կարծում է, որ հայաստանաբնակ հայերի կողմից գնահատվում է սեփական խմբի կարևորությունը Հայաստանի մշակութային կյանքի զարգացման գործում:

Չնայած շուրջ վեց տարի է, ինչ սիրիահայերը բնակություն են հաստատում Հայաստանում, սակայն հայաստանաբնակ հասարակության միայն 27,6%-ն է շփվել նրանց հետ, անձնական, ազգակցական, ընկերական, հարևանական կամ գործնական մակարդակում ծանոթացել վերջիններիս կենցաղամշակութային առանձնահատկությունների հետ: Նրանք ավելի շատ արական, քան իգական սեռի ներկայացուցիչներն են (համապատասխանաբար, 33,8% և 23,1%), և միջին, երիտասարդ, քան ավագ սերնդի հայաստանաբնակ հայերը (համապատասխանաբար, 30,4%, 28,8%, 24,7%): Զարմանալի չէ, որ սիրիահայերի հետ շփման տոկոսն ավելի բարձր է մայրաքաղաքում, քան մարզերում, քանզի սիրիահայերի գերակշիռ մասն այսօր ապրում և իր կենսագործունեությունը ծավալում է Երևանում, իսկ մարզային քաղաքների և գյուղերի բնակչության մոտ 16,5%-ն է երբևէ առիթ ունեցել հաղորդակցվելու և ճանաչելու սփյուռքահայ իրենց հայրենակիցներին:

Չնայած նշված ցածր ցուցանիշին՝ փոխհաղորդակցության մեջ՝ որպես ցանկալի սուբյեկտի ինքնագնահատականը ավելի բարձր է հայաստանաբնակ հայերի, քան սիրիահայերի շրջանում, քանզի, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրության արդյունքները, հայ հասարակության մեծամասնությունը՝ 73,5%-ը, կարծում է, որ սիրիահայերն ավելի շատ կարիք և, հետևաբար, ցանկություն ունեն շփվելու իրենց հետ (տե՛ս գծապատկեր 14):

Այս պատկերացումը գերակշռում է ավելի շատ կանանց, քան տղամարդկանց (համապատասխանաբար, 74,5% և 72,2%), և ավելի շատ ավագ ու երիտասարդ, քան միջին սերնդի մոտ (համապատասխանաբար, 77,9%, 76,3%, 66,4%):

Մինչդեռ սիրիահայերը, ովքեր կամա-ակամա հաղորդակցության մեջ են մտնում իրենց ընդունող երկրի հասարակության,

նույնն է՝ թե իրենց հայրենիքը կիսող հայերի հետ, զգում են, որ վերջիններիս մոտ թույլ է արտահայտված շփվելու պատրաստակամությունն ու ցանկությունը (տե՛ս գծապատկեր 14): Շատ սիրիահայեր հայաստանցիների նման մոտեցման պատճառով դեռևս յուրայինների մեջ գտնվելու զգացողություն չունեն. «…*Առաջ մեզի համար փափագ էր, որ ունենայինք անկախ Հայաստան, որ ամեն տեղ հայերեն գրվի… Բայց դուրս եկավ, որ՝ չէ՛: Պատճառն այն է, որ այստեղի ժողովուրդը մեզի հետ օտարի նման է վարվում, օտար է համարում: Ինչ տարբերություն՝ Սիրիայի՞, թե՞ Հայաստանի հայ: Քեզ օտարի աչքով են նայում: Երբ իմանում են, որ դու դրսի հայ ես, կամ ուզում են քեզի խաբեն, կամ ուզում են գուփեն, կամ պարտքով փող ուզեն, չտան*» (տղամարդ, 50 տարեկան, գ. Առինջ)[75]:

Գծապատկեր 14

Շփման ցանկության մասին փոխադարձ պատկերացումներ



Ըստ քանակական ցուցանիշների՝ ընդունված չլինելու զգացողությունը ավելի բնորոշ է կանանց, քան տղամարդկանց (համապատասխանաբար, 69,2% և 50,0%), սակայն այստեղ, ի տարբերություն հայաստանցի հայերի, տարիքային օրինաչափությունը խախտվում է. այս հարցում ավելի լավատես են սիրիահայ երիտասարդները, այնուհետև միջին և ավագ սերունդը (համապատասխանաբար, 100,0%, 63,6%, 50,0%):

75 *Հակոբյան* Գ., ԴՄՆ, Կոտայք, 2014:

Սիրիահայերի հետ կենցաղամշակութային մակարդակով շփման, դրա դրական կողմերի և, ընդհանուր վերցրած, մշակույթի զարգացման վրա նրանց կարևոր ներդրման մասին բարձրաձայնել են հատկապես հայաստանաբնակ հասարակության հետևյալ խմբերը՝ երևանաբնակները, ավագ սերունդը, կանայք (չնայած սեռի հարցում տարբերությունն այնքան էլ էական չէ): Հետաքրքիր արդյունք է արձանագրվել շփման/դրա բացակայության դեպքում. նրանք, ովքեր շփվել են սիրիահայերի հետ, հաստատում են կենցաղամշակութային մակարդակով շփման կարևորությունը, իսկ նրանք, ովքեր երբևէ շփում չեն ունեցել, ավելի շատ հակված են այն տեսակետին, որ սիրիահայերը դրական ազդեցություն կարող են ունենալ հատկապես մշակույթի զարգացման վրա (տե՛ս աղյուսակ 9): Հավելենք նաև, որ վիճակագրորեն նշանակալի կապ է առկա հարցի և շփման ցուցանիշի միջև. ինչքան սիրիահայերի հետ շփման տոկոսը ցածր է, այնքան բարձր է մշակույթի զարգացման գործում նրանց վերագրվող դրական դերակատարության մակարդակը:

Աղյուսակ 9

Սիրիահայերի ներդրումը մշակույթի համատեքստում՝ ըստ հասարակության տարբեր խմբերի, %

Ցուցանիշներ		Կենցաղամշակութային շփում	Մշակույթի զարգացում
Բնակավայր	Երևան	76,0	55,0
	Քաղաք	75,2	48,6
	Գյուղ	70,7	53,3
Տարիք	18–29	76,3	48,8
	30–49	66,4	47,2
	50 և բարձր	77,9	58,4
Սեռ	Արական	72,2	52,3
	Իգական	74,5	52,4
Շփման առկայություն	Այո	79,8	51,5
	Ոչ	71,2	52,7

Սիրիահայ ընտանիքներին վերագրվող դերակատարության մակարդակը մեծանում է Հայաստանի տնտեսության զարգացման համատեքստում: Այս հարցում փոքր չափով (5%-ով ավելի մշակութայինից), սակայն ավելանում է դրական տրամադրված զանգվածի կշիռը հայ հասարակությունում (տե՛ս աղյուսակ 10):

Աղյուսակ 10

Սիրիահայերի տնտեսական ազդեցության մասին երկկողմանի պատկերացումներ, %

Դատողություններ	Համաձիտ եմ	Համաձիտ չեմ	Դժ. պատ.	Ընդամենը
Սիրիահայերը կարևոր ներդրում ունեն ՀՀ-ի տնտեսության զարգացման գործում	57,4	29,2	13,4	100,0
ՀՀ հայերը մտածում են, որ դուք՝ սիրիահայերդ, կարևոր ներդրում ունեք ՀՀ-ի տնտեսության զարգացման գործում	84,0	8,0	8,0	100,0
Սիրիահայերը ավելորդ բեռ են երկրի իշխանությունների համար	17,5	75,8	6,7	100,0
ՀՀ հայերը մտածում են, որ դուք՝ սիրիահայերդ, ավելորդ բեռ եք երկրի իշխանությունների համար	44,0	52,0	4,0	100,0

Սակայն, մշակութայինի հետ համեմատությամբ, այստեղ կտրուկ բարձրանում է սիրիահայերի ինքնագնահատականը՝ որպես Հայաստանի տնտեսությունը զարգացնող սուբյեկտների: Դժվար է ասել՝ սեփական խմբի ցանկությունն է, թե դիմացի խմբի անդամների (հայաստանաբնակ հայերի) տեսակետների արտացոլումը նրանց պատասխաններում, սակայն միանշանակ է մի բան, որ այսօր Հայաստանում բնակվող սիրիահայերի մեջ այդ զանգվածը հասնում է մինչև 84,0%-ի:

Տեղեկատվական դաշտում շրջանառվող այն միտքը, որ սիրիահայ ընտանիքները, տեղափոխվելով և բնակություն հաստատելով

ՀՀ-ում, ավելորդ ծախսեր են պահանջում երկրի իշխանություններից, կիսում է հայաստանաբնակ հայերի միայն 17,5%-ը: Սակայն թեման ավելի լուրջ կշիռ է ստանում սիրիահայերի տեսանկյունից. նրանց 44,0%-ի կարծիքով՝ տեղացի հայերը նման մոտեցում ունեն իրենց՝ Հայաստանում ապաստան գտնելու փաստի հետ կապված (տե՛ս աղյուսակ 10): Ընդ որում, այս դիրքորոշումը գերակշռում է տղամարդկանց և ավելի շատ միջին սերնդի սիրիահայերի շրջանում:

Աղյուսակ 11

Սիրիահայերի ներդրումը տնտեսության համատեքստում՝ ըստ հասարակության տարբեր խմբերի, %

Ցուցանիշներ		Տնտեսության զարգացում	Տնտեսության վրա ոչ բացասական ազդեցություն
Բնակավայր	Երևան	56,0	83,0
	Քաղաք	58,7	73,4
	Գյուղ	57,3	72,7
Տարիք	18–29	52,5	82,5
	30–49	55,2	68,8
	50 և բարձր	61,7	77,9
Սեռ	Արական	53,6	71,5
	Իգական	60,1	78,8
Շփման առկայություն	Այո	53,5	74,7
	Ոչ	58,8	76,2

Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ Հայաստանի տնտեսական կյանքում սիրիահայերի ներկա և/կամ ապագա դրական ազդեցությունը, ինչպես նախորդ հարցի ժամանակ քննարկվեց, մեծամասամբ նկատում և գնահատում են հայաստանաբնակ հայերի հետևյալ խմբերը՝ քաղաքաբնակները (տնտեսության զարգացման հարցում՝ մարզային քաղաքների բնակիչները, ոչ բացասական ազդեցության հարցում՝ երևանաբնակները), ավագ և երիտասարդ սերնդի ներկայացուցիչները (տնտեսության զարգացման հարցում՝ ավագ սերունդը, ոչ բացասական ազդեցության հարցում՝ երիտա-

սարդները), կանայք և այն խումբը, որը երբևէ առչնություն չի ունեցել սիրիահայերի հետ (տե՛ս աղյուսակ 11)։ Վերջինս շատ հետաքրքրական է ոչ միայն այն իմաստով, որ վիճակագրական նշանակալի կապ կա երկու ցուցանիշների միջև (տնտեսության զարգացման վրա դրական ազդեցություն-շփման առկայություն), այլ նաև այն ենթադրության հաստատմամբ, որ հասարակությունը գնահատում է դրականը, նույնիսկ եթե չի առնչվում այն իրականացնողների հետ։

4.2. Սիրիահայերի միգրացիոն վարքագիծը

2014 թվականին մեր կողմից կատարած հետազոտության[76], ինչպես նաև տարբեր ոլորտների մասնագետների կողմից մինչև այժմ հնչած որակական և քանակական ցուցանիշներին լրացնելու է գալիս հայաստանաբնակ հայերի այն տեսակետը, որ սիրիահայ ընտանիքների վերադարձը Հայաստան ներգաղթ չէ, և երկրի մի փոքր վերականգնումից հետո սիրիահայերի գերակշիռ մասը կվերադառնա Սիրիա։ Չնայած մշակութային և տնտեսական կյանքում նրանց դերակատարությունը կարևորելուն՝ տեղացիների մոտ 70%-ը կիսում է նման տեսակետ (տե՛ս աղյուսակ 12), իսկ նրանց մեջ մեծ խումբ են կազմում կանայք՝ ի համեմատ տղամարդկանց (համապատասխանաբար 71,6% և 67,5%), գրեթե հավասարաչափ ավագ և միջին սերունդը, ապա՝ երիտասարդները (համապատասխանաբար, 70,8% և 70,4% 67,5%-ի համեմատ), մարզային քաղաքների բնակիչները, երևանցիները, ապա՝ գյուղաբնակները (համապատասխանաբար, 76,1%, 68,0%, 66,7%)։

Հայաստանը լքելու մեղադրանք են ներկայացնում են ոչ միայն տեղացիները՝ սիրիահայերին, այլ նաև հակառակը՝ սիրիահայերը՝ տեղացիներին, և, ինչպես տեսնում ենք, նրանց ավելի մեծ զանգվածը (88,0% 69,9%-ի համեմատությամբ, տե՛ս աղյուսակ 12)։

76 Ըստ հետազոտության արդյունքների՝ սիրիահայերի 52,2%-ը հնարավորության դեպքում կտեղափոխվի Հայաստանից։ Մեկ/չորրորդ մասը վստահաբար մտածում է, որ կմնա Հայաստանում, իսկ 22,8%-ը՝ հավանաբար կմնա, ինչն էլ հավանականության ինչ-որ աստիճանով մեծացնում է մեկնելու տրամադրվածություն ունեցողների զանգվածը։

Աղյուսակ 12

Միգրացիոն վարքի վերլուծություն, փոխադարձ պատկերացումներ, %

Դատողություններ	Համամիտ եմ	Համամիտ չեմ	Դժ. պատ.	Ընդամենը
Սիրիահայերն առաջին հնարավորության դեպքում կվերադառնան Սիրիա	69,9	17,8	12,3	100,0
ՀՀ հայերն առաջին հնարավորության դեպքում կհեռանան Հայաստանից	88,0	8,0	4,0	100,0
Սիրիահայերը կհաստատվեն Հայաստանում	40,9	46,2	12,8	100,0
ՀՀ հայերը ամեն ջանք գործադրում են Հայաստանում մնալու համար	16,0	68,0	16,0	100,0

Սիրիահայերի կարծիքով՝ տեղացիների արտագաղթելը, անշուշտ, մեծ կապ ունի երկրի ոչ արդյունավետ կառավարման և սոցիալ-տնտեսական խնդիրների հետ: Կարևոր պատճառների թվին նրանք դասում են նաև հեշտ, բայց օտար ճանապարհ ընտրելու հայաստանցիների որդեգրած «ռազմավարությունը», հայրենիքին ծառայելու նրանց ցանկության բացակայությունը: Սիրիահայերի մեջ տաս հոգուց յոթը մտածում է, որ տեղացին ոչ մի ջանք չի գործադրում Հայաստանում մնալու և արտագաղթի ճամփան չբռնելու համար (տե՛ս աղյուսակ 10, որտեղ 68,0%-ը համամիտ չէ «ՀՀ հայերը ամեն ջանք գործադրում են Հայաստանում մնալու համար» դատողության հետ): Ինչպես քանակական, այնպես էլ որակական գնահատականներով նրանք արտահայտում են հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը. «*...Այստեղի երիտասարդները չեն ուզում մնալ Հայաստանում, այստեղի համար մի բան անեն: Չէ՛, իրենք ուզում են գնան Ռուսաստան: Ինչ կա այնտեղ, չեմ հասկանում: Սա՛ է քո հայրենիքը, այստե՛ղ մնա ու պայքարի՛ր հայենիքիդ համար, որ*

մի բանի հասնի: Ռուսաստանը արդեն հասել է իր հասնելիք տեղը» (կին, 22 տարեկան, ք. Երևան)[77]: «*Գործը անհնար է հոս: Ամեն օր ասում ենք՝ ինչ պտի ըլլա: Միայն մեզի համար չէ՝ իբրև սիյուռքահայ կամ սիրիացի: Այստեղ շատերը կփախնին, կէրթան երկրից: Ինչո՞ւ, ինչո՞ւ մենք պիտի գնանք՝ իբրև հայ, ուրիշին ստրուկ ըլլանք: Ես ինչո՞ւ չկարողանամ իմ երկրի մեջ ապրիմ, երկիրս զարգացնեմ»* (կին, 58 տարեկան, ք. Երևան)[78]:

Սիրիահայ ընտանիքներն ունեն Հայաստանից հեռանալու իրենց պատճառները, որոնց մեծ մասը սոցիալ-տնտեսական բնույթ է կրում.

- Սոցիալ-տնտեսական պատճառներ (աշխատանք չկա, աշխատավարձերը ցածր են, բնակարան չունենք, վատ պայմաններում ենք ապրում և այլն)՝ 81,2%,
- Մշակութային-հոգեբանական պատճառներ (այստեղ սովոր չեմ, ինձ դուր չեն գալիս սովորույթները, իմ հայրենիքը Սիրիան է և այլն)՝ 4,2%,
- Փաստաթղթային խնդիրներ՝ 10,4%,
- Իրավական խնդիրներ՝ 4,2%[79]:

Սիրիահայերն առաջին հերթին նախընտրում են վերադառնալ Սիրիա, սակայն ԱՄՆ-ը, Շվեդիան, Ֆրանսիան, Գերմանիան, Կանադան, Բելգիան, Ավստրալիան, Հոլանդիան այն հավանական երկրներն են, որտեղ, նրանց կարծիքով, ապաստան և տնտեսական ու սոցիալական աջակցություն կգտնեն: Փաստորեն, սիրիահայերը, առաջնություն տալով վերջինիս, ընդունող երկրի հետ էթնոմշակութային ընդհանրությունները թողնում են հետին պլանում:

Ինչպես տեսանք, հայաստանցիներն ավելի շատ գնահատում

77 *Հակոբյան Գ.*, ԴԱՆ, Երևան, 2014:

78 *Հակոբյան Գ.*, ԴԱՆ, Երևան, 2014:

79 *Акопян Г.*, Роль трудоустройства при адаптации сирийских армян в Армении (социологическое исследование), Диаспоры, независимый научный журнал 1–2, 2015, стр. 170– 182, с. 180:

են սիրիահայերի ներդրումը երկրի տնտեսության, քան մշակույթի ոլորտում: Սիրիահայերի գերակշիռ մասը նույնպես այն համոզմունքն ունի, որ հայաստանցիներն իրենց գնահատում են երկրի տնտեսության մեջ կարևոր դերակատարության համար: Ավելին, նրանք զգում են, որ տեղաբնակների հետ հաղորդակցության ժամանակ բացասական ազդեցություն են ունենում կենցաղամշակութային այն տարբերությունները, որոնք առկա են երկու էթնիկ խմբերի մշակույթում:

Այնուամենայնիվ, սիրիահայերի՝ Հայաստանում բնակվելն արդեն իրողություն է, և անհրաժեշտ է նպաստավոր պայմաններ ապահովել երկրի մշակութային, սոցիալական և տնտեսական ոլորտներում նրանց արդյունավետ կենսագործունեության համար:

СОВРЕМЕННАЯ АРМЯНСКАЯ СЕМЬЯ В ТРАНСФОРМИРУЮЩЕМСЯ ОБЩЕСТВЕ

РЕЗЮМЕ

Результаты проведенных в Армении двух сопоставительных этносоциологических исследований 1980 и 2016–2017гг. позволили выявить социально-культурные процессы, происходящие в армянской семье и проследить ряд существенных изменений в процессе ее развития на современном этапе.Подобный подход важен тем, что проблемы семьи исследованы в двух различных хронологических периодах социально-экономического и общественнополитического развития: в условиях советского и постсоветского общества. В процессе исследования собран обширный сопоставительный материал по двум указанным периодам.

В разделе «Семья и брак» исследованы структура семьи, внутрисемейные и межпоколенные взаимоотношения, формы взаимопомощи, изменения в институте брака и в свадебных обрядах. Происходящие в Армении коренные социально-экономические, политические и ценностные изменения наложили свой отпечаток на функционирование современной армянской семьи. В результате этого наблюдается снижение брачности и рождаемости, увеличивается число разводов. Снижается также роль семьи в процессе социализации личности, сохранении и трансляции национальных ценностей.

Согласно результатам сопоставительного исследования 1980 и 2016–2017гг., армянская семья, сохраняя свою традиционную основу, в силу сложных социально-экономических условий после обретения Арменией независимости,снижения рождаемости, увеличе-

ния эмиграции и численности трудовых мигрантов подверглась определенным изменениям. Основные из них следующие:

- сокращение численности двухпоколенных семей,
- увеличение вдвое однопоколенных семей и одиночек,
- увеличение числа неполных двухпоколенных семей,
- за исключением Еревана, увеличение числа трехпоколенных семей.

Увеличилось число семей из трех человек и уменьшилось состоящих из пяти членов. Поскольку это в основном двухпоколенные семьи, сокращение их численного состава непосредственно связано со снижением рождаемости. Наблюдаются определенные изменения ролевых функций мужчины и женщины, в особенности в тех двухпоколенных семьях, где кормильцем является женщина.

С определенными изменениями в настоящее время сохраняются традиционные взаимоотношения между старшим и младшем поколениями в семье, что находит свое отражение в совместном проживании родителей с женатыми детьми, приоритете совета старших в решении различных семейных проблем и т.п. В тех семьях, где родители и дети проживают раздельно в разных поселениях (включая вне пределов Армении), из-за нарушения непосредственного общения между ними, возникают определенные сложности с трансляцией традиционных норм молодому поколению.

Оценка и отношение к морально-нравственным нормам, решению бытовых проблем, воспитанию детей и многих других вопросов у старшего и младшего поколения различны. Несмотря на то, что современное армянское общество в целом принимает традиционные нормы взаимоотношений между старшими и младшими, они сохраняются с определенными преобразованиями, что связано со следующими основными факторами:

- структура семьи (двухпоколенная, трехпоколенная и т.д.),
- тип поселения (город-село),

- отношение членов семьи к сохранению традиционных норм.

Представители и старшего, и младшего поколения признают необходимость родительского согласия на брак, что обусловлено не только традиционным мышлением и сохранением обычаев, но и современными сложными социально-экономическими условиями.

В настоящее время нередко взаимоотношения и взаимообязанности между родственниками, соседями и друзьями непосредственно связаны со степенью социальной защиты личности или семьи. В системе ценностей помощи и взаимопомощи первостепенную роль играет имущественное положение помогающей стороны, от которого зависит степень близости или отчужденности родственников, соседей и друзей. В случае их проживания в одном и том же поселении определенным сдерживающим фактором взаимопомощи служит укоренившийся в сознании стереотип в отношении традиционных форм взаимопомощи, согласно которому оказанную помощь полагается соответствующим образом компенсировать.

О преобразованиях в традиционном институте семейно-брачных ценностей свидетельствуют факты отсутствия легализации семьи у определенной части населения. Собственно свадебные торжества проводятсяс частичным сохранением традиционных обрядов, с многочисленными европейскими нововведениями.

В настоящее время большое значение придается церковному венчанию, которое после провозглашения независимости Армении стало обретать утраченные позиции.

В модифицированном виде сохранились не утратившие своего значения отдельные традиционные элементы, которые исполняются во время свадебных обрядов. В предсвадебном цикле сохраняются сватовство и обручение, которые и сейчас являются непременным предварительным условием заключения брака.

В послесвадебном цикле традиционно сохранились «кармир хндзор», «глухлва», приданое, празднование дрндеза (Сретение Господня) в семьях новобрачных. Приверженцами их в основном яв-

ляется сельское население.

Повысился брачный возраст как среди юношей, так и девушек. Подавляющее большинство респондентов считает, что юноши должны жениться в том возрасте, когда приобретут необходимую специальность и будут иметь достойную работу для содержания семьи.

В последние годы нововведением является заключение браков через социальные сети, что с трудом воспринимается нашим обществом.

В разделе «Семейные ценности» проанализированы роль семьи, отношение к браку и семье в системе социальных ценностей, гендерное распределение ролей, профессиональное предпочтение для детей, ряд проблем, связанных с семейными конфликтами, разводами и др.Под воздействием глобализационных, социально-экономических, культурных и т.п. процессов определенные изменения происходят в формировании семьи и структуре внутрисемейных отношений. Сравнительные результаты исследований 1980, и 2016 –2017гг. выявили, что семья остается стержнем системы социальных ценностей армян, поскольку другие элементы этой системы – работа, карьерный рост, доход, политика, религия, образование, здоровье, друзья, организация досуга большинством респондентов оцениваются как средства для обеспечения благополучия семьи.

Изменения в создании семьи происходят во многих странах мира, в частности это совместное проживание супружеской пары без легализации брака, наличие внебрачных детей и т.п. Наше общество в целом негативно относится к подобным формам семейной жизни и предпочитает законно оформленную, традиционную семью. Однако, стала наблюдаться определенная лояльность к случаям рождения детей вне брака.

Семья оказывает большое влияние на профессиональную ориентацию детей, которые являются ее основной ценностью. В шкале предпочтительных профессиональных ценностей для девочек (дочерей) и мальчиков (сыновей) в процессе исследования выявились

определенные различия. В частности, для девочек предпочтение было отдано здравоохранению, науке, образованию, искусству, для мальчиков – также здравоохранению, а кроме того судебной и экономической сферам, что свидетельствует о гендерном подходе родителей к профессиональной ориентации для своих детей.

На создании семьи и семейных отношений влияют традиционные стереотипы облика мужа и жены. В женщине ценятся скромность, заботливость, терпение, чистоплотность, интеллектуальные качества. Сравнение с данными 2000г. свидетельствует, что образ женщины остался относительно устойчивым, в то время как образ мужчины претерпел определенные изменения. Более значимыми стали трудовые и моральные качества как результат современных социально-экономических условий.

Перераспределение ролевых функций в семье между мужем и женой существенных изменений не претерпело. Образовательный уровень женщин выше, однако они реже вовлечены в трудовую сферу. Вплоть до сегодняшнего времени основная тяжесть домашних работ лежит на плечах женщины. Это свидетельствует том, что в армянской действительности продолжает преобладать традиционный стереотип распределения ролевых функций, однако в наши дни нередко женщина и работает, и занимается семьей.

При исследовании проблем домашнего насилия были изучены соответствующие международные правовые документы, а также Республики Армения, что позволило выявить их основные формы. Подавляющее большинство респондентов положительно оценило семейные отношения. По сравнению с опытом других стран можно говорить о том, что в Армении семейные конфликты выражены слабее. Тем не менее, к некоторым видам насилия проявляется определенная терпимость, например, таким как ссоры, пощечины, гнев на детей, запрет на некоторые их предпочтения и пр. Возросшая терпимость на запрет ряда предпочтений членов семьи находит свое объяснение в стремлении оградить их и всю семью от негативного воз-

действия ряда общественных явлений. По поводу наказаний молодежь высказала более терпимую позицию по сравнению со старшим поколением, что является следствием изменений в социальных отношениях постсоветского периода.

Что касается разводов, наблюдается тенденция к увеличению более лояльного отношения к ним.

Семейные ценности, представления об идеальном муже и жене, внутрисемейные отношения, на протяжении длительного времени претерпев определенные изменения, тем не менее сохранили свои традиционные черты.

В разделе «Изменения в моделе семьи трудовых мигрантов» исследованы последствия трудоваой миграцин на определенные изменения в модели семьи. Среди принявших участие в опросе семей каждая третья имеет трудового мигранта за пределами республики. Их подавляющее большинство выезжает на заработки репродуктивном возрасте, что отрицательно сказывается на планировании рождаемости. Вследствие трудовой миграции в Армении широкое распространение получила модель «семьи на расстоянии», когда глава дома и/или несколько членов семьи длительное время находятся вне республики, а остальные члены семьи остаются дома. Это означает, что семья разделяется, и нарушается важный принцип совместного проживания всех членов семьи под одной крышей.

В постсоветский период десятую часть мигрантов составляют женщины, и они стали все чаще пересекать границу. В следствие этого в армянских семьях наблюдаются изменения в статусе и роли женщин, поскольку традиционно в миграцию были включены мужчины. В тех семьях, где женщины в зграницe имеют работу и получают доход , а их мужья остаются безработными, в решении важных семейных вопросов они становятся более влиятельными. Исходя из традиционных ценностей и гендерного распределения обязанностей, общество не поощряет поведение женщин, выезжающих в миграцию без мужей или близких родственников, поскольку считают,

что они остаются без надзора мужей, семьи и общины. Участвующие в этом процессе женщины считаются лицами с отклоняющимся поведением, которые в полной мере не выполняют свои материнские обязанности. Среди женщин-мигрантов изменяется также репродуктивное поведение, подвергаясь жесткому контролю.

В армянском обществе трудовая миграция воспринимается как мужское занятие: мужчина должен зарабатывать для семьи деньги и иметь первостепенное право голоса, а женщины должны заниматься воспитанием детей и домашней работой.

Функция материального обеспечения семьи оказывает важное влияние на формирование миграционного поведения мужчин, и в армянском обществе воспринимается как важное средство содержания семьи. Вследствие трудовой миграции у определенной части из них нарушаются важные циклы создания семьи, поскольку часть молодых мигрантов уезжают через 1–2 месяца после женитьбы, при рождении первого или второго ребенка находясь на месте работы вне пределов Армении,а в более зрелом возрасте не присутствуют при обручении и женитьбе своих детей. Все это отрицательно отражается на крепости семьи. Из-за миграции из многих семей уехала молодежь, а родители остались дома одни, в связи с чем в Армении увеличилось число семей, похожих на «пустое гнездо».

В результате миграции увеличилось число межэтнических браков. Из-за сложившейся социально-экономической ситуации в Армении и высокого уровня безработицы часть мигрантов рассматривает межэтнические браки как важный способ для обустройства и проживания вне пределов Армении. Среди некоторой части трудовых мигрантов иногда прослеживается модель «брачного рынка», когда при выборе брачного партнера из подобного брака стремятся извлечь определенную пользу. Одним из факторов влияющих на распространения межэтнических браков является ослабление родственных и соседских связей. Принимая во внимание разницу языка, национальных традиций и культурно- бытовых особенностей супру-

гов, подавляющее большинство респондентов высказалось против межэтнических браков. В межэтнических браках происходит взаимопроникновение различных культурных ценностей, что оказывает влияние на этническую идентичность членов семьи.

Трудовая миграция выдвигает ряд проблем, связанных с крепостью семьи. Временное отсутствие членов семьи повышает степень риска разводов, в результате чего в общинах зафиксирован рост разведенных семей. Среди определенной части мигрантов, помимо законной семьи, в местах въезда широкое распространение получили внебрачные связи и наличие второй семьи. Родившиеся в неформальных браках дети иногда считаются «нежелательными». В результате миграции в общинах увеличилось число брошенных семей, поскольку часть мигрантов, уехав за пределы республики, перестали поддерживать связь со своей семьей. Среди трудовых мигрантов широкое распространение получила также модель разделенной семьи, т.к. глава семьи находится на заработках вне пределов Армении, а жена с детьми или дети с дедушкой и бабушкой остаются на малой родине. В результате миграции «делятся» также и дети, оказавшись по разные стороны границы. Чаще всего вместе с родственниками на родине остаются малолетние дети. В подобных обстоятельствах возникает ряд проблем, связанных с их воспитанием и контролем за ними. Во время отсутствия мигранта вся тяжесть домашних работ целиком ложится на плечи женщин, стариков и несовершеннолетних детей.

Вследствие миграции в подавляющем большинстве семей не ослабевает власть мужчины и не происходит замена патриархальной системы матриархальной или эгалитарной (равномерное распределение власти между мужчиной и женщиной), поскольку даже в этом статусе он продолжает оставаться главой семьи и иметь решающее право голоса в важных вопросах. В подобных семьях роль лидера семьи связана не только с экономическими причинами, но и с традиционным стереотипом, согласно которому представление о мужчине как главе дома все еще преобладает в армянском обществе.

В разделе «Этнокультурные особенности сирийских армян в Армении» методом сравнительного анализа с местным населением выявлены особенности их семейной обрядности и ценностей. Почти шесть лет, как в результате происходящих в Сирии конфликтов, сирийские армян покинули страну и переехали в Армению привезя с собой иную цивилизационную модель, иные семейные ценности и обычаи, иную бытовую культуру. Результаты исследования свидетельствуют, что семьи сирийских армян отличаются составом и структурой. В настоящее время в Армении у них преобладает двухпоколенная семья, состоящая из родителей среднего возраста и двоих или троих детей. По сравнению с семьями местного населения среди сирийских армян много семей, состоящих из восьми и более человек, несмотря на то, что в сирийских общинах принято раздельно проживание молодых семей от родителей. Здесь молодежь нередко проживает совместно с родителями, детьми, иногда даже с родственниками, чтобы в новой среде совместно преодолеть социально-экономические трудности. В семейном составе сирийских армян также много одиночек, в основном молодежи, которая находится в Армении с целью дальнейшего воссоединения с семьей.

Армяне в Сирии были сплочены вокруг системы христианских ценностей, в которой идеи семейной солидарности, единства семьи и традиций преобладали над личными интересами и свободой, поэтому в их семьях понятие главы дома было однозначным: в трехпоколенных семьях это был в основном старший мужчина, в двухпоколенных, в нуклеарных семьях-мужчина и только в каждой пятой семье (в неполных трехпоколенных семьях) – старшая женщина.

Молодежь у сирийских армян, в отличие от своих местных сверстников, вступает в брак поздно, поскольку считается, что супруги должны быть зрелыми для этого, и для мужчин в особенности необходимо иметь финансовую независимость и состояться в профессии. Среди них значительно выше уровень интолерантного к ме-

жэтническим бракам, более того, особенно в отношении браков с лицами другой религиозной принадлежности. В сохранении армянской идентичности после церкви сирийские армяне следующую роль отводят семье, поэтому главным залогом успеха считается выбор брачного партнера из армянской среды.

В отличие от сирийских армян, большинство из которых являются сторонниками браков с местными армянами, последние более нетерпимы к этому и с большим трудом принимают их в свои семьи. Гендерный фактор играет в этом вопросе важную роль, поскольку в основном именно мужчины не одобряют браки с сирийскими армянами. При этом подобное отношение взаимно в том отношение, что и большинство девушек из сирийских армян высказались против браков с местными армянскими парнями. Казалось бы, две грвппы армян, объединенных чувством «мы», должны были быть толерантными по отношению друг к другу, но однозначно, это не так. При единой этнической основе между сирийскими и местными армянами существует много отличий и определенная граница, обусловленная значительными социальными и культурными различиями, а также быта и повседневной жизни.

Исходя из результатов исследования можно говорить о том, что основы формирования и сохранения армянской семьи у сирийских армян основываются преимущественнона христианских традициях. В брачных обрядовых действиях подавляющее большинство из их считает обязательным условием церковное венчание, свадьбу и регистрацию брака в день свадьбы. Если первые два условия сирийские армяне сохраняют и могут осуществлять в новых для себя социально-культурных условиях, то третье (регистрация брака в день свадьбы), согласно принятой в Армении традиции уже не считается обязательным этапом их брачной церемонии.

Согласно укоренившейся у них системе ценностей, армянская семья должна быть полноценной, и разводы должны быть исключены из брачной практики армян. Их подавляющее большинство не

признает института матерей-одиночек и отрицательно относится к свободным отношениям молодых пар.

Сирийские армяне считают, что мужчина как глава дома должен финансово обеспечивать семью, а жена отвечать за важные бытовые и второстепенные проблемы. Это в основном объясняется тем, что в общине сирийских армян не поощрялась работа женщин вне дома в условиях проживания иного религиозного вероисповедания.

Анализ роли семей сирийских армян в экономике и социально-культурной жизни Армении показал, что местные армяне более склонные оценивать их вклад в экономику, чем в культурную жизнь. Большинство сирийских армян также считает, что местные армяне их ценят за значительный вклад в развитие и положительные сдвиги в экономике, чем за внесение некоторого оживления в культурную жизнь. Более того, они чувствуют, что на общении с ними отрицательно сказываются те субкультурные различия, которые присущи местным армянам в стиле жизни и в быту.

Тем не менее, не смотря на все, большинство местных армян не считает возвращение сирийских армян в Армению иммиграцией и полагает, что после определенного восстановления страны подавляющая их часть вернется в Сирию. Сирийские армяне, конечно, в первую очередь предпочитают вернуться в Сирию, однако, по их мнению США, Швеция, Франция, Германия, Канада, Бельгия, Австралия, Голландия - те потенциальные страны, где они смогут найти убежище и получить экономическую и социальную поддержку.

У сирийских армян есть свои причины покинуть Армению, основная часть их носит социально-экономический характер. Создание льготных условий для работы и бизнеса, решение жилищных проблем-вот те основные условия, решение которых удержит большинство из них от намерения покинуть Армению.

CONTEMPORARY ARMENIAN FAMILY IN THE TRANSFORMING SOCIETY

SUMMARY

This comparative ethno-sociological study was conducted in 1980 and 2016-2017. The study followed socio-cultural processes and explored several important transformations that happened in Armenian families. The comparative approach allows us to discuss socio-economic and socio-political developments in two chronological phases: Soviet and post-Soviet periods. As a result, rich comparative materials were gathered on this topic.

"Family and Marriage" section discussed transformations that happened in the structure of family, intra-family and intra-generational relations, forms of mutual assistance as well as in marriage and wedding rituals.

Radical transformations in socio-cultural, political and value system have left their trace on the functions of contemporary Armenian family. As a result, there is a decrease in marriage and birth rates, as well as an increase in divorce rate. The role of family as a key institution for preserving, socializing and transferring national values to younger generations has decreased as well.

According to the results of the study, the Armenian family has preserved its traditional structure. However, due to decline of socio-economic conditions, birth rates, as well as emigration increase, the family institute has undergone some transformations:

- decrease in the number of two-generation families
- double increase in the number of one-generation families

- increase in the number of incomplete two-generation families
- increase in the number of three-generation families (with an exception of Yerevan).

There has been increase in the number of families consisted of three and five members. Since these are mostly two-generation families, the decrease in the number of family members is closely related to the decline in birth rates.

There are noticeable changes in the value system of men and women especially among two-generational families where mother is the breadwinner.

Traditional relations of older and younger generations have been mostly preserved with only some minor transformations. For example, co-residence of married children and parents, asking for advices from elder generation are widespread behaviours.

Due to lack of direct communication, there have been certain barriers to transfer traditional family values to new generations in families where parents and children live in different settlements (urban-rural, abroad).

There are differences between younger and older generations when it comes to moral values, solving everyday problems, children's educational and other issues. Despite these differences, contemporary Armenian society accepts traditional norms concerning the relations of older and younger generations. However, these norms may vary depending on the following factors:

- family structure (two-generation, three-generation and more)
- type of settlement (urban-rural)
- family or an individual preferences on whether to preserve traditional norms.

Both older and younger generations take into consideration the opinion of parents on marriage decision. This is conditioned by not only traditional mentality but also current socio-economic conditions.

Currently relations and obligations of relatives, neighbours and friends are directly connected with the degree of social protection of an individual or a family. Primary help and mutual assistance of provider's wealth and existence of properties define the degree of integration or alienation of extended and close relatives, neighbours as well as friends. The rooted mentality of traditional forms of mutual assistance of relatives and families can be also a communication barrier, i.e. the support of other person should be compensated.

Lack of legalization of marriage among some population indicates about transformations of Armenian family's traditional value system. The actual wedding ceremonies are accompanied by partial preservation of national customs and a combination of many European innovations.

The role of church ceremony during weddings has increased. This ceremony has proclaimed its lost rights after the independence of the Republic of Armenia.

Some traditional elements of wedding ceremonies have been preserved with some minor transformations. Important pre-wedding ceremonies have been preserved, i.e. engagement and "Khosqkap" (preliminary agreement on marriage) ceremonies. As for post-wedding stage, there have been preserved "Karmir kndzor"(testimony of bride's virginity), "Glukhlva" (first visit to a newlyweds family), Candlemas Day traditions. It should be noted that mainly rural population is in favour of preserving these traditions.

Marriage age has increased both among man and woman. The majority of interviewed people prefer that men marry at the age when they have profession and sustainable income.

One of the recent innovations is social network-based relationship or marriage that are being hardly accepted by Armenian society.

In the section named "Family value system" the following issues were analyzed: the role of family in the society's value system, attitude toward family and marriage, distribution of husband's and wife's roles, professional preferences of children, as well as family conflicts and divorces.

Current globalization, social-economic, cultural trends have their influence both on family development and on structural elements of family relations. The results of comparative studies conducted in 1980 and 2016–2017 show which family is the nucleus of Armenian society's value system. Other elements, such as employment, career, salary, friends, leisure, social security, religion, health, education, have been considered as a means of ensuring family well-being.

In many countries of the world changes in family patterns are taking place (e.g. couples live together without official marriage registration, children born of a mother and a father who were not married etc.). Armenian society's attitude towards family changes is mostly negative and preferences are given to permanently registered, traditional families. However, there is some slightly positive attitude towards having a child without marriage.

The family has a great influence on the formation of children's professional preferences. Some features were recorded in the list of preferred professions based on gender. Particularly, girls prefer healthcare, science, education and art, while boys prefer health, judicial and economic spheres. This proves that there is a gender dimension in professional preferences.

Research participants have valued humility, caring, tolerance, cleanliness, and intellect as important qualities for women. As the results of comparative research show, women's preferable qualities have remained relatively sustainable, while some qualities of men have changed. During the recent study phase more importance was given to labour and volitional qualities that can be a result of modern social and economic conditions.

The distribution of the roles of husband and wife has not changed significantly. Women's educational level is higher, but they are less engaged in the labour market. To date, the main "burden" of household chores lies on the shoulders of the woman. This proves that the traditional approach in the distribution of roles in Armenian society continues to

dominate. However, there are also new manifestations since currently women both work and regulate households' everyday life.

The study also touched upon international and Armenian legal documents related to various forms of domestic violence. This has allowed outlining the scope of the domestic violence problem. The overwhelming majority of respondents rated their family relationship as being positive. In comparison with situations in other countries, it can be stated that domestic violence has weaker manifestations in Armenia. Nevertheless, tolerance attitude was recorded towards arguments in family, being angry at children, slapping children and forbidding their hobbies. The latter was explained as a means of protecting family from unwanted phenomena in social life. Young people have shown greater tolerance towards sanctions which is a consequence of social changes happened in post-Soviet period.

Recent study has shown that there is more a tolerant attitude towards divorces. Though traditional family values have been mostly preserved, the image of ideal man and woman, intra-family relations have undergone through certain transformations.

Labour migration and its influence on changes in family model were discussed in the section named "Changes in labour migrants families' model". Every third household that participated in the study has labour migrant family member abroad. The absolute majority of them leave to work abroad at the reproductive age. This has a negative influence on birth rates. As a result of labour migration, "family in distance" model has become widespread, i.e. the head of family as well as other members spend part of a year abroad while other part of family stays in the homeland. This means that family is being divided and the unity of family is being "broken".

In the post-Soviet era, about one-tenth of migrants are women and they have started to cross borders more often than before. As a consequence, there is a change in women's role and status while traditionally mostly men used to be engaged in these activities. Women are more ac-

tive in decision making if they work abroad while men are unemployed. Based on traditional values and perception of gender roles, Armenian society doesn't widely accept women that leave to work abroad alone, without their husbands or any relative. The reason is that they are out of control of spouses, families and communities. These women are considered as people with "deviant" behaviour that do not fulfil their maternal responsibilities. In addition, the reproductive behaviour of migrant women is being strictly controlled.

In the Armenian culture labour migration is still being considered as a job for men. Men should be the breadwinners and have the priority to express their opinion, while women should take care of children and a household. Provision of economic support to families is accepted by society as an important means of maintaining a family. Therefore it has an important impact on the formation of male migration behaviour.

Due to labour migration, lifecycles of family development are being disrupted. Since young migrants often leave 1–2 months after the marriage, they are abroad when the first or second child is born; moreover, later on it is possible that they do not participate in wedding or engagement ceremonies of their children. This has negative influence on the strength of families. In addition to this, a lot of young people migrate and leave their parents alone.

Due to labour migration the number of interethnic marriages has increased. Due to social-economic situation in Armenia and the high unemployment rate, some labour migrants consider interethnic marriages an important way to settle abroad. It is noticeable that labour migrants often have a model of "marital markets", the goal of which is to increase benefit from the marriage by choosing the "right" partners. Interethnic marriages also weaken the influence of traditional kinship and neighbourly ties. The overwhelming majority of respondents are against the interethnic marriages. They explain it with linguistic, national and cultural differences. In families formed on the basis of interethnic marriages, there is a mutual exchange of different cultural values that effects the identity of family members.

Labour migration raises a number of serious issues in terms of family solidarity. Temporal separation of family members raises the risk of divorce. Out-of marriage ties and the existence of "second family" abroad have become widespread phenomena. Respondents consider "undesirable" to have children as a result of informal marriages. As a result of labour migration, the number of abandoned families has also increased in some communities since migrants leave and stop communicating with their families. "Divided" families are also widespread: the man of a family is abroad while children and wife or children and grandparents live in the motherland. In this case, issues related to upbringing and control of children may rise. During the absence of a husband, all the household affairs are under women's, elderly's and underage children's responsibility. However, man's power does not weaken in a majority of families and transition from the patriarchal system to the matriarchal one or to the egalitarian (equally divisive power between men and women) doesn't take place. Man continues to be the final decision-maker of the major and important issues. The role of man as the leader of family is related not only to economic but also to traditional factors, according to which the image of a man as the homeowner is still dominated in Armenian culture.

In the section named "Ethno-cultural peculiarities of Syrian-Armenian families living in Armenia" the peculiarities of Syrian-Armenian family rituals and values were revealed in comparison with local Armenians.

It has been almost six years that Syrian-Armenians have left their country as a result of the conflict in Syria and moved to Armenia bringing with them their culture, family values and traditions.

The results of the study suggest that Syrian-Armenians have particularities related to the characteristic of their family structure. Two-generation Syrian-Armenian families, consisting of middle-aged parents and two or three children are dominating. Compared to local Armenian families, there are many Syrian-Armenian families with eight and more members despite the fact that it is very common for Syrian-Armenians

that young families live separately from their parents. In Armenia Syrian-Armenians often live with their parents, children, and sometimes their relatives in order to face socio-economic challenges of the new environment easier.

Among the Syrian-Armenians there are many lonely people (mostly young people) who are in Armenia with the hope to reunite with their family in the future. Armenians have united around Christian values in Syria therefore the idea of solidarity, unity and family traditions have been more dominant than personal liberties and ambitions. The perception of the head of family is unquestionable in three-generation families mainly the elderly man is considered as the head of family, similar situation is also in two-generation nucleus families, and only one in five families (not full-fledged three-generation families) the elderly women is considered as the head of family.

Syrian-Armenian youth, unlike local Armenians, marry late because they consider that maturity and financial independence are necessary for a couple and especially for men. Among them, the level of intolerance towards mixed-ethnic marriages is quite high; moreover, it grows especially in relation to other-religious marriages. The Syrian-Armenians find that the role of family is important for the preservation of the Armenian identity, therefore having wife/husband from Armenian environment is the most important guarantee of success.

Unlike Syrian-Armenians, the majority of whom are in favour of marriage with local Armenians, the latter are more intolerant and hardly accept Syrian-Armenians in their own families. Gender is an important factor here, since mostly men do not approve marriages with Syrian Armenians. This attitude is mutual, since the majority of Syrian-Armenian women are also against a marriage with local Armenian men. It seems that two "different" Armenians should be united and should be tolerant towards one another, but definitely it is not the case. Though they have common ethnic backgrounds, there are very different lines and definite boundaries between Syrian-Armenians and local Armenians concerning

social and cultural life, as well as the significant differences in daily life and lifestyle.

Based on the results of the study, we can state that the basis of the formation and maintenance of family among Syrian-Armenians is largely based on Christian traditions. Church ceremonies as well as immediate legal registration of marriage are core part of wedding ceremonies. It is important to note that immediate registration of marriage is no longer a mandatory element among local Armenians.

According to the value system of Syrian-Armenians, Armenian families should be complete and divorces should be excluded from the marriage culture. Most of them do not accept single mother institute and negatively treat to the free relationships of young couples.

According to Syrian-Armenians, man should financially provide family, and woman should be responsible for everyday and non-primary issues. This is largely explained by the fact that women in the Syrian Armenian community have not been encouraged to work outside the house since they lived in a foreign-religious environment.

The results of the analysis of the role of Syrian-Armenian families in the socio-cultural and economic life of Armenia reveal the fact that local Armenians are more likely to appreciate their investments in economic than in cultural life. The majority of Syrian-Armenians also believe that Armenians value their input in economy more than their considerable input in cultural life. Moreover, they feel that the sub-cultural differences existing in the daily lives and lifestyle of the Armenians negatively impact on their communication with the locals.

Despite all this, the majority of local Armenians find that Syrian-Armenian families are temporary in Armenia and it is not a permanent repatriation. They think that after Syria's restoration most of them will return back. Syrian-Armenians prefer mostly to go back to Syria, but the United States, Sweden, France, Germany, Canada, Belgium, Australia and the Netherlands are probable countries to find shelter, as well as economic and social support.

Syrian-Armenian families have mostly social and economic reasons to leave Armenia. Creating favourable conditions for work, business, and housing are the key factors that can keep the majority of Syrian-Armenians in Armenia.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5

Թամար Ջաքարյան
ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ 9

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԸՆՏԱՆԻՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ.
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՓՈՒԼԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 10

1.1. Ընտանիքի զարգացման
առանձնահատկությունները հայոց մեջ 10
1.2. Ընտանիքի կառուցվածք 20
1.3. Ներընտանեկան հարաբերություններ 26

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅՈՑ ՄԵՋ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 48

2.1. Ամուսնական զուգընկերոջ ընտրություն 48
2.2. Նախահարսանեկան արարողակարգ 57
2.3. Հարսանիք 61
2.4. Հետհարսանեկան արարողակարգ 69
2.5. Ամուսնության օրինականացում 74

Ռուբեն Օհանջանյան
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ 91

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 92

1.1. Ընտանիքի դերը բնակչության
սոցիալական արժեհամակարգի կառուցվածքում 92
1.2. Ընտանիքի և ամուսնության
նկատմամբ վերաբերմունքը 99
1.3. Երեխաների մասնագիտության նախապատվությունը 104

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՄՈՒՍՆՈՒ ԵՎ ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐՆԵՐՆ
ՈՒ ԴԵՐԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ 114

2.1. Ամուսնու և կնոջ կերպարները 114
2.2. Դերերի բաշխումն ընտանիքում 124

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ
ԵՎ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 131

3.1. Ընտանեկան բախումների պատճառները 131
3.2. Երեխաների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ կարծիքները 143
3.3. Ամուսնալուծությունների պատճառները և դրանց նկատմամբ հասարակության վերաբերմունքը 150

Միհրան Գալստյան
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՄՈԴԵԼՈՒՄ 155

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 156

1.1 Միգրանտների ընտանիքի ուսումնասիրության տեսական մոտեցումները 156
1.2. Միգրանտների սեռատարիքային կազմը և կրթական բնութագիրը 163
1.3. Աշխատանքային միգրանտների ընտանեկան դրությունը 177

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 181

2.1. Աշխատանքային միգրացիայի մասնակցության սոցիալ-տնտեսական դրդապատճառները 181
2.2. Աշխատանքային միգրացիայի պատճառները և հետևանքները՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների 184

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԸՆՏԱՆԻՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 193

3.1. Աշխատանքային միգրանտների ընտանիքի ձևավորման կենսափուլերի առանձնահատկությունները 193
3.2. Միջէթնիկ ամուսնությունները աշխատանքային միգրանտների շրջանում 203
3.3. Աշխատանքային միգրացիայի ազդեցությունն ընտանիքի և ներընտանեկան հարաբերությունների վրա 217

Գայանե Հակոբյան
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՍԻՐԻԱՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 229

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ 230
ՍԻՐԻԱՀԱՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 230

1.1. Սիրիահայ համայնք. պատմական ակնարկ 230
1.2. Սիրիահայ ընտանիքի ուսումնասիրության տեսամեթոդաբանական մոտեցումները 237
1.3. Սիրիահայ ընտանիքների կառուցվածքի առանձնահատկությունները 241

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 251

2.1. Ավանդական տարրերի նախընտրությունը 251
2.2. Հարսանեկան հանդիսություն 256
2.3. Սիրիահայերի ամուսնության օրինականացումը 260

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ 264

3.1. Ազգամիջյան ամուսնությունների նկատմամբ սիրիահայերի վերաբերմունքը 264
3.2. Ընտանեկան բռնության վերաբերյալ ընկալումներ 272
3.3. Ընտանեկան արժեքներ և նորմեր 277
3.4. Հայկական ընտանիքը սիրիահայերի պատկերացումներում 282

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՆՊԱՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ 293

4.1. Հայաստանում սիրիահայերի գործունեության սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատումը 293
4.2. Սիրիահայերի միգրացիոն վարքագիծը 300

Современная армянская цемья в трансформирующемся обществе
РЕЗЮМЕ 304

Contemporary Armenian Family in the transforming society
SUMMARY 315

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ
ԹԱՄԱՐ ՋԱՔԱՐՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ձևավորումը և էջադրումը՝
Արթուր Հարությունյանի

Օգտագործված տառատեսակների հեղինակ՝
Է. Ղաբուզյան

Տպագրված է «Հայկարլի ՍՊԸ» տպարանում
Հեռ. 091 206 115

Չափսը՝ 60×84 1/16 Թուղթ՝ օֆսեթ
20.5 տպագիր մամուլ: Տպաքանակը՝ 200 օրինակ